


Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Մ. ՄԱՆԱՍՅԱՆ, Գ. ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ, Ա. ՀՈԿՍԵՓՅԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

7



Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան,
Գ. Հովհաննիսյան, Ա. Հովսեփյան

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

7

Հասարակական
աշխարհագրություն

Աշխարհ

Հիմնական դրոշմի 7-րդ դասարանի դասագիրք

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿԿԱԾ

ԵՐԱՇԽԱՎՈՐԿԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ
ՄԱՆՄԱՐ

MANMAR
2018

ՀՏԴ 373.167.1 : 91 (075.3)
ԳՄԴ 26.8 ց72
Ա 653

Աշխարհագրություն (Հասարակական աշխարհագրություն: Աշխարհ)
Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք /Ռ. Մարգար-
յան, Մ. Մանասյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Հովսեփյան.
Ռ 653 - Եր.: ՄԱՆՄԱՐ, 2018.- 176 էջ:

ՀՏԴ 373.167.1 : 91 (075.3)
ԳՄԴ 26.8 ց72

ISBN 978-9939-62-105-0

© Մարգարյան Ռ., 2018
© Մանասյան Մ., 2018
© Հովհաննիսյան Գ., 2018
© Հովսեփյան Ա., 2018
© ՄԱՆՄԱՐ, 2018
© ԴՏՀՏԸՀ, 2018

ԲԱԺԻՆ I

ԴԱՍ 1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ (ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ) ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դարեր շարունակ աշխարհագրությունն ուսումնասիրել է գլխավորապես բնությունն ու բնական երևույթները: Ըստ էության՝ այդ ուսումնասիրությունը գլխավորապես իրականացրել է բնական (ֆիզիկական) աշխարհագրությունը: Սակայն երբ վերածննդի ժամանակաշրջանում հայտնագործվեցին նոր տարածաշրջաններ, ինչպես նաև զարգացան արդյունաբերությունն ու տրանսպորտը, աշխարհագրության կազմում հիմնադրվեց նոր ենթաճյուղ՝ տնտեսական աշխարհագրությունը, որն սկսեց ուսումնասիրել տնտեսության տեղաբաշխման հարցերը: Տնտեսական աշխարհագրության զարգացմամբ աշխարհագրությունը դարձարեց միասնական գիտություն լինելուց և դարձավ բաղադրյալ գիտություն՝ տարբերվելով մյուս բոլոր գիտություններից: Այսպես օրինակ՝ եթե կենսաբանությունն ու ֆիզիկան մտնում են բնական գիտությունների մեջ, իսկ պատմությունն ու տնտեսագիտությունը՝ հասարակական, ապա աշխարհագրության մի ենթաճյուղը՝ բնական (ֆիզիկական) աշխարհագրությունը, մտնում է բնական գիտությունների, իսկ մյուսը՝ հասարակական աշխարհագրությունը, հասարակական գիտությունների մեջ: Այսպիսով՝ աշխարհագրությունը միակն է, որ միաժամանակ և՛ բնական, և՛ հասարակական գիտություն է:



Իսկ ինչո՞ւ աշխարհագրության նոր ենթաճյուղը՝ հասարակական աշխարհագրությունը, XVIII դարից սկսած նախապես անվանվում էր տնտեսական՝ աշխարհագրություն: Այդ անվանումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ և՛ տնտեսագիտությունը, և՛ տնտեսական աշխարհագրությունն ուսումնասիրում են միևնույն օբյեկտը՝ տնտեսությունը, բայց տարբեր տեսանկյուններից: Եթե տնտեսագիտությունն ուսումնասիրում է տնտեսության կազմակերպման ու կառավարման հարցերը, ապա տնտեսական աշխարհագրությունը՝ տնտեսության տարածքային բաշխման (տեղաբաշխման) հարցերը: Պատկերավոր ասած՝ տնտեսագիտությունը փորձում է գտնել այն հարցի պատասխանը, թե ինչպե՞ս կազմակերպել տնտեսական գործունեությունը, որ դրա շնորհիվ

1. «Տնտեսական» անվանումը գիտական շրջանառության մեջ է ներդրել ռուս խոշորագույն գիտնական Մ. Լոմոնոսովը:

ստացվի մեծ օգուտ (շահույթ), իսկ տնտեսական աշխարհագրությունը փորձում է գտնել այն հարցի պատասխանը, թե ո՞ր տարածքներում տեղաբաշխել տնտեսական օբյեկտները (օրինակ՝ գործարանները, գյուղատնտեսական տնկատափերը), որ այդ տեղաբաշխման շնորհիվ ևս ստացվի մեծ օգուտ:

XX դարում, վերոնշյալ հարցերից բացի, տնտեսական աշխարհագրության առջև ծառայացան նոր և ավելի բարդ խնդիրներ: Նախկինում տնտեսական աշխարհագրության ուշադրության կենտրոնում էին բնակչության, արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի տեղաբաշխման հարցերը, իսկ նոր ժամանակներում տնտեսական աշխարհագրությունն իր ուշադրությունը կենտրոնացրեց նաև մարդու գործունեության նոր ձևերի՝ գիտության, հանգստի կազմակերպման, սպասարկման, քաղաքական և սոցիալական այլ հարցերի ուսումնասիրության վրա:

Այսպիսով՝ տնտեսական աշխարհագրությունն, ըստ էության, սկսեց ուսումնասիրել ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական երևույթների տարածման հարցերը: Այդ պատճառով էլ տնտեսական աշխարհագրությունը վերանվանվեց տնտեսական և սոցիալական, սոցիալ-տնտեսական կամ էլ հասարակական աշխարհագրություն:

Եվ վերջապես, վերջին մի քանի տասնամյակում վերոնշյալ հարցերին ավելացավ նաև էկոլոգիական հիմնահարցը, որը հետևանք է բնության վրա հասարակական ներգործության ծավալների մեծացման, չվերականգնվող բնական ռեսուրսների սպառման (պարպման) ու բնական միջավայրի քայքայման:

Այսպիսով՝ տնտեսական աշխարհագրությունն աստիճանաբար վերածվեց հասարակական աշխարհագրության, որն ուսումնասիրում է հասարակական կյանքի տարբեր ոլորտների տարածքային կազմակերպման (տեղաբաշխման) օրինաչափությունները ամբողջ աշխարհում, ինչպես նաև այդ տեղաբաշխման տեղական առանձնահատկությունները որոշակի տարածաշրջաններում ու երկրներում:

Հասարակական աշխարհագրության ուսումնասիրության առարկան տարածքային զուգակցություններն են (օրինակ՝ գյուղերի, քաղաքների, ճանապարհների, փոխադարձաբար կապված արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների, հանգստի ու առողջապահական օբյեկտների համակարգերը):

Հասարակական աշխարհագրությունը, մյուս բոլոր գիտությունների նման, ունի որոշակի խնդիրներ, որոնք մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց ավելի շատանում և բարդանում են: Եթե նախկինում աշխարհագրության հիմնական խնդիրը տնտեսության տեղաբաշխման նկարագրությունն էր, ներկայումս հիմնական խնդիրը այդ տեղաբաշխման վերլուծությունն ու գնահատումն են, ինչի համար անհրաժեշտ են.

ա) ուսումնասիրել և ճանաչել շրջակա միջավայրի ինքնազարգացման և ինքնակառավարման սահմանները, որպեսզի այդ ճանաչողության վրա հիմնվե-

լով՝ մարդն իր տնտեսական գործունեությունը կազմակերպի այնպես, որ երբեք չխախտվեն վերը նշված սահմանները, իսկ շրջակա միջավայրը պահպանվի այնպիսի վիճակում, որ հնարավորություն ընձեռի մարդկությանը մշտապես ապահովված լինելու անհրաժեշտ բնական ռեսուրսներով,

բ) ուսումնասիրել բնակչության և տնտեսության տեղաբաշխումը և ապա գնահատել, այսինքն՝ որոշել, թե այդ տեղաբաշխումն ինչքանո՞վ է ճիշտ և ինչքանո՞վ է նպաստում տվյալ երկրի հասարակական զարգացմանը: Այդ համապատասխանությունը գնահատվում է տնտեսության տեղաբաշխման արդյունավետությամբ, ինչն արտահայտվում է նրանում, թե որքան նյութեր, էներգիա, աշխատաժամանակ և դրամ են ծախսվել, և դրա դիմաց ինչ արդյունք է ստացվել,

գ) կանխատեսել բնության վրա մարդու գործունեության ազդեցության բոլոր հնարավոր հետևանքները: Այս խնդիրն առավել կարևորվեց այն պատճառով, որ բնության վրա անխոհեմ ազդեցության հետևանքով երկրագնդի տարբեր մասերում առաջ եկան բազմաթիվ բացասական երևույթներ: Դրանցից են, օրինակ՝ Սևանա և Արալյան լճերի ջրի մակարդակների իջեցումն ու դրա հետևանքով առաջացած էկոլոգիական ծանր իրավիճակը կամ էլ Աֆրիկայի անապատային տարածքի ընդարձակումը սավաննաների տարածքի հաշվին:

Այսպիսով՝ XX դ. կեսից հետո փոփոխվել են հասարակական աշխարհագրության դերն ու խնդիրները. սուկ աշխարհագրական փաստեր նկարագրող գիտությունից աշխարհագրությունը վերածվել է դրանք բացատրող, ինչպես նաև մարդկության համամոլորակային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծմանը մասնակցող գիտության:

Հասարակական աշխարհագրությունը բացահայտում է տարբեր երկրների ու ժողովուրդների աշխարհագրական առանձնահատկություններն ու այդ երկրների համագործակցության ուղիները:

Հասարակական աշխարհագրությունը սերտորեն կապված է հարակից մի շարք գիտությունների հետ և օգտվում է դրանց դրույթներից ու հետազոտություններից: Դրանցից են, օրինակ՝ տնտեսագիտությունը, պատմությունը, սոցիոլոգիան, քաղաքագիտությունը, ժողովրդագրությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ «աշխարհագրություն» միասնական գիտության շրջանակում ձևավորվեց և զարգացավ նոր ենթաձյուղ՝ տնտեսական աշխարհագրությունը:
2. Ինչո՞ւ «տնտեսական» աշխարհագրությունը վերանվանվեց «սոցիալ-տնտեսական» և «հասարակական» աշխարհագրություն:
3. Որո՞նք են տնտեսագիտության և տնտեսական աշխարհագրության նմանությունն ու տարբերությունը:
4. Ի՞նչն է հասարակական աշխարհագրության ուսումնասիրության առարկան:
5. Որո՞նք են հասարակական աշխարհագրության նպատակը և խնդիրները:

6. Հարակից ընդհանուր գիտությունների հետ է կապված հասարակական աշխարհագրությունը:
7. Ակնարկային կարգով դիտե՞ք ատլասում և դասագրքում եղած քարտեզները և փորձե՞ք գնահատել, թե աշխարհի բնակչության կամ տնտեսության տեղաբաշխումը որքանով է համապատասխանում համամարդկային շահերին: Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն պետք է լինի այդ տեղաբաշխումը:

ԲԱԺԻՆ II. ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ԴԱՍ 2. ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Մարդկանց բնորոշ է երկու հակադիր ձգտում՝ միավորումը և բաժանումը: Երբ մարդիկ առանձին-առանձին չեն կարողանում պայքարել բնության ուժերի կամ թշնամու դեմ, չեն կարողանում կառուցել այնպիսի հսկա շինություններ, ինչպիսիք են, օրինակ, Չինական մեծ պարիսպը, եգիպտական բուրգերը, ոռոգման ջրանցքները, ապա նրանք միավորվում են միմյանց հետ: Միևնույն ժամանակ, երբ մի խումբ մարդիկ ցանկանում են իրենց հարմար ձևով տնօրինել իրենց բնակեցրած տարածքի ընդերքը և այլ հարստությունները, զարգացնել տնտեսությունը, ապահովել իրենց բարօրությունը, պահպանել սեփական լեզուն, մշակույթը և այլն, ապա նրանք ձգտում են առանձնանալ մարդկային ավելի խոշոր միավորումներից:

Միավորման և բաժանման վարկեցողությունը բնորոշ է, ընդհանուր առմամբ, ամբողջ կենդանական աշխարհին: Վավերագրական ֆիլմերից տպավորվել են կադրեր, երբ առաջնորդ առյուծը (կամ առյուծները) շրջայց է կատարում իր խմբի նվաճած (և իրենց ամրագրած) տարածքում, պահպանելով տարածքի որսի պաշարները այլ «որսորդ» կենդանիներից՝ երբեմն պատժելով դրանց:

Նախամարդկանց խմբերը ևս պաշտպանել են իրենց բնակեցրած տարածքը այլ ցեղերի նվաճումներից: Այդպիսով՝ երկրագնդի բնակեցված տարածքը հնագույն ժամանակներից ենթարկվել է տարածքային բաժանման: Մարդկային խմբավորումների միջև տարածքի բաժանումն անհամեմատ ուժեղացավ, երբ մարդիկ քոչվոր կյանքից անցան նստակյացի, սկսեցին զբաղվել գյուղատնտեսությամբ, հիմնադրեցին գյուղեր ու քաղաքներ: Երկրագնդի տարածքային բաժանումը սկզբնական փուլում գլխավորապես կատարվում էր բնական գործոնների ազդեցությամբ:

Գետահովիտները, միջլեռնային հովիտները, կղզիները, փարթամ խոտածածկոյթով արոտավայրերը և կենսագործունեության համար նպաստավոր տարածքները դարերի ընթացքում բաժանվել են առանձին ցեղերի, ցեղախմբերի և ազգերի միջև:

Առանձին տարածքներում դեռևս ստրկատիրական ժամանակաշրջանից ձևավորվել են **պետություններ**:

Պետությունը սովորական խոսակցությունում, իսկ երբեմն էլ նույնիսկ գիտական գրականությունում նույնացվում է **երկիր** հասկացության (եզրույթի) հետ:

Այսպիսով՝ աշխարհի տարածքային բաժանումը միաժամանակ նաև աշխարհի քաղաքական բաժանում է, քանի որ յուրաքանչյուր տարածքում ձևավորված է քաղաքական միավոր՝ պետություն: Այլ կերպ ասած՝ աշխարհի տարածքային բաժանումը քաղաքական բաժանման հիմքն է:

Ինքնիշխան պետությունը քաղաքականորեն կազմակերպված տարածք է, որը կառավարվում է դրա վրա ձևավորված ինքնիշխան կառավարության կողմից և ճանաչված է համաշխարհային հանրության մեծ մասի կողմից:

Ինքնիշխան պետությունը մարդկության քաղաքական կառուցվածքի, աշխարհի քաղաքական բաժանման հիմնական և գլխավոր տարածքային միավորն է:

Աշխարհում կան ժողովուրդներ (օրինակ՝ քրդեր, ասորիներ), որոնք չունեն ինքնիշխան պետություն, քանի որ զրկված են այդպիսի պետության հիմքից՝ տարածքից:

Հսագույն պետությունները հիմնականում եղել են քաղաքներ՝ իրենց շրջակա գյուղական բնակավայրերի հետ: Դրանցից են Աթենքը, Սպարտան, Հռոմը, Բաբելոնը: Իսկ ներկայումս ինքնիշխան պետությունների մեծ մասն ունի **ցամաքային տարածք (տերիտորիա), ջրային տարածք (ակվատորիա) և օդային տարածք (աերոտորիա)**: Պետության ցամաքային տարածքը որոշվում է պետական սահմաններով, որոնք հաստատված են սահմանակից պետությունների միջև կնքված համաձայնագրերով:

Պետական սահմանը կարող է լինել **լեռնագրական**, եթե անցկացված է լեռների ջրբաժաններով կամ գետերի հունով: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության և Իրանի միջև պետական սահմանն անցկացված է Արաքս գետով, իսկ Ֆրանսիայի և Իտալիայի միջև՝ Մոնբլան լեռնագագաթով անցնող ջրբաժանով: Պետական սահմանը կոչվում է **աշխարհագրական**, եթե անցնում է միջօրեականներով կամ զուգահեռականներով: ԱՖրիկայի քարտեզին նայելիս՝ դժվար չէ նկատել, որ, օրինակ, պետական սահմանը Եգիպտոսի և Լիբիայի միջև անցնում է միջօրեականով, իսկ նույն Եգիպտոսի և Սուդանի միջև՝ զուգահեռականով:



Պետական սահմանի ուղեկալ

Կղզային երկրների պետական սահմանը, բնականաբար, կղզիների ափագիծն է:

Պետության ջրային տարածքը ներառում է ներքին տարածքները (ներքին ծովերը, ծոցերը կամ դրանց մասերը), ինչպես նաև համաշխարհային օվկիանոսի այն մասը, որը հարում է տվյալ երկրին: Համաշխարհային օվկիանոսի մակերեսի 40%-ը ներկայումս բաժանված է ծովափնյա պետությունների միջև: Պետության ափին զուգահեռ 200 մղոն լայնությամբ ձգվող ջրային գոտին համարվում է պետության **տնտեսական գոտի**: Դրանում տնտեսական գործունեություն (օրինակ՝ ձկնորսություն, նավթի, բնական գազի կամ աղերի արդյունահանում) կազմակերպելու բացառիկ իրավունքը պատկանում է տվյալ ինքնիշխան պետությանը:

Ինչ վերաբերում է օտար երկրների նավերի երթևեկությանը, ապա այդ ջրերում դա թույլատրվում է:

Պետությունների օդային տարածքը ներառում է նրա մակերևույթից 25–30 կմ բարձրությամբ օդային շերտը, որում կարող են սավառնել ամենից բարձր թռչող ժամանակակից ռազմական ինքնաթիռները:

Ինքնիշխան պետությունների տարածքից դուրս մնացած տարածքը երկրագնդի միջազգային ռեժիմով՝ պայմանագրերով կամ համաձայնագրերով կարգավորվող տարածքն է, որն առանձնացվել է համեմատաբար նոր ժամանակներում (XX դարում) և օգտագործվում է (կարող է օգտագործվել) աշխարհի բոլոր պետությունների կողմից: Այդպիսի տարածքներ են բաց ծովերը (չեզոք ջրերը), օվկիանոսի հատակի խոր հատվածները, անտարկտիկական և արկտիկական շրջանները:

Աշխարհում այսօր էլ կան ոչ ինքնակառավարվող տարածքներ¹, որոնք կառավարվում են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Նոր Զելանդիայի և Մեծ Բրիտանիայի կողմից:

Աշխարհի տարածքային-քաղաքական բաժանումը հարատև և շարունակական գործընթաց է և արտահայտվում է աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխությամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ և ինչպե՞ս է կատարվում աշխարհի տարածքային բաժանումը:
2. Ի՞նչ կապ կա տարածքային և քաղաքական բաժանման միջև:
3. Որո՞նք են աշխարհի քաղաքական բաժանման տարածքային միավորները:
4. Բնութագրե՞ք ինքնիշխան պետության տարածքը և սահմանները:
5. Ուշադրությամբ ուսումնասիրե՞ք Աֆրիկայի քաղաքական քարտեզը և տեսրո՞ւմ նշե՞ք այն երկրները, որոնց սահմանները աշխարհագրական են (ձգվում են միջօրեականներով և զուգահեռականներով):

1. 1946թ. ոչ ինքնակառավարվող տարածքները 72-ն էին, իսկ 2002թ.՝ 17-ը: 2002թ. դրանցից ինքնիշխան դարձավ Արևելյան Թիմորը, որը նույն թվականին դարձավ ՄԱԿ-ի 191-րդ անդամը:

ԴԱՍ 3. ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

Դուք արդեն գիտեք, որ աշխարհագրության մեջ գործածվում են տարբեր բովանդակության քարտեզներ: Դրանցից մեկն էլ քաղաքական քարտեզն է:

Այն քարտեզը, որը պատկերում է աշխարհի բաժանումը պետությունների միջև, կոչվում է **աշխարհի քաղաքական քարտեզ**:

Քաղաքական քարտեզները կազմվում են նրա համար, որ մարդիկ սովորեն տարբեր պետությունների տեղերը և սահմանները, պատկերացնեն դրանց չափերը, իմանան մայրաքաղաքները, հարևան երկրները:

Քաղաքական քարտեզի վրա յուրաքանչյուր երկիր ներկվում է մի որևէ գույնով: Այդպես ավելի հեշտ է պետությունները զանազանել (տես դասագրքի էջ 10-11-ի քարտեզը):

Պետությունների սահմանները ցույց են տրվում ընդհատվող կամ որևէ այլ հատուկ գծով, որը քարտեզի պայմանանշաններում ունի իր բացատրությունը: Համեմատաբար խոշոր պետության անունը գրվում է նրա սահմանների ներսում: Իսկ եթե քարտեզի վրա պետության տարածքը շատ փոքր է, և դրա վրա անունը գրելը հնարավոր չէ, ապա անվան փոխարեն գրում են թիվ, իսկ պայմանական նշաններում՝ այդ թվին համապատասխանող անունը:

Դասագրքի աշխարհի քաղաքական քարտեզում գտիր այդպիսի նշաններ:


Ժամանակակից աշխարհում կան 231 մեծ ու փոքր պետություններ, որոնցից 216-ը ինքնիշխան են, իսկ 15-ը ունեն կիսանկախ կամ կախյալ (գաղութային) կարգավիճակ: Աշխարհի ինքնիշխան պետություններից մեկն էլ մեր հայրենիքն է՝ Հայաստանի Հանրապետությունը, որն իր հատուկ տեղն ունի աշխարհի քաղաքական քարտեզում:

Աշխարհում կան մի շարք պետություններ ևս, որոնք թեև ինքնուրույն կազմակերպում են իրենց ներքին կյանքը, զարգանում են, բայց շարունակում են մնալ «ինքնահռչակ», այսինքն՝ աշխարհի պետությունների մեծամասնության կողմից չճանաչված, միջազգային ճանաչում չունեցող: Այդպիսի կարգավիճակ դեռևս ունի **Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը**: Սակայն ժամանակի ընթացքում այդպիսի պետությունները ստանում են միջազգային ճանաչում: Որպես օրինակ կարող են ծառայել **Արևելյան Թիմորը**, որը **Թիմոր Լեշթի** անվանումով անկախացավ 2002թ., և **Հարավային Սուդանը**, որը ճանաչում ստացավ 2011թ. (մայրաքաղաքը՝ Զուբա):

Աշխարհի ժամանակակից քաղաքական քարտեզն անցել է պատմական զարգացման երկարատև ուղի: Այն մարդկային հասարակության զարգացման գործընթացի արտացոլումն է: Այդ ընթացքում ծնվել ու մահացել են տասնյակ ու տասնյակ պետություններ, փոխվել են դրանց սահմանները, շատերը միավորվել են կամ տրոհվել:

Մարդկության պատմության ընթացքում պետությունների թիվն անընդհատ աճել է: Օրինակ՝ VII դարում աշխարհում եղել է 35-45 պետություն, XIX դարի վերջին՝ 55, իսկ այժմ՝ ավելի քան 200:

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱ



Քարտեզում օվերով նշված են Ամերիկա

1. Բելիզ
2. Յուգոսլավիա
3. Սալվադոր
4. Հայիթի
5. Դոմինիկյան Հանրապետություն
6. Սենտ Կիտս և Նևիս
7. Անտիգուա և Բարբուդա
8. Դոմինիկա
9. Սենտ Լյուսիա
10. Սենտ Վինսենտ և Գրենադիններ
11. Բարբադոս
12. Գրենադա
13. Տրինիդադ և Տոբագո

Աֆրիկա

1. Գամբիա
2. Գվինեա Բիսաու
3. Սիերա Լեոնե
4. Լիբիերիա
5. Կոտ դ'Իվուար
6. Բուրկինա Ֆասո
7. Գանա
8. Տոգո
9. Բենին
10. Էիտրիա
11. Ջիբութի
12. Կամերուն
13. Հասարակածային Գվինեա
14. Կենտրոնաֆրիկյան Հանրապետություն
15. Ուգանդա
16. Ռուանդա
17. Բուրունդի
18. Մալավի
19. Սվազիլանդ
20. Լեսոտո

Ասիա

1. Լեոնային Դարբաղի Հանրապետություն
2. Ադրբեջան
3. Լիբանան
4. Իսրայել
5. Բահրեյն
6. Զաբադ
7. Միացյալ Արաբական Ամիրայություններ
8. Թուրքմենստան

ՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ



Հազարամյակների ընթացքում տեղի է ունեցել աշխարհի բաժանում հզոր պետությունների միջև: Դա ավարտվեց XIX դարի վերջին, XX դարի սկզբին, որից հետո սկսվեց աշխարհի վերաբաժանումը: Վերջինս, ինչպես գիտենք, դարձավ Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի պատճառ:

Այդ պատերազմների հետևանքով աշխարհի քաղաքական քարտեզը էական փոփոխություններ կրեց:

Առաջին աշխարհամարտից հետո կործանվեցին Ռուսական, Ավստրա-Հունգարական և Օսմանյան կայսրությունները. դրանց փլատակների վրա ձևավորվեցին շուրջ մեկ տասնյակ ինքնիշխան պետություններ: Օրինակ՝ Ռուսական կայսրության փլուզմամբ ավելի քան 600-ամյա ընդմիջումից հետո անկախություն ձեռք բերեց և սեփական անկախ պետություն ստեղծեց Նաև Հայաստանը: Մեր պատմության մեջ այդ պետությունը հայտնի է որպես Հայաստանի առաջին հանրապետություն:

Ավելի ուշ, 1922թ., Ռուսական կայսրությունից անջատված և անկախություն նվաճած պետություններից շատերը (այդ թվում և Հայաստանը) միջպետական հատուկ պայմանագրով միավորվեցին Ռուսաստանին և ստեղծեցին նոր տիպի միութենական պետություն՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ):

Աշխարհի քաղաքական բաժանումը նոր արմատական փոփոխություններ կրեց Երկրորդ աշխարհամարտի և դրան հաջորդած մի շարք խոշոր իրադարձությունների հետևանքով: Նախ Գերմանիան բաժանվեց երկու պետության: Արևելյան Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի մի շարք երկրներ (օրինակ՝ Լեհաստանը, Հարավսլավիան, Չինաստանը, Կուբան) բռնեցին զարգացման սոցիալիստական ուղին: Հետագայում աշխարհի պետությունների մեծ մասը պառակտվեց հակամարտ երկու խմբի, որոնք հայտնի դարձան Արևմուտք (կապիտալիստական երկրների համակարգ) և Արևելք (սոցիալիստական երկրների համակարգ) պայմանական անուններով: Հակամարտությունը դրանց միջև այնքան խորացավ, որ ստացավ «սառը պատերազմ» անվանումը: Ձևավորվեցին Հյուսիսատլանտյան դաշինքի պետությունների (ՆԱՏՕ) և Վարշավայի պայմանագրի երկրների (ՎՊԵ) հակամարտ ռազմական դաշինքները: Աննախադեպ չափեր ընդունեց սպառազինությունների մրցավազքը: Մարդկության գլխին կախվեց նոր աշխարհամարտի վտանգը: Ստեղծվեց «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» յուրահատուկ մի իրավիճակ: Այն պահպանվեց մինչև 1980-ական թվականների վերջը, երբ սոցիալիստական համակարգը փլուզվեց, լուծարվեց ՎՊԵ-ն, վերամիավորվեց Գերմանիան: Փլուզվեցին ԽՍՀՄ-ը, Հարավսլավիան և Չեխոսլովակիան, որոնց փոխարեն ձևավորվեցին երկու տասնյակ ինքնիշխան նոր պետություններ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ 1991թ. իր ինքնիշխանությունը

վերականգնեց նաև Հայաստանը: Այդ պատճառով էլ մեր ներկայիս պետությունը երբեմն կոչում են Հայաստանի երրորդ հանրապետություն:

Որոշ պետություններ մնացին որպես չմիավորված կամ չեզոք պետություն: Դրանցից են, օրինակ՝ Ֆինլանդիան, Շվեյցարիան, Հնդկաստանը:

Մինչ այդ, 1950-ական թվականներից սկսվել էր աշխարհի քաղաքական քարտեզի մի շատ կարևոր փոփոխություն ևս. աշխարհի գաղութային համակարգի փլուզումը:

Աշխարհի գաղութային համակարգը հիմնականում ձևավորվել էր աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակաշրջանում:

Նոր հայտնագործված երկրների մեծ մասում իրենց գերիշխանությունը հաստատեցին Եվրոպայի այդ ժամանակվա առաջատար պետությունները՝ Իսպանիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Պորտուգալիան, Բելգիան և Նիդեռլանդները: Այդ պետությունների միջև բաժանվեցին և գաղութացվեցին Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային Ամերիկաները, Աֆրիկան, Ավստրալիան, Հարավային Ասիան, Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսներում սփռված կղզիները:

Գաղութների մի մասին հաջողվեց անկախություն ձեռք բերել XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին: Դրանցից էին Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հարավային Ամերիկայի ներկայիս պետությունների մեծ մասը:

Համաշխարհային գաղութային համակարգը վերջնականապես փլուզվեց 1960-70-ական թվականներին: Գաղութային լծից ազատագրվեցին և լիակատար անկախություն ձեռք բերեցին վերջին տասնյակ գաղութներն ու կիսագաղութներն Աֆրիկայում:

Աշխարհում ինքնիշխան նոր պետությունների ձևավորման գործընթացն այժմ էլ շարունակվում է: Չեն թուլանում ճնշված ժողովուրդների անկախացման ձգտումը և ազգային ազատագրական պայքարը: Դրանց մի մասն արդեն հաստատել է իր ազգային պետականությունը և փաստացի գոյություն ունի, պայքարում է միջազգային ճանաչում ստանալու համար: Ներկայումս աշխարհում գոյություն ունեն մոտ 30 նման երկրներ: Դրանց թվում է նաև հայկական երկրորդ պետությունը՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է աշխարհի քաղաքական քարտեզը: Ինչ տեղեկություններ կարելի է ստանալ քաղաքական քարտեզի միջոցով:
2. Ինչպե՞ս է ձևավորվել աշխարհի ժամանակակից քաղաքական քարտեզը: Բնութագրե՞ք քաղաքական քարտեզի էական փոփոխությունների փուլերը:
3. Ինչ է համաշխարհային գաղութային համակարգը: Ե՞րբ է ձևավորվել այն:

4. Երկրորդ աշխարհամարտից հետո որո՞նք էին պետությունների հակամարտ դաշինքները: Ի՞նչ եք հասկանում «սառը պատերազմ» ասելով:
5. Հիմնավորե՞ք, որ աշխարհի քաղաքական քարտեզը մոտ ապագայում ևս կարող է փոփոխությունների ենթարկվել:
6. Աշխարհի քաղաքական քարտեզով որոշե՞ք Հայաստանի հարևան երկրները և նրանց մայրաքաղաքները: Ուրվագծային քարտեզի վրա գունավորե՞ք և մակագրե՞ք դրանք:
7. Բնութագրե՞ք Հայաստանի դիրքը աշխարհի քաղաքական քարտեզի օգնությամբ:

Հետաքրքիր և իմանալ

- Առաջին աշխարհամարտից հետո գաղութները զբաղեցնում էին երկրագնդի ցամաքի 72%-ը, դրանցում ապրում էր երկրի բնակչության 70%-ը: Այդ ժամանակ Մեծ Բրիտանիա պետությունն ուներ 70 գաղութ, որոնք գտնվում էին բնակեցված բոլոր աշխարհամասերում: Ընդհանուր մակերեսով դրանք 170, իսկ բնակչության թվով 9 անգամ գերազանցում էին Մեծ Բրիտանիային:
- Առաջին աշխարհամարտին (1914-1918թթ.) մասնակցել է այդ ժամանակվա 59 պետություններից 38-ը: Պատերազմն ընդգրկել էր Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի ավելի քան 4 միլիոն կմ² տարածք, որտեղ բնակվում էր շուրջ 1,5 մլրդ բնակչություն՝ աշխարհի այդ ժամանակվա բնակչության 87%-ը:
- Երկրորդ աշխարհամարտի մեջ ներքաշվեցին աշխարհի գրեթե բոլոր պետությունները (72 պետություն), որտեղ բնակվում էր աշխարհի բնակչության 80%-ը (2,4 մլրդ մարդ):

Կարևոր և իմանալ

«Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»: (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդված 9)

ԴԱՍ 4. ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ


Յուրաքանչյուր պետություն առանձնահատուկ է քաղաքական, տնտեսական և այլ բնույթի հատկանիշներով: Սակայն կան քանակական և որակական բնույթի ցուցանիշներ, որոնք բնորոշ են մեծ թվով պետությունների: Հենց այդ բնորոշ և ընդհանուր գծերով էլ երկրները բաժանվում են առանձին խմբերի:

Աշխարհագրության մեջ ընդունված է պետությունները խմբավորել ըստ հետևյալ հատկանիշների.

- պետական տարածքի մեծություն,
- բնակչության թիվ,
- պետական կառուցվածք,
- աշխարհագրական դիրք,
- սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ:

Պետությունների խմբավորման ուրիշ ինչ ցուցանիշներ կարող եք առաջարկել:

Պետությունների խմբավորումը
քանակական հատկանիշներով



Տարածքի մեծությունն էական դեր է խաղում երկրի տնտեսության զարգացման գործում: Յուրաքանչյուր պետություն գոյություն ունի որոշակի սահմաններով եզրագծված բնատարածքում: Որքան մեծ է տարածքը, այնքան, որպես կանոն, մեծ ու բազմազան են բնական հարստությունները: Օրինակ՝

Ռուսաստանի, Կանադայի, Չինաստանի, ԱՄՆ-ի ընդարձակ տարածքներում առկա են գրեթե բոլոր օգտակար հանածոները: Շատ են նաև հողային, ջրային, անտառային պաշարները:

Տարածքի մեծությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում բնակչության ազատ տեղաբաշխման, տնտեսության զարգացման, նոր քաղաքների ու գյուղերի կառուցման համար:

Ըստ տարածքի մեծության առանձնանում են խոշորագույն, խոշոր, միջին և փոքր տարածքով երկրներ: Աշխարհի խոշորագույն 7 պետություններից յուրաքանչյուրը զբաղեցնում է 3 մլն կմ²-ից ավելի տարածք: Տարածքով աշխարհի ամենամեծ պետությունը Ռուսաստանի Դաշնությունն է՝ 17 մլն կմ²:



Տեսարան Վատիկանի համայնապատկերից

Փոքր պետությունների տարածքը հաշվվում է տասնյակհազարավոր քառակուսի կիլոմետրով:

Փոքր պետությունների խմբում առանձնանում են շատ փոքր, այսպես կոչված «գաճաճ» պետությունները, որոնցից յուրաքանչյուրի տարածքը մի քանի կմ² է: Դրանցից են, օրինակ, Անդորան, Սան Մարինոն, Մոնակոն, Վատիկանը, Սինգապուրը և մի քանի ուրիշներ: Տարածքով աշխարհի ամեն-

նափոքր պետությունը Վատիկանն է՝ 0,44 կմ²:

Հայաստանը ևս տարածքով փոքր պետություն է:

Բնակչության թիվը նույնպես պետության ընդհանուր և, մասնավորապես, ռազմական ներուժը ցույց տվող կարևորագույն հատկանիշ է: Բնակչության թվաքանակի մեծությունը և նրանով պայմանավորված մյուս գործոններն էական ազդեցություն են ունենում ամեն մի երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման վրա:

Ըստ բնակչության թվի նույնպես աշխարհի երկրները շատ տարբեր են: Բնակչության թվով ամենամեծը Չինաստանն է, որտեղ բնակվում է շուրջ 1 միլիարդ 350 մլն մարդ: Աշխարհի ամենափոքր բնակչություն ունեցող Վատիկան պետությունում ապրում է ընդամենը 1000 մարդ:


Հայաստանը բնակչության փոքր թվաքանակ ունեցող 6 տասնյակ երկրներից մեկն է:

Ամեն մի պետություն իր գոյությունը պահպանելու և հասարակական կյանքը կազմակերպելու համար ստեղծում է կառավարման հատուկ համակարգ, որը կոչվում է **պետական կառուցվածք**:

Տարբերում են պետական կառավարման երկու ձև՝ **հանրապետական** և **միապետական**:

Հանրապետական կառավարման ձև ընտրած պետությունները կոչվում են հանրապետություններ:

Պետությունների խմբավորումը որակական հատկանիշներով



Կառավարման հանրապետական ձևն առավել ժողովրդավարական է, այսինքն՝ ժողովրդի մասնակցությունը պետության կառավարմանն ավելի մեծ է, քաղաքացիների իրավունքները և ազատություններն ավելի լայն են:

Ներկայումս հանրապետական կառավարման ձևն ամենատարածվածն է. աշխարհի շուրջ 200 պետություններից 140-ը հանրապետություններ են:

Գոյություն ունի հանրապետության երկու տարբերակ՝ **նախագահական** և **խորհրդարանական (պառլամենտական)**:

Նախագահական հանրապետությունում նախագահն ուղղակիորեն ընտրվում է ժողովրդի կողմից՝ պարբերաբար կատարվող համընդհանուր ընտրությունների միջոցով: Նախագահը հաշվետու չէ խորհրդարանին և նրա հետ գործում է զուգահեռ: Նա է կազմում կառավարություն, նշանակում ու ազատում վարչապետին ու նախարարներին:

Նախագահական հանրապետություններ են Հայաստանը, Ռուսաստանը, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Բրազիլիան:

Խորհրդարանական հանրապետությունում նախագահն ընտրվում է խորհրդարանի կողմից, որին և հաշվետու է: Նրա իրավունքները համեմատաբար սահմանափակ են, նա պակաս անկախ է իր գործողությունների և վճիռներ կայացնելու մեջ: Դրան հակառակ՝ ավելի լայն են խորհրդարանի իրավունքները: Խորհրդարանն է ընտրում նաև կառավարության ղեկավարներին: Պետության և կառավարության ղեկավարները ենթարկվում են խորհրդարանին և հաշվետու են նրան:

Խորհրդարանական հանրապետության օրինակ են Գերմանիան, Իտալիան, Թուրքիան, Հնդկաստանը:

Պետական կառավարման մյուս տիպը միապետությունն է: Ներկայումս աշխարհում հաշվվում է մոտ 30 միապետություն: Նրանց համար ընդհանուրն այն է, որ միապետի պաշտոնը ցմահ է և փոխանցվում է ժառանգաբար (բացառություն են Մալայզիայի թագավորությունը և Միացյալ Արաբական Ամիրայությունները, որտեղ երկրի ղեկավարի՝ միապետի պաշտոնն ընտրովի է):



Վինձորյան պալատը (Անգլիա)

Երկրներից են Վատիկանը, Սաուդյան Արաբիան, Քաթարը, Օմանը, ՄԱԱ-ն, Բրունեյը:

Ժամանակակից աշխարհում ավելի տարածված են սահմանադրական միապետությունները: Դրանց մասին ընդունված է ասել, որ միապետը «թագավորում է, բայց չի կառավարում»: Դա նշանակում է, որ միապետի դերն ավելի շատ խորհրդանշական է: Նա հանդես է գալիս որպես երկրի պետական խորհրդանիշ:

Միապետությունները լինում են **բացարձակ և սահմանադրական**:

Աշխարհի քաղաքական քարտեզի վրա դեռևս պահպանվել են մի քանի բացարձակ միապետություններ, որտեղ կառավարության և իշխանության մյուս մարմինները պատասխանատու են միայն միապետի առաջ: Խորհրդարանը մի շարք դեպքերում ընդհանրապես բացակայում է կամ էլ համարվում է խորհրդակցական մարմին: Այդ

Սահմանադրական միապետությունում օրենսդրական իշխանությունը պատկանում է ընտրովի խորհրդարանին, իսկ գործադիրը՝ կառավարությանը:

Սահմանադրական միապետության օրինակ են Մեծ Բրիտանիան, Շվեդիան, Նորվեգիան, Իսպանիան, Ճապոնիան:

Պետություններն ըստ տարածքային կառուցվածքի (ըստ տարածքային կազմակերպման) լինում են երկու տիպի՝ միասնական (ունիտար) և դաշնային (ֆեդերատիվ) պետություններ:

Միասնական (ունիտար) պետությունում գոյություն ունի միասնական օրենսդրական և գործադիր իշխանություն, պետության ամբողջ տարածքում գործում է սահմանադրական և պետական իշխանության մարմինների միասնական համակարգ (օրինակ՝ Ֆրանսիայում դրանք դեպարտամենտներն են, ՀՀ-ում՝ մարզերը, Ռուսաստանում՝ մարզերը և երկրամասերը):

Ընդունված է ունիտար պետության ներքին տարածքային բաժանումն անվանել վարչատարածքային բաժանում, իսկ բաժանման միավորները՝ վարչատարածքային միավորներ:

Աշխարհի երկրների ճնշող մեծամասնությունը ունիտար պետություններ են (օրինակ՝ Իտալիան, Ֆրանսիան, Ճապոնիան, Թուրքիան, Իրանը): Ունիտար պետություն է նաև ՀՀ-ն:

Դաշնային պետությունը տարածքային միավորների դաշնություն (ֆեդերացիա) է, որոնք պետության կառավարման որոշ հարցերում ինքնուրույն, այսինքն՝ սահմանափակ պետական անկախություն ունեն:

Դաշնության ամեն մի անդամի տարածքում, համապետական օրենքներից ու կենտրոնական իշխանության մարմիններից բացի, գործում են տեղական օրենքներ ու մարմիններ: Կան այնպիսի դեպքեր, երբ դաշնության անդամն ունի նաև սեփական սահմանադրություն:

Դաշնային պետություններ են, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Գերմանիան, Հնդկաստանը, Կանադան:

Աշխարհագրական դիրքը պետության վրա շատ լուրջ ազդեցություն ունեցող գործոն է: Այն կարող է նպաստել նրա զարգացմանն ու բարգավաճմանը կամ էլ հարուցել տարաբնույթ լրացուցիչ դժվարություններ:

Պետության աշխարհագրական դիրքը կարող է լինել **նպաստավոր և աննպաստ**:

Երկրի աշխարհագրական դիրքը **նպաստավոր** է համարվում, եթե տվյալ պետությունն անմիջական ելք ունի դեպի ծով, եթե սահմանակից է բարեկամ, դաշնակից պետությունների, որոնց հետ չունի հակամարտություն:

Աշխարհագրական դիրքը համարվում է **աննպաստ**, եթե պետությունն անմիջական ելք չունի դեպի ծով, եթե շրջապատված է անբարյացակամ կամ թշնամաբար տրամադրված հարևաններով:

Աշխարհում ընդամենը 43 երկիր անմիջական ելք չունի դեպի ծով: Դրանցից մեկն էլ ՀՀ-ն է:

Ըստ **սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի`** ժամանակակից աշխարհում առանձնացնում են երկրների երեք հիմնական տիպեր` **զարգացած, նոր զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներ:**

Զարգացած են համարվում աշխարհի մոտ 40 երկրներ: Այս խմբում առանձնանում են «Մեծ ութնյակի» երկրներից յոթը (ԱՄՆ-ը, Ճապոնիան, Կանադան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան), համեմատաբար փոքր երկրներ Բելգիան, Նիդեռլանդները, ինչպես նաև Ավստրալիան և այլն:

Գրե՛ք այդ երկրները քարտեզի վրա:

Այս խմբի երկրներում շատ բարձր է մարդկանց կենսամակարդակը:


Նոր զարգացող երկրներն աշխարհում մոտ 150-ն են: Դրանք գլխավորապես գտնվում են Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում: Դրանց զգալի մասը նախկին գաղութային երկրներն են և անկախություն են ձեռք բերել երկրորդ աշխարհամարտից հետո:

Անցումային տնտեսությամբ երկրների խումբն են կազմում հետսոցիալիստական պետությունները: Այդ խմբին է պատկանում նաև Հայաստանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվարկե՛ք պետությունների խմբավորման գլխավոր հատկանիշները:
2. Պետության համար ի՞նչ նշանակություն ունի տարածքի մեծությունը:
3. Ուրվագծային քարտեզի վրա նշե՛ք բնակչության թվով աշխարհի խոշորագույն պետությունները, դրանց մայրաքաղաքները: Առանձնացրե՛ք այն պետությունները, որոնք խոշորագույնն են թե՛ տարածքի մեծությամբ և թե՛ բնակչության թվով: Ո՞ր պետություններն են գերխոշոր տարածքի մեծությամբ, սակայն բնակչության թվով գերխոշոր չեն և՛ հակառակը:
4. Ի՞նչ է ինքնիշխան պետությունը: Ի՞նչո՞ւ է պետություններին անհրաժեշտ անկախությունը:
5. Համեմատե՛ք պետական կառավարման՝ ա) հանրապետական և միապետական ձևերը, բ) նախագահական և խորհրդարանական հանրապետությունները, գ) բացարձակ և սահմանադրական միապետությունները: Ուրվագծային քարտեզի վրա նշե՛ք կառավարման տարբեր ձև ունեցող պետությունները և դրանց մայրաքաղաքները:
6. Համեմատե՛ք ունիտար (միացյալ) և դաշնային (ֆեդերատիվ) պետությունները: Ուրվագծային քարտեզի վրա նշե՛ք ունիտար և դաշնային պետությունները և դրանց մայրաքաղաքները:
7. Կազմե՛ք խաչքառ «Աշխարհի պետությունները» թեմայով:
8. Գնահատե՛ք ՀՀ աշխարհագրական դիրքը:

9. Տեսրոմ արտագծեք և լրացրեք գծագիրը:



10. Լրացրեք բաց թողած բառերը. ՀՀ-ն տարածքի մեծությամբ, բնակչության թվով՝, պետական կարգով՝, տարածքային կառուցվածքով՝, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով՝ երկիր է:

11. Մեկնաբանեք «Միապետը թագավորում է, բայց չի կառավարում» արտահայտությունը:

Հետաքրքիր է իմանալ

1) Մեծ Բրիտանիան աշխարհի ամենահին սահմանադրական միապետությունն է: Թագավորը (այժմ թագուհին) համարվում է պետության դատական համակարգի ղեկավարը, զինված ուժերի գլխավոր հրամանատարը, անգլիկան եկեղեցու աշխարհիկ ղեկավարը: Նա է նշանակում վարչապետին, հաստատում է խորհրդարանի ընդունած օրենքները, շնորհում է բարձր ազնվականի տիտղոս, պարգևներ: Թագուհին օգտվում է խորհրդարանը հրավիրելու և ցրելու իրավունքից: Սակայն բոլոր այս գործողություններում նա ղեկավարվում է խորհրդարանի և կառավարության խորհուրդներով կամ որոշումներով:

2) Ներկայիս հանրապետություններից ամենահինը գաճաճ պետություն Սան Մարինոն է, գոյություն ունի 301 թվականից:

Կարևոր է իմանալ

1) «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները»: (ՀՀ-ի Սահմանադրություն, Հոդված 11.1)

«Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը»: (ՀՀ-ի Սահմանադրություն, Հոդված 11.2)

2) «Ռուսաստանի Դաշնությունը՝ Ռուսաստանը ժողովրդավարական իրավական պետություն է՝ հանրապետական կառավարման ձևով»: (ՌԴ-ի Սահմանադրություն, Հոդված 1)

«Ռուսաստանի Դաշնությունը բաղկացած է հանրապետություններից, երկրամասերից, մարզերից, դաշնային նշանակության քաղաքներից, ինքնավար մարզերից, ինքնավար օկրուգներից՝ Ռուսաստանի Դաշնության իրավահավասար սուբյեկտներից»: (ՌԴ-ի Սահմանադրություն, Հոդված 5)

3) «1. Նահանգներից ոչ մեկը չի կարող կնքել պայմանագրեր, մտնել միությունների կամ կոնֆեդերացիաների մեջ..., հատել դրամ, թողարկել վարկային տոմսեր...»:

3. Ոչ մի նահանգ առանց Կոնգրեսի համաձայնության չի կարող սահմանել բեռնաքանակային տուրքեր, խաղաղ ժամանակ բանակ կամ ռազմական նավեր պահել, համաձայնագրեր կամ պայմանագրեր կնքել մեկ այլ նահանգի կամ օտարերկրյա պետության հետ...»: (ԱՄՆ-ի Սահմանադրություն, Հոդված 1, Բաժին 10)

ԲԱԺԻՆ III. ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 5. ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ԵՎ ՇԱՐԺԸ

Նախորդ դասերից դուք գիտեք, որ բնակչությունը կարևոր դեր է խաղում աշխարհագրական թաղանթում: Մարդկանց գործունեության հետևանքով փոփոխվում են բնական համալիրներն ու դրանց առանձին բաղադրիչները: Բնակչության անմիջական մասնակցությամբ ստեղծվում են այգիներ, վարելահողեր, ջրանցքներ, ջրամբարներ և այլ կուլտուրական լանդշաֆտներ: Մեր շրջակա միջավայրի քաղաքներն ու գյուղերը, գործարանները, ճանապարհներն ու սպասարկման հիմնարկները նույնպես ստեղծվել են բնակչության կողմից:

Բնակչություն (ազգաբնակչություն) է կոչվում որոշակի տարածքում բնակվող մարդկանց ամբողջությունը: Բնակչության ուսումնասիրությամբ զբաղվում են շատ գիտություններ, որոնց շարքում կարևոր տեղ է գրավում աշխարհագրությունը: Վերջինս ուսումնասիրում է տարբեր աշխարհագրական պայմաններում բնակչության կազմն ու տեղաշարժերը (միգրացիաները), բնակչության և բնակավայրերի աճը, դրանց տեղաբաշխումը:

Այդ գիտելիքներն անհրաժեշտ են բնակավայրերն ու բնակչությունը երկրի մակերևույթին ճիշտ տեղաբաշխելու և ընդհանրապես մարդկանց կենսագործունեությունը տարածության ու ժամանակի մեջ ճիշտ կազմակերպելու համար:

Բնակչությունը հասարակության գլխավոր արտադրողական ուժն է: Նրա դերը տնտեսության մեջ երկակի է. մի կողմից՝ նյութական բարիքներ ստեղծողն է, իսկ մյուս կողմից՝ իր իսկ ստեղծած բարիքները սպառողն է:

Բնակչության թիվը: Աշխարհի և առանձին երկրների բնակչության ճիշտ թիվն իմանալը ճանաչողական ու գործնական մեծ նշանակություն ունի: Այդ թվով են պայմանավորված երկրի տնտեսական հզորությունը, նյութական բարիքների արտադրության և սպառման ծավալները, աշխատանքային ռեսուրսների թվաքանակը, զինվորական ներուժի մեծությունը: Երկրի և առանձին բնակավայրերի բնակչության ճիշտ թիվն ու կազմն իմանալը կարևոր է անհրաժեշտ քանակությամբ մանկապարտեզներ, դպրոցներ, հիվանդանոցներ, սպասարկման տարբեր ձեռնարկություններ հիմնելու համար:


Բնակչության թվի և կազմի վերաբերյալ հավաստի տեղեկություններ ստանալու համար աշխարհի գրեթե բոլոր պետություններում պարբերաբար (հինգ

կամ տասը տարին մեկ) կազմակերպվում են ընդհանուր մարդահամարներ: ՄԱԿ-ի փորձագետները, ի մի բերելով բոլոր երկրների մարդահամարների տվյալները, ստանում են աշխարհի բնակչության ընդհանուր թիվը:

Քանի որ հին ժամանակներում աշխարհի շատ երկրներում չէին կազմակերպվում ժամանակակից պատկերացմամբ մարդահամարներ, ուստի աշխարհի բնակչության մոտավոր թիվը գնահատելու համար հիմք էին ընդունվում կողմնակի տվյալներ (հարկատուների, զորքերի թիվը): Այդ եղանակով հաշվարկած տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ նախկինում երկրագնդի բնակչության թիվն աճել է շատ դանդաղ: Այն արագացել է հասարակության զարգացմանը համընթաց:

Բնակչության թվի շարժը: Եթե երկու հազար տարի առաջ երկրագնդի վրա ապրում էր մոտավորապես 230 մլն մարդ, ապա այժմ աշխարհի բնակչության թիվն անցնում է 7 մլրդ-ից: Հին դարերում երկրագնդի բնակչությունը մեկ տարվա ընթացքում աճել է մի քանի հարյուր հազարով, XVIII–XIX դարերում՝ 5-10 մլն-ով, իսկ ներկայումս՝ շուրջ 80 մլն-ով: Այսինքն՝ մեծանում է ոչ միայն աշխարհի բնակչության թիվը, այլ նաև յուրաքանչյուր տարի ավելացող մարդկանց թիվը՝ բնակչության հավելածը:


Աշխարհի բնակչության թվաքանակի աճը



Աշխարհի բնակչության թիվը երբեք այնքան արագ չի աճել, որքան XX դարում: Այն 1830թ. կազմել է 1 մլրդ, 1930թ.՝ 2 մլրդ, 1960թ.՝ 3 մլրդ, 1975թ.՝ 4 մլրդ, 1987թ.՝ 5 մլրդ, 1999թ.՝ 6 մլրդ, 2011թ.՝ 7 մլրդ մարդ: Ինչպես երևում է գծանկարից, աճի ներկայիս տեմպերի պահպանման դեպքում (տարեկան շուրջ 1,1%) 2050թ. երկրագնդի բնակչության թիվը կգերազանցի 9 մլրդ-ը:

Տարբեր երկրներում և տարածաշրջաններում բնակչությունն աճում է տարբեր տեմպերով, որովհետև տարբեր է ծնունդների ու մահերի թիվը, ինչպես նաև բնակվելու համար տվյալ երկիր ժամանողների և երկրից հեռացողների թիվը:

Ինչպես երևում է գծանկարից, վերջին տասնամյակներին բնակչության թիվն առավել արագորեն աճել է Աֆրիկա աշխարհամասում: Եթե հարյուր տարի առաջ Աֆրիկայում էր ապրում աշխարհի յուրաքանչյուր 13 բնակչից մեկը, ապա ներկայումս՝ յուրաքանչյուր 7-ից մեկը: Բնակչության թիվն արագ է աճում նաև Հարավային Ամերիկայում և Ասիայում: Ներկայումս Ասիայում ապրում է աշխարհի բնակչության մոտ 60%-ը: Բնակչության թիվը շատ դանդաղ է աճում Եվրոպայում, որի հետևանքով ոչ միայն չի աճում, այլև նույնիսկ նվազում է նրա բաժինը աշխարհի բնակչության թվում: Եթե հարյուր տարի առաջ Եվրոպայում ապրում էր աշխարհի բնակչության մոտ 25%-ը, ապա ներկայումս՝ 10%-ը:



Վերը նշված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակչության թիվը հատկապես արագ է աճում աշխարհի առավել աղքատ և տնտեսապես թույլ զարգացած տարածաշրջաններում ու երկրներում: Այս տարածաշրջանների և երկրների հաշվին աշխարհի բնակչության աճի արագացումը մեր ժամանակաշրջանի ամենալուրջ հիմնախնդիրներից է: Այն, իր հերթին, առաջացրել է համանախնդրակային և տեղական նշանակության բազմաթիվ այլ հիմնախնդիր-

ներ, ինչպիսիք են, օրինակ՝ պարենային, աղքատության հաղթահարման, զբաղվածության, բնապահպանական, չվերականգնվող հանքահումքային և վառելիքաէներգետիկ ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրները:

Պարենային հիմնախնդիրն ամենահինն է: Բոլոր ժամանակներում էլ մարդկանց մի մասը թերամսվել է և տառապել սովից: Ներկայումս թերամսվող և սովյալ մարդկանց թիվը հասնում է 1,5 մլրդ-ի: Գիտնականները նման իրավիճակը փորձել են բացատրել երկու ենթադրությամբ:

Առաջին՝ բնակչության արագ աճի հետևանքով աշխարհում ապրող մարդկանց թիվն ավելի մեծ է, քան երկրագնդի գյուղատնտեսության և համաշխարհային օվկիանոսի՝ նրանց պարենով ապահովելու հնարավորությունները:

Երկրորդ՝ աշխարհի պարենի արտադրությունն անբավարար է և անկարող է լիովին բավարարել սովյալ ժամանակում ապրող մարդկանց պարենի պահանջարկը:

Առաջին ենթադրությունը հանգեցրել է այն հետևությանը, որ երկրագունդն իբր գերբնակեցված է: Այս եզրակացությանը հանգել է անգլիացի տնտեսագետ Թոմաս Մալթուսը դեռևս XIX դարի սկզբին, երբ երկրագնդի բնակչության թիվն ընդամենը 1 մլրդ էր: Ներկայումս պարենամթերքի արտադրության աճը բնակչության աճից հետ է մնում հատկապես Աֆրիկայում, որտեղ միլիոնավոր մարդիկ սովի են մատնված, և ամբողջ երկրներ ու ընդարձակ տարածաշրջաններ հայտարարված են «աղետի գոտի» (Սուդան, Չադ, Եթովպիա, Սոմալի և այլն):

Սակայն իրականում սովի և աղքատության պատճառը ոչ թե բնակչության իբր չափազանց մեծ թիվն է, այլ պարենի անբավարար արտադրությունը և դրա անհամաչափ բաշխումն ըստ երկրների և բնակչության խմբերի:

Ըստ ՄԱԿ-ի փորձագետների՝ XXII դ. կեսերին աշխարհի բնակչության թիվը կարող է հասնել 11-12 մլրդ-ի, որից հետո այլևս չի աճի: Մինչդեռ, գիտնականների հաշվարկներով, երկրագնդի հողային ռեսուրսների հնարավորինս արդյունավետ օգտագործման դեպքում մեր մոլորակն ի վիճակի կլինի կերակրել դրանից ավելի մեծ թվով մարդկանց:

Բնակչության թվի արագ աճի հետևանքով առաջացած բնապահպանական հիմնախնդիրն այն է, որ մի կողմից սպառվում են երկրագնդի բնական ռեսուրսները, իսկ մյուս կողմից ավելանում է աղտոտման ծավալը: Նվազում է մեկ բնակչին ընկնող հողային, ջրային և անտառային ռեսուրսների քանակը: Այսպես, անբավարար քանակությամբ ջուր օգտագործող մարդկանց թիվը մոտակա տասնամյակներին կավելանա մի քանի անգամ:



Տոկիո քաղաքի համայնապատկերը

Մարդկությունը ներկայումս ունի տեխնիկական և գիտական այնպիսի մեծ ներուժ, որ կարող է լուծել բնակչության աճի հետևանքով առաջացող հիմնախնդիրները: Սակայն դրան խանգարում են պետությունների միջև դեռևս պահպանվող լարված ու անարդար հարաբերությունները, անտեղի սպառազինությունը, պատերազմներն ու ահաբեկչությունը: Մարդկության ապագան հիմնականում կախված է այս ամենի հաղթահարման հաջողությունից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Սահմանե՞ք «բնակչություն» (ազգաբնակչություն) հասկացությունը: Ինչպիսի՞ն է նրա դերը տնտեսության մեջ:
2. Ինչպե՞ս են իմանում բնակչության թիվն ու կազմը: Ինչո՞ւ է անհրաժեշտ իմանալ բնակչության վերաբերյալ տվյալները:
3. Վերլուծե՞ք աշխարհի բնակչության ընդհանուր թվի աճն ու փոփոխությունները:
4. Աշխարհի բնակչության թվի աճի հետևանքով ի՞նչ հիմնախնդիրներ են առաջացել:
5. Ինչպիսի՞ն է բնակչության գերբնակեցվածությունը երկրագնդի վրա: Արդյո՞ք բնակչության թվի աճը սպառնում է մարդկության գոյությանը:

ԴԱՍ 6. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրագնդի վրա մշտապես փոփոխվում, այսինքն՝ նորացվում ու հերթափոխվում են մարդկանց սերունդները: Ենթադրվում է, որ մարդկության գոյության ամբողջ ժամանակահատվածում ծնվել է շուրջ 81 մլրդ մարդ, մահացել է մոտ 74 մլրդ, ներկայումս ապրում է 7 մլրդ:

Ծնելիության և մահացության հետևանքով բնակչության սերունդների նորացման և հերթափոխման գործընթացը անվանում են **բնակչության վերարտադրություն**: Աշխարհի բնակչության վերարտադրության գործընթացը տեղի է ունենում բացառապես բնակչության բնական շարժի միջոցով: **Բնակչության բնական շարժը** բնակչության թվի փոփոխությունն է (աճը կամ նվազումը), որը տեղի է ունենում բնական եղանակով՝ ծննդի ու մահի հետևանքով:

Բնակչության բնական վերարտադրության (շարժի) ցուցանիշներն են **ծնելիությունը, մահացությունը** և դրանց տարբերությունը՝ **բնական աճը**: Դրանք հաշվարկվում են ինչպես բացարձակ ցուցանիշներով (ծնվածների և մահացածների թվով), այնպես էլ հարաբերական ցուցանիշներով՝ տոկոսներով (% , յուրաքանչյուր 100 մարդու հաշվով) կամ, ավելի հաճախ, պրոմիլներով (‰, յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով):

Ի տարբերություն ամբողջ աշխարհի՝ առանձին երկրների և տարածաշրջանների բնակչության թվի աճը և սերունդների հերթափոխումն ու նորացումը տեղի են ունենում ոչ միայն **բնական շարժի**, այլ նաև **մեխանիկական**

շարժի հաշվին: Այսինքն՝ տվյալ երկիր կամ տարածաշրջան բնակվելու համար ժամանաձևերի և այնտեղից մեկնաձևերի թվաքանակների տարբերությամբ փոփոխվում են դրանց բնակչության թիվը, բնական շարժի և կազմի ցուցանիշները:

Երկրների գերակշիռ մասում բնակչության թվի աճի հիմնական աղբյուրը բնական շարժն է, այսինքն՝ ծնելիության և մահացության տարբերությունը (բնական աճը): Բնակչության բնական շարժի ցուցանիշների վրա վճռական ազդեցություն են գործում մարդկանց կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծնելիության մակարդակը պայմանավորված է բնակչության բարեկեցությամբ, կրթվածությամբ, հասարակության մեջ կնոջ դերով, բնակչության սեռատարիքային կազմով, ազգային ավանդույթներով, կրոնով: Մասնավորապես, բարձր ծնելիություն է խրախուսում մահմեդական կրոնը:

Որպես կանոն, բնակչության կրթական և մշակութային մակարդակի բարձրացման, քաղաքային բնակչության բաժնի ավելացման, տնտեսության մեջ կանանց ակտիվ ներգրավման, բնակչության ծերացման, երեխաների կրթության ու դաստիարակության վրա կատարվող ծախսերի աճի հետևանքով բնակչության ծնելիությունը նվազում է: Այդ պատճառով էլ քաղաքներում ապրող, բարձր կրթական ու մշակութային մակարդակ ունեցող, աշխատող և ուշ ամուսնացող կանանց ընտանիքներում երեխաների թիվն ավելի փոքր է, քան գյուղական վայրերում ապրող չքավոր ու ցածր կրթական մակարդակ ունեցող և ցածր տարիքում ամուսնացող կանանց ընտանիքներում:

Մահացության մակարդակն ամենից առաջ կախված է մարդկանց կյանքի նյութական պայմաններից, նրանց սննդից, աշխատանքի բնույթից, կենցաղից, սանիտարահիգիենիկ պայմաններից, առողջապահության մակարդակից:

Այսպիսով՝ բնակչության վերարտադրության վրա ազդում են ինչպես բնական-կենսաբանական, այնպես էլ տնտեսական, մշակութային, հոգեբանական գործոնները: Թեև ծնունդը և մահը իրենց էությամբ կենսաբանական գործընթացներ են, սակայն դրանց վրա որոշիչ ազդեցություն են թողնում հասարակական գործոններն ու պայմանները:

Ծնելիության ու մահացության ցուցանիշների տարբերությամբ պայմանավորված է բնակչության բնական **վերարտադրության ռեժիմը (վարքը)**: Առանձնացնում են բնակչության վերարտադրության երեք ռեժիմ՝ պարզ, ընդլայնված և նեղացված:

Պարզ վերարտադրության դեպքում ծնելիության և մահացության ցուցանիշները հավասար են, այսինքն՝ բնակչության թիվը չի փոփոխվում, և բնական աճ չկա:

Ընդլայնված վերարտադրության դեպքում ծնելիության ցուցանիշը գերազանցում է մահացությանը, և տեղի է ունենում բնակչության թվի աճ: Ամբողջ

աշխարհում և երկրների ճնշող մեծամասնությունում հաստատվել է բնակչության ընդլայնված վերարտադրություն:

Նեղացված վերարտադրության դեպքում ծնելիության ցուցանիշը փոքր է մահացության ցուցանիշից, և բնակչության թիվը նվազում է: Ներկայումս այդպիսի երևույթ առկա է Ռուսաստանում, Ուկրաինայում, Արևելյան Եվրոպայի և մի շարք այլ երկրներում:

Աշխարհի երկրները, ըստ բնակչության վերարտադրության ցուցանիշների, կարելի է բաժանել երկու տիպի:



Նեղացված վերարտադրության հետևանքը բուլղարական գյուղում

պակասել է ծնելիությունը (միջին հաշվով մեկ ընտանիքում 1-2 երեխա) և մի փոքր ավելացել է մահացությունը: Դա նշանակում է, որ բնակչության բնական աճը բացասական է (նեղացված վերարտադրություն), և տեղի է ունենում բնակչության թվի նվազում: Եթե նման վիճակը պահպանվի երկար տարիներ, ապա այդ երկրների ժողովուրդները կվերանան:

Բնակչության վերարտադրության երկրորդ տիպը գերակշռում է Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի զարգացող երկրներում: Այդ երկրներին բնորոշ են ծնելիության և բնական աճի միջինից բարձր ցուցանիշները և մահացության համեմատաբար ցածր կամ չափավոր ցուցանիշներ (20%-ից ոչ պակաս): Եթե այժմ աշխարհում միջին հաշվով մեկ ընտանիքում հաշվվում է 3-4 երեխա, ապա Աֆրիկայի և Ասիայի հետամնաց ագրարային երկրներում՝ 6-7 երեխա:

XX դ. երկրորդ կեսից սկսած, անկախություն նվաճելուց հետո, այդ երկրները հնարավորություն ստացան լայնորեն օգտագործելու ժամանակակից առողջապահության նվաճումները՝ առաջին հերթին համաճարակային հիվանդությունների դեմ պայքարում: Դա հանգեցրեց մահացության զգալի կրճատման, իսկ ծնելիությունը մնաց նախկին՝ շատ բարձր մակարդակի վրա: Դրա հետևանքով բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներում XX դարի երկրորդ կեսից տեղի ունեցավ բնակչության թվի կտրուկ աճ: Մեր օրերում այդ երկրներին բաժին է ընկնում երկրագնդի բնակչության ընդհանուր թվի տարեկան աճի մոտ 90%-ը:

Որոշ մասնագետներ բնակչության թվի շատ արագ աճը համարում են մեծագույն աղետ, քանի որ, նրանց կարծիքով, երկրագունդն ի վիճակի չէ բավարարել բնակչության հարածուն պահանջները: Սակայն, ինչպես արդեն նշվել է, գիտության ու տեխնիկայի առաջընթացի, հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման պայմաններում մեր մոլորակը կարող է կերակրել ավելի մեծ թվով բնակչության:

Ժողովրդագրական քաղաքականություն: Ամեն մի պետություն ձգտում է կարգավորել իր բնակչության աճը, այսինքն՝ վարում է հատուկ **ժողովրդագրական քաղաքականություն:**

Ժողովրդագրական քաղաքականությունը վարչական, տնտեսական, քարոզչական և այլ միջոցառումների համակարգ է, որոնց օգնությամբ պետությունն իր համար ցանկալի ուղղությամբ ներգործում է բնակչության բնական շարժի (ամենից առաջ ծնելիության) վրա:

Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներում գերակշռում է բնակչության բնական աճի բարձրացմանն ուղղված քաղաքականությունը: Պետությունը խրախուսում է բազմազավակությունը, նշանակում է նպաստներ, տալիս է տարբեր արտոնություններ:

Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրների մեծ մասը վերջին տասնամյակներին սկսել է իրականացնել բնակչության բնական աճի կրճատմանն ուղղված ժողովրդագրական քաղաքականություն: Առավել մեծ ջանքեր են գործադրել բնակչության թվով աշխարհի երկու ամենախոշոր երկրները՝ Չինաստանը և Հնդկաստանը: Չինաստանի ժողովրդագրական քաղաքականության հիմնական կարգախոսն է՝ «Մեկ ընտանիք, մեկ երեխա»: Այդ քաղաքականության իրականացումն արդեն տվել է մեծ արդյունք: Վերջին քառասուն տարում Չինաստանի բնակչության բնական աճի ցուցանիշը 2,8%-ից նվազել է մինչև 0,4%, այսինքն՝ յոթ անգամ: Այդ պայմաններում Չինաստանը 2012 թվականից իր ժողովրդագրական քաղաքականությունը փոխել է հակառակ ուղղությամբ, խրախուսելով ընտանիքում մեկից ավելի երեխաների ծնունդը: Սակայն Հնդկաստանում բնական աճը (1,5%) դեռևս բարձր է աշխարհի բնակչության միջին բնական աճից:



«Ժողովրդագրական պայթյունը»՝ արդի մեծագույն հիմնախնդիր

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ են բնակչության վերարտադրությունը և բնական շարժը, որոնք են դրանց ցուցանիշները:
2. Բնակչության ծնելիության և մահացության ցուցանիշների վրա ո՞ր գործոններն են ազդում և ինչպե՞ս:
3. Նշե՞ք բնակչության վերարտադրության ռեժիմները:
4. Որոնք են բնակչության վերարտադրության առաջին և երկրորդ տիպերի բնորոշ գծերը, ո՞ր երկրներում են դրանք ձևավորվում:
5. Ինչ է ժողովրդագրական քաղաքականությունը: Ինչ նպատակ է այն հետապնդում: Նշե՞ք ժողովրդագրական քաղաքականության առանձնահատկությունները վերարտադրության տարբեր տիպ ունեցող երկրներում:

ԴԱՍ 7. ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՆԵՐԸ (ԳԱՂԹԵՐԸ)

Բնակչության տեղաբաշխումը: Երկրագնդի բնակչության ժամանակակից տեղաբաշխումը ձևավորվել է տարածքի բնակեցման և տնտեսական յուրացման հարյուրհազարավոր տարիների ընթացքում: Այդ տեղաբաշխումը խիստ անհավասարաչափ է:

Բնակչության տեղաբաշխում ասելով հասկանում ենք բնակչության աշխարհագրական բաշխվածությունը երկրագնդի վրա, առանձին տարածաշրջաններում ու երկրներում:

Ներկայումս բնակեցված են հս. լ. 78⁰ և հվ. լ. 56⁰ զուգահեռականների միջև գտնվող համարյա բոլոր ցամաքային տարածքները: Դեռևս բնակեցված չէ ցամաքի մոտ 15%-ը (երկրագնդի մերձբևեռային, լեռների բարձրադիր շրջանները և անապատային ընդարձակ տարածքների մեծ մասը): Նախկինում բնակեցված տարածքն ավելի սահմանափակ է եղել, սակայն ժամանակի ընթացքում, բնակչության թվի աճին և գիտության ու տեխնիկայի զարգացմանը համընթաց, ընդարձակվել է:

Տարածքի բնակեցվածության ընդհանուր պատկերը և բնակեցվածության աստիճանն արտահայտվում են բնակչության խտության ցուցանիշով: **Բնակչության միջին խտությունը** բնակչության թվի հարաբերությունն է տարածքի մակերեսին, այսինքն՝ բնակիչների միջին թվաքանակը 1 կմ² տարածքի հաշվով (մարդ/կմ²):

Ներկայումս բնակչության տեղաբաշխումը ծայրաստիճան անհամաչափ է. մարդկանց գրեթե 70%-ն ապրում է երկրագնդի ցամաքային տարածքի ընդամենը 7%-ի վրա: Բնակչության տեղաբաշխման վրա ազդում են մի շարք գործոններ: Դրանց շարքում բավական մեծ է բնական գործոնների՝ բնական պայմանների և ռեսուրսների (ռելիեֆ, կլիմա, ջրեր, հողեր և այլն) դերը, դրանց



Նպաստավոր լինելը բնակեցման և տնտեսական գործունեության համար: Դիտելով աշխարհի բնակչության տեղաբաշխման քարտեզը՝ կնկատեք, որ բնակչությունը հիմնականում կենտրոնացած է առավել բարենպաստ բնակլիմայական պայմաններով տարածքներում, առաջին հերթին՝ տաք և բարեխառն ջերմային գոտիներում գտնվող հարթավայրային և ծովափնյա շրջաններում: Միևնույն ժամանակ, խիստ նոսր են բնակեցված տունդրայի, տայգայի և անապատային բնական զոնաները, բարձրլեռնային շրջանները: Հետևաբար՝ մարդկանց կողմից չուրացված կամ թույլ յուրացված տարածքներն առաջին հերթին ծայրահեղ աննպաստ բնական պայմաններ ունեցող վայրերն են:

Երկրագնդի վրա բնակչության տեղաբաշխման մասին ընդհանուր պատկերացում տալիս են ստորև ներկայացված գծապատկերները: Գծապատկերներից երկուսն է, որ աշխարհի բնակչությունը հիմնականում կենտրոնացած է առավել բարենպաստ բնակլիմայական պայմաններ ունեցող շրջաններում: Դրանք ծովի մակարդակից մինչև 500 մ բարձրության վրա գտնվող հարթավայրերն են, որոնք կազմում են ցամաքի մակերեսի 28%-ը: Այստեղ է բնակվում երկրագնդի բնակչության 80%-ը: Բոլոր աշխարհամասերում նկատվում են բնակչության տեղաբաշխման հետևյալ օրինաչափությունները.

ա) բնակչության խտությունը նվազում է ծովի մակարդակից տեղանքի ունեցած բարձրության մեծացմանը զուգընթաց,

բ) բնակչությունը խիստ կենտրոնացած է ծովափնյա գոտիներում: Աշխարհի բնակչության մոտ կեսը կենտրոնացած է օվկիանոսների ափերով ձգվող 200 կիլոմետր լայնությամբ ցամաքային գոտում, որն զբաղեցնում է ցամաքի 16%-ը,

գ) բնակչության խտությունը նվազում է ծովերից և օվկիանոսներից տեղանքի ունեցած հեռավորության մեծացմանը զուգընթաց:



Սակայն բնական գործոնների դերը միանշանակ չէ: Դրանք բնակչության տեղաբաշխման վրա ազդում են տնտեսական գործոնների ներգործությամբ՝ արտադրության տեղաբաշխման և տարածքի տնտեսական մասնագիտացման միջոցով:

Բնակչության խոշոր կուտակման վայրեր են զարգացած արդյունաբերական և ոռոգելի հողագործության շրջանները, օրինակ՝ գործարանների ու ֆաբրիկաների խոշոր կուտակման շրջանները ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ճապոնիայում և այլ երկրներում, կամ էլ՝ զարգացած ոռոգովի հողագործության շրջանները Նեդոս, Ցանցզի ու Գանգես գետերի հովիտներում:

Բնակչության տեղաբաշխումն անընդհատ փոփոխվող պատմական գործընթաց է, որի վրա զգալի ազդեցություն ունի նաև բնակեցման ժամանակի տևողությունը, այսինքն՝ պատմական գործոնը: Քաղաքակրթության հնագույն օջախներում (Չինաստան, Հնդկաստան, Հարավային Եվրոպա) բնակչության կենտրոնացումն զգալի չափով ավելի մեծ է, քան համեմատաբար նոր բնակեցված տարածաշրջաններում (Ավստրալիա, Սիբիր և այլն):

Աշխարհում առանձնանում են բնակչության խոշոր կուտակման չորս գլխավոր տարածքներ (արեալներ):

Առաջինը **Ասիա աշխարհամասի արևելքը, հարավն ու հարավ-արևելքն** են, որտեղ բնակչության միջին խտությունը տեղ-տեղ հասնում է 500-1000 մարդ/կմ²-ի: Այստեղ բնակչության մեծ կուտակմանը նպաստել են բարենպաստ բնակլիմայական պայմանները և ոռոգելի հողագործության զարգացումը:

Բնակչության մեծ կուտակման երկրորդ տարածքը **Արևմտյան Եվրոպան** է: Միջին խտությունն այստեղ ավելի քան 200 մարդ/կմ² է, իսկ արդյունաբերական գլխավոր շրջաններում՝ 1000 մարդ/կմ²:


Բնակչության մեծ կուտակման երրորդ տարածքը ձևավորվել է **ԱՄՆ-ի հյուսիս-արևելքում**: Այստեղ նույնպես, ինչպես Արևմտյան Եվրոպայում, բնակչության բարձր խտության գլխավոր պատճառներն են բարենպաստ բնակլիմայական պայմանները, նպաստավոր աշխարհագրական դիրքը (առաջին հերթին ծովին մոտ գտնվելը) և արդյունաբերության զարգացման բարձր մակարդակը:

Բնակչության մեծ կուտակման չորրորդ տարածքը ձևավորվել է ավելի ուշ, **Աֆրիկայում՝ Գվինեական ծոցին հարող գոտում**: Բնակչության արագ աճի հետևանքով այս տարածքի բնակչության թիվն արդեն անցել է 300 մլն-ի սահմանագիծը, ինչը զգալիորեն գերազանցում է երրորդ տարածքի բնակչության թիվը:

Բնակչության միգրացիաները: Ամեն մի երկրի բնակչության ընդհանուր թվաքանակը և տեղաբաշխումը փոփոխվում են ոչ միայն բնական, այլև մեխանիկական շարժի՝ միգրացիայի հաշվին: Մարդիկ ծնվում և ապրում են մեծ


մասամբ իրենց ծննդավայրում: Սակայն մարդկանց մի մասը տարբեր տևողությամբ՝ ժամանակավոր կամ մշտական բնակության նպատակով տեղափոխվում է այլ բնակավայր, այսինքն՝ տեղի է ունենում **միգրացիա**:

Միգրացիայի տեսակները ըստ տևողության, կազմակերպման եղանակի և ձևի




Միգրացիայի գլխավոր պատճառը սոցիալ-տնտեսականն է (աղքատություն, գործազրկություն և այլն): Միգրացիաները կարող են տեղի ունենալ նաև քաղաքական, ազգային, կրոնական, ընտանեկան-կենցաղային և այլ պատճառներով, ինչպես նաև հարկադիր կամ կամավոր ձևով:

Միգրացիայի տեսակները ըստ դրա տարածքի ընդգրկման



Միգրացիաներն ըստ տարածքի ընդգրկման լինում են **արտաքին** և **ներքին**: **Արտաքին** միգրացիաներ են արտագաղթը (Էմիգրացիան) և ներգաղթը (Իմիգրացիան): Էմիգրացիան քաղաքացիների մեկնումն է սեփական երկրից, իսկ իմիգրացիան՝ քաղաքացիների մուտքը այլ երկրներից տվյալ երկիր:



Արտաքին գաղթերը դիտվել են վաղ ժամանակներից (պատմությունից հիշենք թեկուզ «ժողովուրդների մեծ գաղթը»): Դրանք ավելի զանգվածային են դարձել աշխարհագրական մեծ հայտնագործություններից հետո, պատմական նոր և նորագույն ժամանակներում: Բավական է ասել, որ ամբողջ Ամերիկա և Ավստրալիա աշխարհամասերը, Աֆրիկայի առանձին շրջաններ բնակեցվել և յուրացվել են գլխավորապես եվրոպայից արտագաղթածների հաշվին:

Միայն XIX դարում եվրոպական երկրներից շուրջ 60 մլն մարդ տեղափոխվել է Ամերիկա, Ավստրալիա և այլ տարածաշրջաններ: Մինչ այդ Աֆրիկայից բռնի տեղահանվել (բռնագաղթ) և որպես ստրուկ Ամերիկայում վաճառվել է շուրջ 100 մլն սևամորթ:



Հյուսիսային Աֆրիկայից դեպի Մալթա անօրինական ներգաղթը

Կրոնական շարժառիթով զանգվածային տեղաշարժեր են տեղի ունեցել Հնդկաստանում: 1947թ. Հնդկաստան գաղութի անկախացումից հետո միլիոնավոր մահմեդականներ Հնդկաստանից գաղթել են Պակիստան, իսկ Պակիստանից միլիոնավոր հնդուականներ և բուդդայականներ՝ Հնդկաստան:

Քաղաքական և ազգային շարժառիթներով միգրացիայի օրինակ է Ադրբեյջանից շուրջ 400 հազար հայերի հարկադրված գաղթը Հայաստանի Հանրապետություն և այլ երկրներ: Մյուս կողմից՝ տարբեր տարիների և հատկապես վերջին երկու տասնամյակում, հիմնականում տնտեսական պատճառներով, Հայաստանից արտագաղթել է ավելի քան 1 մլն մարդ:

Միգրացիայի մյուս տեսակը՝ **ներքին միգրացիան**, տեղի է ունենում պետության ներսում հետևյալ չորս ուղղությամբ՝ գյուղից քաղաք, քաղաքից գյուղ, գյուղից գյուղ և փոքր քաղաքներից դեպի խոշոր քաղաքներ: Առավել տարածված են գյուղերից և փոքր քաղաքներից դեպի խոշոր քաղաքներ միգրացիաները, որոնք նպաստում են քաղաքային բնակչության թվի աճին: Շատ երկրներում բնակչության ներքին միգրացիաները հիմնականում տեղի են ունենում նախկինում յուրացված և խիտ բնակեցված շրջաններից դեպի նոր յուրացվող շրջաններ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է բնակչության տեղաբաշխումը: Որո՞նք են բնակչության տեղաբաշխման վրա ազդող գործոնները:
2. Ինչպիսի՞ն է աշխարհի բնակչության տեղաբաշխման իրական պատկերը: Ինչ օրինաչափություններ կարող եք նշել:
3. Թվարկե՞ք և բնութագրե՞ք աշխարհի բնակչության կուտակման գլխավոր տարածքները: Տո՞ւյց տվեք քարտեզի վրա:
4. Ինչ է ցույց տալիս բնակչության խտության ցուցանիշը: Աշխարհագրության դասընթացից ձեզ հայտնի տվյալներով հաշվե՞ք երկրագնդի բնակչության միջին խտությունը:
5. Ինչ է բնակչության միգրացիան, որո՞նք են դրա պատճառները:
6. Որո՞նք են միգրացիայի տեսակները: Բերե՞ք զանգվածային միգրացիայի օրինակներ:

ԴԱՍ 8. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄ: ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ամբողջությամբ վերցրած աշխարհի և ամեն մի առանձին երկրի բնակչության կարևոր բնութագրիչներից է նրա կազմը: Բնակչության կազմի մասին ձգգրիտ տեղեկություններ են տալիս մարդահամարները:

Բնակչության կազմը կարելի է որոշել ըստ տարբեր ցուցանիշների: Առավել տարածված ցուցանիշներից նշենք բնակչության կազմն ըստ **սեռի, տարիքի, կրթական մակարդակի** (ցենզի), **զբաղմունքի, ազգային և ռասայական պատկանելության, լեզվի, կրոնական դավանանքի**:

Բնակչության **սեռային կազմը** ցույց է տալիս, թե ինչպիսին է տղամարդկանց և կանանց թվաքանակի հարաբերակցությունը:

Սեռային կազմը տարբեր է ինչպես բնակչության առանձին տարիքային խմբերում, այնպես էլ աշխարհագրորեն՝ աշխարհի տարբեր տարածաշրջաններում և երկրներում: Միջինացված տվյալներով՝ աշխարհում 100 նորածին աղջկա հաշվով ծնվում է 105-106 տղա: Տղաների քանակական գերազանցությունը պահպանվում է մինչև 15 տարեկանը: Երիտասարդ տարիքում սեռերի քանակը հավասարակշռվում է: Բարձր տարիքային խմբերում կանայք ավելի մեծ թիվ են կազմում, որովհետև տղամարդիկ ավելի շատ են մահանում, բացի դրանից՝ կանայք ավելի երկարակյաց են, քան տղամարդիկ:

Ընդհանուր առմամբ, ամբողջ աշխարհում, ի հաշիվ Չինաստանի, Հնդկաստանի և մահմեդական երկրների, տղամարդկանց թիվը փոքր-ինչ (մոտ 35-40 մլն-ով) մեծ է կանանց թվից, թեև աշխարհի երկրների մեծ մասում գերակշռում են կանայք: Կանանց գերակշռությունը հատկապես մեծ է զարգացած եվրոպական երկրներում, որտեղ մեծ է ծերերի բաժինը, իսկ նրանց մեծամասնությունը կանայք են (կանանց կյանքի միջին տևողությունը 5-8 տարով ավելի է, քան տղամարդկանցը):

Սովորաբար մահմեդական և որոշ զարգացող երկրներում կանանց թիվը գիջում է տղամարդկանց թվին, ինչը պայմանավորված է վաղ ամուսնություններով, կնոջ անազատ վիճակով, հետևաբար՝ կանանց կյանքի կարճ տևողությամբ: Այս երկրներում, որտեղ կինն իրավահավասար չէ տղամարդուն, ծնում և խնամում է շատ երեխաների ու չափազանց շատ աշխատում ընտանիքում, կանանց մահացությունը համեմատաբար բարձր է:


Բնակչության **տարիքային կազմը** (կառուցվածքը) բնակչության բաշխումն է ըստ տարիքային խմբերի: Սովորաբար առանձնացվում են տարիքային հետևյալ խմբերը՝ մինչև 14 տարեկան (երեխաներ), 15-59 տարեկան (երիտասարդ և հասուն մարդիկ՝ չափահաս բնակչություն) և 60 տարեկանից բարձր (ծերեր և զառամյալներ):

Յուրաքանչյուր խմբի բաժինը ընդհանուր բնակչության մեջ պայմանավորված է բնակչության վերարտադրության բնույթով: Երեխաների բաժինը մեծ է բնակչության վերարտադրության երկրորդ տիպի, այսինքն՝ զարգացող երկրներում: Մեծահասակ (ծեր) բնակչության բաժինը մեծ է բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներում, նախ և առաջ՝ եվրոպայի զարգացած երկրներում:

Ընդունված է բնակչության տարիքային կազմը ներկայացնել սեռային կազմի հետ և գրաֆիկորեն ցույց տալ սեռատարիքային բուրգով (տե՛ս էջ 37-ի նմուշները): Զարգացող երկրներին բնորոշ է լայն հիմքով և նեղ գագաթով, իսկ զարգացած երկրներին՝ նեղ հիմքով, համեմատաբար լայն միջնամասով ու գագաթով բուրգ:

Առաջին բուրգն արտահայտում է «ծերացած», իսկ երկրորդը՝ «երիտասարդ» բնակչության կազմը:

Սեռատարիքային բուրգի նմուշներ



Բնակչության ծերացումը բնութագրող ցուցանիշը բնակչության ընդհանուր թվի մեջ 60-ից բարձր տարիքի մարդկանց բաժինն է: Աշխարհի «ամենաձեր» ժողովուրդը ճապոնացիներն են (28%), ապա՝ իտալացիները (26%), գերմանացիները (25%), իսկ «ամենատերիտասարդը» Միացյալ Արաբական Ամիրայությունների (2%) և Քուվեյթի (3%) ժողովուրդներն են: ՀՀ-ում 60-ից բարձր տարիք ունի բնակչության 14%-ը:

Սեռատարիքային բուրգի միջին մասն ընդհանուր գծերով ցույց է տալիս աշխատանքային տարիքի բնակչության քանակը: Դրա միջոցով հնարավոր է լինում ճիշտ գնահատել բնակչության մի շատ կարևոր բնութագրիչ՝ աշխատանքային ռեսուրսները:

Աշխատանքային ռեսուրսներ: Անցյալ դասերից դուք իմացաք, որ հասարակության գլխավոր արտադրողական ուժը բնակչությունն է: Նաև այդ ուժով է որոշվում երկրի տնտեսական հզորությունը, նյութական և հոգևոր բարիքներ ստեղծելու հնարավորությունը: Բայց դուք գիտեք նաև, որ երկրի արտադրական կյանքին ու տնտեսական հզորացմանը անմիջական մասնակցություն է ունենում ոչ թե ամբողջ բնակչությունը, այլ միայն նրա աշխատունակ մասը, որը և կազմում է աշխատանքային ռեսուրսները:

Աշխատանքային ռեսուրսներ են համարվում բնակչության աշխատանքային հասակի (15-65 տարեկան) մարդիկ, ինչպես նաև աշխատող ավելի մեծահասակներն ու երեխաները, ովքեր իրենց ֆիզիկական կարողություններով, գիտելիքներով և փորձով կարողանում են աշխատել տնտեսության որևէ բնագավառում:

Աշխատանքային ռեսուրսների բաժինը կախված է բնակչության սեռատարիքային կազմից: Զարգացող երկրներում աշխատանքային տարիքի բնակչության

չության բաժինը համեմատաբար ավելի ցածր է, քան զարգացած երկրներում (բացատրե՞ք ինչո՞ւ):

Աշխատանքային ռեսուրսները չափվում ու գնահատվում են ոչ միայն քանակով, այլև **որակով**: **Աշխատանքային ռեսուրսների որակը որոշվում է մարդկանց կրթական մակարդակով և մասնագիտական կարողություններով**:

Բնակչության կրթական մակարդակի գլխավոր ցուցանիշներն են անգրագետների և գրագետների (կրթություն ստացածների) տոկոսային հարաբերակցությունը և գրագետների թվում բարձրագույն կրթություն ստացածների բաժինը (%):

Աշխարհի բնակչության կրթական մակարդակն անշեղորեն բարձրանում է: Այսպես, անգրագետների բաժինը աշխարհի չափահաս (15 տարեկանից բարձր) բնակչության շրջանում 1950թ. կազմում էր 44%, իսկ ներկայումս՝ մոտ 12%: Այդուհանդերձ, բացարձակ թվով դա կազմում է ավելի քան 800 մլն մարդ: Այսինքն՝ մոլորակի յուրաքանչյուր 9-րդ բնակիչ դեռևս զուրկ է տարրական գրագիտությունից:

Մեծ են անգրագիտության մակարդակի տարբերություններն ըստ առանձին երկրների և տարածաշրջանների:

Անգրագիտության մակարդակը ցածր է տնտեսապես զարգացած երկրներում (1,5%), բայց խիստ բարձր է Կենտրոնական Աֆրիկայի (Սահարայից հարավ գտնվող շրջաններ) և Հարավային Ասիայի (Բուրմա, Հնդկաստան, Բանգլադեշ) և այլ երկրներում, որտեղ չափահաս բնակչության մոտ կեսն անգրագետ է: Ընդ որում զարգացող երկրներում կանանց անգրագիտության մակարդակը գրեթե երկու անգամ բարձր է, քան տղամարդկանցը:

Ինչքան բարձր է բնակչության կրթական մակարդակը, այնքան ավելի բարձր է աշխատանքային ռեսուրսների որակը:



Թեթև արդյունաբերության մեջ գերազանցապես ընդգրկված են կանայք:

Այն աշխատանքային ռեսուրսները, որոնք ունեն մշտական զբաղմունք և եկամուտ, ինչպես նաև չեն աշխատում, բայց աշխատանք են որոնում, այսինքն՝ գործազուրկ են, կոչվում են **տնտեսապես ակտիվ բնակչություն**:

Կարևոր ցուցանիշ է աշխատանքային ռեսուրսների զբաղվածության կառուցվածքը, որը ցույց է տալիս, թե տնտեսության առանձին ճյուղերում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սպասարկման ոլորտ և այլն) տվյալ երկրի աշխատանքային ռեսուրսների քանի տոկոսն է զբաղված:

Ջարգացած երկրներում բարձր է զբաղվածության ընդհանուր մակարդակը, իսկ զբաղվածների ճնշող մեծամասնությունը բաժին է ընկնում սպասարկման ոլորտին և արդյունաբերությանը: Մինչդեռ տնտեսապես հետամնաց երկրներում իրավիճակն այլ է. բարձր է գործազրկության մակարդակը, իսկ աշխատանքային ռեսուրսների զբաղվածության հիմնական ոլորտը գյուղատնտեսությունն է:

Դժվար չէ եզրակացնել, որ տնտեսությունն ավելի հաջող է զարգանում այն երկրներում, որտեղ ավելի մեծ է տնտեսապես ակտիվ բնակչության բաժինը, այլ կերպ ասած՝ որտեղ ավելի մեծ թվով աշխատունակ մարդիկ են ապահովված աշխատանքով, և, բացի դրանից՝ որտեղ քիչ են գործազուրկները:

Գործազրկությունը սոցիալական չարիք է, որն ուղեկցվում է աղքատությամբ, իսկ աղքատությունն էլ պատճառ է դառնում բնակչության զանգվածային արտագաղթի: Վերջինս տարածված է հատկապես Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի տնտեսապես հետամնաց երկրներում: Վերջին տարիներին այն տարածում գտավ նաև հետխորհրդային նորանկախ երկրներում: Գործազրկության մակարդակի կրճատումը և աղքատության վերացումը այժմ համայն մարդկությանը մտահոգող սուր հիմնախնդիրներից են:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


1. Թվարկեք այն գլխավոր ցուցանիշները, որոնք բնութագրում են բնակչության կազմը:
2. Նշեք բնակչության սեռային կազմի և տարիքային կազմի առանձնահատկությունները տարբեր տիպի երկրներում:
3. Նկարագրեք և բացատրեք բնակչության սեռատարիքային բուրգերը:
4. Բնութագրեք և համեմատեք «տնտեսապես ակտիվ բնակչություն» և «աշխատանքային ռեսուրսներ» հասկացությունները:
5. Ինչպիսին են բնակչության կրթական մակարդակի տարբերությունները տարբեր տիպի երկրներում:
6. Համեմատեք զարգացած և տնտեսապես հետամնաց երկրների աշխատանքային ռեսուրսների զբաղվածության մակարդակն ու կառուցվածքը:

ԴԱՍ 9. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՌԱՍԱՅԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ


Բնակչության ռասայական կազմը: Մարդիկ իրարից տարբերվում են իրենց արտաքին՝ ռասայական (մարդաբանական) հատկանիշներով, որոնք փոխանցվում են ժառանգաբար: Այդ հատկանիշներից գլխավորներն են մաշկի գույնը, գանգի կառուցվածքը, մազերի գանգրությունը, աչքերի բացվածքը, շուրթերի ձևը և այլն:

Ռասաներն ընդհանուր ծագմամբ, ինչպես նաև ժառանգաբար փոխանցվող արտաքին հատկանիշներով իրար նման մարդկանց պատմականորեն ձևավորված խմբեր են:

Տարբեր արտաքին հատկանիշներ ունեցող մարդկանց ընդունված է խմբավորել 4 մեծ ռասաներում՝ եվրոպեոիդ, մոնղոլոիդ, նեգրոիդ և ավստրալոիդ (դրանց վերաբերյալ որոշ պատկերացում դուք արդեն ստացել եք 6-րդ դասարանի աշխարհագրության դասերից):



Եվրոպեոիդ ռասա



Մոնղոլոիդ ռասա

Եվրոպեոիդ ռասայի ներկայացուցիչներն ունեն սպիտակ կամ թուփ մաշկ, միջին կամ բարձր հասակ, սև կամ խարտյաշ մազեր: Ինչպես երևում է էջ 41-ի քարտեզից, նրանք տարածված են Եվրոպայում, Հարավարևմտյան և Հարավային Ասիայում, Ամերիկայում և Հյուսիսային Աֆրիկայում:

Մոնղոլոիդ ռասային բնորոշ են սև, կոշտ և ուղիղ մազերը, մաշկի


թուփ, հաճախ դեղնավուն գույնը, տափակ դեմքը, խիստ արտահայտված այտոսկրերը, աչքի նեղ բացվածքը, վերին կոպի խիստ զարգացած ծալքը: Տարածման հիմնական շրջաններն են Արևելյան և Հարավարևելյան Ասիան ու Ամերիկան:

Նեգրոիդ ռասային բնորոշ հատկանիշներն են մաշկի մուգ գույնը, գանգուր մազերը, լայն քիթը, հաստ շուրթերը: Նեգրոիդները մեծամասնությունն են կազմում Կենտրոնական և Հարավային Աֆրիկայում, բնակվում են նաև

Ամերիկայում: Դրանք XVII–XVIII դարերում Աֆրիկայից այստեղ ստրկավաճառության բերված սևամորթների հետնորդներն են:




Նեգրոիդ ռասա



Ավստրալոիդ ռասա

Ավստրալոիդ ռասայի ներկայացուցիչներն առանձնանում են մուգ գույնի մաշկով, հաստ շուրթերով, լայնանիստ քթով, զարգացած մազածածկույթով: Դրանք Ավստրալիայի, Օվկիանիայի, ինչպես նաև Հնդկաստանի հարավի և Ինդոնեզիայի որոշ շրջանների տեղաբնիկներն են:

ԱՇԽԱՐՀԻ ՌԱՍԱՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



Մեծ ռասաների շփման գոտում գոյանում են անցումային և խառը ռասաներ: Այսպես, հազարավոր տարիներ առաջ եվրոպեոիդ և նեգրոիդ ռասաների շփման գոտում ձևավորվել է եթովպական անցումային ռասան: Խառը ռասաները ձևավորվել են (և հիմա էլ ձևավորվում են) մեծ ռասաների ներկայացուցիչների խառն ամուսնություններից: Այսպես, եվրոպեոիդ ու մոնղոլոիդ ռասաների խառնածինները կոչվում են **մետիսներ**, եվրոպեոիդ և նեգրոիդ ռասաներինը՝ **մուլատներ**, իսկ նեգրոիդ և մոնղոլոիդ ռասաներինը՝ **սամբոներ**: Խառնածիններն առանձնապես մեծաթիվ են Հարավային Ամերիկայում:

Հիմնական ռասաների առաջացման ու ձևավորման գործընթացում վճռական դեր են խաղացել բնական պայմանների երկարատև ազդեցությունը և այդ պայմաններին մարդկանց օրգանիզմների հարմարվելը: Օրինակ՝ նեգրոիդների մաշկի սև գույնը նրանց մաշկի մեջ արևի ճառագայթներից պաշտպանող մեխանիզմն է կոչվող պիգմենտի մեծ կուտակման արդյունք է, իսկ մազերի գանգրությունը՝ ուժեղ արևից պաշտպանվելու ջերմամեկուսիչ միջոց:

Գաղութատիրության դարաշրջանում ձևավորվեց հակագիտական մի տեսություն ռասաների անհավասար լինելու մասին, ըստ որի՝ տարբեր ռասաների

Ներկայացուցիչների մտավոր կարողությունները տարբեր են, կան «ստորակարգ» և «բարձրակարգ» ռասաներ, հետևապես նրանց իրավունքները հավասար լինել չեն կարող:

Իրականում ապացուցված է, որ գիտության, մշակույթի, կրթության և մարդկային գործունեության բոլոր բնագավառներում տարբեր ռասաների ներկայացուցիչներն ունեն հավասար մտավոր ունակություններ և հավասար հաջողություններ:

Ազգային կազմը: Աշխարհում հաշվվում է շուրջ 3-4 հազար ժողովուրդ (էթնոս), որոնք միմյանցից տարբերվում են թվաքանակով, լեզվով, մշակույթով, սովորույթներով, էթնիկական (ազգային) ինքնագիտակցությամբ:

Յուրաքանչյուր ազգ որոշակի տարածքի վրա պատմականորեն ձևավորված և վերոհիշյալ հատկանիշներով օժտված մարդկանց կայուն խումբ է:

Ազգերը զարգացման ամենաբարձր աստիճանին հասած էթնոսներն են: Իսկ զարգացման ամենացածր աստիճանի վրա մնացած ոչ մեծ թվաքանակով **ցեղերը** ներկայումս հանդիպում են Աֆրիկայում, Ամազոնիայում, Օվկիանիայում և այլ վայրերում: Զարգացման միջին աստիճանի վրա գտնվող էթնոսները կոչվում են **ազգություններ** կամ **ցեղախմբեր**:

Ի տարբերություն ռասայական պատկանելության՝ ազգային պատկանելությունը շատ դժվար է որոշել: Այստեղ վճռորոշը անձի ազգային ինքնագիտակցությունն է՝ այս կամ այն էթնիկ համայնքին նրա պատկանելու գիտակցումը:

Ազգերի ձուլումը (ուծացումը) մի ազգի մեջ մյուս ազգերի ներկայացուցիչների ձուլումն է առաջինի լեզուն, մշակույթը և ազգային սովորույթները յուրացնելու միջոցով կամ որևէ ազգի տարրալուծումն է այլ ազգերի մեջ:

Ազգերի ձուլումը մեծ մասամբ կատարվում է բնական՝ խաղաղ ճանապարհով, աստիճանաբար, պատմական զարգացման երկարատև ժամանակահատվածում: Սակայն լինում է նաև բռնի ձուլում, երբ իշխող ազգը ձնշումների ու հալածանքների միջոցով ստիպում է ազգային փոքրամասնությանը հրաժարվել իր լեզվից ու մշակույթից և ազգափոխվել:

Եթե համեմատեք աշխարհի բնակչության լեզվական կազմի քարտեզը քաղաքական քարտեզի հետ, ապա ակնհայտորեն կերևա, որ պետական, ազգային (էթնիկական), ռասայական և լեզվական սահմանները չեն համընկնում և, փոխներթափանցելով, ստեղծում են խճճված գծագրություն: Ստեղծվել է ազգերի ու ռասաների աշխարհագրական տարածման չափազանց բարդ խճանկար: Դրա պատճառը երկրագնդի վրա բնակչության, առանձին ժողովուրդների անընդհատ տեղաշարժերն են, միգրացիաները:

Այն երկրներում, որտեղ ազգային (էթնիկական) և պետական (քաղաքական) սահմանները համընկնում են, կազմավորվում են միազգ պետություններ

(օրինակ՝ Ճապոնիան, Հայաստանը): Մեծ թիվ են կազմում բազմազգ պետությունները, որոնցից մի քանիսում ապրում են նույնիսկ տասնյակ ժողովուրդներ (օրինակ՝ Ռուսաստանը, Հնդկաստանը, Իրանը և այլն):

Երկրների բնակչության ազգային (էթնիկական) և լեզվական կազմերը հաճախ նույնը չեն: Կան ազգեր, որոնք խոսում են մի քանի լեզուներով (օրինակ՝ շվեյցարացիները): Ավելի հաճախ նույն լեզվով (օրինակ՝ անգլերեն, իսպաներեն, պորտուգալերեն) խոսում են տարբեր ազգեր:

Աշխարհի լեզուներն ունեն հեռավոր և մոտ ընդհանրություններ, որոնք պայմանավորված են այդ լեզուները կրող ժողովուրդների պատմական ծագմամբ (արյունակցությամբ): Այս հատկանիշի հիման վրա աշխարհի լեզուները միավորվում են **15 խոշոր և 7 փոքր լեզվաընտանիքների** մեջ: Ամենատարածվածը հնդեվրոպական լեզվաընտանիքն է, որի կազմի մեջ մտնող լեզուներով խոսում է աշխարհի բնակչության շուրջ կեսը: Դրա պատճառը արևմտեվրոպական երկրների ժողովուրդների լեզուների տարածումն է նրանց աշխարհասփյուռ գաղութներում: Երկրորդ տեղում է չին-տիբեթական լեզվաընտանիքը, որի մեջ մտնող լեզուներով խոսում է աշխարհի բնակչության ավելի քան 20%-ը: Ավելի փոքր, բայց բավական տարածված են այթայան, սեմաքամյան, ուրալյան լեզվաընտանիքները:

Մեր մայրենին՝ հայերենը, պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին:


Ամեն լեզվաընտանիք իր հերթին բաժանվում է ավելի փոքր խմբերի՝ **լեզվախմբերի**, որոնք էլ, իրենց հերթին, բաղկացած են առանձին **լեզուներից**: Այսպես՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի կազմում առանձնանում են սլավոնական, ռոմանական, գերմանական խոշոր լեզվախմբերը: Հայերենը պատկանում է հայկական լեզվախմբին:

Մեր հարևան պարսիկների լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական լեզվախմբին, վրացերենը՝ քարթվելական լեզվաընտանիքի քարթվելական լեզվախմբին, թուրքերենն ու ադրբեջաներենը՝ այթայան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին:

Խոսողների թվով աշխարհում առաջին տեղում չինարենն է (շուրջ 1,3 մլրդ մարդ): Առավել գործածական և տարածված լեզուներն են անգլերենը, իսպաներենը, ֆրանսերենը, արաբերենը, ռուսերենը:

Կրոնական կազմը: Աշխարհի ժողովուրդները դավանում են տարբեր կրոններ: Սակայն ամենամեծաքանակ հետևորդներ ունեն երեքը՝ **քրիստոնեությունը, մահմեդականությունը (իսլամ) և բուդդայականությունը** (կամ **բուդդիզմը**): Լայն տարածվածության պատճառով դրանք համարվում են համաշխարհային կրոններ:

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ



Քրիստոնեություն դավանում է ավելի քան 1,9 մլրդ մարդ: Նրանք հիմնականում բնակվում են Եվրոպայում, Ամերիկայում, Ավստրալիայում, Հարավային և Կենտրոնական Աֆրիկայում և Ասիայի մի շարք երկրներում:

Քրիստոնեությունն ունի մի քանի ուղղություն: Գլխավոր ուղղություններն են կաթոլիկությունը, ուղղափառությունը և բողոքականությունը:

Մահմեդականություն դավանողների թիվը շուրջ 1,2 մլրդ է: Նրանք բնակվում են Հյուսիսային Աֆրիկայում և Հարավարևմտյան ու Կենտրոնական Ասիայում: Նրա երկու ուղղություններն են սուննիզմը և շիիզմը: Մահմեդականների թվով առաջին երկիրը Ինդոնեզիան է:

Երրորդը **բուդդայականությունն** է (կամ բուդդիզմը), որի հետևորդների թիվն աշխարհում հասնում է շուրջ 500 մլն-ի: Դրա տարածման գլխավոր տարածաշրջաններն են Հարավարևելյան և Արևելյան Ասիան ու Մինդոլիան:

Ի տարբերություն համաշխարհային կրոնների՝ մյուսները սահմանափակ տարածում ունեն և հայտնի են որպես ազգային կամ տեղական կրոններ: Դրանցից համեմատաբար մեծաթիվ հետևորդներ ունեն հնդուիզմը (Հնդկաստան), կոնֆուցիականությունն ու դաոսիզմը (Չինաստան), սինտոիզմը (Ճապոնիա):

Հսագույն կրոններից է հուդայականությունը, որի դավանորդները հրեաներն են, և որը համարվում է Իսրայելի պետական կրոնը:

Աֆրիկայի և Ամերիկայի որոշ տարածքներում դեռևս պահպանվում են ցեղային ավանդական պաշտամունքները:

Աշխարհի բնակչության մի մասն աթեիստ է (աստվածամերժ): Աթեիստները հավատացյալ չեն և որևէ կրոնի չեն հետևում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է ռասան: Որո՞նք են ռասայական հատկանիշները:
2. Թվարկե՛ք չորս մեծ ռասաները: Քարտեզի վրա ցո՛ւյց տվե՛ք դրանց տարածման հիմնական շրջանները:
3. Ինչ է ազգը: Ինչպե՞ս է որոշվում անձի ազգային պատկանելությունը: Ինչ գիտե՞ք ազգերի ծովման մասին:
4. Նշե՛ք աշխարհի խոշորագույն լեզվաընտանիքները, լեզվախմբերը և լեզուները: Բացատրե՛ք հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուների լայն տարածման պատճառները:
5. Նշե՛ք համաշխարհային կրոններն ու դրանց տարածման շրջանները: Ցո՛ւյց տվե՛ք դրանք քարտեզի վրա:

ԴԱՍ 10. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

Բնակավայրերի տեսակները: Մարդիկ ի սկզբանե ապրել են որոշակի բնակավայրերում՝ ժամանակավոր կամ մշտական: Պատմական զարգացման ընթացքում բնակավայրերը փոխել են իրենց բնույթը, արտաքին տեսքն ու չափերը:

Մարդկանց առաջին բնակատեղիները եղել են **գյուղական բնակավայրեր**՝ կառուցված նախապես քարանձավներում, ապա նաև՝ վերգետնյա շինությունների տեսքով: Ավելի ուշ՝ Ք. ա. III հազարամյակի վերջում, սկսվեց արհեստների ու առևտրի անջատումը գյուղատնտեսական աշխատանքից, և առաջացան առաջին քաղաքային բնակավայրերը:

Բնակավայրերը եղել և մնում են մարդկային հասարակության տարածքային կազմակերպման սկզբնական բջիջը: Դրանք արտահայտում են տարաբնակեցման պատկերը:

Տարաբնակեցումը որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումն է ըստ բնակավայրերի ու դրանց համակարգերի: Տարաբնակեցումը նաև բնորոշվում է որպես բնակչության տարածական վերաբաշխում և բնակավայրերի ցանց:

Տարբերում են տարաբնակեցման երկու հիմնական տիպեր՝ քաղաքային և գյուղական:

Քաղաքները գյուղերից նախ և առաջ տարբերվում են բնակչության թվով և գործունեության բնույթով: Ի տարբերություն գյուղական բնակավայրերի՝ քաղաքներում բնակվում են ավելի մեծ թվով մարդիկ, ովքեր հիմնականում զբաղված են ոչ գյուղատնտեսական ոլորտներում (արդյունաբերություն, շինարարություն, սպասարկում և այլն):

Քաղաքային տարաբնակեցում: Քաղաքները երկրի «հրամանատարական կազմն» են, երկրի տնտեսական, մշակութային ու գիտական կյանքի գլխավոր կենտրոնները: Քաղաքները նաև հաղորդակցության ուղիների գլխավոր հանգուցակետերն են:

Քաղաքների աճն արագացել է XIX և XX դարերի ընթացքում, արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ: XX դարի երկրորդ կեսից քաղաքների զարգացման գործում սկսել են մեծ դեր խաղալ նաև գիտությունը, բարձրագույն կրթությունը, մշակույթը, առևտուրը, բանկային գործը: Դա զարկ է տվել արդեն ձևավորված քաղաքների բնակչության թվի առաջանցիկ աճին: Դրան զուգընթաց նաև ստեղծվել են մեծ թվով նոր քաղաքներ:

Քաղաքների աճի գործընթացը բնորոշող ցուցանիշը քաղաքային բնակչության բաժինն է (%) երկրի ընդհանուր բնակչության մեջ: Եթե 200 տարի առաջ աշխարհի քաղաքային բնակչության բաժինը կազմել է 3%, 1950թ.՝ 29%, ապա ներկայումս մոտ 50% է:

Քաղաքների աճի համաշխարհային գործընթացը զարգանում է 3 հիմնական ուղղությամբ:

Առաջին ուղղությունը ամբողջ բնակչության մեջ քաղաքային բնակչության բաժնի (%) աճի արագ թափն է (տեմպը), ինչը պայմանավորված է այն բանով, որ գյուղական բնակչության մի մասը մշտապես հոսում է դեպի քաղաք: Դրա պատճառներն են գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը և քաղաքներում արդյունաբերության, սպասարկման և այլ ոլորտներում նոր աշխատատեղերի ստեղծումը:

Երկրորդ ուղղությունը խոշոր քաղաքներում քաղաքային բնակչության համակենտրոնացման ուժեղացումն է: Բացի գյուղական բնակչությունից՝ դեպի խոշոր քաղաքներ է ձգտում նաև փոքր ու միջին մեծության քաղաքների բնակչությունը, որի պատճառը խոշոր քաղաքների մի շարք առավելություններն են՝ գիտության զարգացման, կրթության, արտադրության կազմակերպման ու բնակչության սպասարկման համար ավելի լավ պայմանները: Խոշոր քաղաքներն աճում են ավելի արագ, քան մյուս քաղաքները:


Եթե 1800թ. աշխարհում կար 1 մլն-ից ավելի բնակիչ ունեցող միայն մեկ քաղաք՝ Լոնդոնը, ապա XX դարի սկզբին այդպիսի քաղաքները տասն էին, իսկ ներկայումս դրանք 500-ից ավելի են: Հայտնվել են նույնիսկ 10 մլն-ից ավելի բնակիչ ունեցող քաղաքներ, որոնց թիվն արդեն գերազանցում է երկու տասնյակը:

Երրորդ ուղղությունը խոշոր քաղաքների տարածական ընդարձակումն է և քաղաքների տարածքային խմբերի ձևավորումը: Խոշոր քաղաքների տարածքն արագորեն ընդլայնվում է ի հաշիվ հարևան բնակավայրերի: Բացի դրանից՝ խոշոր քաղաքներին կից տարածքներում ձևավորվում են համեմատաբար փոքր քաղաք-արբանյակներ: Դրանց միջև արագորեն զարգանում են բազմաբնույթ սերտ կապեր, որոնց շնորհիվ գոյանում են **միակենտրոն և բազմակենտրոն** քաղաքային տարածական կուտակումները:

Առավել տարածված են միակենտրոն քաղաքային կուտակումները, որոնք սովորաբար ձևավորվում են մեկ, բայց խոշոր կենտրոնի՝ մայրաքաղաքի, խոշոր արդյունաբերական և նավահանգստային կենտրոնի շուրջը:

Բազմակենտրոն քաղաքային կուտակումները սովորաբար ձևավորվում են հանքարդյունաբերության և կուրորտային շրջաններում, մեկից ավելի կենտրոնների շուրջը: Օրինակ՝ Գերմանիայի Դյուսելդորֆ, Դորտմունդ, Դոյսբուրգ, Քյոլն կենտրոնների շուրջը ձևավորվել է Հռենոս-Ռուրի քաղաքային խոշոր կուտակումը:

ԱՇԽԱՐՀԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅԼ



Անվանումը	Քաղաք (հար. հազ. բնակիչ)
Մեխիկո	18 460
Բոգոտա	7 250
Լիմա	8 472
Ռիո դը ժանեյրո	6 187
Բուենոս Այրես	12 948
Տորոնտո	5 623
Նյու Յորք	8 391
Սան Պաուլու	11 037
Սանտյագո	5 015

Անվանումը	Քաղաք (հար. հազ. բնակիչ)
Լոնդոն	8 278
Փարիզ	9 643
Լագոս	5 195
Կահիրե	7 771
Ստամբուլ	10 822
Մոսկվա	10 536
Թեհրան	7 088
Կարաչի	9 339
Լահոր	5 143

ՔԱՂԱՔՆԵՐԸ*, 2010 թ.



Անվանումը	Քաղաք (հար. հազ. բնակիչ)
Տոկիո	8 489
Բեյջին (Պեկին)	11 509
Շենյան	5 303
Տյանցին (Տյանցզին)	7 499
Սեուլ	10 036
Բանգկոկ	6 866
Չունցին	9 691
Ուհան	8 312
Շանհայ	14 348

Անվանումը	Քաղաք (հար. հազ. բնակիչ)
Հայդերաբադ	5 742
Կոլկաթա (Կալկաթա)	13 206
Չենայ (Մադրաս)	6 560
Բանգալուր	5 701
Մումբայ (Բոմբեյ)	11 978
Դելի	9 879
Դաքա	5 333
Ջակարտա	8 820

Ամենախոշորներն են Տոկիոյի, Դելիի, Սան Պաուլոյի, Մումբայի, Մեխիկոյի քաղաքային կուտակումները, որոնցից յուրաքանչյուրում ապրում է 20 մլն-ից ավելի մարդ: Խոշոր են նաև Նյու Յորքի, Շանհայի, Կոլկաթայի, Դաքայի ագլոմերացիաները:



Մեխիկոյի համայնապատկերը

Քաղաքների տարածական խմբերը ընդարձակվելով երբեմն սերտաձուլում (միաձուլվում) են՝ առաջացնելով ավելի ընդարձակ քաղաքայնացված գոտիներ: Այդպիսիք ձևավորվել են ԱՄՆ-ի հյուսիսարևելյան գոտում՝ Բոստոնն ու Վաշինգտոն քաղաքների միջև (Բոսվաշ), Մեծ լճերի շրջանում՝ Չիկագոյի ու Փիթսբուրգի միջև (Չիփիթս), Ճապոնիայի Հոնսյու կղզում՝ Տոկիո և Օսակա քաղաքների միջև (Տոկայոն) և այլուր:

Գերխոշոր քաղաքներում և քաղաքների կուտակումներում առկա են մի շարք թերություններ (կանաչ տարածքների կրճատում, օդի աղտոտում և այլն), այդ պատճառով էլ շատ երկրների կառավարություններ ձգտում են սահմանափակել դրանց հետագա աճը:

Ամբողջ բնակչության մեջ քաղաքներում բնակվող մարդկանց՝ քաղաքաբնակների բաժինն ըստ երկրների և տարածաշրջանների մեծ տատանումներ է տալիս: Այդ բաժինը շատ բարձր է տնտեսապես զարգացած երկրներում (80-90%), և ընդհակառակը, դեռևս խիստ ցածր է Ասիայի, Աֆրիկայի հետամնաց երկրներում (20-30%):

Քաղաքների դասակարգումը: Քաղաքները դասակարգվում և խմբավորվում են ըստ մի շարք հատկանիշների, որոնցից առավել հաճախ օգտագործվողներն են մարդաշատությունը, գործառույթները (ֆունկցիաները) և այլն:


Ըստ մարդաշատության տարբերում են փոքր (մինչև 50 հազ. բնակիչ), միջին (50-100 հազ. բնակիչ), մեծ (100-250 հազ. բնակիչ), խոշոր (250-500 հազ. բնակիչ) և գերխոշոր (500 հազարից ավելի բնակիչ) քաղաքներ: Գերխոշոր քաղաքների շարքում առանձնանում են միլիոնանոց քաղաքները:

Տարբեր երկրներում բնակավայրը քաղաք կոչելու համար կիրառում են տարբեր չափանիշներ: Օրինակ՝ Իսլանդիայում և Դանիայում քաղաք են կոչվում 200-ից ավելի, Ֆրանսիայում՝ 2000-ից ավելի, Ճապոնիայում՝ 30000-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրերը:

Ըստ գործառույթների՝ քաղաքները լինում են արդյունաբերական (Արովյան), կուրորտային (Ջերմուկ), վարչական (Եղեգնաձոր), գիտական (Դուբնա), նավահանգստային (Փոթի), լեռնահանքային (Քաջարան): Բոլոր խոշոր քաղաքները բազմագործառույթ են:

Գյուղական տարաբնակեցում: Չնայած քաղաքների արագ աճին՝ աշխարհի բնակչության մոտ կեսն ապրում է շուրջ 20 մլն գյուղական բնակավայրերում:

Գյուղական տարաբնակեցման ձևերը տարբեր են: Դրանք կախված են երկրի գյուղատնտեսության առանձնահատկություններից, սոցիալական և բնական պայմաններից: Գոյություն ունեն գյուղական տարաբնակեցման երկու գլխավոր ձևեր՝ խմբային և ցրված: Գյուղական տարաբնակեցումը խմբային է, եթե գյուղական տները խմբավորված կուտակված են հավաք տարածքում: Այդպիսի բնակավայրերը տարբեր երկրներում անվանում են գյուղ, աուլ, ստանիցա, դշլաղ: Գյուղական տարաբնակեցումը ցրված է համարվում, երբ առանձնատները ցրված են ընդարձակ տարածքներում՝ իրարից մի քանի, նույնիսկ տասնյակ կիլոմետրեր հեռավորության վրա: Այդպիսի բնակավայրեր են ագարակը, ֆերման:



Լեռնային գյուղ Հիմալայների Անապոտնա գագաթի ստորոտին

Աշխարհի երկրների մեծ մասում և հատկապես Եվրասիայում գերակշռում է տարաբնակեցման խմբային ձևը: Ցրված ձևը առավելապես տարածված է ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում:

Քոչվոր անասնապահության շրջաններում մշտական բնակավայրեր ընդհանրապես չկան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է տարաբնակեցումը: Որո՞նք են տարաբնակեցման ձևերը:
2. Ե՞րբ և ի՞նչ գործոնների շնորհիվ են զարգացել քաղաքները: Նշե՞ք քաղաքների զարգացման առանձնահատկությունները զարգացած և զարգացող երկրներում:
3. Որո՞նք են քաղաքների և քաղաքների բնակչության բաժնի աճի՝ որպես համաշխարհային երևույթի դրսևորման հիմնական ուղղությունները:
4. Ինչո՞ւ են առաջանում քաղաքային կուտակումներ: Թվարկե՞ք աշխարհի խոշորագույն քաղաքային կուտակումները:
5. Ի՞նչ ցուցանիշներով կարելի է դասակարգել և խմբավորել քաղաքները:
6. Նշե՞ք գյուղական տարաբնակեցման ձևերը և դրանց տարածման շրջանները:

ԴԱՍ 11. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Օգտագործելով էջ 23-ի գծապատկերի տվյալները՝ գնահատե՛ք աշխարհի բնակչության թվի աճն անցյալում, ներկայում և ապագայում:
2. էջ 24-ի գծապատկերի տվյալների հիման վրա պարզե՛ք, թե ինչպես է աշխարհի բնակչությունը բաշխված ըստ աշխարհամասերի, և որտեղ են բնակչության թվի աճի տեմպերը բարձր:
3. Ինչ կապ կա բնակչության վերարտադրության և բնակչության սեռատարիքային կազմի միջև: Համեմատե՛ք զարգացած և զարգացող երկրների սեռատարիքային բուրգերը:
4. էջ 31-ի գծապատկերների տվյալների վերլուծության հիման վրա պարզե՛ք, թե ինչպես է փոփոխվում բնակչության բաշխումը՝ ա) ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության, բ) ըստ ծովից ունեցած հեռավորության:
5. Որո՞նք են աշխատանքային ռեսուրսների քանակական և որակական ցուցանիշները:
6. Որո՞նք են ռասայի և ազգի հիմնական հատկանիշները: Ինչ կապ կա բնակչության ազգային, լեզվական և կրոնական կազմերի միջև:
7. Ինչ է բնակչության միգրացիան, որո՞նք են դրա հիմնական պատճառները և ուղղությունները:
8. ՀՀ բնակչության թիվը 3,2 մլն է, որից քաղաքներում ապրում է 2,1 մլն-ը: ՀՀ տարածքի մակերեսը կազմում է մոտ 30 հազ. կմ²: Հաշվե՛ք՝ ա) ՀՀ բնակչության միջին խտությունը, բ) ՀՀ քաղաքային բնակչության բաժինը:
9. Աշխարհի բնակչության թիվը 7 մլրդ է, բնակչության թվի տարեկան աճը՝ 1,1%: Հաշվե՛ք աշխարհի բնակչության տարեկան բացարձակ աճը:
10. Տեսրեքում լրացրե՛ք աղյուսակը և հաշվե՛ք բնակչության թիվը տարեվերջին:

(հազար մարդ)

Երկրներ	Բնակչության թիվը տարեսկզբին	Ծնունդների թիվը տարվա ընթացքում	Մահերի թիվը տարվա ընթացքում	Ներգաղթածների թիվը	Արտագաղթածների թիվը	Բնակչության թիվը տարեվերջին
Ա	10000	200	80	70	10	
Բ	24000	700	400	10	350	
Գ	3200	45	36	15	60	
Դ	60000	600	620	120	10	

ԲԱԺԻՆ IV. ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ԴԱՍ 12. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ: ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ

Բնական պայմաններ: Դուք գիտեք, որ երկրագնդի աշխարհագրական թաղանթը, նրա բնածին ոլորտները՝ քարոլորտը, մթնոլորտը, ջրոլորտը, կենսոլորտը, ստեղծում են այն միջավայրը, որտեղ ձևավորվել և զարգանում է մարդկային հասարակությունը: Այդ միջավայրը կազմող բնական որոշ տարրեր, օրինակ՝ Արեգակից և Երկրի ընդերքից ստացվող էներգիան, մթնոլորտային տեղումների քանակը, մակերևութային ջուրը, Երկրի մակերևույթի բնույթը, օրգանական աշխարհը, բնական միջավայրում ստեղծում են այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն են ստեղծում այդ միջավայրում մարդու ապրելու և կենսագործունեության համար: Այդ բոլորը միասին կոչվում են **բնական պայմաններ:**

Մեծ են բնական պայմանների աշխարհագրական տարբերությունները: Կախված բնության տարրերի տարածական տարբերություններից՝ աշխարհագրական թաղանթի մի հատվածում այդ պայմանները մարդկանց գոյության, առողջության և կենսագործունեության համար կարող են լինել նպաստավոր, մի այլ հատվածում՝ աննպաստ: Բնական պայմանների նպաստավորությունը որոշվում է այն հանգամանքով, թե դրանք ինչքանով են հարմար մարդու կյանքի և տնտեսական գործունեության համար: Եթե տվյալ տարածքի բնական պայմանները՝ գլխավորապես կլիման և մակերևույթի բնույթը, աշխատանքային և ֆինանսական փոքր ծախսումներով տնտեսական գործունեության (հասարակական արտադրության) հնարավորություն են ստեղծում, ապա համարվում են **նպաստավոր** (կամ բարենպաստ): Օրինակ՝ երկրագնդի տաք և խոնավ կլիմայի շրջաններում հողագործ գյուղացիները ոչ մի ծախս չեն կատարում թանկարժեք ոռոգման ցանցի կառուցման համար, քանի որ մթնոլորտային առատ տեղումները բավարար են հողագործության համար: Նրանք նաև ձմռանը դիմակայելու համար ծախսեր չեն կատարում վառելիքի և տաք հագուստի վրա:

Նշենք մեկ այլ օրինակ. խաղողագործական այն տարածքներում, որտեղ ձմռանը չեն լինում դաժան ցրտեր, հետևաբար՝ խաղողի վազերի ցրտահարության վտանգ չկա, վազերը աշնանը չեն ծածկում հողի շերտով, իսկ գարնանը՝ ազատում հողից (ինչպես դա արվում է Արարատյան դաշտում): Այսպիսով՝ ստացվում է, որ որոշ տարածքներում (օրինակ՝ Ֆրանսիայում) խաղողագործության կազմակերպման համար բնական պայմանները ավելի նպաստավոր են, քան Հայաստանի Հանրապետությունում, քանի որ առաջին դեպքում ավելի փոքր են աշխատանքային ծախսերը:

Լեռնային երկրներում երկաթուղու կառուցումը մեծ ծախսեր է պահանջում կապված թունելների, կամուրջների շինարարության հետ, իսկ երբեմն, տե-



Երկաթուղային թունել Շվեյցարիայում

նպաստ բնական պայմաններ ունեցող հատվածների օրինակները չափազանց բազմազան են:

Բնական պայմանների նպաստավոր կամ աննպաստ լինելը փոփոխական է և որոշվում է տվյալ պահին հասարակության ունեցած տնտեսական հնարավորություններով (ներուժով): Օրինակ՝ Կենտրոնական Ասիայի անապատները և չոր տափաստանները յուրացվեցին միայն ԽՍՀՄ տեխնիկական հզորության շնորհիվ, երբ կառուցվեցին Իրտիշ-Քարաղանդի (Կարագանդա), ինչպես նաև Գարագումի (Կարակումի) 1100 կմ երկարությամբ ոռոգման և նույնիսկ նավարկելի հզոր ջրանցքները:

Այսպիսով՝ **բնական պայմանները մարդու շրջակա միջավայրի բնական հանգամանքների ամբողջությունն են, որոնք նպաստում կամ խոչընդոտում են տնտեսական գործունեության կազմակերպմանը:**

Բնական ռեսուրսները նույնպես բնական միջավայրի տարրեր են: Նյութական տեսանկյունից դրանք շատ հաճախ նույն տարրերն են, ինչ որ բնական պայմանները: Եթե մարդու կողմից բնությունից կորզված այդ տարրերն օգտագործվում են տնտեսության մեջ արտադրական նպատակների համար, ապա դրանք համարվում են **բնական ռեսուրս**: Օրինակ՝ Սևանա լճի ջուրը բնական պայման է մարդկանց հանգստի, ջրաէներգետիկ արդյունաբերության, ձկնաբուծության համար, քանի որ այդ գործունեությունների ժամանակ բնությունից ջուր չի կորզվում (վերցվում): Իսկ երբ այդ ջուրը հասնում է Արարատյան հարթավայրի դաշտերն ու այգիները և օգտագործվում ոռոգման համար, այսինքն՝ կորզվում բնությունից, դառնում է բնական ռեսուրս: Նույն կերպ՝ անտառներն ու կենդանիները զբոսաշրջության կազմակերպման համար բնական պայման են, իսկ այդ տարածքում ապրող տեղաբնիկների համար՝ բնական ռեսուրս (օրինակ՝ Պերուի բնակչության օգտագործած մսի 85%-ը

վայրի կենդանիների միսն է): Այսպիսով՝ կարող ենք ասել, որ **բնական ռեսուրս են կոչվում բնական միջավայրի այն տարրերը, որոնք տվյալ ժամանակաշրջանում մարդկանց կողմից օգտագործվում են կամ կարող են օգտագործվել արտադրության ու սպառման համար և ունեն տնտեսական արժեք:**

Բնական պայմանների և ռեսուրսների մյուս տարբերությունն այն է, որ մարդու գոյության բնական պայմանները մշտապես եղել են և այժմ էլ մնում են նույնը և էական փոփոխություններ չեն կրում, մինչդեռ բնական ռեսուրսների քանակը և տեսականին փոխվել են հասարակության առաջընթացին, գիտության ու տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց: Ռեսուրսների որոշ տեսակներ կարող են սպառվել, օրինակ՝ նավթի, բնական



Ջրաէլեկտրակայան

գազի, այլ հանքային հանածոների պաշարները: Դրան հակառակ՝ կարող են հայտնագործվել և օգտագործվել բնական նոր նյութերի և էներգիայի նոր տեսակներ, որոնք նախկինում անհայտ են եղել կամ համարվել են օգտագործման համար ոչ պիտանի: Օրինակ. մինչև այն ժամանակները, երբ մարդկանց հայտնի չէին այլումինի և այլ մետաղների օգտակար հատկությունները, դրանք պարունակող ապարները (միներալներ) համարվում էին մարդկանց համար բնության ոչ պիտանի տարրեր և որևէ արժեք չէին ներկայացնում: Մի այլ օրինակ. ցած հոսող ջրի էներգիան այն ժամանակ դարձավ էլեկտրաէներգիայի ստացման համար բնական ռեսուրս, երբ գիտության ու տեխնիկայի զարգացման շնորհիվ հայտնագործվեց էլեկտրական էներգիա արտադրող մեքենան և հնարավոր դարձավ կառուցել էլեկտրակայաններ՝ հոսող ջրի մեխանիկական էներգիան վերածելով էլեկտրականի:

Ներկայումս մարդկությանը հայտնի բնական ռեսուրսների տեսակներն արդեն հաշվվում են հազարներով: Դրանք դասակարգվում են ըստ տարբեր հատկանիշների:

Ըստ բնական ռեսուրսների նկատմամբ մարդկանց պահանջարկի առանձնացվում են՝

- մարդկանց կենսական անհրաժեշտության ռեսուրսները: Օրինակ՝ օդը և ջուրը, որոնք ուղղակի պայմանավորում են մարդու կյանքը,
- արտադրական նշանակության բնական ռեսուրսները, այսինքն՝ արտադրության մեջ որպես հումք կամ վառելիք օգտագործվող ռեսուրսները: Դրանք են, օրինակ, նավթը, մետաղների հանքաքարը, կրաքարը և այլն,

- մարդկանց համար առողջարարական-կազդուրիչ, հոգևոր, գեղագիտական գրավչություն ունեցող ռեսուրսները (հանքային բուժիչ ջրեր, լողափեր, բնության հուշարձաններ և այլն):

Տարածված է նաև բնական ռեսուրսների դասակարգումն ըստ **սպառման** և **վերականգնման** հատկանշի, որի համաձայն առանձնացնում են չսպառվող և սպառվող (վերականգնվող և չվերականգնվող) ռեսուրսներ:

Չսպառվող են բոլոր այն ռեսուրսները, որոնք մշտապես համալրվում են Արեգակից և Երկրի ընդերքից (արեգակնային, քամու, մակընթացության, երկրաջերմային էներգիաները):

Վերականգնվող են կենսաբանական (բուսական և կենդանական) ռեսուրսները: Այս ռեսուրսները վերականգնվում են միայն փոքր չափով սպառվելու պայմաններում: Եթե, օրինակ, որևէ տարածքում անտառն ամբողջությամբ հատենք, ապա բնության մյուս տարրերի ու երևույթների՝ հողերի, միկրոկլիմայի, օրգանական աշխարհի հետ այնպիսի անշրջելի փոփոխություններ տեղի կունենան, որ նույնիսկ անհնար կդառնա անտառի վերականգնումը:

Սպառվող և չվերականգնվող են բոլոր տեսակի հանքային ռեսուրսները:

Հստ առաջացման (ծագման) բնույթի՝ առանձնացվում են հանքային, հողային, կենսաբանական (բուսական և կենդանական), ինչպես նաև հանգստի (ռեկրեացիոն) ռեսուրսներ:

Հատուկ տիպի ռեսուրս է հողը, որն ըստ էության վերականգնվող ռեսուրս է: Բայց այդ վերականգնումը չափազանց դանդաղ է ընթանում: Ընդամենը 1 սմ հաստության շերտի գոյացման համար երբեմն պահանջվում են հարյուրավոր տարիներ:

Հողն անհրաժեշտ նախադրյալ է կենսոլորտի գոյության ու զարգացման, ինչպես նաև մարդկությանը սնունդ ապահովող գյուղատնտեսության զարգացման համար: Մշակովի հողերը տալիս են մարդկությանը անհրաժեշտ սննդամթերքի 88%-ը, որպես արոտավայրեր օգտագործվող հողերը՝ 10%-ը, իսկ մնացած 2%-ը բաժին է ընկնում անտառներին:

Գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտ նախադրյալ են բույսերի աճն ու զարգացումն ապահովող կլիմայական պայմանները (ջերմության քանակն ու տարեկան ընթացքը, տեղումների քանակը, դրա սեզոնային բաշխումը): Կլիմայական պայմաններով են որոշվում տարբեր մշակաբույսերի տարածման սահմանները:

Ռեսուրսաապահովվածություն: Հանքային ռեսուրսների սպառման վտանգը մասնագետներին դրդում է պարբերաբար գնահատել դրանց արդեն օգտագործված և դեռևս պահպանվող չափերը ինչպես որևէ երկրում, այնպես էլ ամբողջությամբ աշխարհում: Երկրների, տարածաշրջանի կամ ընդհանրապես

ամբողջ աշխարհի սպառվող ռեսուրսի տվյալ տեսակի ապահովվածությունը գնահատելու նպատակով օգտվում են **ռեսուրսաապահովվածության** ցուցանիշից: Այն հաշվում են երկու եղանակով:

1. Երկրում (տարածաշրջանում, աշխարհում) ռեսուրսի տվյալ տեսակի հաշվարկված (հետախուզված, չափված) պաշարները բաժանում են բնակչության թվին, ստանալով, թե մեկ շնչին միջին հաշվով տվյալ ռեսուրսից ինչքան է հասնում:

$$R_{\text{շնչ}} = \frac{\text{Պաշարներ}}{\text{Բնակչություն}} \quad (\text{տ/մարդ})$$

2. Երկրում (տարածաշրջանում, աշխարհում) ռեսուրսի տվյալ տեսակի հաշվարկված (հետախուզված, չափված) պաշարները բաժանում են տվյալ պահին շահագործվող (արդյունահանվող) պաշարների տարեկան քանակին (ծավալին), ստանալով, թե քանի տարի կբավարարի տվյալ ռեսուրսը, եթե շարունակվի սպառվել ներկա ծավալով:

$$R_{\text{շնչ}} = \frac{\text{Պաշարներ}}{\text{Արդյունահանում}} \quad (\text{տարիներ})$$

Օրինակ՝ ուրանի հետախուզված պաշարները կազմում են 2,4 մլն տ, իսկ ատոմակայանների տարեկան պահանջարկը՝ շուրջ 60 հազ. տ: Ռեսուրսաապահովվածությունը արդյունահանման տարեկան չափը չփոխվելու դեպքում կլինի 40 տարի:

Հանքային, հատկապես վառելիքային, ռեսուրսների մի քանի տասնամյակում սպառման հեռանկարը այնքան էլ վտանգավոր չէ, որովհետև ցամաքում և հատկապես օվկիանոսի հատակում անընդհատ հայտնաբերվում են նոր հանքավայրեր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բացատրե՞ք՝ ի՞նչ է բնական պայմանը, ի՞նչ է բնական ռեսուրսը: Ինչպե՞ս են դրանք միմյանցից սահմանազատվում:
2. Բնական ռեսուրսները դասակարգե՞ք ըստ բնական ռեսուրսների նկատմամբ մարդկանց պահանջարկի խմբերի:
3. Խմբային աշխատանքի միջոցով կազմե՞ք աղյուսակ՝ ըստ բնական ռեսուրսների սպառման և վերականգնման հատկանշի, առանձնացնելով ռեսուրսների համապատասխան խմբերը և նշելով յուրաքանչյուր խմբի մեջ մտնող ռեսուրսների տեսակները:

4. Ինչո՞ւ են բնական ռեսուրսների տեսականին և քանակը փոփոխվում մարդկության զարգացման ընթացքում: Տո՞ւյց տվե՞ք օրինակներով:
5. Ի՞նչ է ռեսուրսաապահովվածությունը: Ինչպե՞ս է հաշվարկվում ռեսուրսաապահովվածության ցուցանիշը:
6. Երկիրն ունի 200 մլն տ պղնձի պաշարներ, որոնցից տարեկան արդյունահանման ծավալը կազմում է 2,5 մլն տոննա: Երկրի բնակչությունը կազմում է 4 մլն մարդ: Որոշե՞ք երկրի՝ պղնձի պաշարներով ապահովվածությունը:

ԴԱՍ 13. ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

Դուք արդեն գիտեք, որ երկրագնդի վրա բնության տարրերն ու երևույթները տեղաբաշխված են անհավասարաչափ: Երկրի մակերևույթի ջերմությունը և խոնավությունը հասարակածից դեպի բևեռներ, իսկ լեռներում՝ ստորոտից գագաթ, օրինաչափորեն փոփոխվում են: Այդ փոփոխությունների շնորհիվ փոփոխվում են հողերի տիպերը: Անտառները հիմնականում աճում են հասարակածային և բարեխառն լայնություններում և այլն: Երկրաբանական գործոններով պայմանավորված՝ նավթի և գազի ռեսուրսների մեծ մասը կուտակվել է պլատֆորմների եզրային տեղամասերում, իսկ մետաղների հանքանյութի պաշարները գտնվում են հին և նոր գեոսինկլինալներում:

Մենք արդեն գիտենք, որ մարդկությունը գոյություն ունի և զարգանում է բնության հետ մշտապես հարաբերությունների մեջ գտնվելով և ըստ այդմ կազմակերպում է իր կյանքը, հարմարվում է այդ պայմաններին:

Այժմ ներկայացնենք բնական ռեսուրսների առանձին տեսակների տեղաբաշխումն աշխարհում ու դրանցով մարդկության ապահովվածության մակարդակը:




Վարելահող

Հողային ռեսուրսներ: Հողային ռեսուրսները չափվում են իրենց զբաղեցրած մակերեսով: Դա մոտավորապես այնքան է, ինչքան մեր մոլորակի ցամաքային մակերեսն է, (չհաշված սառցապատ Անտարկտիդան ու Գրենլանդիան և բարձր լեռների մերձգագաթային տարածությունները): Դա աշխարհի հողային ֆոնդն է, որը կազմում է 13,1 մլրդ հա: Հողային ֆոնդի գլխավոր օգտագործողը գյուղատնտեսությունն է: Նրա կողմից օգ-

տագործվող հողերը հայտնի են **գյուղատնտեսական նշանակության հողեր** կամ **գյուղատնտեսական հանդակներ** անունով: Գյուղատնտեսական նշանակության հողեր են **վարելահողերը, բազմամյա տնկարկների (այգիների) զբաղեցրած տարածությունները (դրանք միասին մշակովի հողերն են), արոտներն ու խոտհարքները:**

Գյուղատնտեսական նշանակության հողերի թե՛ ընդհանուր մակերեսը և թե՛ կառուցվածքը անփոփոխ չեն: Մարդը մի կողմից ընդարձակում է դրանք՝ յուրացնելով ոչ գյուղատնտեսական հանդակները՝ հատելով անտառները, չորացնելով ճահիճները, ոռոգելով անապատները: Միայն XX դարում երկրագնդի վարելահողերի ընդհանուր տարածությունը գրեթե կրկնապատկվել է: Մյուս կողմից՝ մարդու ոչ խելամիտ գործունեության հետևանքով տեղի են ունենում գյուղատնտեսական հողերի քայքայում ու աղքատացում: Ուժեղանում է հողաձածկույթի քայքայումը (հողերի էրոզիան), ջրովի ընդարձակ տարածություններն աղակալվում են, միլիոնավոր հեկտար պիտանի հողեր դրվում են շինարարության տակ: Այս ամենի հետևանքով գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը կազմում է աշխարհի հողային ֆոնդի ընդամենը 30%-ը:

Աշխարհի հողերի բաժինն ըստ գյուղատնտեսության համար պիտանիության (%):



- Շատ չոր շրջանների հողեր
- Քիմիական բարելավման ենթակա հողեր
- Վատ հողեր (բեդլենդներ)
- Ավելցուկային խոնավ հողեր
- Հավերժական սառցույթային հողեր
- Առանց սահմանափակության լավագույն հողեր

Հողային ռեսուրսներով մարդկության ապահովվածությունը չափվում է մեկ բնակչին հասնող հեկտարների թվով: Եթե անցյալ դարի կեսերին այդ ցուցանիշը 0,5 հա էր, ապա XXI դարի սկզբին՝ կրկնակի պակաս՝ 0,3 հա: Կան երկրներ (Ճապոնիա, Եգիպտոս), որտեղ վարելահողերով ապահովվածությունը համաշխարհային միջին ցուցանիշից մի քանի անգամ ցածր է: Այն ցածր է նաև Հայաստանի Հանրապետությունում՝ ընդամենը 0,14 հա: Կան նաև այնպիսի

երկրներ, որտեղ այդ ցուցանիշը ավելի է տասնյակ անգամ, օրինակ՝ Ավստրալիայում (3,0 հա):

Հանքային ռեսուրսներ: Հանքային ռեսուրսներն այլ կերպ կոչվում են օգտակար հանածոներ: Դրանք կուտակված են քարոլորտում: Մարդը դրանք արդյունահանում և օգտագործում է արդյունաբերության ու շինարարության մեջ օգտագործելու նպատակով:



Երկաթաքարի շահագործվող հանքավայր

Հանքային ռեսուրսներն ըստ կիրառական նշանակության բաժանվում են 3 խմբի՝ **վառելիքաէներգետիկական, մետաղային և ոչ մետաղային**: Ամենաշատ արդյունահանվում և վերամշակվում են մետաղներ պարունակող ապարները, այսինքն՝ մետաղային օգտակար հանածոները: Մետաղածուլական գործարաններում դրանցից ստանում են սև մետաղներ (թուջ, պողպատ), գունավոր մետաղներ (օրինակ՝ պղինձ, ալյումին, կապար, մոլիբդեն), ազնիվ մետաղներ (ոսկի, արծաթ, պլատին):

Հանքային ռեսուրսների կազմում առանձին խումբ են կազմում քիմիական հումք հանդիսացող օգտակար հանածոները: Քիմիական արդյունաբերության մեջ օգտագործում են ֆոսֆոր, կալիումական աղ պարունակող հանքատեսակները, կերակրի աղը, ծծումբը (հիշե՛ք, որ արդյունաբերության այս ճյուղում որպես հումք օգտագործում են նաև նավթ, բնական գազ, մետաղաձուլության թափոններ և այլն):

Առանձին խումբ են կազմում նաև բնական շինանյութերը: Դրանցից են տուֆը, բազալտը, գրանիտը, կրաքարը, մարմարը, շինարարական ավազը, խիճը և ուրիշ այլ հանքատեսակներ:


Մարդկության ապահովվածությունը հանքային ռեսուրսների տարբեր տեսակներով տարբեր է: Ողջ մարդկությունը, ամբողջությամբ վերցրած, լավ է ապահովված ածխով, շինանյութերով, քիմիական հումքով: Բայց, ընդհանուր առմամբ, հանքային ռեսուրսների արդյունահանման տեմպերը բազմիցս գերազանցում են աշխարհի բնակչության աճի տեմպերը:

Նավթի հետախուզված պաշարները գնահատվում են մոտ 150 մլրդ տ, որի մոտ 65%-ը բաժին է ընկնում Պարսից ծոցի ավազանին: Բնական գազի պաշարների տեղաբաշխումը հիմնականում համապատասխանում է նավթի պաշարների տեղաբաշխմանը, որի հիման վրա էլ առանձնացվում են նավթա-

գազաբեր շրջանները: Մետաղային օգտակար հանածոների առաջացման երկրաբանական պայմանները այնքան բազմազան են, որ դրանց հանքավայրերի տարածման աշխարհագրությունը չափազանց ընդգրկուն է: Սակայն երկրագնդի վրա երբեմն առանձնանում են առանձին մետաղների կամ դրանց խմբերի կուտակման տարածքներ, որոնք անվանում են մետաղային գոտիներ: Այդպիսիներից են, օրինակ՝ անագի գոտին Հարավարևելյան և Հարավային Ասիայում և ոսկու գոտին Հարավային և Արևելյան Աֆրիկայում:

Գիտնականների կանխատեսումներով՝ եթե նոր հանքավայրեր չհայտնաբերվեն և հայտնաբերված հանքավայրերն էլ չահագործվեն ներկայիս տեմպերով, ապա, օրինակ, նավթի պաշարները կբավարարեն ևս 40, գազի պաշարները՝ 70, իսկ գունավոր մետաղներինը՝ 100 տարի: Դրանք աշխարհի միջին


Օգտակար հանածոների արդյունահանման ծավալը 1950–2010 թվականներին (մլրդ տ):



նացված թվերն են: Մինչդեռ պետությունների ապահովվածության միջին թվերը մեծապես տարբերվում են իրարից: Կան պետություններ, որոնք հարուստ են, օրինակ, նավթով ու գազով, բայց բոլորովին զուրկ են մետաղային ռեսուրսներից, և հակառակը: Կան նաև այլ երկրներ, որոնք ունեն հարուստ մետաղային ու ոչ մետաղային հանքային ռեսուրսներ, բայց չափազանց աղքատ են վառելիքաէներգետիկ ռեսուրսներով: Կան նաև հին արդյունաբերական որոշ շրջաններ, որտեղ օգտակար հանածոների նախկին հարուստ պաշարները վաղուց արդեն սպառվել են (օրինակ՝ Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում երկաթի հանքաքարի պաշարները):

Ջրային ռեսուրսներ: Երկրագունդը ընդհանուր առմամբ ջրային ռեսուրսներով ապահովված է: Հիշենք, որ համաշխարհային օվկիանոսը, ծովերով հանդերձ, զբաղեցնում է մեր մոլորակի մակերեսի 71%-ը (361 մլն կմ²), բայց այդ ռեսուրսների հիմնական մասը (մոտ 97,5%) ծովի աղի ջուրն է, որն առանց աղազերծելու պիտանի չէ ոչ միայն խմելու, այլև կենցաղում և արտադրության մեջ օգտագործելու համար:

Երկրագնդի ջրի բաշխումը (%-ով)




Մայրցամաքային սառցադաշտերը քաղցրահամ ջրի ամենամեծ շտեմարաններն են:

Երկրագնդի ջրային ռեսուրսների

միայն 2,5%-ն է քաղցրահամ ջուր: Դրանցից էլ միայն մոտ 1%-ն է վերականգնվող (ամեն տարի համալրվող ջուրը): մենք հնարավորություն ունենք օգտագործելու մթնոլորտային տեղումների ջրային ռեսուրսները, որոնք, թափվելով Երկրի մակերևույթին, առաջացնում են գետային հոսք: Այդ հոսքը տարեկան կազմում է ոչ ավելի, քան 45 հազ. կմ³, այսինքն՝ երկրագնդի վրա կուտակված քաղցրահամ ջրի ընդա-

մենը 0,16%-ը: Անկասկած, դա քիչ չէ, քանի որ տասնապատիկ գերազանցում է մարդկության ներկա պահանջարկը: Բայց օգտագործման համար մատչելի ջրային ռեսուրսները տեղաբաշխված են խիստ անհամաչափ: Հատկապես անապատային, կիսաանապատային ու տափաստանային բնական զոնաներում գտնվող շատ երկրներ քաղցրահամ ջրի սուր պակաս են զգում: Դրան հա-

կառակ՝ երկրագնդի խոնավ կլիմայական պայմաններ ունեցող տարածքներում դիտվում է ջրի հսկայական ավելուրդ:



Ջրային ռեսուրսների կարևոր առանձնահատկությունն այն է, որ երկրագնդի վրա ջրի շրջապտույտի շնորհիվ ջրի քանակը մշտապես վերականգնվում է, այսինքն՝ ջուրը քանակապես չի սպառվում: Բայց մարդն իր գործունեության ընթացքում փոխում է ջրի որակը. աղտոտում է գետերի, լճերի և ստորերկրյա ջուրը՝ դարձնելով օգտագործման համար ոչ պիտանի: Այլ կերպ ասած՝ տեղի է ունենում ջրային ռեսուրսների **որակական սպառում**: Քաղցրահամ ջրի որակական սպառումը տեղի է ունենում սրընթաց մեծացող արտադրության ծավալների և բնակչության թվաքանակի ավելացման հետևանքով: Մարդկության 1/3-ն օգտագործում է խմելու անորակ ջուր, 1/3-ը սպառում է անբավարար քանակությամբ, բայց որակյալ ջուր, և միայն 1/3-ն է օգտագործում լավորակ և բավարար քանակությամբ ջուր:

Կենսաբանական ռեսուրսներ: Բնական ռեսուրսների շարքում առանձնահատուկ տեղ ունեն կենսաբանական ռեսուրսները: Դրանք բույսերը, կենդանիներն ու մսկերն են, որոնք միասին կազմում են երկրագնդի կենսազանգվածը, ընդ որում՝ միայն բույսերին բաժին է ընկնում կենսազանգվածի 98%-ը: Նախկինում, որսորդության ու հավաքչության ժամանակաշրջանում, մարդն իր գոյությունը պահպանում էր բացառապես դրանց շնորհիվ: Այժմ մարդը գյուղատնտեսական բույսեր մշակելու և կենդանիներ պահելու միջոցով ինքն է ստեղծում պահանջվող պարենամթերքը: Բայց դա չի նշանակում, թե բնական կենսաբանական ռեսուրսները կորցրել են իրենց նշանակությունը: Մարդն այսօր էլ դրանց կարիքն ունի և մեծապես օգտվում է ինչպես վայրի բուսականությունից, այնպես էլ կենդանական աշխարհից:



Կենսաբանական ռեսուրսներ

Վայրի բույսերն ու կենդանիները, որոնք մարդն օգտագործում է իր կենցաղում և տնտեսության մեջ, չափազանց բազմատեսակ են: Ցամաքում կենսաբանական ռեսուրսի կարևոր տարատեսակ են աշխարհի **անտառային ռեսուրսները**: Անտառները զբաղեցնում են երկրագնդի ցամաքային մակերեսի 26%-ը: Սա միջինացված ցուցանիշն է: Իրականում անտառը ևս, ջրային ռեսուրսների նման, երկրագնդում բաշխված է խիստ անհամաչափ: Համաշխարհային անտառային ռեսուրսները հիմնականում տարածվում են հասարակածային, խոնավ արևադարձային ու մերձարևադարձային կլիմայի ձևավորման շրջաններում, ինչպես նաև հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտում:

Վերջին 200 տարվա ընթացքում փայտանյութի չափազանց մեծ ծավալներով մթերման, ինչպես նաև անտառների տարածքի հողերը գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու հետևանքով երկրագնդի անտառների ընդհանուր տարածքը կրճատվել է առնվազն կրկնակի: Հատկապես արագ կրճատվում են հասարակածային անտառները: Դրա գլխավոր պատճառը զանգվածային անտառահատումներն են:



Անագոնիայի անտառների ոչնչացումը

Անտառների զանգվածային ոչնչացումը, փայտանյութի ռեսուրսային անբավարարությունից բացի, կարող է հանգեցնել նաև էկոլոգիական աղետի

ամբողջ աշխարհում, այսինքն՝ երկրագնդի բնական պայմանները կփոփոխվեն այն աստիճան, որ մարդկանց առողջության համար կդառնան վնասակար:

Համաշխարհային օվկիանոսի ռեսուրսները: Համաշխարհային օվկիանոսը մարդու համար ոչ միայն կենսաբանական, այլև շատ հանքային ռեսուրսների կարևոր շտեմարան է: Այժմ արդեն մարդկության կողմից օգտագործվող կենդանական պարենի գրեթե 20%-ը ստացվում է օվկիանոսից:

Օվկիանոսի հատակի հարուստ հանքային ռեսուրսներից ներկայումս օգտագործվում են գլխավորապես նավթն ու բնական գազը: Աշխարհում արդյունահանվող նավթի և բնական գազի գրեթե կեսը ստացվում է ծովի հատակի հանքավայրերից:

Էներգիայի անսպառ աղբյուր են օվկիանոսային մակընթացությունն ու տեղատվությունը, ալեկոծումը, ծովային հոսանքները: Սակայն դրանց օգտագործման ուղղությամբ միայն առաջին քայլերն են արվում:

Հանգստի (ռեկրեացիոն) ռեսուրսներ: Բնական ռեսուրսների հատուկ խմբի մեջ են միավորում մարդկանց հանգստի կազմակերպման, ուժերի վերականգնման համար օգտագործվող բնության տարրերն ու երևույթները: Դրանք ընդունված է անվանել **հանգստի ռեսուրսներ:** Հանգստի ռեսուրսներ են մարդկանց վրա բարերար ազդեցություն ունեցող տեղանքի ռելիեֆը, կլիման, բուսականությունը, ջրային ավազանները, ծովափերը, հանքային աղբյուրները, լեռնային լանդշաֆտները:

Բնական ռեկրեացիոն ռեսուրսներից բացի՝ կան նաև պատմաճարտարապետական հուշարձաններ, որոնք կոչվում են **մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներ:**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրեք հողային ռեսուրսներով մարդկության ապահովվածության ցուցանիշները: Ինչո՞ւ են գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում ցամաքի ոչ մեծ տարածք:
2. Որքան են կազմում համաշխարհային ջրային ռեսուրսները: Նշե՞ք ջրային ռեսուրսների որակական սպառման հետ կապված վտանգները:
3. Ինչ նշանակություն ունեն կենսաբանական ռեսուրսները մարդկության կենսագործունեության համար: Համեմատե՞ք հանքային ռեսուրսների հետ:
4. Որո՞նք են ռեկրեացիոն ռեսուրսները: Նշե՞ք ձեր բնակավայրի շրջակա տարածքում գտնվող ռեկրեացիոն ռեսուրսները:
5. Օգտվելով էջ 61-ի դիագրամից՝ հաշվարկե՞ք 1980 և 2010 թվականների դրությամբ մեկ շնչին բաժին ընկնող օգտակար հանածոների ծավալները և ստացված արդյունքները համեմատե՞ք: Ինչպիսի՞ փոփոխություն է կրել մեկ շնչին ընկնող օգտակար հանածոների ծավալի ցուցանիշը, և ձեր կարծիքով՝ դա ինչպիսի՞ ազդեցություն կունենա մարդկության հետագա զարգացման վրա:

ԲԱԺԻՆ V. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 14. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Զարգացման փուլերը և մակարդակը: Մարդու տնտեսական գործունեությունն այժմ բազմաբնույթ է, այսինքն՝ ներառում է մի շարք բնագավառներ: Տնտեսական գործունեության գերնպատակը մարդկանց նյութական և հոգևոր պահանջունքների բավարարումն է:

Յուրաքանչյուր երկրում դարերի ընթացքում (պատմականորեն) ձևավորվում է մարդկանց գործունեության բնագավառների յուրահատուկ համակարգ («հավաքածու»), որը պայմանավորված է տվյալ երկրի բնական պայմաններով ու ռեսուրսներով, ինչպես նաև աշխարհագրական դիրքով, աշխատանքային ռեսուրսների մասնագիտական հմտություններով և այլ գործոններով:

Տվյալ երկրում մարդկային գործունեության բնագավառների պատմականորեն ձևավորված համակարգը կոչվում է **ազգային տնտեսություն:**

Ժամանակի ընթացքում ազգային տնտեսությունները կրում են և՛ քանակական, և՛ որակական փոփոխություններ: Քանակական փոփոխությունը երկրի արտադրության և ծառայությունների ծավալի մեծացումը կամ փոքրացումն է, իսկ որակական փոփոխությունը տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությունն է, այսինքն՝ առանձին ճյուղերի մասնաբաժինների փոփոխությունը՝ դրանցից յուրաքանչյուրի աճի արագացման կամ դանդաղեցման հետևանքով: Փոփոխությունների գործընթացը տարբեր երկրներում ընթանում է տարբեր արագությամբ, և այդ պատճառով էլ աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունները հայտնվում են «տնտեսական հասունության» զանազան աստիճաններում՝ փուլերում:

Ամենավաղ ժամանակներում բոլոր երկրների տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն էր: Երկրի տնտեսական (հասարակական) զարգացման այդ փուլն անվանվում է **գյուղատնտեսական (ագրարային)**, իսկ արդյունաբերության առնչությամբ՝ **մինչարդյունաբերական:**


Թեպետ ներկայումս աշխարհի երկրների մեծ մասն արդեն թևակոխել է տնտեսական զարգացման բարձր փուլեր, կան երկրներ, որոնց տնտեսությունը դեռևս մինչարդյունաբերական փուլում է: Դրանք նախկին գաղութային այն երկրներն են, որոնք չունեն արդյունաբերական բուռն զարգացման հնարավորություններ: Այդ երկրների համախառն ազգային եկամտի՝ մեջ մեծ է գյուղատնտեսության բաժինը՝ կազմելով 30–45%, իսկ Սոմալիում՝ նույնիսկ 65% (էջ 67-ի գծապատկեր):

1. Համախառն ազգային եկամուտը մեկ տարում բնակչության սպառած ապրանքների ու ծառայությունների միագումարային արժեքն է (առանց հումքի, նյութերի, վառելիքի ծախսերի):

Տստեսական զարգացման միջին մակարդակն **արդյունաբերական ինդուստրիալ** փուլն է, որը բնորոշ է որոշ զարգացած երկրների (օրինակ՝ Բրազիլիային), ինչպես նաև նախկին սոցիալիստական (անցումային տնտեսությամբ) երկրներին: Դրանց տնտեսության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է:

Վերջին տասնամյակներում արդյունաբերական երկրների թիվն աստիճանաբար ավելանում է՝

Երկրների համախառն ազգային եկամտի կառուցվածքի նմուշներ



Տստեսական զարգացման ամենաբարձր աստիճանի վրա են **հետարդյունաբերական** երկրները: Այդ երկրներում արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն առավել չափով են մեքենայացված, ավտոմատացված, էլեկտրոնացված, ինչի հետևանքով ազատված աշխատուժն իր ներդրումն է գտնում սպասարկման ոլորտում: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ), այսինքն՝ պետության տարածքում մեկ տարում ստացված ամբողջական եկամտի մեջ սպասարկման ոլորտի ճյուղերի բաժինը հասնում և նույնիսկ գերազանցում է 50%-ը:

Հետարդյունաբերական երկրների արդյունաբերության մեջ գերակշռում է մշակող, հատկապես գիտատեխնիկական առաջընթաց ապահովող ճյուղերի՝ էլեկտրոնային և ավիահրթիռատիեզերական մեքենաշինության, ատոմային էներգիայի, քիմիական համալիրի նորագույն ճյուղերի բաժինը:

1. Որոշ ժամանակ առաջ այդ երկրներին ավելացել են «նոր ինդուստրիալ երկրները» (Կորեայի Հանրապետությունը, Հոնկոնգը, Թայվանը և Սինգապուրը), իսկ վերջերս՝ նաև «երկրորդ սերնդի» կամ «երկրորդ ալիքի» նոր ինդուստրիալ երկրները (օրինակ՝ Բրազիլիան, Մեքսիկան, Մալայզիան, Թուրքիան):

Ազգային տնտեսությունների զարգացման մակարդակը: Ավանդաբար ընդունված է եղել երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող համընդհանուր ցուցանիշ համարել բնակչության մեկ շնչին հասնող տարեկան համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), այսինքն, թե յուրաքանչյուր մարդ միջին հաշվով տարեկան որքան ապրանք և ծառայություն է սպառել դրամական արտահայտությամբ: Սակայն ներկայումս այդ ցուցանիշն այլևս համակողմանիորեն չի արտահայտում երկրի ընդհանուր զարգացման մակարդակը, քանի որ վերջին տասնամյակներում նավթ արտահանող որոշ երկրներում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն գերազանցել է իրականում զարգացած երկրներին: Չնայած այս փաստին՝ ամենևին չի կարելի դրանից հետևություն անել, թե իբր, օրինակ՝ Քաթարն ավելի զարգացած երկիր է, քան Ֆրանսիան, Իտալիան կամ Իսպանիան: Մեկ շնչի հաշվով մեծ ՀՆԱ-ն Քաթարում ստացվում է բնության «ընծա» նավթային պաշարների շահագործման շնորհիվ և ոչ թե իրական զարգացում արտահայտող այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են, օրինակ՝ ավտոմոբիլաշինությունն ու ինքնաթիռաշինությունը Ֆրանսիայում:

Այժմ երկրների ընդհանուր զարգացման մակարդակի գնահատման ցուցանիշում մարդկանց ֆինանսական բարեկեցության հետ միաժամանակ հաշվարկում են նաև նրանց կյանքի տևողությունը և գրագիտության աստիճանը («կյանքի որակը»): Այդ բոլոր ցուցանիշները բնութագրում են մարդկային զարգացման համաթիվը: Այս առումով աշխարհի ամենազարգացած երկրներից են Նորվեգիան, Շվեդիան, Ավստրալիան: Հայաստանի Հանրապետությունը 2012թ. 87-րդ տեղում էր:

Տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը: Ազգային, առավել ևս՝ համաաշխարհային տնտեսությունը բարդ համակարգ է, որը կարելի է ուսումնասիրել ճյուղային, սոցիալական, տարածքային կամ տեխնոլոգիական կառուցվածքի տեսանկյունից: Հասարակական աշխարհագրության համար առավել հետաքրքիր է տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի ուսումնասիրությունը:

Տնտեսության ճյուղային կառուցվածքը: Նկատի ունենալով երկրի համախառն արտադրանքի և ազգային եկամտի ստեղծման գործում տնտեսության ճյուղերի ունեցած դերը (մասնակցությունը)՝ առանձնացվում են նյութական արտադրության ոլորտի և ոչ արտադրական ոլորտի ճյուղեր¹:

1. Տնտեսական գործունեության ճյուղերի վերը նշված *երկանդամ բաժանումից* բացի՝ երբեմն կատարվում է նաև *եռանդամ բաժանում*: Տնտեսության ճյուղերը խմբավորում են երեք սեկտորում (հատվածում): Առաջնային սեկտորում բնությունից առաջնային նյութերի ստացմամբ զբաղվող բնագավառներն են՝ արդյունահանող արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Երկրորդային սեկտորում առաջնային սեկտորի ճյուղերի արտադրանքը մշակող բնագավառներն են, օրինակ՝ հանքաքարից մետաղների ձուլումը, բամբակից գործվածքի արտադրությունը: Երրորդային սեկտորը գրեթե համընկնում է ոչ արտադրական ոլորտի բովանդակությանը:

Նյութական արտադրության ոլորտում ներգրավվում են այն ճյուղերը, որոնց գործունեության արդյունքը նյութական է (օրինակ՝ մեքենա, կոշիկ, ցորեն և այլն): Նյութական արտադրության ոլորտի ճյուղերն են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, բեռնատար տրանսպորտը, շինարարությունը, նյութական արտադրությանը սպասարկող կապը:

Ոչ արտադրական ոլորտի ճյուղերի գործունեության արդյունքը բնակչությանը մատուցվող բազմաբնույթ ծառայություններն են: Այդ ծառայություններից են բնակչությանը սպասարկող կապը, ուղևորատար տրանսպորտը, առողջապահությունը, կրթությունը, սոցիալական ապահովությունը, մշակույթը, գիտությունը, կառավարումը և համանման այլ գործունեությունները:

Տնտեսության տարածքային կառուցվածքը: Ազգային (նաև համաշխարհային) տնտեսությունը համակողմանիորեն բնութագրելու համար բավարար չէ միայն ճյուղային կառուցվածքի ուսումնասիրությունը: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ուսումնասիրել նաև տնտեսության տարածքային կառուցվածքը: Վերջինս մեկ ամբողջություն հանդիսացող տնտեսության բաժանումն է փոխադարձաբար միմյանց հետ կապված մասնագիտացված տարածքային մասերի: Դրանցից են տնտեսական շրջաններն ու տնտեսական գոտիները, արդյունաբերական շրջանները, քաղաքային կուտակումները, տրանսպորտային հիմնական մայրուղիները, բնակչության հանգստի և զբոսաշրջության գոտիները:

Պետությունների վարած տնտեսական քաղաքականության շնորհիվ ժամանակի ընթացքում երկրի տնտեսության տարածքային կառուցվածքը ճյուղային կառուցվածքի նման ևս փոփոխվում է:

Զարգացած երկրների տնտեսության տարածքային կառուցվածքն ավելի բարդ ու կատարյալ է, քան նոր զարգացող երկրներինը: Չնայած այդ հանգամանքին՝ զարգացած երկրներում էլ գոյություն ունեն տարածքային կառուցվածքի տարբերություններ: Դրանք պայմանավորված են բնական պայմանների բազմազանությամբ, բնական ռեսուրսների անհավասարաչափ տարածքային բաշխմամբ, բնակչության անհավասարաչափ տարածակեցմամբ, տնտեսական յուրացման ժամանակահատվածի տևողության տարբերությամբ և այլ պատճառներով:

Մեծ տարածք և բազմազան բնական պայմաններ ունեցող զարգացած երկրներում էլ կան բարձր զարգացած շրջաններ, արդյունաբերական շրջան-



Բրնձի դարավանդավորված դաշտ Ֆիլիպիններում

ներ, գյուղատնտեսական շրջաններ, նոր յուրացվող շրջաններ և դրանց կողքին թույլ զարգացած ծայրամասային շրջաններ:



Թեյի տնկատափ Քենիայում

Սիբիրը Ռուսաստանում: Թույլ զարգացած ծայրամասային շրջաններից է, օրինակ, Ռուսաստանի հյուսիս-արևելքը:

Յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսության տարածքային կառուցվածքում «հրամանատարական» դեր է կատարում պետության խոշորագույն քաղաքը, որն առավել հաճախ երկրի մայրաքաղաքը կամ գլխավոր նավահանգիստն է: Իսկ համաշխարհային տնտեսության տարածքային կառուցվածքում «հրամանատարական» դեր են կատարում ԱՄՆ-ը, Արևմտյան Եվրոպայի երկրները, Ճապոնիան, Չինաստանը և դրանց որոշ խոշորագույն քաղաքները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է ազգային տնտեսությունը:
2. Ինչ գործոնների ազդեցությամբ է ձևավորվում ազգային տնտեսությունը:
3. Ինչպիսի՞ փոփոխություններ են կրել ազգային տնտեսությունները:
4. Ինչո՞վ է որոշվում երկրի զարգացման փուլը: Որո՞նք են այդ փուլերը:
5. Ինչո՞վ է որոշվում երկրի տնտեսական զարգացման մակարդակը:
6. Արդյոք ձիշտ է հետևյալ պնդումը (պատասխանը հիմնավորե՛ք). «Բարձր է այն երկրի զարգացման մակարդակը, որտեղ բարձր է մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը»:
7. Ո՞ր ցուցանիշն է առավել ձգգրտորեն արտահայտում երկրի զարգացման իրական մակարդակը:
8. Բացահայտե՛ք տնտեսության ճյուղային կառուցվածքի էությունը:
9. Ինչ է տնտեսության տարածքային կառուցվածքը, որո՞նք են տնտեսության մասնագիտացված տարածքային մասերը:
10. Ինչո՞վ են պայմանավորված տնտեսության տարածքային կառուցվածքի տարբերությունները:

ԴԱՍ 15. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՔԱՇԽՈՒՄԸ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Տնտեսության տեղաբաշխումը: Աշխարհի արդյունաբերության տեղաբաշխման քարտեզը դիտելով՝ կարելի է նկատել, որ արդյունաբերական ձեռնարկությունները գլխավորապես տեղաբաշխված են այն բնակավայրերում, որոնց տարածքը կազմում է երկրագնդի ամբողջ տարածքի ընդամենը 3%-ը:

Այլ է գյուղատնտեսության տեղաբաշխման պատկերը. գյուղատնտեսական մշակվող հողերն ու արոտավայրերը զբաղեցնում են երկրագնդի բնակեցված տարածքի ավելի քան 1/3-ը: Այսպիսով՝ ամբողջ տնտեսության տեղաբաշխումը չի կարելի բնութագրել մեկ ընդհանուր գնահատականով: Կարելի է միայն առանձին-առանձին բնութագրել արդյունաբերության, գյուղատնտեսության ու այլ ճյուղերի կամ ձեռնարկությունների տեղաբաշխումը: Բացի նշվածից՝ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ տնտեսության տեղաբաշխումը ժամանակի ընթացքում փոփոխվում է:

Տնտեսության տեղաբաշխումը բարդ և երկարատև գործընթաց է: Տեղաբաշխման ներկա պատկերը ձևավորվել է երկար ժամանակահատվածում՝ բնական, սոցիալական, քաղաքական և այլ գործոնների ազդեցությամբ:

Յուրաքանչյուր վայրի տեղական պայմաններն ու հանգամանքները, կարելի է պատկերավոր ասել՝ «թելադրում», նույնիսկ պարտադրում են արդյունաբերական որոշ ձեռնարկությունների տեղաբաշխումը: Այդպիսին է, օրինակ՝ նավթի, բնական գազի կամ ալմաստի հանույթը, որը, հասկանալի պատճառով, տեղաբաշխված է սուսկ դրանց հանքավայրերում: Հակառակ վերոնշյալի՝ որոշ հումքատեսակներ (օրինակ՝ կաշի և մանվածքաթել) օգտագործող ձեռնարկությունները հնարավոր է տեղաբաշխել նույնիսկ հումքի արտադրության շրջանից շատ հեռավոր այն բնակավայրերում, որտեղ կան անհրաժեշտ թվով աշխատավորներ: Վերջապես՝ կան նաև այնպիսի ձեռնարկություններ (օրինակ՝ հացաթխման կամ կահույքի արտադրության), որոնք նպատակահարմար է տեղաբաշխել դրանց արտադրանքի սպառման կենտրոններում՝ բնակավայրերում:

Աշխարհագրական օբյեկտների տեղաբաշխման վրա ազդող պայմաններն ու հանգամանքները կոչվում են **տեղաբաշխման գործոններ**:

Յուրաքանչյուր վայրում գոյություն ունի տեղաբաշխման գործոնների յուրահատուկ զուգակցում:

Տնտեսության տեղաբաշխումը պայմանավորված է նաև տեղաբաշխվող ձեռնարկության առանձնահատկություններով, մասնավորապես՝ շրջակա միջավայրին դրա ներկայացրած պահանջներով: Դրանցից են, օրինակ՝ բնակլիմայական պայմանները, բնակեցվածության աստիճանը, էկոլոգիական իրադրությունը:

Տեղաբաշխվող օբյեկտի առանձնահատկություններից են հումքատարությունը, էներգատարությունը, ջրատարությունը, տարածքատարությունը և այլն:

Տնտեսության տեղաբաշխման վրա առավել մեծ, երբեմն նույնիսկ վճռորոշ նշանակություն ունեն հետևյալ գործոնները:

Տնտեսաաշխարհագրական դիրքի գործոն: Այս գործոնի ազդեցության բարենպաստությունը կամ անբարենպաստությունը պայմանավորված է տվյալ երկրի կամ քաղաքի շրջակա (հարևան) տնտեսական նշանակություն ունեցող օբյեկտների բնույթով և զարգացման մակարդակով: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսաաշխարհագրական դիրքն այս առումով բարենպաստ չէ, քանի որ հարևան երկրները չունեն զարգացման այնպիսի ցանկալի բարձր մակարդակ, ինչպես օրինակ՝ արևմտաեվրոպական երկրները: Տնտեսաաշխարհագրական դիրքը գնահատվում է նաև տրանսպորտային կարևոր մայրուղիների և հատկապես էժան ծովային ուղիների առկայությամբ կամ մերձությամբ, ինչպես նաև հանքային խոշոր շրջանների մերձությամբ: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունը ծովային բանուկ ուղիներից ու խոշոր նավահանգիստներից հեռու է, բայց բավականին մոտ է Կասպից ծովի և Պարսից ծոցի նավթային խոշոր շրջաններին:

Տարածքային գործոն: Տարածքը տնտեսության տեղաբաշխման հիմքն է, զարգացման ռեսուրսը, ուստի կարևոր են տարածքի և մեծությունը, և՛ ձևը (ուրվագիծը): Մեծ տարածքում, որպես կանոն, մեծ ու բազմատեսակ են բնական ռեսուրսները: Մյուս կողմից, տարածքի մեծությամբ պայմանավորված, մեծանում են տրանսպորտային հեռավոր փոխադրումները և, որպես հետևանք՝ թանկանում են ապրանքները (ավելանում են փոխադրման ծախսերը): Օրինակ՝ ԱՄՆ-ի արևմուտք-արևելք ձգվածությունը 4 հազ. կմ է, իսկ Ռուսաստանինը՝ 11 հազ. կմ: Տարածքով փոքր, բայց զարգացած ու խտաբնակ երկրներում գոյություն ունի տարածքային սղության հիմնախնդիր: Նոր գործարանների կառուցման և մշակվող հողատարածքի ընդարձակման համար այդպիսի երկրները ստիպված են տարածք նվաճել ծովից: Այսպես օրինակ՝ Նիդեռլանդների տարածքի 40%-ը ցամաքեցված ծովի հատակն է: Տոկիոյի տարածքը ծովի հատակի հաշվին ավելացել է 1000 կմ²-ով, որը 4 անգամ մեծ է Երևան քաղաքի տարածքից: Ճապոնական ծովում արհեստական կղզու վրա կառուցված է «Կենսայ» միջազգային խոշոր օդանավակայանը, Չինաստանի Շանհայ քաղաքից 30 կմ հեռավորության վրա կառուցված է աշխարհի արդեն ամենամեծ նավահանգիստը, իսկ Դուբայում կառուցված է արհեստական կղզի՝ բազմաթիվ հյուրանոցներով և լողափերով:

Բնառեսուրսային գործոն: Այս գործոնի ազդեցությամբ արտադրական ձեռնարկությունները տեղաբաշխվում են բնական հումքային ռեսուրսների շրջանում, որպեսզի բացառվեն հումքի մեծածավալ ու հեռավոր փոխադրումները, և դրա շնորհիվ սպառման վայր փոխադրվի հումքի համեմատությամբ

տասնյակ, նույնիսկ հարյուրավոր անգամ փոքր ծավալով պատրաստի արտադրանքը: Օրինակ՝ 100 տ պղնձի հանքաքարից, միջին հաշվով, ստացվում է մոտ 1 տ պատրաստի արտադրանք՝ մաքուր կամ զտված պղինձ: Հումքային գործոնի դերն առավել մեծ է ոսկու արտադրությունում (1 տ ոսկու հանքաքարից սովորաբար ստացվում է շուրջ 30 գ մաքուր ոսկի):

Տրանսպորտային գործոն: Տնտեսության տեղաբաշխման գործընթացում տրանսպորտի դերը շատ մեծ էր մինչև գիտատեխնիկական հեղաշրջման ժամանակաշրջանը, երբ զարգացան տրանսպորտի նոր տեսակներն ու կատարելագործվեցին հները: Որպես արդյունք՝ պակասեցին տրանսպորտային ծախսերը, ինչի շնորհիվ էլ տնտեսապես նպատակահարմար դարձավ հումքի արտադրության ու սպառման շրջանների միջև կատարել նաև փոխադրումներ:

Աշխատանքային ռեսուրսների

գործոն: Աշխատանքային ռեսուրսների դերը միշտ էլ մեծ է եղել տնտեսության տեղաբաշխման գործում: Մի կողմից՝ տնտեսության բոլոր, հատկապես աշխատատար¹ ճյուղերը դեպի իրենց են «ձգում» այլ շրջանների, օրինակ՝ գյուղերի, զարգացող երկրների աշխատուժը, մյուս կողմից՝ բնակչության խոշոր կուտակումների շրջանները (օրինակ՝ Արևելյան և Հարավարևելյան Ասիան) զարգացած երկրներից դեպի իրենց են «ձգում» աշխատատար արտադրություններ՝ մանավանդ եթե այդ տարածաշրջաններում նաև էժան է աշխատուժը, այսինքն՝ ցածր է աշխատանքի վարձատրությունը:

Այդ պատճառով ներկայումս շատ արտադրություններ բարձր զարգացած երկրներից «գաղթում» են զարգացող երկրներ:

Տարածքային համակենտրոնացման գործոն: Արտադրական ձեռնարկությունների կուտակումը համեմատաբար ոչ մեծ տարածքում (օրինակ՝ քաղաքային կուտակումներում կամ արդյունաբերական շրջաններում) կոչվում է **տարածքային համակենտրոնացում:** Վերջինս ունի և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ: Դրական հետևանք է, օրինակ, այն հանգամանքը, որ արտադրական կապերով միմյանց հետ համագործակցող ձեռնարկությունները միևնույն վայրում տեղաբաշխելու շնորհիվ օգտագործվում է տեղական հումքը, և վերանում է հեռավոր շրջաններից հումք փոխադրելու անհրաժեշտությունը,



Արդյունաբերական կենտրոն

1. **Աշխատատար** են անվանվում այն արտադրությունները, որոնք պատրաստի արտադրանքի մեկ կշռային միավորի հաշվով պահանջում են աշխատանքային մեծ ներդրում (օրինակ՝ թեթև արդյունաբերությունը, սարքաշինությունը):

ակտիվանում են տարբեր ճյուղերի ձեռնարկությունների միջև արտադրական կապերը, նվազում են տրանսպորտային ծախսերը, հետևաբար՝ նաև ապրանքի ինքնարժեքը¹:

Իսկ բացասական հետևանք է, օրինակ՝ այն հանգամանքը, որ արտադրության համակենտրոնացման շրջաններում ստեղծվում է էկոլոգիական անտանելի իրադրություն, դրանից բացի՝ երկրի մնացյալ տարածաշրջանները մնում են թերզարգացած, ի հայտ են գալիս բնակչության բարձր գործազրկությամբ շրջաններ:

Էկոլոգիական գործոն: Էկոլոգիական գործոնը համեմատաբար նոր է: Այդ գործոնի դերը մեծանում է այն պատճառով, որ արտադրության, տրանսպորտի, բնակչության խիստ համակենտրոնացման հետևանքով առանձին տարածաշրջաններում չափազանց մեծանում է շրջակա միջավայրի աղտոտումը, սպառվում են ռեսուրսները: Երկրների կառավարությունները ձգտում են կանխարգելել արտադրության խիստ համակենտրոնացումը և շրջակա միջավայրին վնաս հասցնող արտադրական ձեռնարկությունները տարակենտրոնացնել՝ վերատեղաբաշխելով երկրի հնարավորին չափ ընդարձակ տարածքներում: Հաճախ այդպիսի «աղտոտ» արտադրությունների (հատկապես քիմիական, սև և գունավոր մետաղաձուլական) ձեռնարկությունները տեղաբաշխվում են նոր զարգացող երկրներում, որտեղ արդյունաբերության թույլ զարգացման պատճառով էկոլոգիական իրադրությունը դեռևս բարվոք է:



Բարձր տեխնոլոգիական արտադրությունը գիտատար է:

ներդրում:

Գիտատար ճյուղերը, մի կողմից՝ տեղաբաշխվում են գիտական խոշոր կենտրոնների մերձակայքում, մյուս կողմից՝ գիտատար արտադրությունների շրջաններում ստեղծվում են գիտական հիմնարկներ:

Այսպիսով՝ **տեղաբաշխման տարածքի հանգամանքները, պայմաններն ու ռեսուրսները տեղաբաշխման օբյեկտի տնտեսական գործունեության վրա թողնում են երկակի՝ դրական կամ բացասական ազդեցություն:**

1. Ապրանքի արտադրության վրա կատարված ծախսերի ընդհանուր գումարը՝ արտահայտված դրամով:

Միևնույն արտադրության տեղաբաշխման վրա ազդում են մեկից ավելի տեղաբաշխման գործոններ, որոնցից մեկը կարող է վճռորոշ լինել:

Դրական ազդեցությունն արտահայտվում է արտադրանքի ինքնարժեքի ցածրացմամբ, իսկ բացասականը՝ բարձրացմամբ:

Աշխատանքի աշխարհագրական (տարածքային) բաժանում: Խմբային մեծ աշխատանք կատարելիս մարդիկ այդ աշխատանքը բաժանում են բոլոր մասնակիցների միջև: Այդպես է ընտանիքում, բակում, դպրոցում, քաղաքում և ընդհանրապես ամբողջ մարդկային հասարակությունում: Աշխատանքի այդպիսի կազմակերպումը կոչվում է **աշխատանքի հասարակական բաժանում:** Աշխատանքի բաժանումը հին է, ինչպես մարդկությունը: Նույնիսկ աստվածաշնչյան առաջին մարդու՝ Ադամի ընտանիքի անդամների միջև եղել է աշխատանքի հասարակական առաջին բաժանումը: Նրա որդիներից Աբելը զբաղվում էր անասնապահությամբ, իսկ Կայենը՝ հողագործությամբ:

Հասարակության որոշ անդամներ զբաղվում են կոշիկ կարելով, մյուսները՝ գորգ գործելով, մարդկանց բուժելով, բեռներ փոխադրելով, ցորեն մշակելով և այլն:

Եթե ապրանքների արտադրությունն ու բազմազան ծառայությունների մատուցումը պարզունակ մակարդակով դիտենք որպես աշխատանք, ապա կնկատենք, որ այդ աշխատանքը տարածականորեն (աշխարհագրականորեն) բաժանված է աշխարհի բոլոր երկրների մասերի և ամբողջականությամբ՝ երկրների միջև: Աշխատանքի այսպիսի տարածական կազմակերպումը մարդկային հասարակության զարգացման անխուսափելի արդյունքն է և կոչվում է **աշխատանքի աշխարհագրական (տարածքային) բաժանում:** Աշխատանքի աշխարհագրական բաժանումը տնտեսական աշխարհագրության կարևորագույն հասկացություններից է:

Աշխատանքի աշխարհագրական բաժանումը երկրի ազգային տնտեսության տարածքային մասերի՝ տնտեսական շրջանների միջև կոչվում է **աշխատանքի միջշրջանային բաժանում:** Այսպես օրինակ՝ Արարատյան դաշտի տնտեսությունը մատակարարում է բանջարներ, մրգեր, խաղող, գինի, կոնյակ հանրապետության մյուս տարածաշրջաններին և վերջիններից ստանում կարտոֆիլ, ցորեն, մրգեր, միս, պանիր և այլ ապրանքներ ու մթերք:

Յուրաքանչյուր տարածք, պայմանավորված բնակլիմայական պայմաններով և հումքային ռեսուրսներով, տարիներ շարունակ զբաղվում է որոշակի ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ (օրինակ՝ զբոսաշրջությամբ), մասնագիտանում է այդ գործունեությունների գծով: Մասնագիտացման շնորհիվ տվյալ տարածքում արտադրվում է ավելի էժան և որակյալ արտադրանք:

Աշխատանքի աշխարհագրական բաժանում գոյություն ունի նաև ամբողջ աշխարհի մասշտաբով: Յուրաքանչյուր երկիր այդ բաժանմանը մասնակցում է



Շվեյցարական ժամացույցի գործարանի արտադրամասում

որպես աշխարհի մասնագիտացված տնտեսական օղակ: Օրինակ՝ Շրի Լանկան և Հնդկաստանը մասնագիտացած են թեյի մշակության, Շվեյցարիան՝ ժամացույցների արտադրության և ֆինանսաբանկային ծառայությունների մատուցման, Գերմանիան և Ճապոնիան՝ ավտոմեքենաների արտադրության մեջ: Մասնագիտացման շնորհիվ երկրները

մասնակից են դառնում աշխատանքի միջազգային բաժանմանը:

Աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանումն առանձին երկրների մասնագիտացումն է որոշակի ապրանքների արտադրության ու ծառայությունների մատուցման բնագավառում և համաշխարհային շուկայում դրանց արդյունքի փոխանակման մեջ:

Աշխարհի երկրները տարբեր ակտիվությամբ են մասնակցում աշխատանքի միջազգային բաժանմանը: Առավել ակտիվորեն մասնակցում են Հյուսիսային Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի երկրները, իսկ ամենապասիվորեն՝ Աֆրիկայի երկրները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է աշխարհագրական օբյեկտի տեղաբաշխման գործոնը:
2. Ո՞րն է տնտեսաաշխարհագրական դիրքի դերն աշխարհագրական օբյեկտի զարգացման ու տեղաբաշխման գործում:
3. Ո՞րն է տարածքային գործոնի էությունը:
4. Ինչ դեր ունի բնառեսուրսային գործոնը տնտեսական օբյեկտների տեղաբաշխման գործում:
5. Ներկայացրե՞ք արտադրությունների տեղաբաշխման վրա աշխատանքային ռեսուրսների ազդեցության օրինակ:
6. Բացահայտե՞ք կապը տարածքային համակենտրոնացման և էկոլոգիական գործոնների միջև:
7. Ինչո՞ւ են արտադրությունն ու ծառայությունները տարածականորեն կենտրոնանում որոշ տարածքներում:
8. Ո՞րն է աշխատանքի աշխարհագրական (տարածքային) բաժանման էությունը:
9. Որո՞նք են աշխատանքի աշխարհագրական բաժանման տեսակները:
10. Ինչ է երկրի տնտեսական մասնագիտացումը, ո՞րն է է դրա նպատակը:
11. Ո՞րն է աշխատանքի միջազգային բաժանման էությունը:

ԴԱՍ 16. ՀԱՄԱՇԻԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական աշխարհագրությունն ուսումնասիրում է ոչ միայն առանձին երկրների ազգային տնտեսությունը, այլև աշխարհի բոլոր երկրների տնտեսությունը միասնության մեջ, որպես մեկ ամբողջություն՝ **համաշխարհային տնտեսություն**: Մարդկության ողջ պատմության ընթացքում երկրների ազգային տնտեսությունները զարգացել են՝ միմյանց հետ որոշակի տնտեսական հարաբերություններ հաստատելով: Հին ժամանակներում այդ կապերը մեծ մասամբ շատ թույլ էին, քանի որ յուրաքանչյուր երկիր հիմնականում ինքն էր սպառում իր ոչ մեծաքանակ արտադրանքը: Տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացն էապես աշխուժացավ աշխարհագրական մեծ

հայտնագործությունների ժամանակաշրջանում: Նոր հայտնագործված տարածքներում մեծաթիվ բնակչություն էր ապրում, սակայն դեռևս զարգացած չէր արդյունաբերությունը: Ուստի «ընդլայնված» աշխարհում արտադրանքի մեծ պահանջարկ էր առաջացել: Այսպիսով՝ ձևավորվեց համաշխարհային տնտեսության կարևոր երեք նախադրյալից առաջինը՝ **համաշխարհային շուկան**:

Երկրորդ կարևոր նախադրյալը **խոշոր մեքենայական արտադրությունն** էր, որը XVIII դարում և XIX դարի առաջին կեսին տեղի ունեցած արդյունաբերական հեղաշրջման արդյունքն էր: Խոշոր մեքենայական արտադրության շնորհիվ ինքնաբավ սպառողական տնտեսությունը վերափոխվեց ապրանքային տնտեսության, այսինքն՝ այնպիսի տնտեսության, որի արտադրանքը ոչ միայն բավարարում էր երկրի բնակչության պահանջարկը, այլ նաև, որպես ապրանք, արտահանվում էր միջազգային շուկա:

Երրորդ կարևոր նախադրյալը **համաշխարհային երկաթուղային և ծովային տրանսպորտի** զարգացումն էր: Ժամանակակից նույնիսկ մեկ-երկու



Համաշխարհային շուկայի զարգացմանը նպաստում են միջազգային ցուցահանդեսները:



Համաշխարհային տնտեսության զարգացման նախադրյալ է խոշոր մեքենայական արտադրությունը:

գերխոշոր նավով մեկ տարում կարելի է փոխադրել ավելի շատ բեռ, քան հին ժամանակներում աշխարհի բոլոր տրանսպորտային միջոցներով միասին:



Համաշխարհային տնտեսության զարգացման նախադրյալ է ժամանակակից տրանսպորտը:

հարաբերություններով միմյանց փոխկապակցված աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունների պատմականորեն ձևավորված ամբողջությունն է:

Այսպիսով՝ համաշխարհային տնտեսությունը ամբողջություն է, իսկ ազգային տնտեսությունը՝ այդ ամբողջի մասը (օղակը, բաղադրիչը)¹: Համաշխարհային տնտեսության և ազգային տնտեսության փոխադարձ կապն անընդհատ ամրապնդվում է:

Համաշխարհային տնտեսության իրավիճակի ամեն մի փոփոխություն, բնականաբար, ազդում է երկրների տնտեսության վրա: Համաշխարհային իրավիճակի կտրուկ վատթարացման՝ տնտեսական ճգնաժամերի ազդեցությամբ երկրների ազգային տնտեսության աճը դադարում կամ, լավագույն դեպքում, դանդաղում է, արտադրանքի ծավալը՝ կրճատվում, իսկ գործազրկությունը՝ աճում: Սակայն առանձին խոշոր երկրի կամ երկրների խմբի տնտեսությունն էլ, իր հերթին, ազդում է համաշխարհային տնտեսության վրա: Օրինակ՝ 1970-ական թվականներին նավթ արտահանող երկրների կողմից նավթի համաշխարհային գնի կտրուկ բարձրացումն առաջացրեց համաշխարհային էներգետիկ ճգնաժամ, որից տուժեցին շատ երկրներ: Վերջերս ԱՄՆ-ի ֆինանսական ճգնաժամի² հետևանքով ևս առաջացավ համաշխարհային տնտեսական ճգնաժամ, որը բացասական մեծ ազդեցություն ունեցավ բոլոր երկրների, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա:

1. Երբեմն անվանում են նաև սուբյեկտ:

2. Ֆինանսական այդ ճգնաժամը շուտով դարձավ ԱՄՆ-ի ընդհանուր տնտեսական ճգնաժամ:

Համաշխարհային տնտեսությունը սկզբնական ժամանակաշրջանում ձևավորվել է որպես համաշխարհային կապիտալիստական տնտեսություն: XX դարի 2-րդ կեսին դրանից անջատվեց ու ձևավորվեց համաշխարհային սոցիալիստական տնտեսությունը: Ներկայումս վերջինս գրեթե վերացել է, քանի որ նախկին սոցիալիստական երկրները՝ բացառությամբ Կուբայի և Կորեայի ժողովրդադեմոկրատական Հանրապետության, ըստ էության՝ անցում են կատարել շուկայական տնտեսական զարգացման:

Համաշխարհային տնտեսությանը վերաբերող տվյալները տնտեսական աշխարհագրությունն օգտագործում է համաշխարհային տնտեսության տարածքային կառուցվածքի բացահայտման, նոր տեղաշարժերի հիմնավորման համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է համաշխարհային տնտեսությունը:
2. Որո՞նք են համաշխարհային տնտեսության նախադրյալները:
3. Տնտեսական աշխարհագրությունը ո՞ր տեսանկյունից է ուսումնասիրում համաշխարհային տնտեսությունը:

ԴԱՍ 17. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

Արդյունաբերությունը ազգային տնտեսության, ինչպես նաև համաշխարհային տնտեսության արտադրության առաջատար ճյուղն է: Արդյունաբերության բաժինը համաշխարհային տնտեսության կառուցվածքում ամենամեծն է: Արդյունաբերության բաժինը շատ ցածր է զարգացող և հատկապես ցածր է Աֆրիկայի զարգացող երկրներում:

Արդյունաբերությունը սկզբնապես ձևավորվել է Արևմտյան Եվրոպայի երկրներում ու թռիչքաձև զարգացել է արդյունաբերական հեղաշրջման ժամանակաշրջանում, երբ ներդրվեցին շոգեմեքենան, տարբեր տեսակի հաստոցներ և այլն: Ավելի ուշ արդյունաբերությունն աստիճանաբար տարածվեց աշխարհի բոլոր երկրներում: Այդուհանդերձ, ներկայումս էլ արդյունաբերական ձեռնարկությունների ու կենտրոնների մեծ մասը տեղաբաշխված է զարգացած երկրներում:

Արդյունաբերական ձեռնարկություններում իրականացվող արտադրական գործընթացում բնական նյութական ռեսուրսներից կամ գյուղատնտեսության արտադրանքից պատ-



Հանքանյութի բաց եղանակով արդյունահանումն առավել արդյունավետ է:

րաստվում են արդյունաբերական զանազան ապրանքներ: Արդյունաբերությունը զբաղվում է ոչ միայն հումքի արդյունահանմամբ ու մշակմամբ, այլև էներգիայի տարբեր տեսակների փոխակերպմամբ: Այսպես օրինակ՝ էլեկտրակայաններում վառելիքի կամ երկրի ընդերքի ջերմությունը, ինչպես նաև դեպի վար հոսող ջրի և այլ էներգիաները փոխակերպվում են էլեկտրական էներգիայի:

Արդյունաբերության արտադրանքի մի մասը (օրինակ՝ հաստոցը կամ հացահատիկահավաք կոմբայնը) օգտագործվում է որպես արտադրության միջոց, իսկ մյուս մասը (օրինակ՝ պարենը, հագուստը, կոշիկը)՝ որպես մարդկանց անմիջական սպառման առարկա:

Բացի նշվածից՝ առանձնանում են նաև **արդյունահանող** և **մշակող արդյունաբերական ձյուղերի** խմբեր: **Արդյունահանող արդյունաբերությունը** ներառում է այն ձյուղերը, որոնք զբաղվում են երկրի ընդերքից, ջրից և անտառներից տարբեր տեսակի հումքի կամ վառելիքի հանույթով:

Մշակող արդյունաբերությունը ներառում է այն ձյուղերը, որոնք զբաղվում են հումքի մշակմամբ կամ վերամշակմամբ: Ընդ որում՝ հումքը ստացվում է ոչ միայն արդյունահանող արդյունաբերության, այլ նաև գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության բնագավառներում:

Երկրի արդյունաբերական զարգացման մակարդակի գնահատման համար առավել բնութագրական է արդյունաբերության ընդհանուր (համախառն) արտադրանքի մեջ մշակող արդյունաբերության ձյուղերի բաժինը (տեսակարար կշիռը): Մշակող արդյունաբերության բաժինը շատ մեծ է զարգացած երկրներում, իսկ արդյունահանող արդյունաբերության բաժինը՝ զարգացող երկրներում (բացառությամբ հանքային ռեսուրսներով արտակարգ հարուստ զարգացած որոշ երկրների, օրինակ՝ Ավստրալիայի ու Կանադայի):



Միկրոէլեկտրոնիկան՝ արդյունաբերության նորագույն ձյուղ

Արդյունաբերության արտադրանքի ծավալն ավելի արագորեն է աճում, քան նյութական արտադրության այլ ձյուղերինը: Դա բացատրվում է արդյունաբերության հումքային մեծ հնարավորություններով, մինչդեռ գյուղատնտեսության զարգացման հնարավորությունը սահմանափակված է հողային ֆոնդով:

Արդյունաբերության ձյուղերը խմբավորում են նաև ըստ դրանց ձևավորման ժամանակի: Առանձնացվում են **հին**, **նոր** և **նորագույն** ձյու-

ղերը: **Հին** ճյուղեր են, օրինակ՝ մետաղաձուլությունը և թեթև արդյունաբերությունը, իսկ **Նոր** ճյուղեր են էլեկտրաէներգետիկան, մեքենաշինության ճյուղերի մեծ մասը և քիմիան:

XX դարի վերջից առավել արագ աճում են **Նորագույն** ճյուղերի՝ հաշվողական տեխնիկայի, միկրոէլեկտրոնիկայի, ռոբոտաշինության, տիեզերական հրթիռաշինության արտադրությունները: Իսկ մինչև XX դարի կեսերն արագ զարգացմամբ աչքի են ընկել Նոր ճյուղերը՝ ավտոմեքենաշինությունը, թեթև գունավոր մետաղների ձուլումը, պլաստմասսաների ու քիմիական թելերի արտադրությունը, նավաշինությունը, երկաթուղային մեքենաշինությունը:

Արդյունաբերության հին ճյուղերի դանդաղորեն աճելու, ինչպես նաև Նոր ճյուղերի ձևավորման ու արագ աճի հետևանքով փոփոխվում է արդյունաբերության ճյուղային կառուցվածքը: Մեծանում է Նոր և հատկապես Նորագույն ճյուղերի մասնաբաժինը և, ընդհակառակը՝ փոքրանում է հին ճյուղերի մասնաբաժինը: Սակայն այդ ճյուղերը հավասարաչափորեն չեն զարգացած ու տեղաբաշխված տարբեր տիպերի երկրներում:

Նորագույն՝ բարձր տեխնոլոգիական արտադրանք արտադրող ճյուղերը հիմնականում կենտրոնացված են բարձր զարգացած երկրներում, իսկ հին ճյուղերը՝ զարգացող երկրներում:

Վերջին տասնամյակներում զարգացող երկրներում են տեղաբաշխվում նաև զարգացած երկրներից «դուրս մղվող» էկոլոգիապես «անմաքուր» արտադրությունները, օրինակ՝ քիմիականը և մետաղաձուլականը:

Արդյունաբերության տեղաբաշխումը: Արդյունաբերության տեղաբաշխումը բավականին բարդ գործընթաց է, ինչը պայմանավորված է բնական, տնտեսական, սոցիալական ու էկոլոգիական բազմաթիվ գործոնների ազդեցությամբ: Դրանք անհրաժեշտ է հաշվի առնել, քանի որ արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղ ունի տեղաբաշխման իրեն բնորոշ հատկանիշներ: Օրինակ՝ պղնձաձուլության տեղաբաշխման գլխավոր հատկանիշը հումքատարությունն է, իսկ սարքաշինությանը՝ աշխատատարությունը:

Այդ գործոններից բացի՝ անհրաժեշտ է նաև նկատի ունենալ արդյունաբերության բոլոր ճյուղերի համար ընդհանուր պայմանները՝ տրանսպորտային ուղիների ու սպառման (հրացման) շուկայի առկայությունը («Տնտեսության տեղաբաշխման գործոններ» թեմայից ձեզ արդեն ծանոթ են այդ գործոնները):

Արդյունաբերության տեղաբաշխման սկզբունքները՝ նպատակներն ու ուղղությունները, պայմանավորված են ոչ միայն տվյալ ճյուղի, այլև արդյունաբերական ձեռնարկության շրջակա տարածքի բնական ու տնտեսական առանձնահատկություններով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է արդյունաբերության դերը տնտեսության մեջ:
2. Արդյունաբերության ճյուղերի ինչ խմբավորումներ գիտեք: Դրանցից ո՞րն է առավել իրատեսորեն արտահայտում երկրի տնտեսական զարգացման մակարդակը:
3. Ինչո՞ւ արդյունաբերության արտադրանքի ծավալն ավելի արագ է աճում, քան այլ ճյուղերինը:
4. Որո՞նք են արդյունաբերության հին, նոր և նորագույն ճյուղերի տեղաբաշխման բնութագրական գծերը:

ԴԱՍ 18. ՎԱՌԵԼԻՔԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ



Այսպիսի ենթակայաններից էլեկտրաէներգիան հասնում է սպառողին:

ությունը և սպասարկման ոլորտին մատակարարում է էլեկտրաէներգիա և վառելիք, իսկ քիմիական արդյունաբերությանը՝ հումք:


Վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը մեծ ազդեցություն ունի նաև տնտեսության տեղաբաշխման վրա: Հայտնի է, որ էներգատար արտադրությունները տեղաբաշխվում են հենց վառելիքային ռեսուրսների և էժան էլեկտրաէներգիայի արտադրության շրջաններում:

Աշխարհում արագ աճում է վառելիքի և էներգիայի սպառման ծավալը, քանի որ մի կողմից աճում է բնակչության թիվը, իսկ մյուս կողմից՝ մեկ շնչի հաշվով սպառվող էներգիայի քանակը: Զարգացած երկրներում վառելիքի և էներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով մի քանի անգամ ավելի բարձր է, քան զարգացող երկրներում:


Վառելիքի տարբեր տեսակների (ածուխ, նավթ, գազ, տորֆ, փայտանյութ) ջերմատվությունը տարբեր է: Օրինակ՝ նավթի մեկ կիլոգրամի այրումից ստաց-

վում է 1,5 անգամ շատ ջերմություն, քան ածխի, և 3 անգամ շատ, քան գորշ ածխի այրումից: Որքան բարձր է վառելիքի ջերմաստվությունը, այնքան բարձր է դրա որակը, և ավելի շատ էլեկտրաէներգիա կարելի է ստանալ այդ վառելիքից: Այսպես՝ 1 կգ քարածխի այրումից ստացվում է 2 կվտ·ժ էլեկտրաէներգիա, 1 կգ նավթի և 1 մ³ գազի այրումից՝ 3-ական կվտ·ժ էլեկտրաէներգիա:

Աշխարհի բնակչության թվի, ամբողջ և մեկ շնչի հաշվով սպառվող էներգիայի քանակների աճերի համեմատությունը 2000-2008թթ., (%-ով)




Աշխարհի առանձին երկրների ու տարածաշրջանների էներգիայի սպառման ծավալի աճը 2000-2008թթ. (%-ով)




Վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը համալիր ճյուղ է՝ բաղկացած վառելիքային արդյունաբերությունից և էլեկտրաէներգետիկայից: Ճյուղն ընդհանրապես և հատկապես էլեկտրաէներգետիկան զարգանում են բարձր տեմպերով: Էապես փոխվել է ճյուղի կառուցվածքը: Վերջին հարյուրամյակում փոփոխվել են վառելիքի առանձին տեսակների և ջրային ու ատոմային էլեկտրակայանների արտադրած էլեկտրաէներգիայի մասնաբաժինները:

Առանձնացվում է վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացման 3 փուլ՝ ածխային, նավթագազային և ժամանակակից՝ անցումային:

Էներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով ըստ տարածաշրջանների 2008թ. (կգ նավթի համարժեքով)



Վառելիքաէներգետիկական հաշվեկշիռը (%)




Ածխի արդյունահանում (Հնդկաստան)

Մինչև XX դարի երկրորդ կեսը գլխավոր վառելիքը եղել է ածուխը, որին բաժին էր ընկնում օգտագործած վառելիքի կեսից ավելին: Այս ժամանակաշրջանը անվանում են **ածխային փուլ**: XX դարի երկրորդ կեսից սկսվել է 2-րդ՝ **նավթագազային փուլը**. կտրուկ նվազել է պինդ վառելանյութի (ածուխ, տորֆ, վառելափայտ) բաժինը, ավելացել է նավթի ու գազի բաժինը:


XX դարի 70-ական թվականներից սկսվում է **ժամանակակից՝ անցումային փուլը**: Ինչն է բնորոշ այս փուլին: Նախ՝ իրատեսական է դարձել նավթագազային պաշարների սպառման վտանգը: Մեծանում են դրանց արդյունահանման և փոխադրման ծախսերը, քանի որ նավթի և գազի հանույթի զգալի մասը կատարվում է ծովի հատակի ավելի մեծ խորություններից և դրանց սպառման շրջաններից ավելի հեռու վայրերում: Միաժամանակ սկսում է աճել միջուկային վառելիքի, էներգիայի վերականգնվող և ոչ ավանդական տեսակների (արեգակնային, մակընթացային, ծովի ալեբախության, քամու, երկրաջերմային էներգիայի) բաժինը:

1. 1970-ական թվականների սկզբին նավթի 1 տակաոի (159 կգ) միջազգային շուկայական գինը 2,5 ԱՄՆ դոլար էր, իսկ ներկայումս՝ շուրջ 100 ԱՄՆ դոլար:



Առաջնային էներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով


ՆԱՎԹԻ ՀԱՆՈՒՅԹԻ ԾԱՎԱԼՈՎ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԸ (2010 թ.)



Մինչև XX դարի կեսերը աշխարհի խոշոր երկրների (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Ճապոնիա, Չինաստան, ԽՍՀՄ) վառելիքաէներգետիկ արդյունաբերության հիմքը կազմել է ածուխը:

Ածխարդյունաբերության զարգացումը մեծ փոփոխություններ է կրել: Երկար ժամանակ ավելի արդյունավետ վառելիքների՝ նավթի ու գազի արդյունահանման կտրուկ աճի պատճառով ածխի հանույթը նվազում էր: Սակայն վերջին տասնամյակներին՝ էներգետիկական ճգնաժամի ժամանակաշրջանում այն կրկին վերելք ապրեց: Ներկայումս ածուխ արդյունահանվում է աշխարհի ավելի քան 60 երկրներում, բայց դրա գերակշիռ մասը բաժին է ընկնում առաջատարներին՝ Չինաստանին (համաշխարհային հանույթի ավելի քան 1/4-ը), ԱՄՆ-ին, Հնդկաստանին, Ավստրալիային, Ռուսաստանին և այլն:

Նավթարդյունաբերությունը վառելիքային արդյունաբերության գլխավոր ձյուղն է: Ներկայումս մարդկության օգտագործած էներգիայի 40%-ը բաժին է



Ածխի հանույթը և գլխավոր միջազգային բեռնահոսքերը

ընկնում նավթին: Նավթ արդյունահանում են աշխարհի ավելի քան 80 երկրներում: Համաշխարհային նավթարդյունաբերության աշխարհագրության հիմնական առանձնահատկությունն այն է, որ նավթային պաշարների գերակշռող մասը կենտրոնացած է զարգացող երկրներում, իսկ սպառման մեծ մասը՝ բարձր զարգացած երկրներում: Նավթի հանույթի ծավալով աշխարհում առաջատար երկրներն են Ռուսաստանը, Սաուդյան Արաբիան, ԱՄՆ-ը, Մեքսիկան, Իրանը, Վենեսուելան, իսկ ներկրման ծավալով՝ Չինաստանը, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Արևմտյան Եվրոպայի երկրները: Ներկայումս համաշխարհային առևտրում նավթը ձեռք է բերել առանձնահատուկ նշանակություն և բացի տնտեսական գործոն լինելուց՝ նաև հզոր քաղաքական գործոն է:

Նավթի փոխադրումն առավել էժան է խոշոր հեղուկատար նավերով (տանկերներով) և խողովակաշարերով: Այդպիսի խողովակաշարերից է Ռուսաստանում սկիզբ առնող նավթամուղը, որով Արևմտյան Սիբիրի նավթը

հասնում է Արևմտյան Եվրոպա: Հզոր նավթամուղներ են կառուցված նաև Պարսից ծոցի ավազանի նավթ արդյունահանող պետություններից մինչև Թուրքիայի ու Սիրիայի՝ Միջերկրական ծովի ափի նավահանգիստներ, որտեղից էլ նավթը նավերով փոխադրվում է եվրոպական երկրներ: Ռուսաստանից և Կենտրոնական Ասիայից նոր նավթամուղներ են կառուցվում դեպի Չինաստան: Տարեցտարի ավելանում է նավթի և գազի հանույթը ծովի հատակից:

Գազարդյունաբերությունն աշխարհի վառելիքային արդյունաբերության ամենաարագ աճող ենթաճյուղն է: Դա բացատրվում է նրանով, որ բնական այրվող գազը համեմատաբար հեշտ արդյունահանվող, փոխադրվող, ցածր ինքնարժեքով, բարձր ջերմատվությամբ վառելիք է: Ոչ պակաս կարևոր է, որ նավթի համեմատությամբ այն էկոլոգիապես մաքուր է, իսկ պաշարներն ավելի մեծ են:

Գազարդյունաբերության զարգացումը սկսվել է անցած դարի 50-ական թվականներից: Բնական գազի ու նավթի պաշարների տեղաբաշխումը հիմնականում համընկնում է: Գազի համաշխարհային հանույթի մեծ մասը սպառվում է զարգացած երկրներում: Բնական գազը փոխադրում են գազամուղներով, ինչպես նաև, հեղուկացված վիճակում, հատուկ նավերով: Գազամուղներով գազը Արևմտյան Սիբիրից հասնում է Արևմտյան Եվրոպա, Կանադայից՝ ԱՄՆ, Ալժիրից և Լիբիայից Միջերկրական ծովի հատակով՝ Իտալիա, Ֆրանսիա և եվրոպական այլ երկրներ: Բնական հեղուկացված գազի գլխավոր սպառողներն են Ճապոնիան, ԱՄՆ-ը և Եվրոպայի որոշ երկրներ:

Էլեկտրաէներգետիկան որպես արդյունաբերության ճյուղ ձևավորվել է XIX դարի վերջին՝ էլեկտրական էներգիայի ստացման և մետաղալարերով մեծ հեռավորության վրա հաղորդելու գյուտից հետո:

Էլեկտրաէներգիայի արտադրությունն աշխարհում խիստ անհամաչափ է տեղաբաշխված: Էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության շուրջ 4/5-ը բաժին է ընկնում «առաջին տասնյակի» երկրներին (ԱՄՆ, Չինաստան, Ճապոնիա, Ռուսաստան, Կանադա, Գերմանիա, Ֆրանսիա, Հնդկաստան, Մեծ Բրիտանիա, Բրազիլիա): Բարձր զարգացած երկրներում մեկ շնչի հաշվով տասնյակ հազար կվտ·ժ էլեկտրաէներգիա է արտադրվում, որը տասնյակ, նույնիսկ հարյուրավոր անգամ շատ է, քան տնտեսապես հետամնաց երկրներում: Միաժամանակ, աշխարհում հարյուրմիլիոնավոր մարդիկ դեռևս չեն օգտվում էլեկտրաէներգիայից:



Ծովի հատակից նավթի արդյունահանման հենահարթակ

ԱՇԽԱՐՀԻ ԱՏՈՄԱՅԻՆ ԵՎ ՋՐԱՅԻՆ Կ



109 Ռեակտորների քանակը պետության տարածքում

Էլեկտրակայաններ

Ջրային
(3 մլն կվտ և ավելի հզորության)

- 3 - 4
- 4 և ավելի

Ատոմային
(3 մլն կվտ և ավելի հզորության)

- 3 - 4

ԱՄՆ - 109	Ֆինլանդիա - 4
Ֆրանսիա - 60	Սեքսիկա - 4
Ճապոնիա - 59	Ավստրալիա - 4
Սեծ Բրիտանիա - 35	Արգենտինա - 3
Ռուսաստան - 25	Հունգարիա - 2
Կանադա - 22	ՀԱՀ - 2
Գերմանիա - 21	Բրազիլիա - 1
Ուկրաինա - 14	Լիտվա - 1
Հնդկաստան - 9	Հայաստան - 1
Իսպանիա - 9	Ղազախստան - 1
Կորեայի Հանրապետություն - 9	Շվեդիա - 1
Թայվան - 6	Պակիստան - 1
Բուլղարիա - 6	Սլովենիա - 1
Շվեյցարիա - 5	Սլովակիա - 1
Չինաստան - 5	

Աշխարհի էլեկտրակայանների ընդհանուր հզորության գրեթե 2/3-ը բաժին է ընկնում ջերմային էլեկտրակայաններին (ջէկ), որոնք աշխատում են հանքային վառելիքով: Ջէկերի առավելությունն այն է, որ դրանց կառուցումը հեշտ է, արագ և էժան, իսկ թերությունն այն է, որ ջէկերի արտադրած էլեկտրաէներգիայի ինքնարժեքը բարձր է ու շարունակում է բարձրանալ՝ վառելիքի գների բարձրացման հետևանքով: Բացի դրանից՝ ջէկերը էկոլոգիական մեծ վնաս են հասցնում շրջակա միջավայրին:

Ջրով աշխատող էլեկտրակայաններին (ջրէկ) բաժին է ընկնում էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության 20%-ը: Ջրէկները սովորաբար կառուցվում են համեմատաբար ջրառատ և մեծ թեքությամբ գետերի վրա: Չնայած ջրէկների կառուցման դժվարությանը և երկարատևությանը՝ դրանց շահագործումն էկոլոգիական առումով քիչ վնաս է հասցնում շրջապատին, իսկ արտադրած էլեկտրաէներգիան համեմատաբար էժան է: Աշխարհի խոշորագույն ջրաէլեկտրակայանները գտնվում են Չինաստանում («Երեք կիրճ» ջրէկը Ցանցզի գետի վրա), Լատինական Ամերիկայում («Իտայպուն» Պարանա գետի վրա): Խոշոր ջրէկներ կան նաև Ռուսաստանում և ԱՄՆ-ում:

Հզորությամբ երրորդ տեղում են ատոմային էլեկտրակայանները (աէկ), որոնք աշխատում են միջուկային վառելիքով: Այժմ արդեն աշխարհի ավելի քան 30 երկրներում կառուցված աէկների թիվը հաշվվում է հարյուրներով: Դրանք հիմնականում վառելիքային և ջրաէներգետիկ ռեսուրսներով աղքատ, բայց տնտեսապես զարգացած երկրներն են (Ֆրանսիա, Ճապոնիա, Շվեդիա և այլն): Աշխարհում առաջին աէկը կառուցվել է Ռուսաստանի Օբնինսկ քաղաքում, իսկ ամենախոշորը՝ Ճապոնիայի Ֆուկուսիմա քաղաքում: Կովկասում և ամբողջ Հարավարևմտյան Ասիայում կառուցված միակ աէկը Հայաստանի Հանրապետությունում է: 1986թ. Ուկրաինայում Չեռնոբիլի աէկի, իսկ 2011թ. ցունամիի հետևանքով Ֆուկուսիմայի աէկի վթարներից հետո աշխարհում աէկների անվտանգության պահանջներն ավելի խստացվեցին, իսկ առանձին երկրներ ընդհանրապես հրաժարվեցին աէկների կառուցումից և շահագործումից:

Վառելիքային ռեսուրսների սպառման, թանկացման և ջէկերի ու աէկների էկոլոգիական բացասական հետևանքների պայմաններում մարդկությունը որոնում է էլեկտրաէներգիայի արտադրության այլընտրանքային՝ ոչ ավանդական աղբյուրների օգտագործման ուղիներ: Այդ աղբյուրների շարքում հատկապես մեծ են արե-



Հողմային էլեկտրակայան
Գերմանիայում

Վառելիքային ռեսուրսների սպառման, թանկացման և ջէկերի ու աէկների էկոլոգիական բացասական հետևանքների պայմաններում մարդկությունը որոնում է էլեկտրաէներգիայի արտադրության այլընտրանքային՝ ոչ ավանդական աղբյուրների օգտագործման ուղիներ: Այդ աղբյուրների շարքում հատկապես մեծ են արե-

գակնային, երկրաջերմային, քամու, ինչպես նաև մակընթացային էներգիայի օգտագործման հեռանկարները: Երկրի ներքին ջերմության էներգիան լայնորեն օգտագործվում է Իսլանդիայում, Ֆիլիպիններում և մի շարք այլ երկրներում: Զարգացած առանձին երկրներում էլեկտրաէներգիա արտադրելու համար օգտագործվում է նույնիսկ կենցաղային աղբի այրման ժամանակ անջատվող էներգիան:

Էներգիայի ոչ ավանդական աղբյուրների բաժինն աշխարհի էլեկտրա-էներգիայի ընդհանուր արտադրանքի մեջ դեռևս աննշան է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է վառելիքաէներգետիկ արդյունաբերության դերը տնտեսության մեջ:
2. Ի՞նչ է պայմանական վառելիքը: Համեմատե՞ք վառելիքի առանձին տեսակներն ըստ ջերմատվության:
3. Նկարագրե՞ք վառելիքաէներգետիկ արդյունաբերության ծյուղային կառուցվածքը: Ի՞նչ փոփոխություններ է կրել վերջին հարյուրամյակում:
4. Քարտեզի վրա նշե՞ք ածխի, նավթի և բնական գազի արդյունահանման և սպառման հիմնական շրջանները: Դրանք համեմատե՞ք և նշե՞ք հիմնական տարբերություններն ու նմանությունները:
5. Որո՞նք են էլեկտրաէներգիայի ստացման հիմնական աղբյուրները: Համեմատե՞ք ջեկերի և ջրէկների հիմնական առավելություններն ու թերությունները:
6. Նշե՞ք և համեմատե՞ք տարբեր տիպի էլեկտրակայանների (ջերմային, ջրային, ատոմային) տեղաբաշխման երկրներն ու վայրերը:
7. Էներգիայի ոչ ավանդական ո՞ր աղբյուրներն են օգտագործվում էլեկտրա-էներգետիկայում:

Հետաքրքիր է իմանալ

Ջրէկներն աշխարհի խոշորագույն կառույցներից են: Քիչ երկրներ են ի գորու միայն սեփական ուժերով ու տեխնիկայով կառուցել այնպիսի խոշոր ջրէկ, որի համար օգտագործվում է մի քանի անգամ ավելի շատ բետոն և մետաղ, քան հանրահայտ Քեոփսի բուրգի ծավալն է: Ամբարտակի պատնեշի բարձրությունը համեմատելի է մի քանի տասնյակ հարկանի շենքի հետ, իսկ դրան կից ձևավորված ջրամբարը երբեմն նույնիսկ գերազանցում է Սևանա լճի մակերեսը և ջրի ծավալը:

Ջրամբարներին կից ստեղծվում են հանգստի գոտիներ, ջրերում բազմանում են ձկնային պաշարներ և այլն: Սակայն ջրէկներին կից ջրամբարները, դրականից բացի, շրջակա միջավայրի վրա ազդում են նաև բացասականորեն: Մասնավորապես՝ խանգարում են գետային նավերի նավարկությանը, որը կարգավորելու համար հաճախ ստիպված են լինում կառուցել ջրարգելակներ

(շյուզներ), որոնց օգնությամբ նավերը համապատասխանաբար իջնում կամ բարձրանում են գետով: Նույն կերպ կառուցվում է ձկնանցման հարմարություն, որպեսզի ձկները կարողանան հասնել գետերի վերին հոսանքների շրջանը՝ ձվադրման համար:

Նեղոս գետի վրա կառուցված Ասուանի ջրէկին կից ջրամբարը ձգվում է հարյուրավոր կիլոմետրեր, ինչի պատճառով ջրի հոսքը խիստ դանդաղում է, ջրում պարունակվող առատ տիղմը՝ մշակաբույսերի աճն ապահովող սննդաբար նյութը, ոռոգվող հողատարածքներ հասնելու փոխարեն նստում է ջրամբարի հատակին, ուստի և անհրաժեշտ է լինում արհեստականորեն պարարտացնել հողը (ինչի անհրաժեշտությունը չի եղել մինչև ջրամբարի կառուցումը):

Ինչ եզրահանգման եկաք ջրամբարների օգտակարության մասին:

ԴԱՍ 19. ՄԵՏԱՂԱՁՈՒԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերության մյուս երկու կարևոր ճյուղերն են մետաղաձուլությունն ու մեքենաշինությունը, որոնց հիմնական ենթաճյուղերին, արտադրություններին ու դրանց տարածքային կազմակերպման առանձնահատկություններին կծանոթանաք այս դասին:

Մետաղաձուլությունը (մետալուրգիան), որը մարդու արտադրական գործունեության հնագույն բնագավառներից է, յուրաքանչյուր երկրի տնտեսական և ռազմական հզորության հիմքն է: Հայաստանում մետաղ ձուլել են դեռևս 3 հազարամյակ առաջ (Արմավիրի մարզ, Մեծամոր): Հին և միջին դարերում մարդիկ ճանաչել են մետաղի ընդամենը 7 տեսակ՝ ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, կապար, անագ և սնդիկ: Ներկայումս մարդկությանը հայտնի քիմիական, ֆիզիկական, մեխանիկական ամենատարբեր հատկություններ ունեցող մետաղները և նրանց համաձուլվածքները (խառնուրդները) հաշվվում են հարյուրներով: Դրանք ամենալայն կիրառություն ունեն ժամանակակից արտադրության, տեխնիկայի ու գիտության բոլոր բնագավառներում: Վերջին տասնամյակներին մետաղաձուլության աճը դանդաղել է: Դրա պատճառն այն է, որ մեքենաշինության և մետաղների օգտագործման այլ ոլորտներում թանկ մետաղների փոխարեն սկսել են օգտագործել ավելի էժան ու անսահմանափակ քանակությամբ պլաստմասսա և այլ փոխարինող նյութեր:

Մետաղաձուլությունը արդյունաբերության բարդ կառուցվածք ունեցող ճյուղ է: Այն ներառում է՝ ա) երկրի ընդերքից բազմատեսակ հանքաքարի արդյունահանումը, բ) հանքաքարի հարստացումը, այսինքն՝ դրա մեջ պարունակվող ոչ պիտանի քարանյութի հեռացումը և խտանյութի արտադրությունը, գ) խտանյութից մետաղի ձուլման բուն գործընթացը, դ) համաձուլվածքների և գլանվածքի արտադրությունը:

Մետաղաձուլությունը բաժանվում է երկու ենթաճյուղի՝ **սև** և **գունավոր մետաղաձուլության**:

Սև մետաղաձուլություն: Սև մետաղաձուլության գլխավոր և ամենատարածված հանքային հումքը երկաթաքարն է, որի հանույթի հնագույն և գլխավոր շրջանն ավանդաբար Արևմտյան Եվրոպան էր: Սակայն երկարատև օգտագործման հետևանքով հանքաքարի պաշարները խիստ նվազել են, և դրա պատճառով եվրոպական շատ երկրներ դադարեցրել են արդյունահանումը: Ներկայումս երկաթաքար արդյունահանում են աշխարհի ավելի քան 50 երկրներում: Հիմնական արդյունահանող երկրներն են Բրազիլիան, Ավստրալիան, Չինաստանը, Հնդկաստանը, Ռուսաստանը: Մեծ քանակությամբ երկաթաքար են արտահանում Ավստրալիան, Բրազիլիան, Հնդկաստանը: Երկաթաքարի հիմնական ներմուծողներն են Եվրոպայի զարգացած երկրները, ԱՄՆ-ը, Ճապոնիան և Չինաստանը (տես էջ 96-97-ի քարտեզը):

Երկաթի հանքաքարի նախնական մշակումը, այսինքն՝ հարստացումն ու խտանյութի արտադրությունը, սովորաբար կատարվում է հումքի արդյունահանման երկրներում և շրջաններում: Հումքի մշակման հետագա փուլերը՝ թուջի և պողպատի ձուլումը, կատարվում են ինչպես հումքի և վառելիքի (քարածխի) արդյունահանման, այնպես էլ սպառման վայրերում: Աշխարհում բարձրորակ պողպատի արտադրությունը նկատելիորեն աճել է՝ զարգացած երկրներում մետաղի ջարդոնի սպառման համար ոչ պիտանի դարձած մեքենաների և շինանյութերի մետաղի օգտագործման շնորհիվ:


Թուջի և պողպատի ձուլմամբ առաջատար երկրներն են Չինաստանը, Ճապոնիան, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Կորեայի Հանրապետությունը: Վերջին տասնամյակներին նկատելի փոփոխություն է տեղի ունեցել ճյուղի տեղաբաշխման բնագավառում. մեծացել է զարգացող երկրների բաժինը: Դրան նպաստել են՝ ա) այդ երկրների վառելիքաէներգետիկ հարուստ պաշարները. բ) սպառման ծավալների աճը, գ) էկոլոգիապես վնասակար արտադրությունները զարգացած երկրներից դուրս բերելու և զարգացող երկրներ փոխադրելու միտումը:



Պողպատի ձուլման արտադրամաս



Պողպատի գլանվաճքի արտադրամաս



Պողպատի ծուլումը և արտահանման գլխավոր ուղղությունները

Պողպատի ծուլման տեղաբաշխման մյուս փոփոխությունը վերաբերում է նավահանգստային քաղաքներին, որտեղ ներմուծվող հումքի բեռնաթափման վայրերում կառուցվում են խոշոր մետաղաձուլական ձեռնարկություններ: Այսպես՝ սև մետաղաձուլության համաշխարհային նշանակության հզոր կենտրոններ են դարձել Յոկոհաման (Ճապոնիա), Դայանը (Չինաստան), Մարսելը (Ֆրանսիա) և մի շարք այլ նավահանգստային քաղաքներ:

Գունավոր մետաղաձուլություն: Գունավոր մետաղաձուլությունն արտադրանքի ծավալով մի քանի անգամ զիջում է սև մետաղաձուլությանը, սակայն անհամեմատ ավելի բազմաճյուղ կառուցվածք ունի: Տասնյակների հասնող գունավոր մետաղները բաժանվում են խմբերի, որոնցից առավել նշանակալի են՝ ա) ծանր մետաղները (պղինձ, ցինկ, կապար, անագ և այլն), բ) թեթև մետաղները (ալյումին, մագնեզիում, տիտան), գ) ազնիվ կամ թանկարժեք մետաղները (ոսկի, արծաթ, պլատին և այլն):



Պղնձի ծուլումը էլեկտրոլիզի եղանակով

Վերջին տասնամյակներին արագորեն զարգանում է թեթև մետաղների արտադրությունը: Այժմ գունավոր մետաղների շարքում արտադրանքի ծավալով առաջին տեղում է ալյումինի ծուլումը (44 մլն տ): Արտադրության համար հումք են ծառայում ալյումին պարունակող տարբեր հան-

քատեսակներ (բոքսիտ, նեֆելինային սիենիտ և այլն): Այլումինը ամենատարածված մետաղներից է, որի հումքի զգալի պաշարներ կան Ավստրալիայում, Բրազիլիայում, Ռուսաստանում, Գվինեայում և այլ երկրներում:

Այլումինի արտադրությունը դեռևս շատ էներգատար է, այսինքն՝ օգտագործում է շատ էլեկտրաէներգիա (1 տ այլումին ձուլելու համար նախկինում ծախսվում էր մինչև 25 հազ. կվտ·ժ էլեկտրաէներգիա, իսկ այժմ՝ 8–10 հազ. կվտ·ժ), այդ պատճառով էլ զարգացած է ջրաէներգետիկ պաշարներով հարուստ երկրներում (ԱՄՆ, Կանադա, Նորվեգիա, Չինաստան, Ռուսաստան):

Ծանր գունավոր մետաղների ձուլումը հին և ավանդական ժյուղ է: Ծանր մետաղների արտադրությունը հումքատար է, այսինքն՝ շատ հումքից է ստացվում մեկ միավոր (տ) գունավոր մետաղ, և տեղաբաշխվում է հումքային շրջաններում: Արտադրանքի ծավալով և նշանակությամբ ծանր մետաղների շարքում առաջատարը պղնձաձուլությունն է: Այն կենտրոնացած է բարձր զարգացած երկրներում, ինչպես նաև Կենտրոնական Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի հումքաշատ պետություններում (Զամբիա, Չիլի):

Մետաղաձուլությունը շրջակա միջավայրն առավել աղտոտող ժյուղերից է: Այդ պատճառով սահմանափակվում են դրա զարգացումը և հետագա տեղաբաշխումը տնտեսապես զարգացած երկրներում՝ միաժամանակ խրախուսելով դրանք աղքատ երկրներում:


Մեքենաշինություն: Մեքենաշինությունը սև և գունավոր մետաղների հիմնական սպառողն է, որն առանցքային դեր է խաղում արդյունաբերության մեջ: Այն ընդգրկում է բազմաթիվ ենթաժյուղեր ու արտադրություններ, որոնք տարբեր տեսակի մեքենաներ և սարքավորումներ են մատակարարում տնտեսության բոլոր ժյուղերին: Առավել կարևոր են մեքենաշինության տրանսպորտային, հաստոցաշինական, սարքաշինական, գյուղատնտեսական, էլեկտրատեխնիկական, էլեկտրոնային, սարքաշինական, էներգետիկական ժյուղերն ու ենթաժյուղերը:

Մեքենաշինության դերը շատ մեծ է տնտեսության բազմակողմանի զարգացման, գիտատեխնիկական առաջընթացի ապահովման, արտադրության ավտոմատացման, մարդկանց կենցաղի ու աշխատանքի պայմանների բարելավման գործում: Մեքենաշինությունն արդյունաբերության ժյուղերի շարքում առաջատար է արտադրանքի արժեքի մեծությամբ, զբաղվածների թվով, ինչպես նաև զարգացման տեմպերով:





Ջրամաքրման ավտոմատ կառավարման սարքավորում



ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՅ



Աշխարհում



ԱՆՈՒՄԸ ԵՎ ՊՈՂՊԱՏԻ ՋՈՒԼՈՒՄԸ



Մեքենաշինության յուրաքանչյուր ենթաճյուղի տեղաբաշխումը պայմանավորված է մի քանի գործոններով, որոնցից մեկն ունի մյուսներից ավելի կարևոր, նույնիսկ վճռորոշ նշանակություն: Մետաղատար շատ մետաղ սպառող մեքենաշինության ենթաճյուղերը (տրակտորների, մետալուրգիական սարքավորումների արտադրություն) տեղաբաշխվում են մետաղաձուլության վայրերում, իսկ աշխատատար մեքենաշինության ենթաճյուղերը (գործիքների, կենցաղային էլեկտրոնային սարքերի արտադրություն)՝ աշխատանքային ռեսուրսների կենտրոնացման վայրերում:



Արդյունաբերական ռոբոտները կատարում են արտադրական ճշգրիտ գործողություններ:


Ժամանակի ընթացքում արագորեն փոփոխվում են մեքենաշինության արտադրանքի տեսականին և որակը: Արդի մեքենաշինության փոփոխության և զարգացման գլխավոր միտումը (ուղղությունը) գիտատարության մակարդակի բարձրացումն է: Գիտությունը դարձել է մեքենաշինության նորագույն արտադրությունների (համակարգչային տեխնիկա, ռադիոէլեկտրոնիկա, հրթիռաշինություն և այլն) զարգացման և տեղաբաշխման գլխավոր գործոնը:

Մեքենաշինության զարգացման մյուս կարևոր ուղղությունն այն է, որ այդ բնագավառում ձևավորվում են մեքենաշինական այնպիսի հսկա միավորումներ, որոնք մեծ դեր են խաղում ոչ միայն տվյալ երկրի, այլև աշխարհի մեքենաշինական արտադրության մեջ: Այդպիսի միավորումներից են, օրինակ՝ «Տոյոտան», «Ֆորդ մոթորզը», «Սիմենսը», «Սոնին» և այլն:

Մեքենաշինությունը արդյունաբերության շատ այլ ճյուղերի համեմատ ունի ավելի լայն՝ համատարած տեղաբաշխում: Մեքենաշինական գործարաններ կան աշխարհի երկրների ճշող մեծամասնությունում: Սակայն մեքենաշինությունը նախ և առաջ զարգացած երկրների մենաշնորհն է: Այդ երկրների բաժինը համաշխարհային մեքենաշինական արտադրանքի ծավալում կազմում է ավելի քան 80%: Զարգացած երկրների բաժինն էլ ավելի մեծ է մեքենաշինության նորագույն և գիտատար արտադրությունների, այդ թվում՝ նաև ամենաերիտասարդ բնագավառ հանդիսացող տեղեկատվական-տեխնոլոգիական բարդ սարքավորումների արտադրության բնագավառում: Զևավորվել են մեքենաշինության զարգացման երեք խոշոր տարածաշրջաններ՝ Արևմտյան Եվրոպա, ԱՄՆ և Արևելյան Ասիա (Ճապոնիա, Կորեայի Հանրապետություն, Չինաստան և այլն):


Զարգացող երկրներում մեքենաշինությունը սկսել է զարգանալ վերջերս: Ի տարբերություն բարձր զարգացած երկրների՝ այստեղ առավել զարգացում են

ստացել մեքենաշինության համեմատաբար հին ճյուղերը՝ գյուղատնտեսական մեքենաշինությունը, նավաշինությունը, կենցաղային մեքենաների արտադրությունը: Արդեն աչքի ընկնող նվաճումներ ունեն Չինաստանը, Մեքսիկան, Բրազիլիան, Արգենտինան, Հնդկաստանը և մի քանի ուրիշ երկրներ: Զարգացող որոշ երկրներում համեմատաբար ոչ բարդ, պարզունակ մեքենաների արտադրության զարգացմանը նպաստել են էժան աշխատուժը, սպառման շուկաների առկայությունը:



Ավտոմոբիլների արտադրության գլխավոր երկրները (2011 թ.)

Ավտոմոբիլների տարեկան արտադրության ծավալի փոփոխությունը աշխարհում և Չինաստանում (1980-2011թթ.)



Համաշխարհային մեքենաշինության առաջատար ճյուղը տրանսպորտային մեքենաշինությունն է, մասնավորապես ավտոմեքենաշինությունը: Ներկայումս



Ավտոմոբիլաշինական գործարանի հոսքագիծ (Ճապոնիա)

աշխարհում տարեկան արտադրվում են ավելի քան 80 մլն ավտոմեքենաներ, որոնց մեծ մասը մարդատար մեքենաներ են: Առաջատար երկրներն են Չինաստանը, ԱՄՆ-ը, Ճապոնիան և Գերմանիան, որոնք միասին արտադրում են աշխարհի ավտոմեքենաների ավելի քան կեսը (տես էջ 99-ի քարտեզասխեման և գծապատկերը): Ծովային նավերի արտադրությամբ առաջատար երկրներն են Ճապոնիան և Կորեայի Հանրապետությունը, ինքնաթիռների արտադրությամբ՝ ԱՄՆ-ը և Ֆրանսիան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է մետաղաձուլության դերը տնտեսության մեջ: Թվարկեք մեքենաշինության ենթաճյուղերն ու գլխավոր արտադրատեսակները:
2. Մետաղաձուլության ճյուղային կառուցվածքում և տեղաբաշխման մեջ վերջին տասնամյակներում ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել:
3. Որո՞նք են սև և գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման գլխավոր առանձնահատկությունները: Թվարկեք և քարտեզի վրա ցոյց տվեք մետաղաձուլության զարգացած տարածաշրջանները և երկրները:
4. Բնութագրեք և գնահատեք մեքենաշինության դերը ժամանակակից տնտեսության մեջ: Նշեք զարգացման գլխավոր հիմնական ուղղությունները:
5. Ինչպիսի բնորոշ գծեր ունեն զարգացած և զարգացող երկրների մեքենաշինության ենթաճյուղերը: Թվարկեք և քարտեզի վրա ցոյց տվեք զարգացած մեքենաշինություն ունեցող տարածաշրջաններն ու երկրները:
6. Որո՞նք են մեքենաշինության ենթաճյուղերի տեղաբաշխման գործոնները: Ո՞ր գործոնի դերն է մեծանում:
7. Ավտոմոբիլների արտադրության բնագավառում ինչ փոփոխություն է տեղի ունենում և ինչո՞ւ:

ԴԱՍ 20. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՃՅՈՒՂԵՐ (ՔԻՄԻԱԿԱՆ, ԹԵԹԵՎ ԵՎ ՄՆՆԴԻ)

Քիմիական արդյունաբերությունը համարվում է ժամանակակից արդյունաբերության առաջատար և արագ զարգացող ճյուղերից մեկը: Նրա հումքային բազան շատ լայն է. բացի հանքային հումքից (աղեր, ծծումբ, ֆոսֆորիտներ և այլն) և օրգանական ծագման վառելանյութերից (նավթ, գազ, ածուխ և այլն), օգտագործվում են նաև մետաղաձուլության, անտառարդյունաբերության և այլ ճյուղերի արտադրական թափոնները:

Քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինության և էլեկտրաէներգետիկայի հետ մեկտեղ, գիտատեխնիկական առաջադիմությունն ապահովող ճյուղերից է:

Քիմիական արդյունաբերությունը համակցում, ստեղծում է այնպիսի նյութեր (պլաստմասսաներ, պոլիմերներ, քիմիական մանրաթելեր և այլն), որոնք բնության մեջ չեն լինում: Ճյուղի բազմատեսակ արտադրանքը լայնորեն օգտագործվում է արդյունաբերության տարբեր ճյուղերում, գյուղատնտեսության մեջ, տնտեսության այլ բնագավառներում և կենցաղում: Ճյուղի առավել հայտնի արտադրատեսակներն են ծծմբական թթուն, հանքային պարարտանյութերը, սինթետիկ կաուչուկը, սինթետիկ մանրաթելերը, պլաստմասսաները:

Քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները, որպես կանոն, տեղաբաշխվում են հումքի աղբյուրների, վառելիքաէներգետիկ և ջրային ռեսուրսների շրջանում: Վերջին տարիներին քիմիական գործարաններ են կառուցվում նաև գիտական կենտրոնների մոտ՝ ավելի արագ ներդնելու համար գիտության նվաճումները, կամ էլ այն ձեռնարկություններին կից, որոնց արտադրական թափոններն օգտագործվում են որպես հումք: Երբեմն քիմիական գործարանները հանվում են խոշոր քաղաքների տարածքից, եթե դրանք աղտոտում են շրջակա միջավայրը: Հատկանշական է, որ ճյուղի



Քիմիական կոմբինատի արտադրամաս



Դեղագործությունը՝ քիմիական արդյունաբերության նոր ճյուղ

ձեռնարկությունները տեղաբաշխված են փոքր թվով երկրներում և տարածաշրջաններում: Քիմիական խոշոր համալիրներ ստեղծվել են Թեքսասում (ԱՄՆ), Ռուրի ածխավազանում (Գերմանիա), Մերձվոլգյան շրջանում (Ռուսաստան), Դոնբասում (Ուկրաինա) և այլն:

Քիմիական արդյունաբերությունը, ինչպես և մեքենաշինությունը, առավելապես ներկայացված է զարգացած երկրներում (ԱՄՆ, Ճապոնիա, Գերմանիա և այլն): Այստեղ հատկապես զարգանում են քիմիական արդյունաբերության նորագույն՝ առավել գիտատար ճյուղերը (պոլիմերների, մանրաթելերի, վիտամինների արտադրություն, դեղագործություն): Ներկայումս զարգացած երկրներին բաժին է ընկնում աշխարհում թողարկվող քիմիական արտադրանքի ավելի քան 80%-ը:

Զարգացող երկրներում քիմիական արդյունաբերությունը սկսել է արագ զարգանալ վերջին շրջանում: Նավթարդյունահանող մի շարք երկրներում (Սաուդյան Արաբիա, Իրան, Ինդոնեզիա և այլն) հիմք է դրվել նավթաքիմիական արդյունաբերությանը, որի արտադրանքի մեծ մասն արտահանվում է զարգացած երկրներ: Էկոլոգիապես վնասակար՝ ջրային և օդային ավազաններն էապես աղտոտող քիմիական արտադրություններն աստիճանաբար դուրս են մղվում զարգացած երկրներից և տեղաբաշխվում են զարգացող երկրներում: Պատճառն այն է, որ զարգացած երկրներում վերջին տարիներին շատ մեծ ուշադրություն են դարձնում շրջակա միջավայրի մաքրությանը, ուստի բնությանը վնաս հասցնելու համար գործարանները ստիպված են լինում վճարել մեծ տուգանքներ:

Ի տարբերություն ծանր արդյունաբերության ճյուղերի՝ թեթև և սննդի արդյունաբերական ճյուղերը հիմնականում արտադրում են սպառման առարկաներ, բնակչությանն ապահովում են սննդով և հագուստով:

Թեթև արդյունաբերությունը համալիր ճյուղ է, որի գլխավոր ենթաճյուղերն են գործվածքի, կարի, տրիկոտաժի, կոշկեղենի, գորգերի արտադրությունները: Այդ ճյուղն ապահովում է բնակչությանը հագուստով, կոշկեղենով,




Կարի արտադրամաս

ամենօրյա օգտագործման կենցաղային իրերով, իսկ ավտոմեքենաշինությանը և այլ ոլորտների մատակարարում է կաշի, գործվածք և այլ արտադրանք:


Թեթև արդյունաբերությունը թեև հին ճյուղ է, բայց անընդհատ փոփոխության է ենթարկվում ինչպես հումքի և արտադրանքի փոփոխության, այնպես էլ մարդկանց պահանջներին համապատասխան: Նորաձևության թե-

լադրանքով անընդհատ նորացվում են արտադրանքի տեսականին, օգտագործվող նյութերն ու սարքավորումները: Դրանց հետևանքով փոխվում է նաև ճյուղի տեղաբաշխման պատկերը: Ներկայումս, բացի գյուղատնտեսական հումքից (բամբակ, բուրդ, վուշ, մորթի), լայնորեն օգտագործվում են նաև արհեստական և սինթետիկ մանրաթելեր, կաուչուկ և ոչ բնական ծագման այլ նյութեր:

Չնայած արտադրական գործընթացների մեքենայացմանն ու ավտոմատացմանը՝ թեթև արդյունաբերությունը դեռևս շատ աշխատատար ճյուղ է, որտեղ հիմնականում զբաղված են կանայք: Այդ պատճառով էլ թեթև արդյունաբերության ձեռնարկությունները հիմնականում տեղաբաշխված են աշխատուժի կենտրոնացման շրջաններում:



Հրուշակեղենի արտադրամաս



Կոշիկ արտադրող գլխավոր երկրները
(ավելի քան 5 մլն գույգ տարեկան, 2009 թ.)

Նախկինում թեթև արդյունաբերության գծով առաջատար էին Եվրոպայի բարձր զարգացած երկրները: Այժմ ճյուղն արագորեն զարգանում է նաև զարգացող երկրներում, որտեղ բնակչության, հետևաբար նաև աշխատանքային ռեսուրսների աճը բարձր է, իսկ աշխատուժը՝ էժան: Բացի դրանից՝ նշված

երկրներում առկա է թեթև արդյունաբերության հարուստ հումքային բազա՝ ի հաշիվ գյուղատնտեսական բնական հումքի (բամբակ, բնական մետաքս, ջուր, բուրդ, կաշի):

Համաշխարհային շուկայում զարգացող երկրների բաժինը թեթև և սննդի արդյունաբերության արտադրանքի գծով ավելի մեծ է, քան մշակող արդյունաբերության այլ ճյուղերի արտադրանքի գծով:

Թեթև արդյունաբերության տեղաբաշխումն ունի համատարած բնույթ: Այն ներկայացված է աշխարհի բոլոր երկրներում:

Բնական հումքից պատրաստվող թելերի ու գործվածքների արտադրությունը գլխավորապես կենտրոնացած է զարգացող երկրներում, հատկապես Չինաստանում, Հնդկաստանում, Բանգլադեշում, Թուրքիայում, Եգիպտոսում, Բրազիլիայում և այլուր, որտեղ որ զարգացած է թելատու բույսերի մշակությունը: Արհեստական հումքի՝ քիմիական մանրաթելերի և դրանցից պատրաստվող գործվածքների արտադրությամբ, ընդհակառակը, առաջատար են զարգացած երկրները, հատկապես ԱՄՆ-ը, Ճապոնիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և այլն:

Սննդի արդյունաբերությունը գյուղատնտեսության հետ մեկտեղ ապահովում է բնակչության բազմազան պահանջարկը սննդամթերքի բոլոր տեսակների գծով: Ուստի այն առկա է աշխարհի բոլոր երկրներում, այսինքն՝ **սննդի արդյունաբերության տեղաբաշխումն ունի համատարած բնույթ**: Տարբեր են միայն տարբեր տարածաշրջաններում արտադրվող պարենի տեսականին և ծավալները, որոնք պայմանավորված են հողակլիմայական պայմաններով, ինչպես նաև պահանջարկի ու սպառման գործոններով:



Պահածոների գործարանի պատրաստի արտադրանքը

փոխադրման համար: Դա է պատճառը, որ, օրինակ, շաքարի արտադրությունը կենտրոնացած է դրա համար հումք ծառայող շաքարեղեգի և շաքարի ծակնդեղի աճեցման երկրներում (Բրազիլիա, Հնդկաստան, Չինաստան, ԱՄՆ, Ուկ-

Սննդի արդյունաբերությունը բաղկացած է բազմաթիվ ենթաճյուղերից ու արտադրություններից, որոնք միայնցից տարբերվում են տեղաբաշխման սկզբունքներով: Արագ փչացող հումք (կաթ, խաղող, լոլիկ, շաքարի ծակնդեղ, շաքարեղեգ և այլն) մշակող ձեռնարկությունները տեղաբաշխվում են հումքի աղբյուրների մոտ: Միևնույն ժամանակ, դրանցից պատրաստված արտադրանքը (օրինակ՝ պահածո կամ շաքար) հարմար է երկարատև պահպանման և տրանսպորտային

րաինա), կարագի արտադրությունը՝ Նոր Զելանդիայում, Ֆինլանդիայում, գինու արտադրությունը՝ Իտալիայում, Ֆրանսիայում և խաղող մշակող այլ երկրներում:

Մսնդի արդյունաբերության որոշ ճյուղեր ու արտադրություններ էլ, ընդհակառակը, փոխադրման առումով հարմար հումքից (օրինակ՝ ցորենից) պատրաստում են արտադրանք (հաց, հրուշակեղեն և այլն), որը շուտ փչացող է: Այդպիսի ձեռնարկությունները տեղաբաշխվում են սպառման վայրերում:

Սառնարանային նավերի, երկաթուղային վագոնների և ավտոմեքենաների օգտագործման շնորհիվ շուտ փչացող, բայց նախնական մշակման ենթարկված գյուղատնտեսական հումքը և ձկնամթերքը փոխադրվում են բնակչության մեծ խտություն, հետևապես՝ սննդամթերքի մեծ պահանջարկ ունեցող վայրեր, խոշոր քաղաքներ ու նավահանգիստներ, որտեղ կառուցված սննդի արդյունաբերության ձեռնարկություններում ենթարկվում են վերջնական մշակման, որից հետո ստացված արտադրանքը (օրինակ՝ ձկան պահածոն) հասցվում է սպառողին:

Այժմ լայն տարածում է ստանում խտանյութերից պատրաստի արտադրանքի արտադրությունը: Օրինակ՝ արևադարձային ու այլ երկրներում մրգերից պատրաստված խտանյութերից ՀՀ-ում նույնպես արտադրում են տարբեր ըմպելիքներ, սպիրտից՝ օղի և այլն:



Հացաբուլկեղենի թխման արտադրամաս

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ դեր է կատարում քիմիական արդյունաբերությունը տնտեսության մեջ:
2. Նշեք քիմիական արդյունաբերության հումքային բազան և հիմնական արտադրությունները:
3. Որո՞նք են քիմիական արդյունաբերության տեղաբաշխման սկզբունքներն ու առանձնահատկությունները: Թվարկե՛ք և քարտեզի վրա ցոյց տվե՛ք զարգացած քիմիական արդյունաբերություն ունեցող երկրները:
4. Ո՞րն է թեթև և սննդի արդյունաբերության դերը տնտեսության մեջ: Ինչ ընդհանուր գծեր ունեն թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:
5. Որո՞նք են թեթև արդյունաբերության գլխավոր ենթաճյուղերի տեղաբաշխման գործոններն ու բնորոշ գծերը:
6. Թվարկե՛ք սննդի արդյունաբերության գլխավոր ենթաճյուղերը: Նշե՛ք դրանց տեղաբաշխման սկզբունքներն ու բնորոշ գծերը:
7. Ձեր շրջապատում կա՞ն սննդի արդյունաբերության ձեռնարկություններ: Ինչո՞վ է պայմանավորված դրանց տեղաբաշխումն այդ վայրում:

ԴԱՍ 21. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տնտեսության հնագույն ճյուղը գյուղատնտեսությունն է: Ներկայումս էլ զարգացման արդյունաբերական և նույնիսկ հետարդյունաբերական փուլերը թևակոխած երկրների տնտեսության մեջ գյուղատնտեսության դերը չի նվազել: Ընդ որում՝ գյուղատնտեսության դերն ու նշանակությունն անհամեմատ մեծ են մինչևինդուստրիալ կամ ագրարային տնտեսությամբ երկրներում, որոնցում գյուղատնտեսությունը գլխավոր, երբեմն գրեթե միակ ճյուղն է:

Գյուղատնտեսությունը շարունակում է մնալ մարդկանց անհրաժեշտ պարենի հիմնական մատակարարը¹, ինչպես նաև արդյունաբերությանը բնական հումք մատակարարող գլխավոր ճյուղը:

Ամբողջությամբ՝ համաշխարհային տնտեսությունում գյուղատնտեսության նշանակությունն ավելի է մեծանում, քանի որ՝

ա) աշխարհում ավանդաբար շարունակում են մնալ մարդիկ, որոնք չքավորության պատճառով՝ չեն օգտագործում բավարար քանակությամբ պարենամթերք, ընդ որում՝ դրանց թիվն աճում է.



Գյուղատնտեսության տեղաբաշխումը համատարած է:

բ) տարեկան 1,1%-ով աճում է աշխարհի ամբողջ բնակչության՝ պարենամթերք սպառող մարդկանց թիվը, ուստի բնակչությանը պարենամթերքով լիովին բավարարելու գյուղատնտեսության առջև մշտապես գոյություն ունեցող խնդիրը դարձել է մարդկության համամոլորակային հիմնախնդիրներից մեկը:

Արդյունաբերության նման գյուղատնտեսությունը ևս նյութական արտադրության ճյուղ է, սակայն, այդ ընդհանուր նմանության հետ, դրանց միջև կան նաև տարբերություններ:

- Գյուղատնտեսության արտադրանքը (դրամական արտահայտությամբ) զիջում է աշխարհի արդյունաբերությանը, բայց ճյուղում զբաղվածների թվով (մոտ 2,5 մլրդ մարդ) զգալիորեն գերազանցում է արդյունաբերությանը:
- Ի տարբերություն արդյունաբերության, որի տեղաբաշխումը «կետային» է (արդյունաբերական ձեռնարկություն, հանքավայր կամ դրանց խումբ), գյուղատնտեսության տեղաբաշխումը **համատարած** է (դաշտեր, գոտիներ, տնկատափեր, արոտավայրեր և այլն):

1. Պարենի մատակարար են նաև համաշխարհային օվկիանոսը և ցամաքի վայրի բնությունը:

- Եթե արդյունաբերության աշխատանքի գլխավոր միջոցը սարքավորումներն ու մեքենաներն են, ապա գյուղատնտեսությունում դա հողն է: Հողերի ամբողջությունն անվանում են **հողային ֆոնդ**, որի կազմում առանձնացվում են գյուղատնտեսական արտադրությունում օգտագործելի գյուղատնտեսական նշանակության հողեր կամ հողահանդակներ՝ վարելահողեր, այգիներ, արոտավայրեր, խոտհարքներ¹ և գյուղատնտեսական արտադրությունում չօգտագործվող հողատարածքներ՝ անտառներ, ճահիճներ, լերկ ժայռեր, սառցադաշտեր, կառուցապատված տարածքներ, ամայի անապատներ: Արդեն գիտենք, որ գյուղատնտեսական հողահանդակները կազմում են աշխարհի հողային ֆոնդի շուրջ 30%-ը:
- Գյուղատնտեսական արտադրությունն արդյունաբերական արտադրությունից տարբերվում է նաև իր տարեկան ռիթմով, ավելի կոնկրետ՝ արտադրության սեզոնային բնույթով: Արդյունաբերական արտադրությունը (բացառությամբ շաքարի, մրգաբանջարային պահածոների արտադրության) շուրջտարյա է, մինչդեռ զով և ցուրտ կլիմայական շրջաններում (օրինակ՝ մերձարկտիկական գոտում և ՀՀ-ի բարձրլեռնային տարածքներում), որտեղ հստակորեն արտահայտված է ձմեռը, հողագործությունը կրում է սեզոնային՝ ընդհատ բնույթ: Միևնույն ժամանակ, երկրագնդի հասարակածային, մերձհասարակածային և արևադարձային գոտիների կլիմայական պայմանները հնարավորություն են տալիս գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնելու ամբողջ տարվա ընթացքում: Այդպիսի գոտիներում բերքահավաքով սուկ ավարտվում է տվյալ մշակաբույսի աճի ցիկը (շրջանը), բայց ամենևին չի ավարտվում գյուղատնտեսական արտադրության գործընթացը: Բերքահավաքից հետո սկսվում է մեկ այլ մշակաբույսի աճեցման ցիկը: Օրինակ՝ Եգիպտոսում՝ Նեղոսի հովտում մեկ տարում, բամբակենու բերքահավաքից հետո ցանում (մշակում) են նաև որևէ տեսակի բանջար կամ հատիկային մշակաբույս (բրինձ, լոբի, սիսեռ), իսկ դրանից հետո՝ նաև կենդանիների համար կերային որևէ մշակաբույս:



Խաղողի բերքահավաքը
աշխատատար է:

1. Խոտհարքներն այն տարածքներն են, որոնց վրա բնականորեն աճած կամ ցանած խոտային զանգվածը պարբերաբար հնձվում է և օգտագործվում որպես անասնակեր:

Որևէ տարածքում մշակաբույսերի այդպիսի հաջորդական փոխարինումը անվանվում է **ցանքաշրջանառություն**: Արժե հիշել, որ ճիշտ ցանքաշրջանառության, ինչպես նաև պարարտացման շնորհիվ հողի բերրիությունը ոչ միայն չի նվազում, այլև նույնիսկ որոշ չափով բարձրանում է:



Արհեստական ոռոգումը ամենատարածված հողաբարելավման միջոցառումն է:

Բերրիության բարձրացման համար կատարվում են **հողերի բարելավմանը** (մելիորացիա) նպատակաուղղված բազմաբնույթ աշխատանքներ. չոր հողերի արհեստական ոռոգում, գերխոնավ հողերի չորացում, քարքարոտ հողերի քարամաքրում և այլն:

Իսկ ինչ վերաբերում է անասնապահությանը, ապա դա անվերապահորեն շուրջտարյա արտադրություն է, քանզի գյուղատնտեսական կենդանիների խնամքը և մթերքի (օրինակ՝ կաթի կամ ձվի) արտադրությունը նույնիսկ մեկ օրով էլ չեն դադարեցվում ամբողջ տարվա ընթացքում:

Պայմանավորված այն հանգամանքով, որ մարդկանց նորմալ կենսագործունեության համար հավասարապես անհրաժեշտ է և՛ կենդանական, և՛ բուսական ծագման պարենամթերք, յուրաքանչյուր երկիր ձգտում է հնարավորինս զարգացնել թե՛ անասնապահությունը, թե՛ բուսաբուծությունը: Փոխկապված այդ երկու ճյուղի հարաբերակցությունն արտահայտում է գյուղատնտեսության **ճյուղային կառուցվածքը**:

Յուրաքանչյուր երկրի գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը պայմանավորված է տեղական բնական առանձնահատկություններով: Առաջին հերթին դրանք բնակլիմայական պայմաններն են՝ ընդարձակ արոտավայրերի և բնական խոտհարքների առկայությունը՝ որպես գյուղատնտեսական կենդանիների կեր մատակարարող բնական հիմք, ինչպես նաև բնակչության խտությունը, երկրի տնտեսական զարգացման մակարդակը և համանման տնտեսական, ինչպես նաև սոցիալական այլ գործոններ:

Սովորաբար գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում անասնապահության բաժինը գերակշռում է բարձր զարգացած եվրոպական երկրներում (օրինակ՝ Գերմանիայում կամ Դանիայում), ինչպես նաև զարգացող այնպիսի երկրներում, որտեղ կան ընդարձակ արոտավայրեր, իսկ վարելահողերի տարածքը շատ փոքր է (օրինակ՝ Մոնղոլիա, Սուդան և Եթովպիա):

Գյուղատնտեսական արտադրության կազմում հողագործության արտադրանքի ծավալն ավանդաբար աճել է ցանքատարածքների ավելացման՝ ըն-

դարձական, իսկ անասնապահության արտադրանքի ծավալը՝ կենդանիների գլխաքանակի ավելացման շնորհիվ:

Գյուղատնտեսական արտադրության զարգացման այդպիսի ուղղությունը գերակշռում է զարգացող երկրների մեծ մասում, և որքան էլ անհավանական է թվում, նույնիսկ բարձր զարգացած որոշ երկրների առանձին, անջրդի¹ հողագործության տարածաշրջաններում: Օրինակ՝ ԱՄՆ-ի արևմուտքում և Ավստրալիայի հյուսիսում 1 հա-ից ստացվող ցորենի տարեկան բերքի քանակը՝ **բերքատվությունը** մի քանի անգամ ցածր է, քան այդ երկրների արևելյան շրջանների բերքատվությունը:

Սակայն ներկայումս գյուղատնտեսության համար պիտանի, բայց չօգտագործվող պահուստային հողերի մակերեսը փոքր է (5-6%): Դրանց օգտագործման (յուրացման) շնորհիվ գյուղատնտեսությունը զարգացնելու շոշափելի հնարավորություն ունեն Հարավային Ամերիկան և Աֆրիկան: Այսպիսով՝ ակնհայտորեն երևում է, որ բերքատվության ներկա մակարդակի պահպանման պայմաններում նույնիսկ այդ պահուստային հողերի օգտագործման դեպքում էլ գյուղատնտեսության համախառն բերքը կավելանա աննշան չափով և չի բավարարի մարդկության պահանջարկը:

Ուստի որպես հողագործության համախառն բերքի և անասնապահության արտադրանքի ավելացման մեծ հնարավորությամբ օժտված ուղղություն կարող է ծառայել մշակվող հողի միավոր տարածքից՝ մեկ հեկտարից ստացվող բերքի՝ բերքատվության, ինչպես նաև գյուղատնտեսական մեկ գլուխ կենդանուց ստացվող մթերքի՝ մթերատվության ավելացումը: Արտադրանքի ծավալի ավելացման ուղին նոր բարձր բերքատու մշակաբույսերի ու բարձր մթերատու կենդանիների, ինչպես նաև տեխնիկայի ներդրումն է, բույսերի պաշտպանությունը գյուղատնտեսական վնասատուներից, հողի պարարտացումը, ոռո-



Էքստենսիվ ուղղության գյուղատնտեսություն



Ինտենսիվ ուղղության գյուղատնտեսություն

1. Չոռոգվող:

գումը և այլ միջոցառումների կիրառումը: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունը և գյուղմթերքների արտադրանքի ծավալը մեծացնելու նպատակով Ռուսաստանից ներկրում է ցորենի, իսկ Նիդեռլանդներից՝ կարտոֆիլի ընտրանի սերմեր, ինչպես նաև Շվեյցարիայից ներկրում է հատուկ ցեղի կովեր, որոնք տարեկան տալիս են տեղական կովերի համեմատությամբ 3-ից 6 անգամ շատ կաթ:

Զարգացող երկրների գյուղատնտեսական արտադրության զարգացման նպատակով ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունն իրականացնում է միջոցառումների մի ամբողջ համալիր, որն ստացել է **«կանաչ հեղափոխություն»** անվանումը: Դրանցից առավել լայնորեն կիրառվում են նոր, ավելի բարձր բերքատու մշակաբույսերի և բարձր մթերատու կենդանիների ընտրությունը կամ սելեկցիան, ժառանգական հատկանիշների բարելավումը (գենետիկան), պարարտացումը և հողաբարելավումը: Այդ միջոցառումների կիրառման շնորհիվ որոշ երկրներ (օրինակ՝ Մեքսիկան, Հնդկաստանը, Ֆիլիպինները) հասել են գյուղատնտեսական արտադրանքի ծավալի շոշափելի աճի:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է գյուղատնտեսության դերը աշխարհի, ինչպես նաև առանձին խումբ երկրների տնտեսության մեջ:
2. Ո՞րն է գյուղատնտեսության նմանությունը արդյունաբերությանը:
3. Որո՞նք են գյուղատնտեսության տարբերությունները արդյունաբերությունից:
4. Ի՞նչ է մշակաբույսերի ցանքաշրջանառությունը, և ի՞նչ նշանակություն ունի ձիշտ ցանքաշրջանառությունը:
5. Ի՞նչ է գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը և ինչո՞վ է պայմանավորված:
6. Գնահատե՛ք, թե գյուղատնտեսության զարգացման ուղղություններից որն է հեռանկարային:

ԴԱՍ 22. ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության ճյուղերից մեկը **բուսաբուծությունն** է, որն անվանում են նաև հողագործություն: Բնակչությանն այն մատակարարում է բուսական ծագման բազմազան պարենամթերք, արդյունաբերությանը՝ հումք, իսկ անասնապահությանը՝ կեր:


Ամբողջ աշխարհում մշակում են մոտ 1600 տեսակի մշակաբույսեր, այդ թվում ՀՀ-ում՝ ավելի քան 100-ը:

Բուսաբուծությունը համաշխարհային գյուղատնտեսության առաջատար ճյուղն է, իսկ առանձին երկրներում երկրորդն է, օրինակ՝ Գերմանիայում, Դանիայում:

Բուսաբուծությունը բաղկացած է դաշտավարությունից՝ դաշտային մշակաբույսերի աճեցումից և այգեգործությունից՝ տարբեր տեսակի մրգերի ծառերի և թփերի աճեցումից:


Բուսաբուծության տեղաբաշխման՝ մշակաբույսերի աճեցման վայրի ընտրության գործում կարևորագույն գործոնը բնակլիմայական պայմաններն են:

Գյուղատնտեսության տեղաբաշխման կարևոր գործոնները



Գյուղատնտեսական մշակաբույսերի աճի վրա ազդում է լույսի, ջերմության և խոնավության բարենպաստ զուգորդումը դրանց աճման ժամանակամիջոցում: Կարևոր գործոն է նաև բնակչության թիվը, որով էլ որոշվում է տվյալ մշակաբույսի բերքի պահանջարկի մեծությունը:

Ըստ կիրառական նշանակության առանձնացնում են **հացահատիկային**, ինչպես նաև **ձիթատու**, **շաքարատու**, **թելատու**, **կաուչուկատու** և այլ տեխնիկական մշակաբույսեր: Սակայն մշակաբույսերի նման խմբավորումը պայմանական է: Օրինակ՝ գարին հացահատիկային պարենային մշակաբույս է և, միաժամանակ, կերային մշակաբույս՝ կենդանիների համար, ինչպես նաև տեխնիկական մշակաբույս՝ գարեջրի արտադրության համար:



Դաշտավարության գլխավոր դերը պատկանում է հացահատիկային մշակաբույսերին, մասնավորապես ցորենին, բրնձին և եգիպտացորենին (էջ 113-ի գծապատկեր):





Ցորենի ցանքատարածք

Հացահատիկի արտադրությունը համաշխարհային գյուղատնտեսության հիմքն է, քանի որ հացահատիկը մարդու ամենակարևոր սննդամթերքն է: Այդ պատճառով էլ դրանց տարածումը համընկնում է մարդկանց տարաբնակեցման հետ:

Հացահատիկային մշակաբույսերի մեջ ցանքատարածությամբ առաջին տեղում է **ցորենը**: Ցորենի հայրենիքը Առաջավոր Ասիան է՝ Հայկական լեռնաշխարհի հետ միասին: Ներկայումս ցորենը գլխավորապես մշակվում է

բարեխառն և մերձարևադարձային գոտիների սահմաններում: Ցորենի ամենաշատ բերքը ստացվում է Չինաստանում, ԱՄՆ-ում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Կանադայում (էջ 113-ի քարտեզախեսմա):


Աշխարհի հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածության կառուցվածքը



Գործնի մշակության շրջանները և արտահանման գլխավոր ուղղությունները

Բրինձի հայրենիքը Չինաստանն է: Նրա ցանքատարածությունն ավելի պակաս է, քան ցորենինը, բայց դրանց համախառն բերքը գրեթե հավասար է: Դրա պատճառն այն է, որ բրինձի մշակության գրեթե ամբողջ տարածքում միևնույն տարածությունից տարվա ընթացքում բրինձի երկու բերք են ստանում: **Բրինձը** շատ ջերմասեր և խոնավասեր մշակաբույս է: Նա սիրում է, որ «գլուխը արևի տակ լինի, իսկ ոտքերը՝ ջրում»: Այդ պատճառով էլ ամենից շատ բրինձ աճեցնում են հասարակածային, մերձհասարակածային, արևադարձային և

մերձարևադարձային գոտիներում: Բրինձ արտադրող գլխավոր երկրներն են Չինաստանը, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Բանգլադեշը, Վիետնամը:



Եգիպտացորենի մշակության շրջանները և արտահանման գլխավոր ուղղությունները

Եգիպտացորենը «ծնվել» է Մեքսիկայում, իսկ աշխարհագրական մեծ հայտնագործություններից հետո տարածվել է նաև այլ շրջաններում: Եգիպտացորենի ցանքատարածությունները գրեթե համընկնում են ցորենի գոտու հետ: Եգիպտացորենի հատիկն ունի պարենային նշանակություն, իսկ նրա ցողունն ու տերևներն օգտագործվում են որպես անասնակեր: Եգիպտացորենի գլխավոր արտադրողները եղել և մնում են ԱՄՆ-ը, Չինաստանը և Բրազիլիան:

Աշխարհում հացահատիկ գլխավորապես ներմուծում են նոր զարգացող երկրները:

Իրենց նշանակությամբ բուսաբուծության մեջ երկրորդը **տեխնիկական մշակաբույսերն** են: Տեխնիկական են համարվում այն մշակաբույսերը, որոնք հումք են ծառայում արտադրության համար կամ օգտագործվում են տեխնիկական մշակումից հետո: **Թելատու** տեխնիկական մշակաբույսերից մեծ դեր ունի բամբակենին: Բամբակենին ևս, բրնձի նման, պահանջում է մեծ քանակությամբ արևի լույս (ջերմություն) և ջուր: Այն հիմնականում մշակում են արևադարձային և մերձարևադարձային գոտիներում: Բամբակագործության հիմնական և խոշոր շրջանն Ասիան է, այնուհետև՝ Ամերիկան և Աֆրիկան: Ամենաշատ բամբակ արտադրում են Չինաստանը, Հնդկաստանը, ԱՄՆ-ը:

Վուշը բարեխառն գոտու սակավ ջերմասեր թելատու մշակաբույս է: Վուշից պատրաստում են գործվածքներ, անձեռոցիկներ, սրբիչներ: Նրա համաշխարհային արտադրության գրեթե 3/4-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, Բելառուսին, բալթյան երկրներին:

Ջուֆը և **սիսալը** նույնպես թելատու մշակաբույսեր են: Դրանցից պատրաստում են նավերի ճոպաններ, պարկեր, գորգեր, կոպիտ գործվածք: Դրանք գլխավորապես մշակում են Հարավային Ասիայում (Հնդկաստան, Բանգլադեշ) և Արևելյան Աֆրիկայի երկրներում: Վերջին տասնամյակներում ջուֆի և սիսալի ցանքատարածությունները կրճատվում են, քանի որ այդ մշակաբույսերից արտադրված թելերի փոխարեն գործվածքի արտադրության համար օգտագործում են քիմիական մանրաթել, իսկ այդ մշակաբույսերից ազատված տարածքներում մշակում են պարենային մշակաբույսեր:

Ձիթատու մշակաբույսերը մարդկանց սննդաբաժնում ունեցած նշանակությամբ հացահատիկից հետո երկրորդն են: Մարդկանց կողմից օգտագործվող ձարաբերի 2/3-ը բաժին է ընկնում բուսական յուղերին:

Արևածաղկի հայրենիքը Հյուսիսային Ամերիկայի հարավային մասն է: Արևածաղկի բերքով աշխարհի առաջատար երկրներն են Ուկրաինան, Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Չինաստանը:

Ձիթենին բազմամյա, ջերմասեր մշակաբույս է: Հիմնականում տարածված է միջերկրածովյան երկրներում (Իտալիա, Իսպանիա, Հունաստան):

Սոյան արժեքավոր պարենային և միաժամանակ կերային մշակաբույս է:



Բամբակենու տնկատափ (պլանտացիա)



Ջուֆի մշակությունը



Ձիթենու տնկատափ (Իտալիա)

Ջերմասեր այս մշակաբույսի հայրենիքը Արևելյան Ասիան է (Չինաստանը և Կորեան): Մեր օրերում դրա գլխավոր արտադրողներն են ԱՄՆ-ը, Բրազիլիան, Չինաստանը:



Կաուչուկենու տնկատափ



Շաքարեղեգի տնկատափ (Կուբա)

նում, Գերմանիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում: Շաքարեղեգ աճեցնում են արևադարձային և մերձարևադարձային գոտիներում՝ Ամերիկա աշխարհամասում, Հարավային և Հարավարևելյան Ասիայում, Ավստրալիայում:

Առույգացնող մշակաբույսերից են սուրճը, թեյը և կակաոն: Դրանք բոլորն էլ մշակում են արևադարձային գոտում (թեյը՝ նաև մերձարևադարձայինում): **Սուրճի** հայրենիքը Եթովպիան է: Պարենային ապրանքների համաշխարհային առևտրում սուրճն իր արժեքով ցորենից հետո գրավում է երկրորդ տեղը: Սուրճի գլխավոր արտադրողներն են Բրազիլիան, Կոլումբիան:

Թեյի հայրենիքը Չինաստանն է: Թեյի համաշխարհային բերքի մոտ 3/5-ը տալիս են Ասիայի երկրները, հատկապես Հնդկաստանը, Չինաստանը և Շրի Լանկան:

Հարավարևելյան Ասիայում, հատկապես Ինդոնեզիայում, Մալայզիայում և Թաիլանդում մշակվող ծառատեսակ է **կաուչուկենին** (հետյան), որի կաթնահյութը կարևոր հումք է ամենաբարձրորակ՝ բնական կաուչուկ ստանալու համար:

Պալարային մշակաբույսերից ամենատարածվածը **կարտոֆիլն** է՝ մարդու «երկրորդ հացը», որի հայրենիքը Հարավային Ամերիկան է: Այն ևս բազմանշանակ օգտագործվող մշակաբույս է. մարդկանց սննդում օգտագործվում է որպես պարեն, անասնապահության մեջ՝ որպես անասնակեր, սննդի արդյունաբերության մեջ՝ որպես օսլայի ստացման հումք: Կարտոֆիլի համախառն բերքով աչքի է ընկնում Չինաստանը:

Շաքարատու մշակաբույսերը շատ կարևոր դեր են խաղում մարդկանց սննդի մեջ: Գլխավոր շաքարատուները **շաքարի ճակնդեղը** և **շաքարեղեգն** են: Շաքարի ճակնդեղ աճեցնում են բարեխառն գոտում, հատկապես Ուկրաինայում, Ռուսաստանում,

Կակաոյի (շոկոլադի) ծառի հայրենիքը Ամերիկյան Է՝ Մեքսիկական բարձրավանդակը: Սակայն ժամանակի ընթացքում այն լայն տարածում գտավ Աֆրիկայում, որտեղ առանձնանում են Կոտ դ'Իվուարը, Գանան, Սենեգալը: Աֆրիկյան տալիս է կակաոյի համաշխարհային բերքի 2/3-ը:

Համեմունքները (դարչին, մեխակ, վանիլ) մշակվում են գլխավորապես արևադարձային գոտում:

Ձիթատու, շաքարատու, պալարատու և հատկապես առույգացնող մշակաբույսերի զգալի մասը մտնում է համաշխարհային շուկա: Դրանց գլխավոր արտահանողները նոր զարգացող երկրներն են, իսկ ներմուծողները՝ զարգացած երկրները:

Բանջարաբուծությունն ու այգեգործությունը կարևոր դեր են խաղում սննդաբաժնում: Դրանք նաև հումք են տալիս գինու-կոնյակի և պահածոների արտադրության համար:

Բանջարաբուծությունը զարգացած է ամենուրեք, հատկապես բարեխառն և մերձարևադարձային գոտիներում: Դա բնակչությանը մատակարարում է թարմ բանջարեղեն: Դրանք գլխավորապես մշակում են բնակչության խոշոր կուտակումների շրջանում խոշոր քաղաքների շրջակայքում, որովհետև բանջարեղենը հիմնականում շուտ փչացող է և փոխադրման համար հարմար չէ:

Այգեգործությունը հատկապես զարգացած է մերձարևադարձային և արևադարձային գոտիներում: Շատ պտուղներ ունեն տարածման լայն աշխարհագրություն, օրինակ՝ տանձը, խնձորը, սալորը, բալը: Միջերկրական ծովի ավազանի երկրներում լայն տարածում է ստացել խաղողագործությունը, որն առանձնապես զարգացած է Իտալիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում:

Բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրությամբ աշխարհում առաջին տեղում է Չինաստանը, խաղողի՝ Իտալիան, նարնջի և կիտրոնի՝ ԱՄՆ-ը, մանդարինի՝ Ճապոնիան:



Թեյի տնկատափ



Խաղողի այգի

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է բուսաբուծության դերը մարդու կյանքում:
2. Ի՞նչ ենթաձյուղերից է բաղկացած բուսաբուծությունը:
3. Ո՞ր գործոններն են ազդում աշխարհում մշակաբույսերի տարածման վրա: Բերե՞ք օրինակներ:
4. Որո՞նք են հացահատիկային գլխավոր մշակաբույսերը: Բնութագրե՞ք բուսաբուծության այդ ենթաձյուղը: Քարտեզի վրա ցոյց տվե՞ք հացահատիկի արտադրության գլխավոր երկրները:
5. Բացատրե՞ք «տեխնիկական մշակաբույսեր» հասկացությունը: Բնութագրե՞ք ենթաձյուղը:
6. *Մրածե՞ք այս մասին.* իր հայրենիքում՝ Ամերիկայում կարտոֆիլն աճեցվում էր արևադարձային լայնություններում, սակայն մեծ հաջողությամբ սկսեց աճել և բարձր բերք տալ մշակության նոր վայրերում, բայց արդեն բարեխառն լայնություններում: Ինչո՞վ կբացատրեք հետաքրքիր այս երևույթը:
7. Պատրաստե՞ք փոքրիկ հաղորդում համեմունքային մշակաբույսերի մասին:
8. *Առաջադրանք ըստ ցանկության.* պատրաստե՞ք սլայդ-ներկայացում «Բուսաբուծություն» թեմայով:

Հետաքրքիր է իմանալ

Համեմունքային բույսեր

Աշխարհում շատ են համեմունքների տեսակները, բայց մարդն օգտագործում է դրանց շուրջ 50 տեսակը: Շատ արժեքավոր և մեծ տարածում ունեցող համեմունքներից են դարչինը, կոճապղպեղը (իմբիրը), մեխակը, սև պղպեղը, հիլը, վանիլը, դափնու տերևը և այլն:

Դեռևս խոր հնադարում շատ համեմունքներ հայտնի են եղել պարսիկներին, չինացիներին, հնդիկներին, եգիպտացիներին և Հարավարևելյան Ասիայի ժողովուրդներին, որոնց մեջ համեմունքը մեծ կիրառություն է ունեցել ինչպես սննդի, այնպես էլ ժողովրդական բժշկության մեջ:

Դարչնածառը մշակվում է դարչին համեմունք ստանալու համար: Համեմունքն այդ ծառի շիվերի կեղևն է: Բույսի «դարչին» անունն ունի պարսկական ծագում, որը նշանակում է «չինական ծառ»: Դարչին համեմունքն օգտագործվում է հրուշակեղենի, խոհարարության և բժշկության մեջ: Համաշխարհային շուկա արտահանող գլխավոր երկրներն են Շրի Լանկան և Սեյշելյան կղզիները:

Կոճապղպեղը պարսիկները, արաբները անվանում են զանջաֆիլ, եվրոպական ժողովուրդները՝ իմբիր: Մարդու կողմից օգտագործվող համեմունքների մեջ կոճապղպեղը համարվում է ամենահինը և ամենասիրվածն ու մեծ ժողովրդականություն վայելողներից մեկը, որն ունի շատ հաճելի հոտ և այրող համ: Այն մեծ կիրառություն ունի օրգանիզմի առուցությունը (տոնուսը) բարձ-

րացնող ոչ ոգելից խմիչքների (օրինակ՝ թեյի), հացաբուլկեղենի, հրուշակեղենի արտադրության մեջ: Կոճապղպեղի արտադրությամբ աշխարհում առաջինը Հնդկաստանն է:

Հիլը մեծ կիրառություն ունի հացաբուլկեղենի, երշիկների, հրուշակեղենի, պահածոների արտադրության մեջ: Արևելյան ժողովուրդները հիլն օգտագործում են սուրճի և թեյի մեջ: Միջազգային շուկայում ամենաբարձր որակի հիլ է համարվում հնդկականը:

Վանիլի հայրենիքը Մեքսիկան է: «Վանիլ» անունն ունի իսպանական ծագում և նշանակում է «պատիճ»: Այն օգտագործվում է հրուշակեղենի, շոկոլադի և բարձրորակ պաղպաղակների արտադրության մեջ: Աշխարհում դրա խոշոր արտադրողը Մադագասկարն է:

Մեխակ համեմունքը (ոչ մի կապ չունի նույն անունը կրող ծաղկի հետ) օգտագործվում է խոհարարության մեջ կծու մածուկներ և զանազան ճաշատեսակներ, կոմպոտներ և մուրաբաներ պատրաստելիս, հրուշակեղենի արտադրության, օձանելիքի և գինեգործության մեջ: Մեխակի եթերայուղն օգտագործվում է հատկապես ատամնաբուժության մեջ՝ որպես ցավազրկող միջոց: Նրա յուղն ունի մոծակներին և ճանճերին վանելու ուժեղ հատկություն: Հագուստը ցեցից պաշտպանելու համար բավական է պահարանում դնել փոքրիկ սրվակով մեխակի յուղ:


ԴԱՍ 23. ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անասնապահությունը գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից մեկն է: Այն ծագել է շատ հին ժամանակներում՝ վայրի կենդանիների ընտելացմամբ: Հետագայում մարդը սկսել է զբաղվել նաև գյուղատնտեսական կենդանիների բուծմամբ:

Անասնապահությունը բնակչությանը մատակարարում է միս, կաթ, կենդանական յուղ, ձու, իսկ թեթև արդյունաբերությանը՝ բնական հումքի որոշ տեսակներ (օրինակ՝ բուրդ և մորթի):


Անասնապահությունն աչքի է ընկնում ճյուղային մեծ բազմազանությամբ: Նրա գլխավոր ենթաճյուղերն են խոշոր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունը, ոչխարաբուծությունը, ձիաբուծությունը, ուղտաբուծությունը, թռչնաբուծությունը, ինչպես նաև շերամապահությունը: Լայն առումով գյուղատնտեսության բնագավառին են վերագրում նաև ձկնաբուծությունը և գազանաբուծությունը:

Անասնապահությունը բուսաբուծության նման նույնպես տարածված է բնակեցված ցամաքի գրեթե բոլոր մասերում:



Աշխարհում անասնապահության տեղաբաշխումը պայմանավորված է կերային բազայով՝ կերի առկայությամբ, բնակչության և արդյունաբերության պահանջարկով:

Անասնապահական մթերքի հիմնական մասը տալիս են բարեխառն գոտու երկրները:



Խոշոր եղջերավոր անասնապահության հիմնական շրջանները

Անասնապահության առաջատար ճյուղը **խոշոր եղջերավոր անասնապահությունն** է: Խոշոր եղջերավոր անասուններ (1,5 մլրդ գլուխ) բուծում են աշխարհի բոլոր շրջաններում և ստանում են մարդկությանն անհրաժեշտ գրեթե ամբողջ կաթը և մսի ավելի քան 1/3-ը: Աշխարհում նրա տեղաբաշխումը

համեմատաբար հավասարաչափ է, բայց զարգացման ուղղությունները և մթերատվության մակարդակն ամենուրեք միատեսակ չեն:


Կաթնատու անասնապահությունը տեղաբաշխվում է բնակչության խոշոր կուտակումների, ինչպես նաև հյութալի խոտածածկով արոտավայրերի շրջաններում, իսկ մսատու անասնապահությունը՝ չոր տափաստանային, աղքատիկ բուսածածկոյթով արոտավայրերում: Արոտավայրային հսկայական ռեսուրսներով աչքի են ընկնում արևադարձային երկրները, բայց դրանցում ցածր է կաթնատու անասնապահության մակարդակը:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը: Նրան հաջորդում են Բրազիլիան, Չինաստանը, ԱՄՆ-ը:

Խոզերը սկզբնապես ընտելացվել են Ասիայում և Եվրոպայում: **Խոզաբուծությունը** (մոտ 1 մլրդ գլուխ) ապահովում է աշխարհում սպառվող մսի 2/5-ը: Խոզաբուծությունը զարգանում է բուսաբուծությունից ստացվող կերի և մնդի արդյունաբերության թափոնների հիման վրա: Այն ձգտում է դեպի խոշոր քաղաքների մերձակայքը և ինտենսիվ բուսաբուծության, հատկապես



Բարձր կաթնատու տոհմային կովեր (Շվեյցարիա)




Խոզաբուծության հիմնական շրջանները

եգիպտացորենի, կարտոֆիլի և շաքարի ծակնդեղի մշակման շրջաններ, որտեղ բավարար է կերային բազան:



Խոզաբուծական տնտեսություն (Չինաստան)

Խոզերի գլխաքանակի մեծ մասը կենտրոնացված է Ասիայում: Առաջին տեղում Չինաստանն է: Խոզաբուծությունը զարգացած է նաև Եվրոպայում (Գերմանիա, Ռուսաստան, Լեհաստան, Ֆրանսիա, Ուկրաինա), Հյուսիսային Ամերիկայում (ԱՄՆ) և Հարավային Ամերիկայում (Բրազիլիա): Դրան հակառակ՝ խոզաբուծությունը բացակայում է մահմեդականությունն դավանող երկրներում, օրինակ՝ Հարավարևմտյան Ասիայի երկրներից շատերում:



Մանր եղջերավոր անասնապահության հիմնական շրջանները

Ոչխարները և այծերը ընտելացված առաջին կենդանիներից են: Դրանց ընտելացումը տեղի է ունեցել սրանից 11 հազար տարի առաջ Հարավարևմտյան Ասիայում:

Ոչխարաբուծությունը (1,1 մլրդ գլուխ) զարգանում է մերձարևադարձային և արևադարձային կիսաանապատների ու անապատների համեմատաբար աղքատիկ բուսածածկ ունեցող տարածքներում և երկրագնդի լեռնային շրջաններում: Ոչխարաբուծության հիմնական արտադրանքը միսն ու բուրդն են: Այդ

երկու մթերքի արտադրությունը զուգակցող մսաբրդատու ուղղության ոչխարաբուծությունը բնորոշ է բավարար խոնավություն և համեմատաբար մեղմ կլիմա ունեցող շրջաններին (Եվրոպա, Նոր Զելանդիա, Արգենտինա), բրդատու ուղղությունը՝ ավելի չորային շրջաններին (Չինաստան, Ավստրալիա, Թուրքիա, Մոնղոլիա, Իրան): Նրբագեղմ և կիսանրբագեղմ ոչխարաբուծությունը հատկապես զարգացած է Ավստրալիայում, Ղազախստանում, Նոր Զելանդիայում:

Աշխարհում ոչխարաբուծության խոշորագույն մարզերը Չինաստանի և Ավստրալիայի անապատային և կիսաանապատային շրջաններն են, որտեղ ոչխարների բազմաքանակ հոտերը շուրջ տարին դրսում են և օգտվում են բնական արոտներից:

Իրանում, Աֆղանստանում, Թուրքիայում զարգացած է երկար և որակյալ բուրդ՝ մոհայր տվող այծերի բուծումը: Այծերը գլխաքանակով (0,9 մլրդ գլուխ) զիջում են ոչխարներին:

Թռչնաբուծությունը անասնապահության ավանդական, ամենատարածված և արագ զարգացող ճյուղերից է: Վայրի թռչունների ընտելացումը սկսվել է դեռևս Ք. ա. IV-ից III հազարամյակում Հնդկաստանում և Չինաստանում: Հայաստանում ևս թռչնաբուծությունը գոյություն է ունեցել դեռևս հնագույն ժամանակներից:

Քաղաքների մերձակայքում և հատկապես հացահատիկների աճեցման զոնաներում ստեղծում են թռչնաբուծարաններ՝ թռչնամիս և ձու ավելի արագ ստանալու և սպառողին ավելի արագ հասցնելու համար: Թռչնաբուծությանը աչքի ընկնող զարգացած



Նրբագեղմ ոչխարաբուծություն
Նոր Զելանդիայում



Մոհայր տվող այծերի բուծում
Թուրքիայում



Թռչնաբուծական
(հնդկահավաբուծական) ֆերմա

երկրներում ստեղծվել են արդյունաբերական տիպի խոշոր ձեռնարկություններ՝ մաստու հատուկ տեսակի թռչունների արտադրության կազմակերպման համար:

Թռչնաբուծությամբ աշխարհում առաջատար երկրներն են Չինաստանը, ԱՄՆ-ը, Ռուսաստանը:

Մեղվաբուծությունը զբաղվում է մեղրատու մեղուների բուծմամբ՝ մեղր և մեղրամոմ ստանալու, ինչպես նաև գյուղատնտեսական բույսերի փոշոտումն ապահովելու համար: Մեղվաբուծությունը հայտնի էր դեռևս նախնադարում: Հայաստանը մեղվաբուծության հնագույն կենտրոններից է: Հույն պատմիչ Քսենոփոնի (Ք. ա. V-IV դդ.) վկայությամբ՝ Հայաստանի լեռնային գյուղերում եղել են բազմաթիվ փեթակներ:

Մեղվաբուծության արտադրանքի ծավալով աշխարհի առաջատար երկրներն են ԱՄՆ-ը, Մեքսիկան, Ֆրանսիան, Ռուսաստանը:

Շերամապահությունը զբաղվում է շերամի թրթուրների բուծմամբ՝ բնական մետաքսահումք (բոժոժ) և մետաքսաթել ստանալու նպատակով: Շերամապահությամբ առաջինը սկսել են զբաղվել Չինաստանում դեռևս 5 հազար տարի առաջ: Հայաստանում դրանով զբաղվել սկսել են VI-VII դարերում: Շերամապահությամբ հնարավոր է զբաղվել այնտեղ, որտեղ աճում է թթենին: Նրա տերևները կեր են ծառայում շերամի թրթուրների համար:



Բնական մետաքսահումք (բոժոժ)

բուծում են կոկորդիլոսներ և ջայլամներ: Վերջին տարիներին ջայլամաբուծությունը տարածում է ստանում նաև Հայաստանում:

Թույլ զարգացած լեռնային ու անապատային երկրներում բուծում են ուղտեր, ձիեր, ջորիներ, յակեր, ուղտայծեր (լամաներ) և այլն, որոնք դժվարանցանելի տեղանքում գլխավորապես ծառայում են որպես տրանսպորտային և բեռնափոխադրման միջոցներ, ինչպես նաև միս, բուրդ, մորթի, կաթ տվող կենդանիներ: Օրինակ՝ քոչվոր արաբների՝ բեդվիլների համար անգնահատելի նշանակություն ունի ուղտը:

Ջարգացած շերամապահության երկրներն են Չինաստանը, Ճապոնիան, Հնդկաստանը, ԿԺԴ-ն և Կորեայի Հանրապետությունը:

Անասնապահության հատուկ ճյուղ է **գազանաբուծությունը**: Այն առավելապես զբաղվում է թանկարժեք մորթի ունեցող կենդանիների (աղվես, ճահճակուղբ, ջրաքիս, սամոյր) բուծմամբ:

Գոյություն ունեն անասնապահական հատուկ ֆերմաներ, որտեղ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվարկե՞ք անասնապահության ծյուղերը: Ո՞րն է անասնապահության նշանակությունը:
2. Բնութագրե՞ք անասնապահության գլխավոր ծյուղերի տեղաբաշխման առանձնահատկությունները:
3. Որո՞նք են անասնապահության գլխավոր շրջանները:
4. Բնութագրե՞ք անասնապահության գլխավոր ծյուղերը: Նշե՞ք դրանց առանձնահատկությունները:
5. Որո՞նք են բուսաբուծության և անասնապահության կապերը:
6. *Առաջադրանք ըստ ցանկության.* պատրաստե՞ք սլայդ-ներկայացում «Աշխարհի անասնապահությունը» թեմայով:
7. Պատրաստե՞ք փոքրիկ հաղորդում աշխարհի ձիաբուծության և ուղտաբուծության վերաբերյալ:

ԴԱՍ 24. ԶԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Մարդու հնագույն զբաղմունքները: Մարդկային հասարակության պատմության ընթացքում մշտապես փոփոխվել ու համալրվել են մարդու զբաղվածության բնագավառները:

Մեր օրերում դրանցից հատկապես մեծ, նույնիսկ վճռորոշ դեր են կատարում բարձր տեխնոլոգիական արտադրությունները, համակարգչային տեխնոլոգիան և գյուղատնտեսությունը: Սակայն այդ զբաղմունքների կողքին դեռևս պահպանվում են մարդու հնագույն զբաղմունքները՝ հավաքչությունը, ձկնորսությունը և անտառային տնտեսությունը, որոնք արդեն հազարամյակների պատմություն ունեն: Գյուղատնտեսության մեծ վերելքի շնորհիվ նշված գործունեությունների դերը որոշ չափով փոքրացել է (դարձել է երկրորդական), սակայն դրանց նշանակությունը դեռևս զգալի է: Օրինակ՝ ձկան համաշխարհային որսի ծավալը մոտավորապես հավասար է մսի համաշխարհային արտադրության ծավալին, իսկ արևադարձային մշտադալար կոլա ծառի սերմերից արտադրած ըմպելիքների (կոկա-կոլա, պեպսի-կոլա) ծավալը զգալիորեն գերազանցում է գյուղատնտեսական ցանկացած պտղից պատրաստված ըմպելիքի ծավալը: Նույն կերպ՝ բույսերից պատրաստված դեղերի ծավալը չի զիջում քիմիական եղանակով արտադրված դեղերի ծավալին:

Այսպիսով՝ հավաքչությունը, որսորդությունը, ձկնորսությունը և անտառային տնտեսությունը շարունակում են մարդկությանը մատակարարել բնությունից վերցված նյութական բարիքներ, բայց, կազմակերպվածության տեսանկյունից, նյութական արտադրության ծյուղ չեն:

Հետևաբար հարց է առաջանում, թե տնտեսության հոր ճյուղին վերագրել գործունեության այդ տեսակները: Ակնհայտ է, որ դրանք իրենց բնույթով առավել մոտ են գյուղատնտեսությանը, դրա համար էլ տնտեսության ճյուղային կառուցվածքն ուսումնասիրելիս հավաքչությունը, որսորդությունը, ձկնորսությունը և անտառային տնտեսությունը դիտվում են որպես գյուղատնտեսության հարակից գործունեություններ:



Ձկնորսությունը ճապոնացիների ավանդական զբաղմունքներից է:



Ձկան որս Հյուսիսային ծովում

դարի 2-րդ կեսից տեղի է ունենում դրա աշխարհագրության փոփոխություն: Եթե մինչև Երկրորդ աշխարհամարտը և դրանից հետո ձկնորսության ավանդական գլխավոր շրջանը Հյուսիսային Ատլանտիկան էր (Երկրներից էլ համապատասխանաբար՝ Նորվեգիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, ԱՄՆ-ը), ապա հետագայում դրա գլխավոր շրջանը դարձավ Խաղաղ օվկիանոսի

Ձկնորսությունը մարդու տնտեսական գործունեության հնագույն ձևերից է և հայտնի է եղել գրեթե բոլոր ժողովուրդներին: Հայաստանի մի շարք հնավայրերում ևս գտնվել են ձկների ոսկորներ և ձկնորսության գործիքներ:

Ներկայումս ձկնորսությունը տարածված է ամենուրեք՝ բոլոր ծովերում և խոշոր լճերում ու գետերում: Ժամանակակից ձկնորսությունը ձկնաբուծության հետ դարձել է համաշխարհային տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը: Դրանք աշխարհի 22 մլն մարդու զբաղվածության, ինչպես նաև 110 մլն մարդու գոյության միջոց են: Ձկնորսությունը բնակչությանը սպիտակուցներով և վիտամիններով հարուստ ձկան միս մատակարարող ճյուղ է: Ձկնորսության դերը տարեցտարի մեծանում է, որովհետև աշխարհի բնակչությունն արագորեն աճում է, իսկ անասնապահությունն աճում է դրան ոչ համաչափ տեմպերով: Այդ պատճառով էլ ձկան համաշխարհային որսը արագորեն մեծանում է. տարեկան հասել է 145 մլն տոննայի:

Ձկան որսի աճին զուգահեռ XX դարի 2-րդ կեսից տեղի է ունենում դրա աշխարհագրության փոփոխություն: Եթե մինչև Երկրորդ աշխարհամարտը և դրանից հետո ձկնորսության ավանդական գլխավոր շրջանը Հյուսիսային Ատլանտիկան էր (Երկրներից էլ համապատասխանաբար՝ Նորվեգիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, ԱՄՆ-ը), ապա հետագայում դրա գլխավոր շրջանը դարձավ Խաղաղ օվկիանոսի

արևելյան՝ Հարավային Ամերիկային հարող շրջանը: Ներկայումս հատկապես այդ ջրավազաններում են տեղաբաշխված ձկնորսության առաջատար երկրները՝ Չինաստանը, Պերուն, Չիլին: Շարունակում են որպես առաջատար երկրներ մնալ ԱՄՆ-ը, Նորվեգիան, Ճապոնիան: Ձկնորսության առաջատար երկրները նախկինի պես ծուկ որսում են ոչ միայն սեփական առափնյա ջրերից, այլ նաև իրենց ափերից հարյուրավոր և հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող ջրերում:

Խոսելով ձկնորսության զարգացման հեռանկարների մասին՝ պետք է հիշել, որ համաշխարհային օվկիանոսի օրգանական պաշարների ինքնավերականգնումը չխախտելու համար ձկան և ծովային կենդանիների տարեկան որսը չպետք է գերազանցի 150 մլն տոննան:

Ներկայումս աշխարհի ձկնային պաշարների մոտ 70%-ը աղետալի վիճակում է: Համաշխարհային օվկիանոսի զգալի մասը ձկնային ռեսուրսների գերշահագործվող և, միաժամանակ, շատ դանդաղորեն վերականգնվող տարածքներ են: Այդպիսիք են, օրինակ, Սև, Արևելաչինական, Դեղին, Հյուսիսային, Միջերկրական ծովերը և Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային հատվածը:

Այդ պատճառով էլ ջրային օրգանիզմների (ձկների, կակղամորթների, խեցգետնակերպերի, ոստրեի, մարգարտի), ինչպես նաև ջրային բույսերի (ջրիմուռների) համաշխարհային աճող պահանջարկը բավարարելու ներկայիս հուսալի աղբյուր է

դարձել **ակվակուլտուրան** (ակվա՝ ջուր, կուլտուրա՝ մշակություն): Մարդկանց այն հայտնի է եղել դեռևս 3 հազարամյակ առաջ, սակայն արագորեն զարգանում է միայն վերջին տասնամյակներում: Ակվակուլտուրան ծագել է Չինաստանում, և մինչև օրս էլ այդ երկիրը պահպանում է համաշխարհային առաջատարի դերը:



Ակվակուլտուրա (ձկնաբուծություն)



Ակվակուլտուրա (մարգարտի «աճեցում» ծովային պլանտացիայում)

Ակվակուլտուրայի էությունը մարդու կողմից ջրավազաններում արհեստական եղանակով ջրային զանազան օգտակար օրգանիզմների նպատակային բազմացումն է: Պատահական չէ, որ ակվակուլտուրան համարում են «ծովային անասնապահություն»: Գոյություն ունի ակվակուլտուրայի վարման երկու տեսակ՝ քաղցրահամ ջրերի և ծովային (մարիկուլտուրա): Ակվակուլտուրայի արտադրության զանգվածի մոտ կեսը կազմում են ձկները, 1/4-ը՝ ջրիմուռները: Ակվակուլտուրայի աշխարհագրությունը շատ մեծ է. ընդգրկում է մոտ 140 երկիր: Այդուհանդերձ աշխարհում բացառիկ մեծ է Ասիայի մասնաբաժինը (90%): Չինաստանից բացի՝ աշխարհում առաջատար երկրներն են Ճապոնիան, Կորեայի Հանրապետությունը, Ֆիլիպինները, Թաիլանդը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Իսպանիան:

Իրենց բնույթով գյուղատնտեսությանը մոտ ճյուղեր են նաև **անտառային տնտեսությունը** և **որսորդությունը**:

Մարդու համար մեծ է անտառի տնտեսական նշանակությունը հատկապես փայտանյութի մթերման գործում: Սակայն ոչ պակաս կարևոր է նաև անտառի դերը պտուղների, հատապտուղների, սերմերի, սնկերի հավաքման, վայրի մեղրի, դեղաբույսերի և տեխնիկական բույսերի մթերման, գազանների և թռչունների որսի բնագավառներում: Դրանք անտառային գոտիների բնակչության սննդաբաժնի կարևոր մասն են կազմում:



Արդյունագործական որսորդությունը Սիբիրում

Անտառների շուրջ 6 հազար բուսատեսակ օգտագործվում է դեղորայքի արտադրության մեջ, իսկ, օրինակ, Բրազիլական Ամազոնիայի ավելի քան 1,5 մլն մարդու եկամտի գլխավոր աղբյուրը հևեայից ստացվող բնական կաուչուկն է և անտառային այլ նյութերի հավաքչությունը:

Անտառներից հավաքում են նաև վայրի մեղր: Օրինակ՝ Հնդկաստանում տարեկան հավաքվում է մի քանի տասնյակ հազար տոննա վայրի մեղր:

Որսորդությունը նույնպես մարդու գործունեության հնագույն բնագավառներից է և հայտնի է գրեթե բոլոր ժողովուրդներին: Վայրի կենդանիների և թռչունների որսն անցյալում զուգակցվել է հավաքչության, ձկնորսության, իսկ ավելի ուշ՝ երկրագործության և անասնապահության հետ: Որսորդությունը անասնապահության հետ բնակչությանը մատակարարում է լրացուցիչ միս, կաշի, մորթի:

Մեր օրերում անտառների ու այլ տարածքների կենդանական սննդամթերքի նշանակությունը շարունակում է մեծ մնալ աշխարհի մի շարք երկրների բնակչության համար: Աշխարհի ավելի քան 60 նոր զարգացող երկրների բնակչության կենդանական ծագման սննդաբաժնում վայրի կենդանիների միսը կազմում է առնվազն 1/5-ը, իսկ, օրինակ, Պերուական Ամազոնիայի բնակչության սննդաբաժնում կազմում է նույնիսկ 85%:

Որսորդությունն ու հավաքչությունը դեռևս զգալի չափով պահպանվում են Ռուսաստանում, ինչպես նաև որոշ զարգացած երկրներում (Կանադայում, Շվեդիայում, Ավստրալիայում): Օրինակ՝ Ավստրալիայում տարեկան միջին հաշվով որսում են 5 մլն ագեվազ (կենգուրու):

Հավաքչությունը պահպանվում է նաև Հայաստանում: Մեր սննդաբաժնի մեջ օգտագործվող որոշ մթերքներ ոչ թե գյուղատնտեսական արտադրանք են, այլ՝ բնության բարիքներ: Դրանցից են, օրինակ՝ ավելուկը, մանդակը, ծառի և դաշտային սնկերը, դեղաբույսերը և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ փոփոխություններ է կրել հավաքչության, որսորդության, ձկնորսության և անտառային տնտեսության դերը մարդու կյանքում:
2. Ինչ տարբերություն կա նյութական արտադրության ճյուղերի ու հավաքչության, ձկնորսության, ձկնաբուծության ու անտառային տնտեսության միջև:
3. Ո՞րն է ձկնորսության դերը մարդու կյանքում: Որո՞նք են ձկնորսության առաջատար երկրները: Ցո՞ւյց տվեք դրանք քարտեզի վրա:
4. Որո՞նք են համաշխարհային ձկնորսության էկոլոգիական հետևանքները:
5. Ինչ է ակվակուլտուրան: Ո՞րն է դրա զարգացման պատճառը հատկապես մեր օրերում: Քարտեզի վրա ցո՞ւյց տվեք ակվակուլտուրայի զարգացած երկրները:
6. Ինչ է տալիս անտառը մարդուն: Բնապահպանական ինչ հետևանքներ կարող է ունենալ անտառի բազմանպատակ օգտագործումը:
7. Ո՞րն է որսորդության նշանակությունը մարդու համար:
8. Ինչ գիտես Հայաստանի անցյալի և ներկայի ձկնորսության, ձկնաբուծության և որսորդության մասին:
9. Պատրաստե՛ք հաղորդում «Ծովի կամ անտառի բարիքները» թեմայով:
10. *Առաջադրանք ըստ ցանկության.* պատրաստե՛ք սլայդ-ներկայացում «Աշխարհի գյուղատնտեսությունը» կամ «Հայաստանի դեղաբույսերը» թեմայով:

Հետաքրքիր է իմանալ

Դեղաբույսերը Հին Հայաստանում

Բուսաբուժության ասպարեզում հարուստ պատմություն ունի Հայաստանը: Ղազար Փարպեցու վկայությամբ՝ դեռևս Ք. ա. զանազան հիվանդությունների բուժման նպատակով Արարատյան դաշտում օգտագործել են հատուկ բուսարմատներ: Ժամանակին Հայաստանից շատ դեղաբույսեր են արտահանվել նաև Հին Հունաստան, Հին Հռոմ և այլ երկրներ: Հույն պատմագիր Քսենոփոնը իր երկրին Հայաստանը ներկայացրել է որպես քունջութով, նշով, բևեկնի յուղերով և օգտավետ այլ միջոցներով հարուստ երկիր: Հայաստանից են եվրոպայում տարածվել երեքնուկը, հայկական հողմածաղիկը, տորոնը և այլն:

ԴԱՍ 25. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

Տնտեսության նյութական արտադրության ճյուղերի շարքում **տրանսպորտն** ու **կապն** առանձնանում են նրանով, որ նյութական բարիքներ չեն ստեղծում: Տրանսպորտի միջոցով պարզապես իրականացվում է արտադրության ճյուղերի ու ձեռնարկությունների միջև հումքի փոխադրումը, ինչպես նաև պատրաստի արտադրանքը սպառողին հասցնելը: Եվ քանի որ փոխադրումների վրա կատարվում են ծախսեր (փոխադրողների աշխատավարձ, վառելիքի ծախս և այլն), ապա դրանք մտնում են ապրանքների արժեքների մեջ, այսինքն՝ «ստեղծում» են նյութական արժեք: Այդ իսկ պատճառով բեռնատար տրանսպորտը համարվում է նյութական արտադրության ճյուղ:



Ժամանակակից էլեկտրագնացք

մորիլ, նավ, գնացք և այլն), ապա կապն ապահովում են կապի միջոցները (հեռախոս, ռադիո, հեռուստացույց, համակարգիչ և այլն): Տրանսպորտի և կապի միջոցները հումքը, արտադրանքը և տեղեկությունը տեղափոխում են

Կապն իր հերթին ապահովում է մարդկանց, տնտեսության տարբեր ճյուղերի ու արտադրությունների միջև որոշակի հեռավորության վրա տեղեկատվության փոխանցումը տարբեր տեխնիկական միջոցներով:

Տրանսպորտը և կապը միասին հաղորդակցության միջոցներ են: Եթե տրանսպորտի պարագայում հաղորդակցությունն իրականացվում է տրանսպորտի միջոցներով (ավտո-

հաղորդակցության ուղիներով (ճանապարհներ, էլեկտրահաղորդման գծեր, համացանց և այլն):

Տրանսպորտը և կապը կարևոր դեր են կատարում ոչ միայն սահմանափակ տարածքում (բնակավայր, շրջան, երկիր, տարածաշրջան), այլև ամբողջ աշխարհում հասարակական կյանքի կազմակերպման համար: Բացի դրանից՝ երկրագնդի որևէ մասում (տարածքում) որքան զարգացած են հաղորդակցության միջոցները, այնքան մեծ են այդ տարածքի զարգացման հնարավորությունները: Այդ է պատճառը, որ ամեն մի պետություն, մեծ թե փոքր, ստեղծել և շարունակում է զարգացնել տրանսպորտի և կապի միջոցների սեփական ցանցը:



Ժամանակակից հարմարավետ ավտոբուս

Տրանսպորտի միջոցով իրականացվում են ներպետական և միջպետական փոխադրումներ, որոնք ինչպես առանձին երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության զարգացման և տեղաբաշխման նախադրյալներից են: Զարգացած տրանսպորտի շնորհիվ առանձին տարածաշրջաններ մասնագիտանում են որոշակի ապրանքների արտադրության գծով՝ ներկրելով դրանց արտադրության համար անհրաժեշտ հումքն ու արտահանելով պատրաստի ապրանքների ավելուրդը:


Տրանսպորտի զարգացման մակարդակը և աշխատանքի արդյունքները բնութագրելու համար սովորաբար օգտագործում են մի քանի ցուցանիշներ: Այդ ցուցանիշներն են՝

- ճանապարհային ցանցի երկարությունը (կմ),
- փոխադրված բեռների կշիռը (տոննա), ուղևորների թվաքանակը (հազ. մարդ),
- բեռնաշրջանառությունը (բեռների կշիռը բազմապատկած փոխադրման միջին հեռավորությունով՝ տոննա•կմ),
- ուղևորաշրջանառությունը (ուղևորների թիվը բազմապատկած փոխադրման հեռավորությունով՝ ուղևոր•կմ):

Առանձնացվում են տրանսպորտի երեք տեսակ՝ ցամաքային, ջրային և օդային:

Ցամաքային տրանսպորտն իր հերթին բաժանվում է **երկաթուղայինի, ավտոմոբիլայինի, խողովակաշարայինի, էլեկտրոնայինի:**

Աշխարհի տրանսպորտային ուղիները, հազ. կմ, 2010թ.



Երկաթուղային տրանսպորտի տնտեսական ցուցանիշները վերջին տասնամյակում նվազում են: Տրանսպորտի մրցակից՝ արագ և էժան փոխադրում իրականացնող տեսակների զարգացման շնորհիվ կրճատվել է երկաթուղիների ընդհանուր երկարությունը, ինչպես նաև փոքրացել է նրա բաժինը համաշխարհային բեռնափոխադրումների և հատկապես ուղևորափոխադրումների մեջ: Այդուհանդերձ, երկաթուղային տրանսպորտը շարունակում է մնալ որպես համաշխարհային տրանսպորտի շատ կարևոր ճյուղ, ու դրանով են կատարվում համաշխարհային բեռնաշրջանառության 11%-ը և ուղևորաշրջանառության 9%-ը:

Անընդհատ արդիականացվող շարժակազմը, գնացքների արագության մեծացումը (300-500 կմ/ժ) և էլեկտրիֆիկացման¹ մակարդակի բարձրացումը նպաստում են տրանսպորտի այս տեսակի մրցունակության մեծացմանը: Ցամաքում մեծածավալ բեռների փոխադրման գործում, հատկապես մեծ հեռավորության վրա, երկաթուղային տրանսպորտի դերն անփոխարինելի է:

Աշխարհում երկաթուղիներով ամենաապահովված երկիրը Գերմանիան է, որտեղ յուրաքանչյուր 1000 կմ² տարածքին թվաբանորեն ընկնում է 125 կմ երկաթուղի: Առաջավորների շարքում են նաև Բելգիան, Ճապոնիան, Ֆրանսիան:

Երկաթուղիների էլեկտրիֆիկացման բարձր մակարդակով առանձնանում են Ճապոնիան և Արևմտյան Եվրոպայի երկրները, որտեղ էլեկտրաքարշներով է աշխատում երկաթգծերի շուրջ 50%-ը: Այդ ցուցանիշով աշխարհի ռեկորդակիրը Շվեյցարիան է, որտեղ էլեկտրիֆիկացված է երկաթգծերի 100%-ը: Այդպիսին են նաև Հայաստանի երկաթգծերը:

Ավտոմոբիլային տրանսպորտը ժամանակակից աշխարհում արագ զարգացող ճյուղ է: Ավտոմոբիլային ճանապարհների կառուցումը երկաթուղիների համեմատ ավելի էժան և ընդգրկուն է: Եթե երկաթուղիների կառուցումը հնարավոր և էժան է հարթավայրերում և մեղմաթեք ռելիեֆ ունեցող տարածք-

1. Թանկ դիզելային վառելիքով աշխատող ջերմաքարշների փոխարինումը ավելի էժան, բարձր արդյունավետ ու հզոր էլեկտրաքարշներով:

Ներում, ապա ավտոճանապարհներ կառուցվում են նույնիսկ դժվարամատչելի լեռնային շրջաններում՝ հիմք ստեղծելով այդ տարածքների տնտեսական յուրացման համար: Ավտոմոբիլային տրանսպորտը կարճ տարածությունների վրա բնակավայրերի, արտադրական ձեռնարկությունների միջև ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների գործում անփոխարինելի է:

Ցամաքային հաղորդակցության «արյունատար անոթների» ամենախիտ ցանցը կազմում են ավտոճանապարհները, որոնց ընդարձակման ու բարելավման, ավտոմեքենաների բեռնատարողության ավելացման շնորհիվ աստիճանաբար մեծանում է ավտոտրանսպորտի դերը նաև հեռավոր տարածությունների վրա բեռնափոխադրումների գործում:





Բազմամակարդակ ավտոճանապարհային հանգույց (ԱՄՆ)

Ավտոմոբիլային ճանապարհների երկարության քանակական աճը չի ուղեկցվում ճանապարհների որակի համաչափ բարձրացմամբ: Բարձրորակ ճանապարհները ավտոճանապարհային համաշխարհային ցանցի դեռևս չնչին մասն են կազմում: Զարգացած երկրներից (ԱՄՆ, արևմտաեվրոպական երկրներ, Ճապոնիա) բացի՝ վերջին տասնամյակում բարձրորակ ավտոճանապարհներ ինտենսիվորեն սկսել են կառուցել նաև նոր արդյունաբերական երկրներում (Բրազիլիա, Թուրքիա և այլն): Ավտոտրանսպորտով է կատարվում աշխարհի ուղևորաշրջանառության 80%-ը (գծապատկեր):

Ավտոմոբիլային պարկն աշխարհում անհավասարաչափ է տեղաբաշխված: Աշխարհի ավտոմեքենաների 2/3-ը կենտրոնացած է Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում:

Աշխարհի տրանսպորտի ուղևորաշրջանառությունը և բեռնաշրջանառությունը, 2010 թ.



Խողովակաշարային տրանսպորտն արագ զարգացող ենթաճյուղ է, դրա դերը բացառիկ է հեղուկ և գազային վառելիքային ռեսուրսները (նավթ, բնական

գազ) հանքավայրերից և դրանց ներկրման նավահանգիստներից փոխադրելու գործում: Խողովակաշարերը բեռնափոխադրման հուսալի միջոցներ են, դրանցով բեռների փոխադրումն անընդհատ, անխափան և ավելի էժան է, բացի դրանից՝ դրանց վրա չեն ազդում եղանակային պայմանների փոփոխությունները: Վերջին ժամանակներս ավելի ու ավելի շատ խողովակաշարեր կառուցվում են նաև ծովերի հատակին (օրինակ՝ Հյուսիսային, Միջերկրական, Բալթիկ, Սև):

Խողովակաշարային տրանսպորտով կատարվող բեռնաշրջանառության կեսը պատկանում է ԱՄՆ-ին:

Նավթամուղների և գազամուղների հզոր ցանց ունեն նաև Ռուսաստանն ու Կանադան, իսկ գազամուղների՝ նաև Գերմանիան և Ֆրանսիան:

Նավթամուղների խիտ ցանց կա նաև Մեքսիկական ծոցի հյուսիսային՝ ԱՄՆ-ին պատկանող, ափամերձ շրջաններում:

Էլեկտրոնային տրանսպորտը բարձր լարման էլեկտրահաղորդման գծերն են, մալուխային (կաբելային) կապը և հեռակապի մյուս միջոցները: Հավանաբար ձեր աչքից չեն վրիպել բնակավայրերում, ճանապարհներին ու լեռնալանջերին որոշակի համաչափ դասավորությամբ միմյանց հաջորդող էլեկտրասյուները, որոնց վրայով անցկացված էլեկտրահաղորդման գծերով էլեկտրակայանների արտադրած էլեկտրական էներգիան հասցվում է սպառողին:

Շատ երկրներում բարձր լարման էլեկտրահաղորդման գծերը կազմում են մեկ միասնական ցանց, որը հաճախ միացվում է հարևան պետությունների համանման ցանցին:

Ջրային տրանսպորտը դեռևս հնագույն ժամանակներից կարևոր դեր է կատարել տարբեր տարածքների միջև գետերով, լճերով և համաշխարհային օվկիանոսի ջրերով էժան և մեծածավալ բեռնափոխադրումների գործում:

Ջրային տրանսպորտը բաժանվում է երկու ճյուղի՝ **ծովային** և **ներքին ջրային (գետալճային)**: Ծովային տրանսպորտի դերն ավելի մեծ է միջազգային, իսկ գետալճայինի դերը՝ ներքին փոխադրումներում:

Ծովային տրանսպորտի կարևորությունը և արագ զարգացումը արդի աշխարհում պայմանավորված են առաջին հերթին աշխատանքի միջազգային բաժանման առանձնահատկություններով:

Դուք արդեն գիտեք, որ էներգակիրների և հումքի արդյունահանման համաշխարհային նշանակություն ունեցող շրջանները և մշակող արդյունաբերության գլխավոր կենտրոնները հաճախ տեղաբաշխված են իրարից շատ հեռու, նույնիսկ տարբեր աշխարհամասերում ու երկրներում: Դրանց միջև կատարվում է բեռների մեծածավալ փոխադրում, իսկ ծավալուն բեռների փոխադրումը ձեռնտու է կատարել խոշոր, մեծ տարողություն ունեցող նավերով: Այդ իսկ պատճառով միջազգային բեռնափոխադրումների մեծ մասն իրականացվում է ծովային տրանսպորտի միջոցով:

Տեղափոխվող բեռների ծավալով առանձնանում են մինչև 550 հազ. տ բեռնատարողությամբ նավթատար նավերը, որոնք, լինելով էժան փոխադրամիջոցներ, միաժամանակ էկոլոգիապես վտանգավոր են: Երբեմն այս նավերի վթարները համաշխարհային օվկիանոսի հազարավոր քառակուսի կիլոմետր մակերես ծածկում են նավթային թաղանթով՝ առաջացնելով էկոլոգիական աղետներ օրգանական աշխարհի, մերձափնյա երկրների նավահանգիստների ու լողափերի համար:

Ծովային տրանսպորտում արագորեն աճում է հատուկ **բեռնախցիկներով (կոնտեյներ)** մեծածավալ չոր բեռների փոխադրման ծավալը: Բեռնախցիկներով փոխադրումն առանձնանում է բեռնաբարձման և բեռնաթափման արագությամբ, հետևաբար՝ ցածր արժեքով: Աշխարհի ամենամեծ նավը միանգամից կարող է տեղափոխել 7,5 հազար բեռնախցիկ:

Հարկեր քիչ վճարելու, նավի շահագործման համար էժան աշխատուժ վարձելու նպատակահարմարությունից ելնելով՝ աշխարհի նավերի մոտ կեսը լողում է օտար երկրների դրոշների ներքո: Դրա հետևանքով աշխարհի ամենահզոր ծովային առևտրային նավատորմ գրանցված է ոչ մեծ երկրներ Պանամայում և Լիբերիայում:

Ներքին ջրային (գետալճային)


տրանսպորտի դերը մեծ է ներքին բեռնափոխադրումների գործում:

Լճերի, ինչպես նաև նավարկելի այլ գետերի հետ բնական ուղիներով կամ ջրանցքներով կապվելով՝ համեմատաբար մեծանում է ջրառատ հարթավայրային գետերով կատարվող բեռնափոխադրման հեռավորությունը: Օրինակ՝ Միսիսիպի գետով, Մեծ լճերով և Սուրբ Լավրենտիոս գետով կարելի է Մեքսիկական ծոցից նավարկել մինչև Կանադայի արևելք: Գետային տրանսպորտով բեռների փոխադրումը ավելի էժան է, քան երկաթուղով կամ ավտոտրանսպորտով:

Օդային տրանսպորտը տրանսպորտի նոր և արագ զարգացող ճյուղ է: Այն անփոխարինելի է համեմատաբար մեծ հեռավորությունների վրա ուղևորների, ինչպես նաև թանկարժեք ու «շտապ» բեռների փոխադրումների գործում:



ժամանակակից նավթատար նավ



Բեռնախցիկներ տեղափոխող նավ

Օդային ուղիների ցանցն անընդհատ ընդլայնվում է, իսկ չվերթերի հաճախությունը՝ աճում: Տրանսպորտի այս տեսակը երբեմն միակն է Ռուսաստանի



Տեսարան Լոնդոնի «Հիթրոու» միջազգային օդանավակայանից

Սիբիրի, Կանադական Արկտիկայի՝ ցամաքային ուղիներից գրեթե զուրկ հսկայական տարածքների համար:

Օդային տրանսպորտով ներկայումս տարեկան փոխադրվում է ավելի քան 1,5 մլրդ ուղևոր, ընդ որում՝ այս ցուցանիշը տարեցտարի աճում է:

Օդային տրանսպորտի դերը մեծանում է բնական աղետների (անտառային հրդեհներ, երկրաշարժեր, տեխնածին աղետներ) շրջաններ մարդասիրական օգնության բեռների, անհրաժեշտ տեխնիկայի փոխադրման գործում:

Օդային տրանսպորտի զարգացումը պայմանավորված է նաև աշխարհի օդանավերի հիմնական արտադրող «Բոինգ», «Էյրբաս» և այլ ընկերությունների կողմից քիչ ծախսատար խոշոր օդանավերի ու ժամանակակից ծառայություններով հագեցած միջազգային կարգի օդանավակայանների կառուցմամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է տրանսպորտի և կապի նշանակությունը հասարակական կյանքի տարածքային կազմակերպման գործում:
2. Ի՞նչ ուղղություններով են զարգանում տրանսպորտի և կապի միջոցները արդի աշխարհում:
3. Որո՞նք են տրանսպորտի զարգացման մակարդակը և աշխատանքի արդյունքները բնութագրող ցուցանիշները:
4. Երկրի երկաթուղիներով բեռնափոխադրման միջին հեռավորությունը 250 կմ է, իսկ փոխադրվող բեռների տարեկան ծավալը՝ 35 մլն տոննա, համապատասխանաբար՝ ուղևորափոխադրման միջին հեռավորությունը 160 կմ է, իսկ տեղափոխվող ուղևորների թիվը՝ 280 հազ. մարդ: Որոշե՞ք տրված երկրի բեռնաշրջանառությունը և ուղևորաշրջանառությունը:
5. Համեմատե՞ք համաաշխարհային տրանսպորտի հիմնական տեսակների ցուցանիշները և տեղաբաշխման առանձնահատկությունները:
6. Մեկ ավտոմեքենան միջին հաշվով տարեկան կլանում է 4 տոննա թթվածին և մթնոլորտ է արտանետում 800 կգ ածխածնի օքսիդներ: Մոտավորապես հաշվարկե՞ք ՀՀ-ում կամ ձեր բնակավայրում ավտոմեքենաների կողմից արտանետվող ածխածնի օքսիդների քանակը: Ի՞նչ միջոցառումներ կառաջարկեի՞ք՝ ավտոտրանսպորտի կողմից օդի աղտոտումը նվազեցնելու համար:

ԴԱՍ 26. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Տրանսպորտային միջազգային ուղիներ: Համաշխարհային տրանսպորտային ցանցի գլխավոր՝ առավել բանուկ հատվածները տրանսպորտային միջազգային ուղիներն են: Դրանք ապահովում են տարբեր տարածաշրջանների ու երկրների միջև բեռների և ուղևորների մեծածավալ փոխադրումը՝ ապահովելով համաշխարհային շուկայի ձևավորումն ու աշխատանքի միջազգային բաժանումը:

Դեռևս հին և միջին դարերում եվրոպայում ու Ասիայում կառուցվել են միջպետական նշանակության ճանապարհներ, որոնցից առանձնանում են Հռոմեական կայսրության տարածքում կառուցված ճանապարհային ամբողջական համակարգերը՝ կամուրջներով, ճանապարհների պահպանության և շահագործման ծառայություններով, ինչպես նաև նշանավոր «Մետաքսի ճանապարհը», որը, անցնելով եվրոպական, ասիական մի շարք երկրներով, այդ թվում նաև միջնադարյան Հայաստանի տարածքով՝ կարևոր նշանակություն է ունեցել դրանց զարգացման գործում:



Շանհայի ծովային նավահանգիստը

Ծովային ուղիներ: Արդի աշխարհում տրանսպորտային միջազգային բեռնափոխադրումների մեծ մասն իրականացվում է ծովային ուղիներով, որի վկայությունը տրանսպորտի ծովային բեռնաշրջանառության ցուցանիշներն են: Ատլանտյան օվկիանոսում է ձևավորվել ծովային ուղիների ամենախիտ ցանցը: Ծովային այս ուղիների միջոցով միմյանց հետ կապված են Ատլանտիկայի առափնյա պետությունների շուրջ 1700 նավահանգիստներ: Վերջին տարիներին ծովային նավահանգիստների բեռնաշրջանառության առաջատար դիրքերը Ատլանտյան օվկիանոսի նավահանգիստներից (Ռոտերդամ, Նոր Օռլեան, Հյուսթոն, Ռիո դը ժանեյրո) փոխանցվել են Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի նավահանգիստներին (Շանհայ, Սինգապուր, Նինբո): Երկար տարիներ բեռնաշրջանառության դրոշակակիր համարվող **Ռոտերդամ** նավահանգիստն իր դիրքերը զիջել է **Սինգապուրին**, իսկ այժմ՝ նաև **Շանհային**: Վերոնշյալ փոփոխությունների պատճառն այն է, որ վերջերս Հնդկական և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանների նոր արդյունաբերական երկրներում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն աճել է ավելի մեծ չափով, քան զարգացած երկրներում, ինչի հետևանքով տեղի է ունենում աշխարհի խոշորագույն նավահանգիստների յուրատեսակ «գաղթ» դեպի այս տարածաշրջան:

Ատլանտյան օվկիանոսի ծովային ուղիներով փոխադրվող բեռների զգալի մասը կազմում են մերձավորարևելյան, հյուսիսաֆրիկյան նավթն ու նավթա-

մթերքները, լատինամերիկյան հանքային հումքը և եվրոպական զարգացած երկրների, ԱՄՆ-ի ու Կանադայի մեքենաշինական ու քիմիական արդյունաբերության արտադրանքը և գյուղատնտեսական մթերքը: Ատլանտյան օվկիանոսով ուղևորների փոխադրման ծավալը նույնպես մեծ է: Այստեղով են անցնում ծովային զբոսաշրջության համաշխարհային գլխավոր երթուղիները:

Ծովային ուղիների լայն ցանց ունի նաև Հնդկական օվկիանոսը: Այստեղով են անցնում Հարավային Ասիայի ու Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի նավահանգիստները Եվրոպայի, Ավստրալիայի և Աֆրիկայի հետ կապող ծովային ճանապարհները: Այս ճանապարհների հիմքի վրա կառուցվել են Ժամանակակից ենթակառուցվածքներով ու տեխնիկայով հագեցած խոշոր նավահանգիստներ Հարավային Ասիայի ծովափերին (Մումբայ, Կարաչի), Չինաստանի արևելյան առափնյա գոտում (Շանհայ, Տյանին (Տյանցզին) և այլն) և Սինգապուրում:



Սուեզի ջրանցքը

Ատլանտիկա ջրի մեջ մինչև 13 մ ընկղմված ծովային նավերն անցնում են Սուեզի ջրանցքով, իսկ գերխոշոր լցանավերը՝ Աֆրիկյան շրջանցելով:

Խաղաղ օվկիանոսի ափերից ծովային ճանապարհների անընդհատ ընդլայնվող ցանցը Ճապոնիայի, Կորեայի Հանրապետության և հատկապես ԱՄՆ-ի արևմտյան առափնյա շրջանների ու Չինաստանի տնտեսության շարունակական աճող պահանջարկի արդյունք է:

Ծովային նավագնացության զարգացման գործում կարևոր դեր են կատարում միջազգային ծովային ջրանցքներն ու նեղուցները: Ամենաբանուկը Սուեզի ջրանցքն է: Այն շահագործման է հանձնվել 1869թ. և հնարավորություն է տալիս նավերին, առանց Աֆրիկյան շրջանցելու, կարճ ուղիով Միջերկրական ծովից անցնել Կարմիր ծով, ապա՝ Հնդկական օվկիանոս և ընդհակառակը: Յուրաքանչյուր տարի ջրանցքով անցնում են 25 հազարից ավելի նավեր, որոնք տեղափոխում են 250 մլն տ քեռ:

Իր նշանակությամբ երկրորդը Պանամայի ջրանցքն է, որը միացնում է Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսները: Բալթիկ ծովում իր նշանակությամբ առանձնանում է Քիլի ջրանցքը:

Հնդկական օվկիանոսի ծովային ուղիներով Պարսից ծոցի երկրներից դեպի Եվրոպա ու Ճապոնիա են փոխադրվում գլխավորապես նավթ և նավթամթերք, իսկ Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի նոր արդյունաբերական երկրներից՝ մեքենաշինական արտադրանք ու գյուղատնտեսական մթերք:

Հնդկական օվկիանոսից դեպի

Շատ մեծ է նաև ծովային նեղուցների նշանակությունը: Ամենաբանուկ միջազգային ծովային ուղիներն անցնում են Լա Մանշի, Մալակայի, Զոնդյան¹, Զիբրալթարի, Հորմուզի, Պա դը Կալեի, Ֆլորիդայի, Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներով:

Համաշխարհային տնտեսության ձևավորման և զարգացման գործում մեծ դեր ունեն միջազգային նշանակության երկաթուղիները: Չնայած կրճատման արդի միտումներին՝ երկաթուղիները, ընդհանուր առմամբ, շարունակում են ցամաքային ուղիներով բեռնափոխադրումներում պահպանել իրենց առաջատար դերը, իսկ առանձին տարածաշրջաններում նույնիսկ ընդլայնվում է երկաթուղային ցանցը:

Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի միջազգային երկաթուղային մայրուղիները, անցնելով տասնյակ խոշոր քաղաքներով, Հյուսիսային և Բալթիկ ծովերի նավահանգիստները կապում են Միջերկրական և Սև ծովերի նավահանգիստներին: Եվրասիա և Հյուսիսային Ամերիկա մայրցամաքներում նույն տիպի գործառույթ են կատարում արևմուտքից արևելք ձգվող երկաթուղիները:

Երկաթուղային միասնական ցանց ունեն Հյուսիսային Ամերիկայի երեք խոշոր և Հարավային Ամերիկայի՝ Ատլանտյան օվկիանոսի առափնյա երկրները:

Միջազգային երկաթուղային հաղորդակցության համար լուրջ խոչընդոտ է տարբեր երկրներում երկաթուղային գծերի լայնությունների տարբերությունը, որի հետևանքով լրացուցիչ տեխնիկական խնդիրներ են առաջանում սահմանակից երկրների միջև երկաթուղիների շահագործման ժամանակ: Անհրաժեշտ է լինում սահմանային կայարաններում փոխել վագոնների անիվները՝ դրանց լայնությունը համապատասխանեցնելով հարևան երկրի երկաթգծերին:

Երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտներով միջազգային հա-



Երկաթուղային ժամանակակից շարժակազմ



Երկաթուղային շարժակազմեր փոխադրող լաստանավ

1. Զոնդյան նեղուցով կարող են անցնել ջրում մինչև 28 մ, իսկ Մալակայի նեղուցով՝ մինչև 12 մ խորությամբ ընկղմված նավերը:

ղորդակցության կարևոր օղակ են **լաստանավային փոխադրումները**: Լաստանավերի միջոցով ամբողջ երկաթուղային շարժակազմեր (գնացքներ), փոխադրվում են «ափից ափ», իսկ ափ հասնելով՝ երկաթուղային գնացքները լաստանավի ռելսերից փոխադրվում են ցամաքային ռելսերի վրա և շարունակում իրենց ուղին մինչև նշանակետ: Այսպիսով՝ լաստանավային հաղորդակցությունը իրար է միացնում ցամաքային տարբեր մասերի երկաթուղային համակարգերը՝ ձևավորելով միասնական համակարգ: Լաստանավային կապ կա, օրինակ, Սև ծովի (Օդեսա և Փոթի) ու Կասպից ծովի (Բաքու և Թուրքմենբաշի) նավահանգստային քաղաքների միջև: Վրաստանի Փոթի և Ռուսաստանի Կավկազսկայա նավահանգիստների միջև գործող լաստանավային փոխադրումներից օգտվում է նաև մեր հանրապետությունը:

Ջարգացած երկրների երկաթուղիների կրճատման միտումին հակառակ՝ ընդլայնվում է միջազգային նշանակության երկաթուղիների աշխարհագրությունը: Առաջիկա 15-20 տարում նախատեսվում է կառուցել շուրջ 10 հազ. կմ այդպիսի երկաթուղիներ: Դրանցից առանձնանում են «Մեծ մետաքսի ճանապարհը» (Ստամբուլ – Տոշքենդ – Բեյջին) և «Ասիական-խաղաղօվկիանոսյան մայրուղի» (Սինգապուր – Բանգկոկ – Բեյջին – Յակուտսկ – Բերինգի նեղուցի ջրերի տակ կառուցվելիք թունելով – Վանկուվեր – Սան Ֆրանցիսկո) միջազգային նշանակության երկաթուղիների, ինչպես նաև Ջիբրալթարի նեղուցի տակով Իսպանիայի և Մարոկկոյի երկաթուղիները միացնող ստորջրյա թունելի նախագծերը:

Ժամանակակից ցամաքային հաղորդակցության ուղիների համակարգում միջազգային ավտոմոբիլային ուղիների նշանակությունը մեծանում է՝ կապված ավտոտրանսպորտի միջոցով բեռնափոխադրումների միջին հեռավորությունների մեծացման և միջազգային չափանիշներով միջպետական մայրուղային ճանապարհաշինության զարգացման հետ:

Միջազգային ավտոուղիների միասնական խիտ ցանց է ձևավորվել Արևմտյան Եվրոպայում (Ֆրանսիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա և այլն) և Հյուսիսային Ամերիկայում (ԱՄՆ, Կանադա):



Պանամերիկյան մայրուղու ճանապարհահատված

Եվրոպայի ավտոուղիների միասնական ցանցին միջպետական ճանապարհներով միացած է նաև Հայաստանը, ինչը հնարավորություն է տալիս եվրոպական որևէ երկրից ավտոմեքենայով անարգել հասնել Հայաստան:

Ամերիկա աշխարհամասում նշանավոր Պանամերիկյան մայրուղին միասնական ճանապարհային ցանցի


մեջ միավորում է Հյուսիսային և Հարավային Ամերիկաների մայրուղիները, որոնք Այսակայից հասնում են Արգենտինայի հարավ:

Աշխարհի օդային ուղիների աշխարհագրությունը որոշվում է միջազգային օդանավակայանների աշխարհագրությամբ:

Միջազգային նշանակության օդային ուղիները հիմնականում ձգվում են Եվրոպայի և ԱՄՆ-ի օդանավակայաններից դեպի աշխարհի այլ տարածաշրջանների, հատկապես Արևելյան Ասիայի, Մերձավոր Արևելքի, Հարավային Ամերիկայի օդանավակայաններ:

Օդային ուղիների խոշորագույն հանգույցներ են Չիկագոն, Նյու Յորքը, Տոկիոն, Լոնդոնը, Փարիզը, Վիեննան, Մոսկվան, Սեուլը, Սինգապուրը:

Միջպետական խողովակաշարերը միջազգային տրանսպորտային համակարգի բաղադրիչներից են: Ռուսաստանից, Պարսից ծոցից, Կենտրոնական Ասիայից, Հյուսիսային Աֆրիկայից և Մեքսիկական ծոցից ձգվող նավթամուղներն ու գազամուղները վառելիքային ռեսուրսների միջազգային բեռնափոխադրումների կարևոր և ռազմավարական նշանակություն ունեցող ուղիներ են: Խողովակաշարերի մեծ մասն ուղղված է դեպի Եվրոպա, ընդ որում՝ որոշ խողովակաշարեր անցնում են Միջերկրական ու Սև ծովերի հատակով, հասնում են Իտալիա, իսկ այնտեղից՝ Գերմանիա ու Ֆրանսիա:



Ստորջրյա գազամուղի կառուցում

Միջպետական խողովակաշարերի ցանցը նույնպես ընդլայնվում է: Մասնավորապես մեր տարածաշրջանում նոր կառուցված խողովակաշարերից են Իրան-Հայաստան գազամուղը, Ռուսաստանից Սև ծովի հատակով Թուրքիա հասնող գազամուղը, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը:

Միջազգային տրանսպորտային հաղորդակցությանը մեծապես նպաստում է **տրանսպորտային միջանցքների** ստեղծումը: Տրանսպորտային միջանցքներ են համարվում այն մայրուղիները, որոնք օգտագործվում են պետությունների միջև անարգել և ուղղակի բեռնափոխադրումներ իրականացնելու համար: Այդպիսի տրանսպորտային միջանցքներ են ստեղծված Եվրամիության անդամ երկրների միջև:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ նշանակություն ունեն միջազգային տրանսպորտային ուղիները համաշխարհային տնտեսության զարգացման համար:
2. Որո՞նք են միջազգային ծովային ուղիների զարգացման միտումները:

3. Ինչպիսիք է միջազգային ծովային ջրանցքների և նեղուցների դերակատարությունը համաշխարհային բեռնափոխադրումների գործընթացում:
4. Գնահատե՞ք երկաթուղիների նշանակությունը միջազգային բեռնափոխադրումների գործընթացում: Միջազգային երկաթուղային փոխադրումների կազմակերպման գործում ի՞նչ դժվարություններ կան:
5. Բնութագրե՞ք միջազգային ավտոձանապարհների և օդային ուղիների ցանցի զարգացման միտումները և աշխարհագրությունը:
6. Դասարանի աշակերտներով բաժանվե՞ք խմբերի և քննարկե՞ք, թե ինչո՞ւ խողովակաշարային միջազգային ուղիներն ունեն ռազմավարական նշանակություն:
7. Ի՞նչ նպատակով է ստեղծվում տրանսպորտային միջանցքը:

ԴԱՍ 27. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՃՅՈՒՂԵՐԸ

Ոչ արտադրական ոլորտի ճյուղեր: Յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսությունը, ինչպես նաև ամբողջությամբ՝ աշխարհի բոլոր երկրների տնտեսությունը (համաշխարհային տնտեսությունը) կազմված են ոչ միայն արտադրական, այլ նաև ոչ արտադրական ճյուղերից: Դրանք սպասարկում են բնակչությանը, այսինքն՝ նրան մատուցում են տարբեր տեսակի ծառայություններ և այդ պատճառով էլ անվանվում են **սպասարկման կամ ծառայությունների ոլորտի ճյուղեր:**

Սպասարկման ոլորտի ճյուղերը թեև նյութական արտադրանք չեն տալիս, սակայն նպաստում են նյութական արտադրության արագ զարգացմանը: Սպասարկման ոլորտի ճյուղերը մեծ դեր են կատարում նաև բնակչության զբաղվածության ապահովման գործում: Եթե ավտոմատացման, մեքենայացման, էլեկտրոնայնացման շնորհիվ նյութական արտադրության բնագավառում աշխատավորների թիվը հարաբերականորեն կրճատվում է, ապա ծառայու-



Զբոսաշրջության հանգրվան Սեյշելյան կղզիներում

թյունների ոլորտում, ընդհակառակը՝ աճում է: Աշխատուժի հոսքը՝ աշխատավորների փոխադրումը նյութական արտադրության ոլորտից՝ արդյունաբերությունից և գյուղատնտեսությունից, ուղղված է դեպի սպասարկման ոլորտ: Այս գործընթացն ավելի վաղ է սկսել ու ավելի արագ է ընթացել առավել բարձր զարգացած հետարդյունաբերական երկրներում: Ներկայումս սպասարկման ոլորտի ճյուղերում է

զբաղված այդ երկրների աշխատանքային ռեսուրսների կեսից ավելին, իսկ ԱՄՆ-ում՝ նույնիսկ 70%-ը:

Սպասարկման ոլորտի ճյուղերում է ստեղծվում նաև բարձր զարգացած երկրների ամբողջ ազգային եկամտի գերակշիռ մասը (օրինակ՝ ԱՄՆ-ում՝ 60%-ը): Իսկ զարգացող երկրներում այդ բաժինը, որպես կանոն, դեռևս շատ փոքր է, թեպետ ունի աճի միտում: Սպասարկման ոլորտի բաժինը համեմատաբար մեծ է զարգացած զբոսաշրջություն ունեցող երկրներում (օրինակ՝ Սեյշելյան և Մալդիվյան կղզիներում):

Ծառայությունները ներկայումս ընդգրկում են հասարակության բոլոր բնագավառները: Դրանց առավել հին ու ավանդական ձևերը բավարարում են մարդու պահանջունքները, ուստի անվանվում են սպառողական ծառայություններ: Այդ ծառայությունների զարգացմամբ է պայմանավորված մարդկանց առողջական, հանգստի, կրթական, մշակութային և կենցաղային սպասարկման վիճակը:

Կրթության դերը շատ մեծ է երկրի տնտեսության զարգացման գործում: Նյութական արտադրության ճյուղերի համար կրթությունը պատրաստում է աշխատանքային կադրեր: Զարգացած երկրներում կրթությունը մատչելի է բնակչության բոլոր խավերին, ինչի շնորհիվ դպրոցական և ավելի բարձր տարիքի մարդիկ գրեթե ամբողջությամբ գրագետ են:


Զարգացող երկրներում բնակչության մեծ մասի չքավորության հետևանքով կրթությանը հատկացվող ծախսերի բաժինը փոքր է: Այդ երկրներում բնականաբար փոքր է նաև դպրոցում ընդգրկված երեխաների բաժինը: Օրինակ՝ Ջիբութի պետությունում տարրական դպրոցում սովորում է այդ տարիքի երեխաների շուրջ 35, իսկ միջնակարգ դպրոցում՝ 12%-ը:

Կրթության տարբեր մակարդակի հաստատություններ տարբեր կերպ են տեղաբաշխված: Տարրական դպրոցներ կան գրեթե բոլոր բնակավայրերում (բացառությամբ շատ փոքրերի), իսկ միջնակարգ դպրոցներ՝ համեմատաբար մեծ գյուղերում և բոլոր քաղաքներում: Բարձրագույն ուսումնական հաստատություններ կան շատ քաղաքներում, իսկ միջազգային նշանակության հաստատություններ կան որոշ քաղաքներում, օրինակ՝ **Օքսֆորդում, Քեմբրիջում, Մարսելում, Բոստոնում**:



Քեմբրիջի համալսարանը

Ծառայության ոլորտի կառուցվածքը



Առողջապահությունը մատչելի է Հնդկաստանի բնակչության միայն փոքր մասին:

Առողջապահության դերը բացառիկ մեծ է բնակչության վերարտադրության և աշխատանքային ռեսուրսների աշխատունակության պահպանման գործում: Յուրաքանչյուր երկրի կառավարություն, իր հնարավորությունների սահմաններում, առողջապահությանը հատկացնում է պետական բյուջեի որոշ մասը: Օրինակ՝ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը 16% է, Մեծ Բրիտանիայում՝ 14,0%, Հայաստանում՝ 6,3%, Հնդկաստանում՝ 1,6%, իսկ Պակիստանում՝ էլ ավելի փոքր, 1%:

Ծայրահեղ հետամնաց երկրներում, առողջապահական հիմնարկների ու բժիշկների պակասի հետևանքով, բնակչությունը գրկված է բավարար բուժսպասարկումից: Այդ պատճառով էլ, օրինակ, Աֆղանստան, Նիգեր և Չադ պետություններում նորածինների միայն 15%-ն է ծնվում ծննդատներում:

Կրթական և առողջապահական ծառայությունների մատուցման մակարդակը տարբեր է ոչ միայն տարբեր երկրների, միևնույն երկրի տարբեր շրջանների, քաղաքի և գյուղի, այլև երկրի տղամարդկանց ու կանանց միջև: Մասնավորապես Չինաստանում, Հնդկաստանում, ինչպես նաև գլխավորապես մահմեդականություն դավանող երկրներում, որտեղ կանանց նկատմամբ արժանի վերաբերմունք չի ցուցաբերվում, դպրոց հաճախող, գրագետ և բուժսպասարկումից օգտվող կանանց բաժինն զգալիորեն ցածր է, քան տղամարդկանցը:

Ֆինանսավարկային հիմնարկները ֆինանսավորում են նյութական արտադրության ճյուղերը՝ նպաստելով արտադրության ընդլայնմանը:

Ոչ արտադրական ոլորտի եկամտաբեր և արագ զարգացող ճյուղ է մարդկանց **հանգստի կազմակերպումը (ռեկրեցիան)**, հատկապես **զբոսաշրջությունը**:

Զբոսաշրջությունը, որն իրականացվում է երկրի սահմաններում, կոչվում է **ներքին**, իսկ որն իրականացվում է միջպետական մակարդակով, կոչվում է **միջազգային**: Ֆինանսական միջոցների ձևավորման տեսակետից ավելի նշանակալի է միջազգային զբոսաշրջությունը (տե՛ս «Միջազգային տնտեսական հարաբերություններ» թեման):

Ներկայումս սպասարկման ոլորտում գլխավոր տեսակ են դարձել բազմազան գործարար, հատկապես տեղեկատվական ծառայությունները: Դրանք գիտական, այդ թվում՝ գիտատեխնիկական տեղեկատվություն իրականացնող ծառայություններն են: Գիտատեխնիկական ծառայությունների արդյունքներն են արտոնագրերը (պատենտները)¹ և թույլատրագրերը (լիցենզիաները)²:

Տեղեկատվական հատվածի զարգացման շնորհիվ մարդկությունն այժմ ապրում է տեղեկատվական քաղաքակրթության պայմաններում: Այն, ինչ անցյալում սոսկ ֆանտաստ գրողների երևակայության պտուղ էր, այսօր արդեն իրականություն է: Կտրուկ աճում է համակարգիչներից օգտվող մարդկանց թիվը: Այդպիսի մարդկանց բաժինը շատ բարձր է հետարդյունաբերական երկրներում, մինչդեռ թույլ զարգացած որոշ երկրներում այդ բաժինն աննշան է:

Մեր օրերում երկրի զարգացման մակարդակը գնահատվում է ոչ միայն և ոչ այնքան նյութական արտադրության ծավալով, որքան տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման աստիճանով:

Գիտատեխնիկական մշակումների ծավալները կախված են երկրի գիտատեխնիկական բնագավառում զբաղվածների թվից և գիտատեխնիկական աշխատանքների կատարմանը հատկացվող ծախսերից: Աշխարհում ներկայումս կա շուրջ 5,5 մլն գիտաշխատող, և նրանց մեծ մասը բարձր զարգացած երկրներում է: Օրինակ՝ Ճապոնիայում գիտնականների թիվն ավելի մեծ է, քան Գերմանիայում, Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում միասին, իսկ ԱՄՆ-ում ավելի մեծ է, քան թվարկված 4 երկրում միասին:




Տեղեկատվական դարաշրջանի խորհրդանիշ համակարգիչը

1. **Արտոնագիրը** (պատենտը) հայտնագործության գրանցման և հայտարարողին այդ հայտնագործության օգտագործման հեղինակային իրավունք տրամադրող վկայական է:

2. **Թույլատրագիրը** (լիցենզիան) արտոնագրված հայտնագործության օգտագործման թույլտվություն է:

Գիտատեխնիկական գիտելիքների շուկայում, լիցենզիաներից բացի՝ վաճառում են նաև նոր արտադրության յուրացման փորձը, ծառայությունները կամ այսպես կոչված «նոու հաուն»: Այդպիսի մասնագիտացված կազմակերպությունները համապատասխան վճարով այլ երկրներում կազմակերպում են կապի, հատկապես ինտերնետային կապի համակարգեր և շահագործում դրանք: Օրինակ՝ հունական ՕՏԵ կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպել և մինչև վերջերս շահագործում էր «Արմենթելը» (այժմ՝ «Բիլայն»):



Միլեկուլային հետազոտությունների լաբորատորիա Սիլիկոնյան հովտում (Կալիֆոռնիա, Ստենֆորդի համալսարան)

լորտը պետք է լինի մաքուր, առանց աղմուկի, ինչպես նաև հանգստի և մարմնակրթության համար նպաստավոր պայմաններով: Բացի նշվածից՝ գիտաշխատողները պետք է նաև հնարավորություն ունենան կարճ ժամանակահատվածում (20–30 րոպեում) հասնելու մոտակա խոշորագույն քաղաք՝ տարբեր միջոցառումներին մասնակցելու, գիտական կենտրոնների՝ համալսարանների, տեխնոլոգիական ինստիտուտների հետ շփվելու, մշակութային և սպասարկման այլ ծառայություններից օգտվելու:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս և ինչո՞ւ է փոփոխվում սպասարկման ոլորտի դերը հասարակության կյանքում:
2. Ինչպիսի՞ տարբերություններ կան տարբեր տիպի երկրների ծառայությունների զարգացման մակարդակների միջև: Որո՞նք են այդ տարբերությունների պատճառները:
3. Տեղեկատվական տնտեսությունն ինչո՞վ է տարբերվում արտադրական տնտեսությունից:
4. Որո՞նք են տեղեկատվական տնտեսության տեղաբաշխման առանձնահատկություններն ու կենտրոնները:

ԲԱԺԻՆ VI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 28. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տնտեսական հարաբերություններ» հասկացությունը: Դարերի ընթացքում երկրները միմյանց հետ միջպետական մակարդակով հաստատել են տնտեսական, մշակութային, դիվանագիտական, հումանիտար, գիտական, ռազմատեխնիկական և այլ բնույթի հարաբերություններ: Դրանցից առավել հինն ու կարևորագույնը **տնտեսական հարաբերություններն** են: Տնտեսական հարաբերությունները համաշխարհային տնտեսության ձևավորման, աշխատանքի միջազգային բաժանման և յուրաքանչյուր երկրի տնտեսական առաջընթացի պարտադիր ու գլխավոր պայմանն են:

Ներկայումս համաշխարհային տնտեսական համակարգն այնպիսին է, որ որևէ երկիր չի կարող գոյատևել, առավել ևս՝ առաջընթաց ապահովել, հենվելով միայն իր ներուժի վրա, ինչքան էլ մեծ լինի այդ ներուժը: Նույնիսկ եթե տվյալ երկիրն ունի մեծ տարածք, հարմար աշխարհագրական դիրք, նպաստավոր բնական պայմաններ, անհրաժեշտ բոլոր բնական ռեսուրսներն ու որակյալ աշխատանքային ռեսուրսները, միևնույն է, հարկադրված է ներգրավվել այլ երկրների հետ ակտիվ միջազգային տնտեսական հարաբերությունների մեջ:

Պատմությունից հայտնի են բազմաթիվ օրինակներ, երբ հնում երկրներն ապարդյուն ջանքերով փորձել են գոյատևել՝ մեկուսացված տնտեսություն՝ վարելով, առանց այլ երկրների հետ համագործակցելու: Դրանցից առավել տիպական է Չինաստանի օրինակը: Դարեր շարունակ Չինաստանը ոչ միայն Մեծ պարսպով մեկուսացած էր օտարերկրյա նվաճողներից, այլ նաև «տնտեսական պարսպով» մեկուսացած էր արտաքին աշխարհի առաջադիմության պտուղներից, ինչի հետևանքով XX դարի սկզբին աշխարհի ամենաթույլ զարգացած երկրներից էր: Գիտակցելով միջազգային տնտեսական հարաբերությունների կարևորությունը՝ Չինաստանի նոր կառավարությունը սերտ կապեր հաստատեց բազմաթիվ, այդ թվում՝ նույնիսկ նախկինում թշնամի համարվող երկրների, մասնավորապես Ճապոնիայի և ԱՄՆ-ի հետ: Այդ համագործակցության շնորհիվ վերջին տարիներին Չինաստանի արդյունաբերական արտադրանքի ծավալը կրկնապատկվեց, իսկ շատ ապրանքների արտադրության ծավալով այդ երկիրն աշխարհում առաջինն է:

Միջազգային տնտեսական հարաբերությունների շնորհիվ Չինաստանն արդեն աշխարհի տնտեսապես հզոր երկրորդ երկիրն է, իսկ 2040–45թթ. նույնիսկ կարող է դառնալ առաջինը: Սակայն աշխարհի բոլոր երկրները նման ակտիվությամբ չեն մասնակցում միջազգային տնտեսական հարաբերություններին:

1. Տնտեսվարման այսպիսի ուղղությունն անվանվում է **ավտարկիա**, որը հունարեն նշանակում է **ինքնաբավարարում**:

Միջազգային տնտեսական հարաբերություններին առավել ակտիվորեն մասնակցում են այն երկրները, որոնք արտադրում են մրցունակ ապրանք:



Ապրանքների և ծառայությունների միջազգային ցուցահանդես (Մեծ Բրիտանիա)

ցած երկրները միջազգային շուկա են արտահանում իրենց ամբողջ արտադրանքի մեծ մասը՝ մինչև 2/3-ը: Այդպիսի տնտեսությունը համարվում է **«բաց տնտեսություն»**: Թույլ զարգացած, հատկապես՝ մեծ բնակչությամբ երկրները միջազգային շուկա են արտահանում իրենց ընդհանուր արտադրանքի փոքր մասը՝ շուրջ 1/10-ը: Այդպիսի տնտեսությունը համարվում է **«փակ տնտեսություն»**:

Միջազգային տնտեսական հարաբերություններ զարգացնելու նպատակով թույլ զարգացած որոշ երկրներ իրենց ծովափնյա և սահմանային տարածքներում ձևավորում են **ազատ տնտեսական գոտիներ**: Դրանք հարմար տնտեսաաշխարհագրական դիրք ունեցող քաղաքներ ու շրջաններ են, որտեղ ձեռնարկչության համար հաստատվում են այնպիսի նպաստավոր պայմաններ, որոնք գրավիչ են դառնում օտարերկրյա ֆինանսական, նյութական, տեխ-



Սյամանգում Գոնսան ազատ տնտեսական գոտին (Կորեայի Հանրապետություն)

Մրցունակ է այն ապրանքը, որն ունի բարձր որակ և ցածր գին, կամ էլ՝ երկուսը միասին:

Մրցունակ ապրանքների արտադրությամբ առաջին հերթին առանձնանում են Արևմտյան Եվրոպայի փոքր պետությունները (Բելգիան, Նիդեռլանդները, Լյուքսեմբուրգը, Դանիան և այլն): Դրանց հետևում են Գերմանիան, Ճապոնիան, իսկ մեծ տարածք ու հարուստ ռեսուրսներ ունեցող երկրներից՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը: Բարձր զարգացած

նյութական և աշխատանքային ռեսուրսների համար: Մասնավորապես՝ ձեռնարկություններն ազատվում են հարկերից, որի շնորհիվ ստանում են սովորականից ավելի մեծ շահույթ՝ գերշահույթ:

Միջազգային տնտեսական հարաբերությունները դիտվում են որպես ապրանքների ու ծառայությունների միջազգային առևտուր:

Միջազգային տնտեսական կազմակերպությունները ձգտում են ակ-

տիվացնել երկրների միջև տնտեսական հարաբերությունները, նպաստել բոլոր երկրների տնտեսական առաջընթացին: Նման կազմակերպություններից են, օրինակ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (որի անդամ է նաև Հայաստանի Հանրապետությունը), Արժույթի միջազգային հիմնադրամը, Միջազգային մաքսային միությունը:

Միջազգային տնտեսական հարաբերությունների ձևերը բազմազան են, բայց առավել կարևորներն են հետևյալները:

Արտադրության միջազգային կոոպերացում: Ժամանակակից մեքենաներն ու սարքավորումները շատ բարդ են և, տեխնիկական առումով, դրանց արտադրության կազմակերպումը չափազանց դժվար է ոչ միայն մեկ ձեռնարկությունում, այլև երբեմն նույնիսկ մեկ երկրում: Այդ պատճառով էլ վերազգային կորպորացիաներն¹ այդպիսի մեքենաների մանրամասերի ու հանգույցների **կոոպերացված արտադրությունը** կազմակերպում են տարբեր երկրների ձեռնարկություններում, իսկ մեքենայի վերջնական հավաքումը՝ այդ երկրներից որևէ մեկում: Օրինակ՝ «Էյրբաս» օդանավերի խոշոր մասերի (օրինակ՝ շարժիչների, թևերի) արտադրությունը տեղաբաշխված է ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի 6 երկրի մոտ 20 քաղաքում, այդ թվում՝ վերջնական հավաքումը Ֆրանսիայի Թուլուզ քաղաքում:

Ապրանքների միջազգային առևտուրը միջազգային տնտեսական հարաբերությունների հնագույն ձևն է, որը շարունակում է զարգանալ նաև մեր օրերում: Միայն XX դարի երկրորդ կեսի ժամանակահատվածում ապրանքների համաշխարհային արտահանման ծավալն աճել է գրեթե 90 անգամ՝ շատ ավելի մեծ չափով, քան ապրանքների արտադրության ծավալի աճը:

Փոխվում է արտահանվող ապրանքների կառուցվածքը. աճում է պատրաստի արտադրանքի և, ընդհակառակը՝ նվազում հումքի և պարենի բաժինը: Պատճառն այն է, որ զարգացող երկրներն էլ, զարգացածների օրինակով, ավելի լայնորեն են հումքն օգտագործում պատրաստի ապրանքների արտադրության նպատակով, ինչը բազմաթիվ անգամ եկամտաբեր է, քան հումքը պարզապես վաճառելը:

Համաշխարհային արտահանման մեջ շատ մեծ է զարգացած երկրների բաժինը (2/3), իսկ երկրների տարածաշրջանային միավորումներից՝ Եվրամիության և Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության բաժինը:

Արտաքին առևտրի ամենաբնութագրական ցուցանիշն արտաքին **առևտրի հաշվեկշիռն է (սալդոն)**՝ երկրի արտահանության ու ներկրման ծավալների տարբերությունը **դրամական արտահայտությամբ**: Եթե արտահանության ծավալը գերազանցում է ներկրման ծավալը, ապա առևտրի սալդոն անվանվում է **դրական**, իսկ հակառակ դեպքում՝ **բացասական**:

1. Արտադրական հսկա միավորումները, որոնց ձեռնարկությունների մի մասը տեղաբաշխված է այդ միավորման երկրի ազգային սահմաններից դուրս՝ այլ երկրներում:

Ծառայությունների միջազգային առևտուրն այլ կերպ անվանվում է նաև **միջազգային ծառայությունների մատուցում**: Դա հիմնականում իրականացվում է տրանսպորտային սպասարկման ոլորտում: Օդանավակայանի կամ նավահանգստի կարգավարական (դիսպետչերական) ծառայության ու նավերի վարձույթի համար վճարվում են զգալի գումարներ, որոնք որոշ երկրների (օրինակ՝ Պանամայի և Եգիպտոսի) եկամտի զգալի աղբյուրն են:

Գիտատեխնիկական համագործակցությունը երկրների միջև գիտատեխնիկական գիտելիքների միջազգային փոխանակումն է, ինչպես նաև տիեզերքի նվաճման, բնության պահպանման և այլ ծրագրերի համատեղ մշակումն ու իրականացումը:

Գիտատեխնիկական միջազգային համագործակցության մեծ նախադրյալներ՝ գիտական բարձրորակ կադրեր և գիտական հիմնարկների ցանց ունի նաև Հայաստանի Հանրապետությունը:



Ցամաք – օվկիանոս կապին նվիրված միջազգային գիտագործական համաժողով

Միջազգային ֆինանսական գործունեությունը ներառում է երկրների միջև արժույթների փոխանակումը (օրինակ՝ ՀՀ-ի դրամի փոխանակումը դոլարի կամ եվրոյի) և վարկերի (պարտքերի) տրամադրումը:

Արժույթը և այլ միջոցները, որոնք իրենց տիրոջը կարող են եկամուտ (%) բերել, անվանում են կապիտալ (դրամագլուխ), իսկ մի երկրի կողմից մյուս երկրին դրանք տրամադրելն անվանվում է կապիտալի արտահանում:

Երկրները միմյանց վարկեր են տրամադրում կամ տնտեսության մեջ ներդրումներ կատարում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր միավորումների ու անձանց մակարդակով (հիշենք Քրոք Քրոքորյանի խոշոր ներդրումը Հայաստանի տնտեսության մեջ):

Կապիտալի արտահանման գլխավոր հոսքերն ուղղված են դեպի քաղաքականապես կայուն, զարգացող ու վստահելի երկրներ: Կապիտալ արտահանողը ևս մեծ մասամբ զարգացած երկրներն են, որոնց վերջերս միացել են նաև նավթ արտահանող որոշ երկրներ:

Միջազգային զբոսաշրջությունը ծառայությունների փոխանակման համեմատաբար արագ զարգացող ձև է: Այսպես՝ միայն XX դարի երկրորդ կեսին աշխարհի միջազգային զբոսաշրջիկների թիվն աճել է շուրջ 40 անգամ: Զբոսաշրջության այսպիսի բուռն զարգացման կարևորագույն նախադրյալն աշխարհի, հատկապես զարգացած երկրների բնակչության կենսամակարդակի

ընդհանուր բարձրացումն է, որն իր հերթին մեծացնում է զբոսաշրջության պահանջարկը: Կարևոր դեր են կատարում նաև անձնական օգտագործման ավտոմեքենաներ և տրանսպորտի այլ միջոցներ ունեցող մարդկանց թվի աճը, մարդկանց ազատ ժամանցի մեծացումը, զբոսաշրջության նյութական հիմքի՝ հյուրանոցների, քենփինգների, մոթելների, ավտոբուսների թվի աճը:

Զբոսաշրջության աճը պայմանավորող մյուս նախադրյալը բնակչության պահանջարկը ձևավորող պատճառների փոփոխությունն է: Եթե նախկինում մարդիկ շրջագայում էին զուտ իրենց շրջակա միջավայրը կարճ ժամանակով փոփոխելու բնագրային ձգտմամբ, ապա ներկայումս այդ ձգտմանն ավելացել են նաև մարդկանց աշխատանքի ու կենցաղային պայմանների բարդացումը, նյարդային լարվածության բարձրացումը, քաղաքային պայմաններում ֆիզիկական ուժի վերականգնման հնարավորության գրեթե բացակայությունը: Այդպիսի պայմաններում միայն զբոսաշրջության և հանգստի շնորհիվ են վերացվում լարված աշխատանքի գործընթացում և միապաղաղ կյանքում մարդկանց մեջ առաջացած սթրեսն ու հոգնածությունը:

Վերջապես՝ զբոսաշրջության զարգացման տնտեսական կարևոր պատճառ է նաև այդ ոլորտի բարձր եկամտաբերությունը (մեկ զբոսաշրջիկի հաշվով՝ շուրջ 1000 դոլար եկամուտ): Զբոսաշրջությունը մեծաթիվ երկրների տնտեսության կարևոր հատվածն է: Այդ երկրներում ձևավորվել են զբոսաշրջության տարբեր տեսակի շրջաններ՝ ծովափնյա, լեռնադաշտային և ծովային ճանապարհորդական, քաղաքների այցելության, էկոլոգիական, կրոնական ուսուցանողական և այլն:

Աշխարհի միջազգային զբոսաշրջիկների ընդհանուր թվի մեջ շատ մեծ են Եվրոպայի, այնուհետև՝ Հյուսիսային Ամերիկայի և Ասիայի (հատկապես Չինաստանի և Ճապոնիայի) բաժինները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ դեր են կատարում միջազգային տնտեսական կապերը, ինչքանով են դրանք անհրաժեշտ:
2. Ինչ կապ կա միջազգային տնտեսական հարաբերություններին երկրի մասնակցության աստիճանի ու զարգացման մակարդակի միջև: Ինչ են «բաց» և «փակ» տնտեսությունները:



Պրահան՝ միջազգային զբոսաշրջության կենտրոն

3. Որո՞նք են միջազգային տնտեսական հարաբերությունների գլխավոր ձևերը և հիմնականում ո՞ր տիպի երկրներում են զարգացած:
4. Միջազգային տնտեսական հարաբերությունների ո՞ր ձևերի նախադրյալներ կան Հայաստանի Հանրապետությունում:

ԴԱՍ 29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մեր հանրապետությունն իր ուրույն տեղն ունի ժամանակակից աշխարհում: Արագ փոփոխվող աշխարհում Հայաստանի տեղը, դերը և զարգացման հեռանկարը պայմանավորված են պատմական, աշխարհաքաղաքական, տնտեսական, ժողովրդագրական և այլ գործընթացներով: Աշխարհի մյուս ժողովուրդների նման մենք՝ հայերս, շարունակում ենք կառուցել մեր տունը բայց մեր պատմական հայրենիքի մոտ 1/10 մասի վրա: Մեր հայրենիքը զարգացնելու ու շենացնելու ուղին ընթանում է նյութական և ոչ նյութական արժեքներ (ապրանքներ, ծառայություններ) ստեղծելու և մյուս պետությունների հետ դրանք փոխանակելու միջոցով: Այս ճանապարհով է կազմակերպվում հասարակական կյանքն առհասարակ աշխարհի բոլոր երկրներում:

Ինչպես ամեն մի երկրի, այնպես էլ Հայաստանի զարգացման վրա ազդում են և՛ նպաստող, և՛ խոչընդոտող մի շարք գործոններ: Դրանք են մեր պետության՝

- կտրվածությունը ծովերից,
- շրջապատող երկրների զարգացման ցածր մակարդակը,
- մեր երկրի տարածքով ձգվող միջազգային տարանցիկ ցամաքային ուղիների առկայությունը,
- տարածաշրջանում աշխարհի հզոր պետությունների շահերի հակադրությունը (բախումը):

Այս գործոններից մեզ համար նպաստավոր է միջազգային տարանցիկ ցամաքային ուղիների ոլորտում (խաչմերուկում) գտնվելը: Սակայն հայոց



Մաշտոցի արձանը Մատենադարանի առջև

պետականության երկրորդ միավորի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ սահմանակից Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տրանսպորտային միջպետական ուղիների շրջափակումը մեզ համար նպաստավոր վերոնշյալ գործոնը ժամանակավորապես աննպաստ է դարձրել: Արտաքին աշխարհի հետ Հայաստանի այժմյան առևտրային հարաբերությունները զարգանում են սահմանակից Իրանի

և Վրաստանի հետ պատմականորեն ձևավորված հարևանային բնականոն հարաբերությունների շնորհիվ:

Հայաստանի Հանրապետությունը պետությունը աշխարհում ճանաչված է պաշտոնապես: Նա համաշխարհային հանրության լիիրավ անդամ, միջազգային հարաբերությունների սուբյեկտ, համաշխարհային և տարածաշրջանային զարգացումների լիարժեք մասնակից է, միաժամանակ՝ հայ ժողովրդի բազմադարյան պատմության ժառանգորդը և համայն հայության հայրենիքը:

Հայաստանի ու հայ ժողովրդի տեղն ու դերը աշխարհում պատկերացնելու համար պետք է օգտվենք այս դասընթացում մեր կողմից ուսումնասիրված և քանակական, և որակական գնահատումից:


Սկզբում կատարենք քանակական գնահատում: Հայերն աշխարհի հնագույն ժողովուրդներից են, ովքեր սրանից նույնիսկ 5 հազար տարի առաջ գրադեցրել են Հայկական լեռնաշխարհի (շուրջ 400 հազ. կմ²) մեծ մասը: Հայկական պետությունը տարածքի քանակական ամենաբարձր ցուցանիշներ ունեցել է Տիգրան Բ արքայից արքայի օրոք. տարածքը գերազանցել է 1 մլն կմ²-ը (երկրագնդի ցամաքային մակերևույթի 1,5%-ը)՝ ձգվելով Կովկասյան լեռներից մինչև Կարմիր ծով և Միջերկրականից մինչև Կասպից ծով:

Պատմական անցյալում հայերի առավելագույն թիվը՝ 7 մլն, գրանցվել է XII-XIII դարերում: Դա կազմել է աշխարհի այդ ժամանակվա բնակչության առնվազն 2%-ը:

Հետագայում, հատկապես XIV-XIX դարերում, երբ հայերը չեն ունեցել ազգային պետություն, հայ բնակչության քանակական ցուցանիշները կտրուկ փոխվել են: Աշխարհի հայ բնակչության թիվը XX դարի սկզբին, մինչև հայոց Մեծ եղեռնը, նվազել է մինչև 4,5 մլն, այդ թվում՝ ՀՀ-ի ներկա տարածքում կազմել է մոտ 1 մլն: 1915թ. Օսմանյան Թուրքիայում իրականացված ցեղասպանության հետևանքով բնակչության թիվը նվազեց ևս 1,5 մլն-ով: Թեպետ աշխարհի բոլոր հայերի թիվը ներկայումս հասել է 9-9,5 մլն-ի, բայց աշխարհի բնակչության մեջ հայերի բաժինը նվազել է մինչև 0,13%:

Բնակչության քանակի նվազման, ազգային պետականության կորստի, տարածքի կրճատման հետևանքով, համապատասխանաբար կրճատվել են նաև արտադրողական ուժերի, երկրի ռազմական հզորության, արտաքին առևտրի, տնտեսության ճյուղերի քանակական ցուցանիշները:

Այժմ վերլուծենք աշխարհում Հայաստանի ու հայերի տեղն ու դերը բնութագրող գլխավոր որակական ցուցանիշները: Մեծ է Հայաստանի, ինչպես նաև Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի մի շարք պետությունների ու ժողովուրդների զարգացման գործում հայ ժողովրդի ավանդը: Մենք պետք է գիտակցենք, բարձր գնահատենք ու ձգտենք ամեն կերպ պահպանել ու բազմապատկել այդ ժառանգությունը:



Էջմիածնի վանքային համալիրը

ազդեցությունը, բայց իրենք էլ ազդել են նրանց վրա: Հայերը մեծ ներդրում ունեն հարևան մի շարք ժողովուրդների հասարակական կյանքի ռազմական, արտաքին առևտրի, պետական կառավարման, գիտության, մշակույթի, կրթության և այլ բնագավառներում: Օրինակ՝ անժխտելի է համարվում, որ Արևմտյան ու Կենտրոնական Եվրոպայում լայն տարածում ունեցող «գոթական» կոչվող ճարտարապետական ոճի հիմքում հայկական տաճարաշինական ճարտարապետությունն է:



Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Ռիգայում

Հայաստանի Հանրապետության փոքր տարածքում պահպանված հազարավոր հուշարձաններից շուրջ մեկ տասնյակը ՅՈՒՆԵՍԿՕ¹-ն ճանաչել է որպես համաշխարհային ժառանգության մշակույթային արժեքներ: Այդպիսիք են մասնավորապես Երևանն ու Վաղարշապատը (որպես հնագույն քաղաքներ), Էջմիածնի վանքային համալիրը, Զվարթնոց տաճարի ավերակները, Հաղպատի, Գեղարդի վանքերը, հայկական խաչքարը, դուղուկը և այլն: Դրանցով են նաև պայմանավորված Հայաստանի, հայ ժողովրդի ու հայկական մշակույթի նկատմամբ ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող հետաքրքրությունն ու դրական վերաբերմունքը:

Հայաստանն ու հայերն աշխարհի տարբեր երկրների ու ժողովուրդների հետ եղել են մշտական կապերի մեջ. կրել են հարևանների

Անժխտելի է նաև հայերի դերը Եվրոպայի առաջատար երկրների, ինչպես նաև Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի ու արևելյան երկրների, հատկապես Հնդկաստանի հետ առևտրի զարգացման գործում:

Հայտնի են նաև հայերի առնչությունները սլավոնական աշխարհի հետ, նրանց ծանրակշիռ ներդրումը հասարակական կյանքի տարբեր բնագավառներում՝ սկսած սլավոնական գրերի գյուտից, քրիստոնեության ընդունումից ու տարածումից, պետա-

1. Կրթության, գիտության և մշակույթի հարցերով միավորված ազգերի կազմակերպություն:

կան կառավարման ու ռազմական ոլորտներից և ավարտած արվեստի, գիտության ու կրթության, շինարարության բնագավառներով: Սլավոնական երկրներում (Ռուսաստան, Լեհաստան, Բուլղարիա, Ուկրաինա, Սերբիա և այլն) և նրանց հարևան Հունգարիայում ու Ռումինիայում հայերը հիմնադրել են կրթական ու մշակութային օջախներ, կառուցել են վանքեր ու եկեղեցիներ, որպես բարձրաստիճան պետական ծառայողներ ակտիվորեն մասնակցել են հասարակական կյանքին: Հայկական համայնքները, մասնավորապես Լեհաստանում, նույնիսկ ունեին ներքին ինքնավարության լայն իրավունքներ:

Խորհրդային տարիներին Հայաստանը գտնվում էր ԽՍՀՄ-ի կազմում, ուներ կիսանկախ պետության կարգավիճակ, և նրա պաշտոնական անվանումն էր Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Այդ տարիներին արագ թափով զարգացան Հայաստանի արտադրողական ուժերը, արդյունաբերության մի շարք ճյուղերի գծով (գունավոր մետաղաձուլություն, էլեկտրատեխնիկական մեքենաշինություն, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերություն) Հայաստանն առաջատար դիրքեր գրավեց ամբողջ ԽՍՀՄ-ում և դրա միջոցով էլ մասնակից դարձավ համաշխարհային առևտրին:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անկախացած Հայաստանի Հանրապետությունը պետք է ինքնուրույն նվաճեր իր տեղը համաշխարհային տնտեսության մեջ:

Հաղթահարելով սոցիալիստական տնտեսվարման համակարգից շուկայականի անցման հետևանքով առաջացած տնտեսական անկումը, ինչպես նաև 2008թ. սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքները՝ Հայաստանի Հանրապետությունը ձգտում է տարեցտարի բարելավել իր ցուցանիշները, կատարել արմատական տնտեսական բարեփոխումներ՝ հարմարվելով համաշխարհային շուկայի օրենքներին: Դրանով իսկ նա ձգտում է ամրապնդել իր տեղն ու դերը աշխատանքի միջազգային բաժանման համակարգում:

Հայաստանի Հանրապետությունը, լինելով հայ ժողովրդի հարուստ պատմական ժառանգության կրողը, անկախություն նվաճելուց հետո հանդես է գալիս որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, ունի միջազգային լայն ճանաչում և վարում է ակտիվ արտաքին քաղաքականություն: Նրա հետ դիվանագիտական հարաբերություններ են հաստատել աշխարհի շուրջ 150 պետություններ: Դրանցից ավելի քան 20-ը ՀՀ-ում հիմնել են իրենց դեսպանությունները:

Հայաստանի Հանրապետությունը բազմաթիվ միջազգային կազմակերպությունների անդամ է: Դրանցից են Միավորված ազգերի կազմակերպությունը (UN), Կրթության, գիտության և մշակույթի հարցերով միավորված ազգերի կազմակերպությունը (UNESCO), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (OSCE) և այլն (տե՛ս էջ 161-ի հավելվածը):

ՀՀ-ն անդամ է նաև բազմաթիվ գիտական, մշակութային, մարզական, իրավապահական, լրատվական միջազգային հեղինակավոր կազմակերպությունների:

Հայաստանի Հանրապետության տեղն ու դերը պակաս նշանակալի չեն միջազգային տարածաշրջանային համագործակցության մակարդակում: Բազմակողմանի սերտ համագործակցություն է հաստատված Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ), Սևծովյան երկրների տնտեսական համագործակցության, Եվրամիության և Եվրոպայի խորհրդի, Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկի և շատ այլ կազմակերպությունների հետ:

Աշխատանքի միջազգային բաժանման գործընթացներում տարեցտարի մեծանում են Հայաստանի հետ տարբեր երկրների առևտրի ծավալները: Վերջին տարիներին ՀՀ-ի ապրանքաշրջանառության կեսից ավելին բաժին է ընկնում Ռուսաստանին, 1/3-ը՝ Եվրամիությանը (ԵՄ) և ավելի քան 10%-ը՝ ԱՄՆ-ին:

Հայաստանի Հանրապետության ու ԵՄ-ի միջև 1996թ. կնքվեց «Գործընկերության և համագործակցության համաձայնագիր», որն ուժի մեջ մտավ 1999-ից: Այն հնարավորություն տվեց ԵՄ-ի հետ սերտ համագործակցություն զարգացնելու: Այդ համագործակցության շրջանակում Հայաստանն ամենամյա աջակցություն է ստանում տնտեսության անցումային փուլը արագ հաղթահարելու նպատակով: Հայաստանն ընդգրկվել է ԵՄ-ի այնպիսի կարևոր նախաձեռնության մեջ, որը ներառում է ապագայում այդ կառույցին անդամակցության իրական հնարավորություններ:



Եվրախորհրդարանի շենքը
Ստրասբուրգում

Աշխարհում Հայաստանի ու հայերի տեղն ու դերը որոշող բացառիկ գործոն է հայկական սփյուռքի գոյությունը: Հայերը իռլանդացիների նման աշխարհի եզակի ազգերից են, որոնց ավելի քան 2/3 մասը, հանրահայտ հանգամանքների բերումով, ցավալիորեն, բնակվում է իր պատմական հայրենիքից դուրս:

Հայերը ցրված են աշխարհի ավելի քան 70 երկրներում: Դրանց մեծ մասում նրանք ձևավորել են համայնքներ, որոնց միջոցով ամեն կերպ նպաստում են հյուրընկալող երկրների հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների սերտացմանը, հեղինակության բարձրացմանը և դիրքերի ամրապնդմանը:

Հայկական առավել կազմակերպված ու մարդաշատ համայնքներ այժմ գոյություն ունեն Ռուսաստանում (շուրջ 2,3 մլն մարդ), ԱՄՆ-ում (1,3 մլն), Ֆրանսիայում (500 հազ.), Վրաստանում (350 հազ.), Իրանում, Լիբանանում, Կանադայում, Արգենտինայում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Հայաստանի զարգացմանը նպաստող և խոչընդոտող գործոնները: Փորձե՞ք կանխատեսել դրանցից յուրաքանչյուրի ազդեցության փոփոխությունները առաջիկա տարիներին:
2. Քանակական ցուցանիշներով գնահատե՞ք Հայաստանի տեղն աշխարհում հին ժամանակներից մինչև մեր օրերը:
3. Որո՞նք են Հայաստանը և հայերի գործունեությունը բնութագրող որակական ցուցանիշները:
4. Միջազգային դիրք կազմակերպություններին է անդամակցում Հայաստանի Հանրապետությունը: Համացանցից կամ մամուլից դ՞ուրս գրե՞ք և ներկայացրե՞ք տեղեկատվություն Հայաստան – ԵՄ և Հայաստան – ԱՊՀ համագործակցության վերաբերյալ:
5. Քննարկե՞ք և կազմե՞ք գործողությունների ծրագիր Հայաստանի զարգացման գործում հայկական սփյուռքի ներգրավման ուղղությամբ:

ԴԱՍ 30. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ա. Ստորև ներկայացվող աղյուսակում ընդգրկված ընտրովի երկրներում հացահատիկի արտադրության գործընթացի ըմբռնման, վերլուծության և դրա վերաբերյալ ճիշտ եզրակացություն կատարելու ունակության՝ աշխարհագրական մտածողության ստուգման նպատակով առաջարկում ենք կատարել սույն գործնական աշխատանքը հետևյալ պլանով.

Երկրներ	Բնակչության թիվը (մլն)		Հացահատիկի համախառն բերքը (մլն տ.)		Հացահատիկի բերքը մեկ շնչի հաշվով (կգ/մարդ)		Հացահատիկի բերքի շնչաբաժնի փոփոխությունը 1994–96 – 2008–10 թթ. (%)	
	1995թ.	2012թ.	1994–96թթ.	2008թ.	1994թ.	2008–10թթ.	աճ՝ +	նվազում՝ –
Թաիլանդ	56	71	34	36				
Չինաստան	1209	1354	406	470				
Վրաստան	5,4	4,3	0,6	0,4				
Իտալիա	57	61	18	20				
Կանադա	28	35	49	49				
ԱՄՆ	260	316	278	420				
Ռուսաստան	148	143	79	94				
Աշխարհը՝ ամբողջությամբ	5716	6974	1897	2494				

1. Համապատասխան գործողությամբ հաշվարկեք մեկ շնչի հաշվով հացահատիկի բերքի ցուցանիշը և լրացրեք 6-րդ և 7-րդ սյունակները:

2. Առանձին երկրների ցուցանիշները համեմատեք աշխարհի հացահատիկի շնչաբաժնի բերքի միջին ցուցանիշի հետ և բաժանեք 2 խմբի. միջինից բարձր և միջինից ցածր:

3. Գյուղատնտեսության զարգացման բնական նախադրյալների ու ուղղությունների վերաբերյալ գիտելիքների վրա հենվելով՝ փորձեք բացատրել, թե տվյալ երկրի ցուցանիշի մեծությունը ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված:

4. Հաշվարկեք, թե 1994–96թթ. համեմատությամբ 2008–10թթ. մեկ շնչի հաշվով հացահատիկի բերքը որքանով (%) է աճել կամ նվազել և լրացրեք համապատասխանաբար 8-րդ և 9-րդ սյունակներում:

5. Փորձեք բացատրել, թե որո՞նք են այդ փոփոխությունների գլխավոր պատճառները՝ նկատի ունենալով այդ երկրների բնակչության թվի շարժի բնույթը, տնտեսական հասունությունը՝ զարգացման փուլը և համանման այլ հանգամանքներ:

6. Կատարած աշխատանքը կարելի է ներկայացնել որպես գիտական գեկույց, որը կգնահատի ուսուցիչը՝ նշելով դասամատյանում:

Բ. Աղյուսակի տվյալների հիման վրա հաշվեք առանձին երկրների բնակչության մեկ շնչին համող էլեկտրաէներգիայի ցուցանիշը և նշեք տեղը ըստ նվազման կարգի (I, II, ..., VII...):

Աշխարհ, երկրներ	Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը մլն կվտ·ժ. (2010թ.)	Բնակչության թիվը (մլն մարդ, 2011թ.)	Էլեկտրաէներգիայի արտադրանքի ծավալը 1 շնչի հաշվով կվտ·ժ./մարդ	Տեղը ըստ նվազման կարգի
1	2	3	4	5
Աշխարհ	19 894 777	6 974	...	
ԱՄՆ	4 325 900	313	...	
Չինաստան	4 206 500	1 348	...	
Ճապոնիա	1 145 300	127	...	
Ռուսաստան	1 036 800	143	...	
Հնդկաստան	922 206	1 242	...	
Կանադա	629 900	34	...	
Գերմանիա	621 000	82	...	

1	2	3	4	5
Նորվեգիա	124 500	5	...	
Իսլանդիա	16 500	0,3	...	
Հայաստան	5 900	3	...	
Կամբոջա	134	14	...	
Չադ	95	11	...	

Մտածե՛ք այս հարցի շուրջը

Հարաբերելով երկրների զբոսաշրջիկների և բնակիչների թվերը՝ դատողություն կատարե՛ք ստորև ներկայացված երկրների զբոսաշրջության զարգացման վերաբերյալ:

Գնահատե՛ք երկրների զբոսաշրջության զարգացման մակարդակը. բարձր, միջին և ցածր:

Երկիր	Զբոսաշրջիկների թիվը (2008թ.)	Բնակիչների թիվը (2008թ.)	Զբոսաշրջության զարգացման մակարդակը*	Երկիր	Զբոսաշրջիկների թիվը (2008թ.)	Բնակիչների թիվը (2008թ.)	Զբոսաշրջության զարգացման մակարդակը
1	2	3	4	5	6	7	8
Անդորա	1,8	0,07		Գերմանիա	24,2	82,5	
Հայաստան	0,6	3,2		Հնդկաստան	5,2	1186,2	
Ավստրիա	21,4	8,4		Ինդոնեզիա	6,3	234,3	
Ադրբեջան	1,8	8,5		Իտալիա	43,2	58,9	
Բանգլադեշ	0,3	161,3		Սան Մարինո	2,1	0,02	
Չինաստան	165,0**	1336,3		Իսպանիա	25,3	44,6	
Եգիպտոս	12,5	76,8		Թուրքիա	25,5	75,8	
Ֆրանսիա	76,8	61,9		ԱՄՆ	54,9	308,8	

* 4-րդ սյունակի ցուցանիշը 2-րդ սյունակի տվյալի հարաբերությունն է 3-րդին:

** Ներառյալ Հոնկոնգի և Մակաոյի զբոսաշրջիկների թիվը:

Հետաքրքիր է իմանալ

Աշխարհի տարբեր երկրների բնակիչները տարեկան ավանդաբար օգտագործում են տարբեր չափով շաքար, որի քանակը պայմանավորված է նաև նրանց օգտագործած մրգերի և բանջարեղենի (օրինակ՝ բատատի կամ քաղցր կարտոֆիլի) մեջ շաքարի պարունակությամբ:

Ջուտ շաքարի սպառման չափանիշով աշխարհի ռեկորդակիրներն են Սինգապուրի, Բրազիլիայի և Սվազիլենդի բնակիչները (համապատասխան-

Նաբար՝ 63, 64 և 65 կգ տարեկան), իսկ ամենաքիչ շաքար օգտագործողներն են Ռուանդայի, Կոնգոյի Ժողովրդական Հանրապետության (2), Մյանմարի (3), Լիբերիայի, Կենտրոնաֆրիկյան Հանրապետության և Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետության (4), Նեպալի և Եթովպիայի (5) բնակիչները: Հայաստանի Հանրապետության բնակիչները 2000-ական թվականներին օգտագործում են տարեկան 28 կգ շաքար, որը մոտավորապես հավասար է աշխարհի ամբողջ բնակչության կողմից օգտագործվող շաքարի միջին տարեկան քանակին:

Գյուղատնտեսական կենդանիների բաշխումն ըստ աշխարհամասերի (2009թ., մլն գլուխ)*

	Գոմեշ	Տավար	Այծ	Ոչխար	Խոզ
Աշխարհ	188	1 380	880	1 077	942
Աֆրիկա	4	275	298	294	27
Ամերիկա		503	37	94	160
Ասիա	182	432	525	456	561
Եվրոպա		125	16	132	188
Օվկիանիա		39		105	

* Գլխաքանակի թվերի կլորացման և փոքր թվերի բացթողման հետևանքով աշխարհի ամբողջ ցուցանիշը որոշ չափով տարբերվում է աշխարհամասերի թվերի գումարից:

Հավելված 1

Միջազգային կազմակերպություններ, որոնց անդամակցում է Հայաստանը

- Միավորված ազգերի կազմակերպություն (UN)
- Կրթության, գիտության և մշակույթի հարցերով միավորված ազգերի կազմակերպություն (UNESCO)
- Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (OSCE)
- Առողջապահության միջազգային կազմակերպություն (WHO)
- Օդերևութաբանական միջազգային կազմակերպություն (WMO)
- ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն (UNIDO)
- Փոստի միջազգային միություն (UPU)
- Հեռակապային միջազգային միություն (ITU)
- Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ILO)
- Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (ICAO)
- Ստավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (WIPO)
- Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդ (NACC)
- Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպություն (Ինտերպոլ, INTERPOL)
- Հուշարձանների պաշտպանության միջազգային կազմակերպություն (ICOMOS)
- Արբանյակային կապի միջազգային կազմակերպություն (INTELSAT)
- Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (IBRD)
- Արժույթի միջազգային հիմնադրամ (IMF)
- Պարենի և գյուղատնտեսության հարցերով միավորված ազգերի կազմակերպություն (FAO)
- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ (IFAD)
- Սևծովյան տնտեսական համագործակցություն (BSEC)
- Ստանդարտացման միջազգային կազմակերպություն (ISO)
- Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM)
- Ատոմային էներգետիկայի հարցերով միջազգային կազմակերպություն (IAEA)
- ՄԱԿ-ի՝ Ասիա-խաղաղովկիանոսյան տնտեսական և սոցիալական հանձնաժողով (ESCAP)

Հավելված 2

ՄԱԿ-ի անդամ որոշ երկրների ժողովրդագրական տվյալները

Պետություն	Տարածքը (հազ. կմ ²) (կլորացված)	Բնակչությունը (մլն մարդ)			Միջին տարե- կան աճը 2005- 2012թթ.	Քաղա- քային բնակչու- թյան բաժինը (%) 2012թ.	Մայրաքա- ղաքը
		2005թ.	2011թ.	2050թ. (կանխա- տեսում)			
Ադրբեջան	75	8,4	9,3	9,6	1,2	52	Բաքու
Ալբանիա	29	3,0	3,2	3,5	0,3	52	Տիրանա
Ալժիր	2 382	33,0	36,0	49,5	1,4	66	Ալժիր
ԱՄՆ	9 629	298,0	313,1	395,0	0,9	82	Վաշինգտոն
Անգոլա	1 247	16,0	19,6	43,5	2,7	59	Լուանդա
Ավստրալիա	7 741	20,0	22,6	27,9	0,2	89	Քանբերա
Ավստրիա	84	8,0	8,4	8,2	0,2	68	Վիեննա
Արգենտինա	2 780	39,0	40,8	39,1	0,9	92	Բուենոս Այրես
Աֆղանստան	652	30,0	32,4	97,3	3,1	23	Քաբուլ
Բահրեյն	0,7	0,7	1,3	2,1	2,1	89	Մանամա
Բանգլադեշ	144	142,0	150,5	242,9	1,3	28	Դաքա
Բելառուս	208	10,0	9,6	7,0	-0,3	75	Մինսկ
Բելգիա	31	10,0	10,8	10,3	0,3	97	Բրյուսել
Հայաստան	30	3,0	3,1	2,5	0,3	64	Երևան
Հնդկաստան	3 287	1 103,0	1 242,0	1 592,7	1,3	30	Դելի
Չինաստան	9 597	1 316,0	1 348,0	1 392,3	0,4	47	Բեյջին
Պակիստան	796	158,0	177,0	304,7	1,8	36	Իսլամաբադ
Ռուանդա	26	9,0	10,9	18,2	2,9	19	Կիգալի
Ռուսաստան	17 098	143,0	142,8	111,8	-0,1	73	Մոսկվա
Վրաստան	70	4,5	4,3	3,0	-0,6	53	Թբիլիսի

Դասագրքում օգտագործված եզրերի (տերմինների) ու հասկացությունների համառոտ բառարան

Ա.

Ազգ – մարդկանց ընդհանրություն, որը պատմականորեն կազմավորվում է տարածքային, տնտեսական, լեզվի, մշակույթի որոշ առանձնահատկությունների և բնավորության ձևավորման ու ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացում: *Էթնոսի* (ժողովրդի) կազմակերպման բարձրագույն ձևն է:

Ազգաբնակչություն – տե՛ս *Բնակչություն*:

Ազգային եկամուտ – տե՛ս *Համախառն ազգային եկամուտ*:

Ազգային կազմ, բնակչության ազգային կազմ – երկրի բնակչության բաշխումը մարդկանց խմբերի՝ նրանց ազգային պատկանելության հատկանիշի հիման վրա: Ըստ ազգային կազմի՝ առանձնանում են *միազգ* և *բազմազգ ժողովուրդներ*:

Անասնապահություն – գյուղատնտեսական արտադրության կարևորագույն ճյուղը, գյուղատնտեսական կենդանիների ու թռչունների բուծում անասնապահական մթերք արտադրելու նպատակով:

Աշխարհագրական դիրք – *աշխարհագրական օբյեկտի* (տե՛ս) տարածքային հարաբերությունները երկրի մակերեսի և փոխգործողությամբ դրա հետ կապված այլ օբյեկտների հետ: Աշխարհագրական դիրքն աշխարհագրական օբյեկտի յուրատեսակ «աշխարհագրական հասցեն» է:

Աշխարհագրական օբյեկտ – բնական կամ մարդածին գոյացություն, աշխարհագրական ուսումնասիրության օբյեկտ, որը բնութագրվում է *աշխարհագրական դիրքով* (տե՛ս), օրինակ՝ *քաղաք, փնտեսական շրջան, գործարան, պեյզաժներ*:

Աշխատանքային ռեսուրս – բնակչության աշխատանքային ներուժ՝ այն մարդիկ, ովքեր ունեն տնտեսության որևէ բնագավառում աշխատելու համար պահանջվող ֆիզիկական զարգացում, կրթություն և առողջական վիճակ:

Աշխատանքի աշխարհագրական (տարածքային) բաժանում – տնտեսական հարաբերություններով միմյանց հետ փոխկապված երկրների, շրջանների կամ կենտրոնների միջև աշխատանքային գործունեության բաժանում, որն արտահայտվում է մասնագիտացված ճյուղերի արտադրած ապրանքների ու ծառայու-

թյունների փոխանակմամբ: Պայմանավորված է տարածքային միավորների բնական, տնտեսական, սոցիալական առանձնահատկություններով, ինչպես նաև տնտեսաաշխարհագրական դիրքով:

Աշխատանքի միջազգային բաժանում – առանձին երկրների մասնագիտացումը՝ միջազգային շուկայում փոխանակման համար նախատեսված ապրանքների արտադրության և ծառայությունների գծով: Համաշխարհային տնտեսության տեղաբաշխման գլխավոր գործոններից է:

Աշխատանքի միջշրջանային բաժանում – աշխատանքի աշխարհագրական բաժանում երկրի տնտեսական շրջանների միջև:

Աշխատանքի տարածքային բաժանում – տես *Աշխատանքի աշխարհագրական բաժանում*:

Ապրանքային տնտեսություն – այնպիսի տնտեսություն, որում արտադրված բարիքը նախատեսված է ոչ միայն արտադրողի, այլ նաև վաճառքի կամ փոխանակման, այսինքն՝ *շուկայի* համար:

Արտադրանքի շնչաբաժին – արտադրության զարգացման մակարդակը բնութագրող հարաբերական ցուցանիշ, որը ցույց է տալիս, թե մեկ շնչի (բնակչի) հաշվով որքան արտադրանք (օրինակ՝ *էլեկտրաէներգիա, նավթ, կոշիկ, շաքար*) է արտադրվում տվյալ աշխարհագրական օբյեկտում: Հնարավորություն է ընձեռում համեմատություններ կատարելու միատեսակ աշխարհագրական օբյեկտների միջև:

Բ

Բեռնամբարձություն (տրանսպորտային միջոցի) – բեռի առավելագույն այն զանգվածը, որը տրանսպորտային միջոցը կարող է որոշակի պայմաններում միանգամից փոխադրել:

Բեռնաշրջանառություն – 1) բեռնատար տրանսպորտի փոխադրական աշխատանքի ցուցանիշ, որը փոխադրված բեռների զանգվածի ու փոխադրման հեռավորության արտադրյալն է (սովորաբար հաշվում են **տ·կմ**, իսկ ԱՄՆ-ում՝ նաև **տ·մղոն** միավորներով, 2) տրանսպորտային հանգույցի (նավահանգստի, երկաթուղային կայարանի և այլն) բեռնաշրջանառությունը, սովորաբար մեկ տարում ընդունված (ստացված) և առաքված բեռների միագումարային քանակն է (**տ**):

Բերքատվություն – բուսական արտադրանքի քանակը, որն ստացվում է միավոր հողատարածքից (սովորաբար չափում են **ց/հա** միավորով):

Բնական պայմաններ – տարածքի աշխարհագրական դիրքի, բնական ռեսուրսների ու աշխարհագրական միջավայրի այլ բաղադրիչների (օրինակ՝ *մակերևույթի, կլիմայի, գեոլոգիայի*) ամբողջությունը, որն անմիջական ազդեցություն ունի բնակչության տարաբնակեցման ու մարդու տնտեսական գործունեության տեղաբաշխման վրա:

Բնական ռեսուրսներ – բնության բաղադրատարրեր (կյուղեր, էներգիայի տեսակներ), որոնք տվյալ ժամանակահատվածում օգտագործվում են կամ կարող են օգտագործվել մարդկանց նյութական բարիքների արտադրության, ինչպես նաև հոգևոր պահանջ-մունքների բավարարման նպատակով:

Բնակավայր – մարդկանց մշտական կամ ժամանակավոր (սեզոնային) բնակության վայր (օրինակ՝ *ավան, գյուղ, քաղաք*):

Բնակավայրերի ցանց – բնակեցված տարածքի բոլոր բնակավայրերի ամբողջությունը: Սովորաբար բնութագրվում է բնակավայրերի մարդաշատությամբ, խտությամբ և տեղաբաշխման (տարաբնակեցման) պատկերով (ուրվանկարով):

Բնակչության թիվ (թվաքանակ) – որպես *բնակչություն* (տե՛ս) դիտվող որևէ ամբողջության մարդկանց թիվը: Ճշգրտորեն որոշվում է *մարդահամարների* միջոցով, իսկ մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում գնահատվում է մոտավորապես՝ *անուղղակի տվյալների* վրա հենվելով:

Բնակչության թվի բնական շարժ – բնակչության թվի փոփոխությունը միայն բնական ճանապարհով՝ ծնունդների ու մահերի միագումարության հաշվին: Բացառապես բնական շարժի հաշվին փոփոխվում է միայն ամբողջությամբ աշխարհի բնակչությունը, իսկ երկրներում բնակչության ընդհանուր թիվն այս կամ այն չափով փոփոխվում է նաև **մեխանիկական շարժի** հաշվին (տե՛ս):

Բնակչության թվի մեխանիկական շարժ – բնակչության թվի փոփոխությունը միայն մեխանիկական շարժի՝ *միգրացիայի* հաշվին: Բնակչության թվի բնական և մեխանիկական շարժերի միագումարը բնակչության թվի *ընդհանուր շարժն* է:

Բնակչության խտություն – տարածքի բնակեցվածության աստիճանն արտահայտող ցուցանիշ, որը հաշվում են բնակչության թվի և տարածքի հարաբերությամբ: Այլ կերպ ասած՝ այդ ցուցանիշն արտահայտում է մարդկանց միջին թիվը տարածքի 1 կմ² հաշվով, ուստի անվանվում է *բնակչության միջին խտություն*: Երբեմն հաշվարկում են նաև խտությունն ավելի իրականորեն արտահայտող

ցուցանիշներ՝ 1 կմ² միայն *բնակեցված տարածքի* կամ էլ՝ *օգտագործվող վարելահողի հաշվով*:

Բնակչության կազմ – մարդկանց բաշխումը խմբերի ըստ որոշակի հատկանիշների (օրինակ՝ *ազգային* կամ *ռասայական* պատկանելության):

Բնակչության կառուցվածք (կազմ) – բնակչության բաշխումը կարգային խմբերի, որոնց միջև առկա են որոշակի հարաբերություններ: Օրինակ՝ *տարիքային խմբերում* մարդկանց թվերը (բաժինները) պայմանավորված են բնակչության աճով (հիշե՛ք *սեռատարիքային բուրգի կառուցվածքը*): **Բնակչության կազմ** և **բնակչության կառուցվածք** տերմինները հաճախ նույնացվում են կամ օգտագործվում մեկը մյուսի փոխարեն:

Բնակչության կուտակման տարածք (արեալ) – երկրագնդի մարզեր, որտեղ համեմատար մեծ թվով ու խտությամբ բնակչություն է կենտրոնացված:

Բնակչության միգրացիա (*միգրացիաներ, գաղթ, գաղթեր*) – մարդկանց շարժը վիճակագրական հաշվառման մի վայրից (*քաղաքից, գյուղից, երկրից*) մյուսը՝ բնակչության վայրի մշտական կամ ժամանակավոր տևողությամբ փոփոխության նպատակով:

Բնակչության վերարտադրություն – մարդկանց սերունդների մշտական հերթափոխությունը, որը *բնակչության բնական* և *մեխանիկական շարժերի* ամբողջությունն է: Ողջ աշխարհի բնակչության վերարտադրությունը միայն բնական շարժի արդյունք է, իսկ երկրների մեծ մասինը՝ բնական ու տարածքային (*մեխանիկական*) շարժերի ամբողջության:

Առանձնացնում են **պարզ վերարտադրության ռեժիմ** (ծնելիությունն ու մահացությունը հավասար են միմյանց, հետևաբար՝ բնակչության թիվը չի փոփոխվում), **ընդլայնված վերարտադրության ռեժիմ** (ծնելիությունը գերազանցում է մահացությունը, բնակչության թիվն աճում է) և **նեղացված վերարտադրության ռեժիմ** (ծնելիությունը փոքր է մահացությունից, բնակչության թիվը նվազում է):

Բնակչության տեղաբաշխում – բնակչության աշխարհագրական բաշխվածությունն է որոշակի տարածքում (երկրագնդի վրա, առանձին տարածաշրջաններում, երկրներում):

Բնակչություն (ազգաբնակչություն) – երկրագնդում կամ որևէ կոնկրետ տարածքում բնակվող մարդկանց ամբողջությունը:

Բուսաբուծություն, հողագործություն – գյուղատնտեսության ճյուղ, որն զբաղվում է *մշակաբույսերի* աճեցմամբ՝ բուսաբուծական մթերքներ ստանալու նպատակով:

Գ

Գիտատար (գիտահենք, գիտելիքահենք) արտադրություն – գիտական հետազոտությունների հետ կապված բարձր ծախսերով արտադրությունների խումբ (օրինակ՝ *ռադիոէլեկտրոնային, ավիահրթիռափեղեղերական մեքենաշինություն, միկրոկենսաբանական արտադրություն*):

Գյուղատնտեսություն (գյուղատնտեսական արտադրություն) – նյութական արտադրության երկրորդ գլխավոր ճյուղը, որն զբաղվում է մշակաբույսերի աճեցմամբ ու կենդանիների բուծմամբ՝ բուսաբուծության և անասնապահության մթերքներ ստանալու նպատակով:

Ե

Եվրամիություն – մոտավորապես միատեսակ տնտեսությամբ եվրոպական 26 և ասիական մեկ երկրի (Կիպրոսի Հունական Հանրապետության) տնտեսական միավորում, որի նպատակը տնտեսական միասնական քաղաքականություն վարելու շնորհիվ միջազգային մրցակցության մյուս կենտրոններին՝ ԱՄՆ-ին ու Ճապոնիային դիմակայելն է: Եվրամիության անդամների միջև ստեղծված են նպաստավոր պայմաններ՝ ապրանքների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի համար, ինչպես նաև ներմուծված է *միասնական դրամ (եվրո)*:

Է

Էթնոս – տարածքի, լեզվի և մշակույթի ընդհանրության հիման վրա մարդկանց պատմականորեն ձևավորված կայուն ընդհանրություն: Լայն իմաստով՝ **ժողովուրդ**:

Էթնիկ կազմ – տես *Ազգային կազմ*:

Էներգատար արտադրություն – միավոր արտադրանքի հաշվով համամետաբար շատ էներգիա օգտագործող արտադրություն (օրինակ՝ *թեթև գունավոր մեքենաների ձուլումը*):

Ժ

Ժողովրդագրական քաղաքականություն – պետության կողմից իրագործվող սոցիալ-տնտեսական, դաստիարակչական-հոգե-

բանական (քարոզչական) և իրավական միջոցառումների ամբողջություն, որի գերնպատակն է կարգավորել բնակչության աճը՝ վերջինս համապատասխանեցնելով երկրի զարգացման պահանջներին: Գործնականում դա նշանակում է, ելնելով ժողովրդագրական կոնկրետ իրադրությունից, խթանել կամ սահմանափակել բնակչության ծնելիությունը:

Ժողովրդագրություն – գիտություն բնակչության վերարտադրության օրինաչափությունների մասին:

Կ

Կապ – տնտեսության ճյուղ, որն ապահովում է սովորական և էլեկտրոնային փոստային, հեռագրային, ռադիո հաղորդումներն ու ընդունումը:

Կոքս – թթվածնի բացակայության և բարձր ջերմաստիճանի պայմաններում հատուկ մարտկոցներում *անթրացիտից* (բարձրորակ ածխից) ստացվող ծակոտկեն վառելիք, որն օգտագործվում է *թուջի* ձուլման գործընթացում որպես վառելիք, իսկ անջատվող գազերն ու խեժերը՝ որպես քիմիական տարբեր նյութերի հումք:

Հ

Համախառն ազգային եկամուտ (ՀԱԵ) – պետության բոլոր քաղաքացիների ամբողջական եկամուտը, այդ թվում՝ արտասահմանում նրանց պատկանող տնտեսական կառույցներից ստացված եկամուտը:

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) – պետության տարածքում ստացված ամբողջական եկամուտը, ներառյալ նաև արտասահմանցիների սեփականություն հանդիսացող արտադրություններից ստացվող եկամուտը: *Համախառն ազգային եկամտից* տարբերվում է այնքանով, որ համախառն ներքին արդյունքում չի ներառվում *արտասահմանում* ծավալված տնտեսական գործունեության արդյունքը (օրինակ՝ կապիտալի արտահանումից (*վարկերից*) ստացվող շահույթը):

Համաշխարհային շուկա – լայն իմաստով՝ աշխատանքի միջազգային բաժանման վրա հենված ապրանքների ու ծառայությունների կայուն փոխանակման ոլորտ: Նեղ իմաստով՝ փոխանակային հարաբերություններով միմյանց հետ կապված առանձին երկրների ազգային շուկաների ամբողջություն:

Համաշխարհային տնտեսություն – տնտեսական հարաբերություններով միմյանց հետ կապված աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունների սերտ օրգանական միասնությունը:

Հողաբարելավում, մելիորացիա – գյուղատնտեսական հողերի բարելավում՝ բերրիության բարձրացմանը նպատակաուղղված միջոցառումների ամբողջություն (չափազանց խոնավ հողերի չորացում, չոր շրջանների հողերի ջրարբիացում, քարքարոտ հողերի քարազերծում, աղուտային հողերի աղազերծում և այլն):

Հողահանդակ, գյուղատնտեսական հանդակ – արտադրության նպատակով օգտագործվող հողատարածք (*վարելահող, բազմամյա տնկարկ, խոտհարք, արոտավայր*):

Հողագործություն – տես **Բուսաբուծություն**:

Մ

Մասնագիտացում արտադրական – արտադրության կազմակերպման ձև, միատեսակ արտադրանքի արտադրության համակենտրոնացում առանձին ձեռնարկությունում՝ արտադրանքի որակի բարձրացման ու ինքնարժեքի նվազեցման նպատակով:

Մասնագիտացում միջազգային – աշխատանքի միջազգային բաժանման ուղղություններից մեկը: Երկրի որոշակի արտադրությունների կամ ծառայությունների այնպիսի գերադաս զարգացում, որը հնարավորություն է ընձեռում դրանց արդյունքի մի մասը արտահանելու համաշխարհային շուկա՝ փոխանակման նպատակով: Որքան մեծ է ընդհանուր արտադրանքի մեջ արտահանված ապրանքների բաժինը, այնքան բարձր է *երկրի մասնագիտացման* աստիճանը:

Մթերատվություն գյուղատնտեսական կենդանիների – գյուղատնտեսական մեկ կենդանու տարեկան տված մթերքի ծավալը (*ծու՝ հատ, միս, կաթ և բուրդ՝ կգ*):

Ն

Նյութատար (հումքատար) արտադրություն – արտադրություն, որի թողարկած միավոր արտադրանքի հաշվով շատ մեծ են հումքի և հիմնական նյութերի տեսակարար ծախսումները: Օրինակ՝ մեկ տոննա ոսկու հանքանյութից միջին հաշվով ստացվում է 25–30 գ մետաղական ոսկի:

Ջ

Ջրատար արտադրություն – թողարկվող միավոր արտադրանքի հաշվով համեմատաբար շատ քիչ սպառող արտադրություններ (օրինակ՝ կապրոնի արտադրությունը):

Ռ

Ռեսուրսաապահովվածություն – տվյալ երկրի կամ տարածաշրջանի՝ ռեսուրսներով ապահովվածության աստիճանը: Հաշվարկում են երկու ցուցանիշով. 1) ռեսուրսներով ապահովվածության տարիների թվով (ռեսուրսների ընդհանուր քանակի և մեկ տարում օգտագործվող քանակի հարաբերությամբ), 2) մեկ շնչին հասնող ռեսուրսների քանակով (ռեսուրսների ընդհանուր քանակի և բնակչության թվի հարաբերությամբ):

Ս

Սպառողական տնտեսություն, բնատնտեսություն – տնտեսության որոշակի տեսակ, որի աշխատանքի ամբողջ արդյունքը նախատեսված է միայն արտադրողի համար և շուկա չի արտահանվում:

Տ

Տարաբնակեցում – որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխման ու վերաբաշխման գործընթացը և բնակավայրերի համակարգը:

Տարածաշրջան, ռեգիոն – նույնն է, ինչ շրջանը: Որոշակի սահմաններում տարբեր մեծությամբ և տարբեր կարգի տարածաշրջաններն առանձնանում են ըստ որևէ երևույթի համասեռության՝ միատեսակության (ֆիզիկաաշխարհագրական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ տարածաշրջաններ): Երբեմն առանձնացվում են ըստ *աշխարհագրական դիրքի* (օրինակ՝ Արևելյան Ասիա), ըստ *մարդկանց խոշոր կուրակման* և այլն:

Տնտեսաաշխարհագրական դիրք – աշխարհագրական օբյեկտի տարածքային հարաբերությունները շրջակայքում գտնվող, բայց այդ օբյեկտի տնտեսության վրա ազդեցություն գործող տնտեսական այլ օբյեկտների հետ (օրինակ՝ հարևան երկրների տնտեսության զարգացման մակարդակն ու հզորությունը, տրանսպորտային մայրուղիները, հանքային ռեսուրսների խոշոր շրջանները, սպառման մեծ շուկան և այլն):

Տնտեսական ինտեգրացիա – տարբեր երկրների ազգային տնտեսությունների միջև համագործակցությունը, այսինքն՝ ազգային տնտեսությունների միավորումը մեկ՝ *վերազգային տնտեսական միավորման* մեջ: Ինտեգրացիայի նպատակն է արագացնել միավորման անդամ երկրների տնտեսական զարգացումը, ինչպես նաև միացյալ ուժերով դիմակայել ավելի հզոր մրցակիցներին: Ինտեգրացիոն խոշորագույն միավորումը **Եվրամիությունն** է:

Տնտեսական շրջան – երկրի ամբողջական տնտեսական համալիրի մի օղակը, որը տնտեսական անբաժանելի կապերով փոխկապված է համանման մյուս օղակների հետ, սակայն դրանցից տարբերվում է իր մասնագիտացմամբ և տնտեսության համալիր բնույթով: Որոշակի արտադրությունների կամ ծառայությունների գծով տնտեսական շրջանի մասնագիտացումը բխում է աշխարհագրական դիրքից, բնական պայմաններից, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական պայմաններից:

Տնտեսապես ակտիվ բնակչություն – բնակչության այն մասը, որն զբաղված է տնտեսության (այդ թվում՝ նաև անձնական տնտեսության) մեջ: ՄԱԿ-ի խորհրդով տնտեսապես ակտիվ բնակչության մեջ ներառվում են նաև *վարձու աշխատանք* որոնող գործազուրկները:

Տնտեսության տարածքային կառուցվածք – ամբողջական տնտեսական համալիրի ստորաբաժանումը փոխադարձաբար միմյանց հետ կապված մասնագիտացված մասերի՝ *տնտեսական շրջանների, տնտեսական գոտիների, արդյունաբերական շրջանների, քաղաքային կուրակումների, ռեկրեացիոն (հանգստի) գոտիների* և այլն:

Տնտեսության տեղաբաշխման գործոն – տնտեսական օբյեկտների ու տեղաբաշխման վայրի փոխկապակցվածությունն արտահայտող գործոններ՝ *տեղական պայմաններ* և *հանգամանքներ*: Այդ գործոնների մի խումբը պայմանավորված է ձեռնարկությունների առանձնահատկություններով (օրինակ՝ *ջրատարությամբ* կամ *գիտատարությամբ*), իսկ մյուս խմբերը՝ տարածքի առանձնահատկություններով (օրինակ՝ *կլիմայական* կամ *ռելիեֆային* պայմաններով): Առավել կարևորներից են տնտեսաաշխարհագրական դիրքի, տարածքային, բնառեսուրսային, աշխատանքային ռեսուրսային, տրանսպորտային գործոնները:

Տնտեսության ճյուղային կառուցվածք – հասարակական արտադրանքի և ազգային եկամտի ստեղծման գործում տնտեսու-

թյան ճյուղերի մասնակցությունը: Առանձնացնում են *տնտեսության երկանդամ կառուցվածք*՝ նյութական արտադրության ոլորտի ճյուղեր և ոչ արտադրական (ծառայությունների) ոլորտի ճյուղեր, ինչպես նաև *եռանդամ կառուցվածք*՝ առաջնային, երկրորդային և երրորդային հատվածներ: ԱՄՆ-ում առանձնացնում են նույնիսկ *քառանդամ կառուցվածք* և *հնգանդամ կառուցվածք* (երրորդային սեկտորի տրոհման հետևանքով):

Տրանսպորտ – նյութական արտադրության ոլորտի ճյուղ, որն իրականացնում է բեռների և ուղևորների փոխադրում: Առանձնացվում է *ցամաքային, ջրային և օդային տրանսպորտ*՝ իրենց ենթատեսակներով:

Տրանսպորտային հանգույց – կետ (բնակավայր), որում հատվում են տրանսպորտի տարբեր տեսակի 2-ից ավելի գծեր: Այդպիսիներն անվանվում են *համալիր տրանսպորտային հանգույցներ*: Եթե միմյանց հատվում են տրանսպորտի մեկ տեսակի 2-ից ավելի գծեր, ապա հանգույցն անվանվում է տրանսպորտի տվյալ տեսակի անվամբ (օրինակ՝ *երկաթուղային կամ օդային հանգույց*):

Տրանսպորտային ցանցի խտություն – երկրի կամ շրջանի տրանսպորտային ապահովվածության աստիճանն արտահայտող ցուցանիշներից մեկը: Դա տրանսպորտային ուղիների երկարության ցանցի և տարածքի հարաբերությունն է՝ 1000 կմ 100 կմ² հաշվով:

ՈՒ

Ուղևորաշրջանառություն – ուղևորատար տրանսպորտի աշխատանքի բնութագրական ցուցանիշ՝ ուղևորների թվի և փոխադրման հեռավորության արտադրյալը (միավորը՝ **ուղևոր·կմ**):

Ք

Քաղաք, քաղաքային բնակավայր – տվյալ երկրի օրենսդրությամբ *քաղաքների* կարգին դասված, որպես կանոն՝ *գյուղի* համեմատությամբ ավելի մարդաշատ բնակավայր, որի բնակչությունը գերազանցապես զբաղված է ոչ գյուղատնտեսական բնագավառներում: Քաղաքներն առանձնացվում են ըստ *մարդաշատության (բնակիչների թվի), գործառույթների, աշխարհագրական դիրքի, հիմնադրման ժամանակի* և այլ հատկանիշների:

Քաղաքաաշխարհագրական դիրք – պետության տարածքային հարաբերությունները միջազգային քաղաքական ուժերի կենտրոնների հետ:

Քաղաքական աշխարհագրություն – հասարակական աշխարհագրական գիտություն, որն ուսումնասիրում է *աշխարհի քաղաքական քարտեզի* ձևավորումը, քաղաքական ուժերի տեղաբաշխումն ու տարածական զուգակցումները, հասարակության քաղաքական կյանքի տարածական կազմակերպումը (*պետական սահմանները, վարչարարածքային բաժանումը* և այլն):

Քաղաքային տարաբնակեցում – երկրի քաղաքային բնակչության տարածական բաշխումը, վերաբաշխումը (շարժը) և դրանց արդյունքը՝ *քաղաքային բնակավայրերի ցանցը*:

Քաղաքների դասակարգում – քաղաքների խմբավորումն ըստ որոշակի հատկանիշների՝ քաղաքների բնակիչների թվի կամ մարդաշատության (*փոքր, միջին, մեծ, խոշոր* և *խոշորագույն*), գործառույթի (*արդյունաբերական, վարչական, քաղաքական, հոգևոր, տրանսպորտային* և այլն), աշխարհագրական դիրքի (*կենտրոնական, ծայրամասային* և այլն), հիմնադրման ժամանակի (*անտիկ, նոր* և այլն):

Օ

Օգտակար հանածոներ, հանքային հանածոներ – երկրակեղևի բնական հանքային ձևավորումներ, որոնք կարող են արդյունավետ կերպով օգտագործվել նյութական արտադրության ոլորտում: Ըստ կազմի և օգտագործման առանձնահատկությունների՝ տարբերակվում են *վառելիքային, մետաղական* և *ոչ մետաղական* օգտակար հանածոներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I

ԴԱՍ 1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ (ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ) ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	3
---	---

ԲԱԺԻՆ II

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ԴԱՍ 2. ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ	6
ԴԱՍ 3. ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ	9
ԴԱՍ 4. ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ	15

ԲԱԺԻՆ III

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 5. ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ԵՎ ՇԱՐԺԸ	22
ԴԱՍ 6. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	26
ԴԱՍ 7. ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՆԵՐԸ (ԳԱՂԹԵՐԸ)	30
ԴԱՍ 8. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄ: ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	35
ԴԱՍ 9. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՌԱՍԱՅԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ	39
ԴԱՍ 10. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ: ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ	46
ԴԱՍ 11. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	52

ԲԱԺԻՆ IV

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ԴԱՍ 12. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ: ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ	53
ԴԱՍ 13. ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ	58

ԲԱԺԻՆ V**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

ԴԱՍ 14. ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	66
ԴԱՍ 15. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ	71
ԴԱՍ 16. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	77
ԴԱՍ 17. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ	79
ԴԱՍ 18. ՎԱՌԵԼԻԻՔԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	82
ԴԱՍ 19. ՄԵՏԱՂԱՁՈՒԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	92
ԴԱՍ 20. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՃՅՈՒՂԵՐ (ՔԻՄԻԱԿԱՆ, ԹԵԹԵՎ ԵՎ ՄՆՆԴԻ)	101
ԴԱՍ 21. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	106
ԴԱՍ 22. ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ	110
ԴԱՍ 23. ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	119
ԴԱՍ 24. ԶԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ	125
ԴԱՍ 25. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ	130
ԴԱՍ 26. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ	137
ԴԱՍ 27. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՃՅՈՒՂԵՐԸ	142

ԲԱԺԻՆ VI**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

ԴԱՍ 28. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	147
ԴԱՍ 29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ	152
ԴԱՍ 30. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	157

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՑ ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ	161
--	-----

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԱԿ-Ի ԱՆԴԱՄ ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ	162
ԴԱՍԱԳՐՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ՈՒ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ	163

Մարգարյան Ռուդիկ Գրիգորի
Մանասյան Մաքսիմ Գառնիկի
Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի
Հովսեփյան Արմեն Աշոտի

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հասարակական աշխարհագրություն

Աշխարհ

7-րդ դասարանի դասագիրք

Գծապատկերները և քարտեզները՝
Քարտեզագիր՝

Ռ. Մարգարյանի
Վ. Մխիթարյան

Շապիկի ձևավորումը՝

Ա. Բաղդասարյանի

Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Աբրահամյանի
Սրբագրիչ՝ Պարույր Հակոբյան
Հրատարակչական խմբագիր՝ Գասպար Գասպարյան

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ

Ղ. Փարպեցի 9, բն. 7, հեռ. 53-79-82, 53-79-83

E-mail: manmar@manmar.com

www.manmar.am

